«Ազդեցիկ, մարգարեական և ոգեշնչող գիրք»
Քրիսթին Քեյն, «A21» և «Առաջ մղել կանանց» կազմակերպությունների հիմնադիր

Ընդունե՛ք ձեր ինքնությունը և իրականացրե՛ք ձեր կյանքի նպատակը՝ շփոթությամբ և մրցակցությամբ լի այս աշխարհում:

ԿՅԱՆՔ՝ ԱՌԱՆՑ ՄՐՑԱԿՑՈՒԹՅԱՆ

ԼԻԶԱ ԲԻՎԵՐ

«Երբ արթնանում են կին առյուծները» և «Թրեր կրող կանայք» գրքերի հանրաճանաչ հեղինակ

Թանկագին ընկեր,

Աստված եզակիորեն է ստեղծել ձեզ, որ ազդեցիկ և նպատակաուղղված կին լինեք: Չնայած դրան՝ մեզնից շատերը չափազանց երկար ժամանակ շփոթված և անապահով են եղել: Խաղաղությունը և ուրախությունը գողացվել են մեզնից, քանի որ շարունակ համեմատվել ենք ուրիշների հետ:

Ժամանակն է ոտքի կանգնել և ապրել այնպիսի կյանքով, որում մեր գեղեցկությունը, ուժը, առաքինությունը և ազդեցությունը չունեն մրցակիցներ. գտե՛ք ձեր ճշմարիտ ինքնությունը Քրիստոսում, լցվե՛ք հույսով, հավատարմորեն ծառայե՛ք և սե՛ր ունեցեք ձեր բոլոր գործերում:

Այս ուղերձը հասցեագրված է բոլոր տարիքի կանանց: Իմ ընկե՛ր և քո՛յր, ինձ համար մեծ պատիվ է, որ կարող եմ օրհնել ձեզ այս գրքով: Խնդրում եմ, ազատորեն կիսվե՛ք այս նյութով նրանց հետ, ում ճանաչում եք: Սա իմ նվերն է ձեզ:

Ապրե՛ք ձեր կյանքը խիզախությամբ, համարձակությամբ և ջերմեռանդությամբ:

Անկեղծորեն՝

Լիզա Բիվեր
LisaBevere@ymail.com

MESSENGER INTERNATIONAL
MessengerInternational.org

«Պատկերացրեք, թե ինչպիսին կլիներ աշխարհը, եթե յուրաքանչյուրս հասկանար, թե որքան սիրված և գնահատված է: «Կյանք՝ առանց մրցակցության» գրքում Լիզա Բիվերը խրախուսում է բացահայտել և հասկանալ, որ մենք յուրովի ենք ստեղծված և սիրված ենք Աստծուց: Սա է պատճառը, որ մեզնից ամեն մեկը կարևոր և վճռորոշ կոչում է ստացել Աստծո ծրագրում: Այս գիրքը հրավեր է՝ փնտրելու Աստծուն և այն առաքելությունը, որը Նա որոշել է ձեզ համար»:

— **Հոլլի Վագներ**, հովիվ և հեղինակ

«Մենք ապրում ենք թափառող մարդկանց մշակույթում, որոնք փնտրում են իրենց ինքնությունը սխալ վայրերում: Այս գիրքը՝ ստույգ կողմնացույց է, որն ուղղորդում է դեպի մեր հոգևոր ինքնության ճշմարիտ աղբյուրը: Մենք պատկանում ենք Աստծուն. Նա ընտրել է մեզ և յուրովի սիրում է ամեն մեկիս: Լիզան վարպետորեն կյանքի է կոչել այս անժամանակյա ճշմարտությունները: Այս գիրքը պարտադիր է ընթերցման համար»:

— **Բրեդի Բոյդ**, Կոլորադո Սփրինգսի «Նյու Լայֆ Չրչ» եկեղեցու հովիվ, նաև *«Կախվածություն զբաղվածությունից»* գրքի հեղինակ

««Կյանք՝ առանց մրցակցության» գրքում Լիզա Բիվերը կիսվում է խորաթափանց ճշմարտությամբ այն մասին, թե ինչպիսին է Աստված ստեղծել մեզ, և որ Նա յուրովի է սիրում ամեն մեկիս: Այս գիրքն ընթերցելուց հետո հազիվ թե երբևէ կասկածեմ, որ Աստված սիրում է մարդկանց»:

— **Քրիս Հոջիս**, «Չրչ ով Հայլենդս» եկեղեցու գլխավոր հովիվ, նաև *«Թարմ օդ»* և *«Չորս գավաթ» գրքերի հեղինակ*

«Եթե երբևէ խնդիրներ եք ունեցել ձեր ինքնության հետ, այս գիրքը կփոխի ամեն ինչ: Գիտակցելով մեր եզակի ինքնությունը Քրիստոսում՝ մենք փոխվում ենք. մենք դադարում ենք ապահովություն փնտրել և զբաղեցնում ենք մեր տեղն Աստծո փրկության մեծ ծրագրում»:

— **Շեյլա Ուոլշ**, «*Ասփված սիրում է կոտրված մարդկանց»* գրքի հեղինակ և «Հավատքի կանայք» ծառայության ղեկավար

««Կյանք՝ առանց մրցակցության» գիրքը բացահայտում է կարևոր ճշմարտություններ. ես համոզված եմ, որ այն մեծ ազդեցություն կթողնի մեր սերնդի վրա: Լիզա Բիվերը փոխանցում է Աստծո սերն այնքան հրաշալի և վառ կերպով, որ այն անպայման կգրավի յուրաքանչյուր ընթերցողի: Խորասուզվելով այս զարմանալի գրքի մեջ՝ ընթերցողն ավելի ու ավելի կհասկանա, թե որքան է Աստված սիրում իրեն, ինչպես նաև՝ թե որքան կարևոր է գտնել ինքնությունը Նրանում»:

— **Մեթյու Բարնետ**, «Դրիմ Սենթր» եկեղեցու համահիմնադիր

««Կյանք՝ առանց մրցակցության» գիրքը հրաշալի հիշեցնում է այն մասին, որ Աստված սիրում է բոլորին: Լիզան մոտենում է այս թեմային թարմ հայտ-

նությամբ և արտահայտում է իր մտքերը նրբակիրթ և հակիրճ: Սա իսկապես հրաշալի գիրք է, որը կոգեշնչի ամեն մի ընթերցողի»:

— **Քերոլայն Բարնետ**, «Դրիմ Սենթր» եկեղեցու հովիվ

«Այս մրցակցությամբ և համեմատություններով կլանված աշխարհում ամեն կին, ով մայր է, դուստր է, առաջնորդ է և ընկեր է, պետք է ընթերցի այս գիրքը: Ժամանակն է, որ մենք իրար ձեռք բռնենք՝ մեկս մյուսի հետ համեմատվելու փոխարեն: Ժամանակն է, որ ուրախանանք մեկս մյուսով, ոչ թե հանդուրժենք իրար: Մենք չունենք մրցակիցներ. այնպես որ, եկեք թույլ տանք, որ յուրաքանչյուրը ծաղկունք ապրի»:

— **Շառլոտ Գամբիլ**, «Լայֆ Չրչ» եկեղեցու գլխավոր հովիվ, Բրեդֆորդ, Միացյալ Թագավորություն

«Եթե պայքարում եք անարժան լինելու զգացումի հետ և չունեք նպատակ կյանքում, ձեզ անհրաժեշտ է «Կյանք՝ առանց մրցակցության» գիրքը՝ ձեր ներսի քննադատին լռեցնելու համար: Աստված այնպիսին է ստեղծել ձեզ, որ դուք կարող եք բավականություն ստանալ ցանկացած հանգամանքներում և ապրել առանց համեմատությունների»:

— **Սթիվեն և Հոլլի Ֆարտիկ**, «Էլեվեյշն Չրչ» եկեղեցու հովիվներ

«Լիզան կօգնի ձեզ վերապրել այն ազատությունը և վստահությունը, որոնք գալիս են, երբ գիտակցում եք, որ դուք Աստծո եզակի գլուխգործոցն եք՝ անզուգական և առանց մրցակիցների, և որ դուք ունեք այն ամենը, ինչ անհրաժեշտ է ձեզ, որպեսզի իրագործեք ձեր՝ Աստծուց ստացած եզակի կոչումը»:

— **Վիկտորյա Օսթին**, «Լեյքվուդ Չրչ» եկեղեցու հովիվ, Հյուսթոն, Տեխաս

«Լիզա Բիվերի «Կյանք՝ առանց մրցակցության» գիրքը կօգնի նորովի հայտնաբերել ինքներդ ձեզ Քրիստոսում: Լիզայի գիրքը լեցուն է Աստծո իմաստությամբ: Այն կխրախուսի, կոգեշնչի և կսպառազինի ձեզ, որ ձգտեք այն եզակի կոչմանը, որն Աստված որոշել է ձեզ համար: Եթե դուք ձգտում եք իմանալ, թե ինչ է խոսում Տերը ձեր կյանքում, այս գիրքը ձե՛զ համար է: Խորհուրդ եմ տալիս, որ անպայման ընթերցեք այն»:

— **Կրիս Վալլոտտոն**, Գլխավոր հովվի օգնական «Բեթել» եկեղեցում, Ռեդդինգ, Կալիֆոռնիա

«Լիզա Բիվերը տարիներ շարունակ եղել է մեր մտերիմ ընկերը, և մենք հավատում ենք, որ այն իմաստությունը, որով Նա կիսվում է «Կյանք՝ առանց մրցակցության» գրքում, ազատություն կբերի շատերին: Այս գրքի էջերն ըն-

թերցելիս՝ խնդրեք Աստծուն՝ օգնել ձեզ, որ հաղթահարեք համեմատվելու և մրցակցելու ցանկությունը: Թույլ տվեք Նրան՝ սովորեցնել, թե ինչպես ընդունեք և սիրեք ինքներդ ձեզ այնպիսին, ինչպիսին դուք ստեղծված եք»:

— **Ջեյմս Ռոբիսոն**, «Լայֆ աութրիչ ինտերնեյշնլ» ծառայության հիմնադիր նախագահ

«Ես սիրում եմ Լիզային: Այն խոսքը, որը նա փոխանցում է, շատ արդիական է: Բոլորը պետք է ընթերցեն այս գիրքը և հավատան դրա ուղերձին: Հրաշալի է, երբ գիտեք, թե ով եք դուք, և որ դուք պետք եք մարդկանց: Դուք կզորանաք՝ ընթերցելով այս գիրքը, և կզգաք, թե ինչպես է Հայրը խոսում ձեր ճշմարիտ, անսասան ինքնության մասին»:

— **Ջենն Ջոնսոն**, փառաբանության ավագ և երգահան, «Բեթել մյուզիք» ծառայություն

««Կյանք՝ առանց մրցակցության» գիրքը հրաշալի արթնության կոչ է բոլոր տարիքի կանանց համար: Լիզայի ուղերձն այն մասին, որ Աստված յուրովի է սիրում ամեն մեկիս և ունի առանձնահատուկ կոչում յուրաքանչյուրիս համար, այնքա՜ն անհրաժեշտ է: Ինձ դուր է գալիս նրա ջերմեռանդությունը և ավյունը, որոնք ճառագում են այս գրքի ամեն էջից»:

— **Էլլի Վորթինգտոն**, *«Ազատվել զբաղվածությունից. ինչպե՞ս գտնել խաղաղություն և կյանքի նպատակ այս խելահեղ աշխարհում»* գրքի հեղինակ

«Լիզայի համարձակ և Հոգով լցված խոսքերը կօգնեն կանանց՝ ազատվել համեմատություններից, հպարտությունից և նախանձից: Նա ապրում է՝ ըստ իր քարոզածի. երբ դուք պատկանում եք Հիսուսին, դուք չունեք մրցակիցներ»:

— **Սառա Բեսսի**, *«Հիսուսը՝ ֆեմինիստ»* և *«Շփոթված. խաղաղություն հասպատել փոփոխվող հավատքի հետ»* գրքերի հեղինակ

«Լիզայի նոր գիրքն իսկական գանձ է: Այն բառացիորեն համարժեք է հետևյալին. Աստված գրկում է մեր երեսն Իր ձեռքերով, ուղղում է մեր հայացքն Իրեն և դանդաղ ու հաստատուն ձայնով ասում է. «Ես սիրո՛ւմ եմ քեզ»»:

— **Լիզա Հարփեր**, հեղինակ և Աստվածաշնչի ուսուցիչ

«Մարդու սրտի և անձի առողջ աճի համար անչափ կարևոր է հասկանալ, թե Ում եք դուք պատկանում, որն է ձեր բացառիկ տեղն Աստծո ընտանիքում, և ինչպիսի բնավորություն ունի Քրիստոսը: Լիզա Բիվերը խոսում է այս հավիտենական սկզբունքների մասին՝ բացառիկ կերպով մեկնաբանելով Աստծո Խոսքի ճշմարտությունները և կիսվելով իր անձնական հայտ-

նություններով: Դուք կրկին կբացահայտեք ինքներդ ձեզ, և բացի այդ՝ նորովի կճանաչեք Նրան՝ անզուգական, սրտակից և զորավոր Փրկչին»:

— **Բրայան և Բոբբի Հյուսթոն**, համաշխարհային «Հիլսոնգ» եկեղեցու հիմնադիրներ և գլխավոր հովիվներ

«Այս աշխարհում, որտեղ կանանց բնորոշ է համեմատվելը և մրցակցությունը, Լիզա Բիվերն անում է այն, ինչը լավագույնս ստացվում է նրա մոտ. նա մոտեցնում է մեզ իր սրտին՝ սնուցող, զորացնող և բժշկող խոսքերով. «Դուստր, դու լիարժեք ես, քանի որ դու յուրովի սիրված ես»: «Կյանք՝ առանց մրցակցության» գիրքը հեռացնում է մեզնից համեմատվելու ցանկությունը՝ տանելով մեզ դեպի Հայր Աստծո սիրտը և հաստատելով Նրա գրկում: Այս գիրքը պետք է ընթերցեն այն կանայք, ովքեր ձգտում են ավելի խորը անձնական հարաբերություններ ունենալ Աստծո հետ, ովքեր ցանկանում են ճշմարտապես ճանաչել իրենց ինքնությունը և գտնել կյանքի նպատակը»:

— **Քրիստա Բլեք Գիֆֆորդ**, ճանաչված երգահան, քարոզիչ, նաև *«Ասփված սիրում է փգեղներին»* և *«Բժշկված սիրտ»* գրքերի հեղինակ

«Լիզա Բիվերի նոր՝ «Կյանք՝ առանց մրցակցության» գիրքը հրաշալի նկարագրում է Աստծո յուրահատուկ սերը յուրաքանչյուրիս հանդեպ»: Այս գիրքը հիշեցնում է, որ մենք չունենք մրցակիցներ, քանի որ Աստծո նպատակն է, որ գտնենք մեր արժեքները և ինքնությունն Իր մեջ: Բոլորը պետք է կարդան այս գիրքը»:

— **Ջենթեզեն Ֆրանկլին**, «Ֆրի Չեյփել» եկեղեցու ավագ հովիվ և հանրաճանաչ հեղինակ՝ ըստ «Նյու Յորք Թայմս» ամսագրի

«Իմ սիրելի ընկեր Լիզա Բիվերը կրկին բարձունքում է: «Կյանք՝ առանց մրցակցության» գիրքն ազդեցիկ, մարգարեական և ոգեշնչող ուղերձ է, որը կօգնի բացահայտել ձեր ինքնությունը և պատկանելիությունը՝ որպես կին Աստծո մեջ: Նվիրեք մեկական օրինակ այն կանանց, ում ճանաչում եք: Ես ինքս կանեմ դա»:

— **Քրիսթին Քեյն**, «A21» և «Առաջ մղել կանանց» ծառայությունների հիմնադիր

«Աստված սիրում է մեզ ոչ թե հավասարապես, այլ՝ յուրովի: «Կյանք՝ առանց մրցակցության» գրքում Լիզան մեկնաբանում է այն ճշմարտությունները, որոնք կօգնեն վերականգնել ձեր ուժերը և կյանքի նպատակը»:

— **Մարկ Բեթերսոն**, «*Շրջաններ գծողը*» գրքի հանրաճանաչ հեղինակ՝ ըստ «Նյու Յորք Թայմս» ամսագրի, և «Նեյշնլ Քոմյունիթի Չրչ» եկեղեցու գլխավոր հովիվ

Ընդունե՛ք ձեր ինքնությունը և
իրականացրե՛ք ձեր կյանքի նպատակը՝
շփոթությամբ և մրցակցությամբ լի
այս աշխարհում:

ԿՅԱՆՔ՝ ԱՌԱՆՑ

ՄՐՑԱԿՑՈՒԹՅԱՆ

ԼԻԶԱ
ԲԻՎԵՐ

«Երբ արթնանում են կին առյուծները» և
«Թրեր կրող կանայք» գրքերի հանրաճանաչ հեղինակ

Without Rival by Lisa Bevere, Armenian
© 2018 Messenger International
www.MessengerInternational.org
Originally published in English as Without Rival
Additional resources in Armenian by John and Lisa Bevere are available
for free download at: www.CloudLibrary.org
To contact the author: LisaBevere@ymail.com

«Կյանք՝ առանց մրցակցության», Լիզա Բիվեր, հայերենով
© 2018 Messenger International
www.MessengerInternational.org
Սկզբնապես հրատարակվել է անգլերենով,
«Without Rival» վերնագրով:
Ջոն և Լիզա Բիվերների այլ հեղինակային նյութեր հայերենով կարող եք
անվճար ներբեռնել հետևյալ կայքէջում. www.CloudLibrary.org
Հեղինակի հետ կապ հաստատելու համար. LisaBevere@ymail.com

Թանկագի՛նս,

Դուք չեր անզուգական Հոր սիրված դուստրն եք, ում վստահվել է անհամեմատելի ուղերձ այս աննախադեպ ժամանակաշրջանում: Դուք ընտրված եք այս պահի համար, որը միաժամանակ և՛ հրաշալի է, և՛ սարսափելի: Այս պատճառով, դուք պետք է ունենաք սեր՝ առանց վախի... հավատք՝ առանց արգելքների... և հույս՝ առանց սահմանափակումների:

Բովանդակություն

1.	Դուք՝ առանց մրցակցության	11
2.	Մեր անզուգական Աստված	29
3.	Խոստում՝ առանց մրցակցության	51
4.	Չհամարձակվեք համեմատել	77
5.	Երբ ձեզ մրցակից են համարում	97
6.	Սեռ՝ առանց մրցակցության	121
7.	Վախի և սիրո պատերազմը	155
8.	Խորը ջրհորներ և երազանքների ջրհորներ	175
9.	Դուստր՝ առանց մրցակիցների	199
10.	Կյանք՝ առանց մրցակցության	225
	Նշումներ	245

1

Դուք՝ առանց մրցակցության

Մեր մեծագույն կարիքն այն է, որ ինչ-որ մեկը խրախուսի մեզ՝ լինելու այնպիսին, ինչպիսին մենք գիտենք, որ պետք է լինենք:

Ռալֆ Ուոլդո Էմերսոն

Դուք երբևէ ունեցել եք մրցակիցներ:

Ես նկատի չունեմ թեթև ընկերական մրցակցություն սպորտային խաղերի մեջ, և ոչ էլ փոքր երեխաների, որոնք մրցակցում են ծնողների ուշադրությանն արժանանալու համար:

Ես խոսում եմ ավելի հետևողական հակառակորդի մասին: Մրցակիցը, անկասկած, նման չէ ոչ ընկերոջ, ոչ ընտանիքի անդամի: Մրցակցության նպատակը ոչ թե խաղը հաղթելն է, այլ՝ ձեզ խաղադաշտից հեռացնելը:

Այնուամենայնիվ, ինչ կլիներ, եթե իմանայիք, որ այն կյանքը, որին միշտ ձգտել եք, մրցակցության ոլորտից դուրս է: Ինչ կլիներ, եթե պարզեիք, որ կարող եք չպարտվել՝ խաղից դուրս գալու դեպքում: Իսկ եթե հայտնաբերեիք, որ դուք *չեք կարող* պարտվել. ինչ կլիներ, եթե կարողանայիք ոչ միայն մտածել, այլև ապրել սահմաններից դուրս:

Մի քանի տասնամյակ առաջ ես մի գիրք էի կարդում, ըստ որի մեր աշխարհի վերջը գալու է լայնատարած օտարացման

պատճառով (ոչ թե՝ այլմոլորակայինների հարձակման): Ըստ այդ գրքի կանխատեսման՝ գալու էր ժամանակ, երբ աշխարհը պետք է բաժանվեր երկու ընդդիմադիր ճամբարների կամ մտածելակերպերի: Նման լայնամասշտաբ պառակտման պայմաններում հեշտությամբ հնարավոր կլիներ պայքարի հրահրել հակառակ կողմերին, և արդյունքում աշխարհը լիովին կկործանվեր:

Ցանկացած համակարգված պառակտում, որը կարող է այդ աստիճան տարածվել, սկիզբ է առնում ավելի ծածուկ միջավայրում: Այն կարող է սկիզբ առնել տներում՝ անմիաբան ընտանիքներում, որոնցում ապրում են երկմիտ սրտեր ունեցող խոցված մարդիկ: Գոյություն ունեն շատ իրական ուժեր, որոնք հարձակում են գործում ձեր մտքի, կամքի և զգացմունքների վրա՝ շշնջալով սուտ զրպարտություններ: Դրանց նպատակն է՝ դրդել, որ ընդդիմանաք ինքներդ ձեզ, իսկ հետո՝ այլ մարդկանց:

Դժվար է խուսափել այդ խոսքերից և նրանցից, ովքեր ասում են մեզ, որ մենք այնքան էլ լավը չենք, այնքան էլ երիտասարդ չենք, այնքան էլ խելացի չենք, այնքան էլ փայլուն միտք չունենք և այնքան էլ հարուստ չենք: Մեզ ռմբակոծում են՝ ակնկալելով, որ ետ կքաշվենք: Եթե մենք առաջնորդվենք միայն մարդկային բնությամբ, կցանկանանք մեզնից հեռացնել այդ մշտական ճնշումը, որն ակնարկում է, որ մենք երբեք չենք կարող բավականաչափ լավը լինել: Երբ այդ հարձակումները հասնում են ճգնաժամային կետի, ոմանք տեղի են տալիս՝ վարվելով ըստ այդ մեղադրանքների, իսկ մյուսներն ապստամբում են՝ ի պատասխան մեղադրանքներ տեղալով:

Մենք դատում ենք, երբ զգում ենք, որ մեզ են դատում:

Մենք ամաչեցնում ենք, երբ ինքներս ենք ամոթ զգում:

Մենք ատում ենք, երբ չենք սիրում ինքներս մեզ:

Երբ սնանկացած ենք զգում մեզ, գրեթե անմիջապես ուզում ենք կողոպտել մարդկանց: Սա շրջան է, որտեղ բոլորը պարտվում են, և ոչ ոք չի հաղթում: Իսկ ինչ, եթե Պողոսի խոսքերը ճշմարիտ են.

«Բայց մեծ շահավաճառություն (կամ՝ շահ) է իրավ աստվածապաշտությունը՝ բավականության հետ միասին» (Ա Տիմոթ. 6.6):

Աստվածապաշտությունը՝ Աստծո տեսանկյունը յուրացնելու կարողությունն է: Եվ երբ մենք հասկանում ենք, թե ինչպես է Նա տեսնում մարդկանց, մենք ընդունում ենք այն, թե ինչպես է Նա տեսնում մեզ:

Ձեր ներկա վիճակում գոհանալը և ձեզ հարմարավետ զգալը անհոգ չի դարձնի ձեզ, ընդհակառակը, այն կխթանի ձեր ստեղծարարությունը. շրջվե՛ք բոլոր զրպարտող մարդկանցից և շեղող հանգամանքներից: Նա հառել է Իր հայացքը մեզ վրա, որպեսզի մենք կարողանանք վեր նայել և տեսնել Նրան:

Ուրեմն, ինչպե՞ս վարվենք:

Փոխարենը մրցակցեք այն բանի համար, ինչը երբեք նախատեսված չի եղել ձեզ համար... հավաքե՛ք ձեր ուժերը, որ բացահայտեք այն, ինչն իրականում ձերն է:

Ես աղոթում եմ, որ այս գիրքը պարզություն բերի ձեր կյանքի այն բնագավառում, որտեղ պղտորված է մեր անառողջ առօրյայի պատճառով: Փոխարենը, որ ձգտեք հաղթել այն մրցությունը, որը ոչինչ չի տա ձեզ, ես ուզում եմ, որ պատրաստվեք հաղթել ձեր պատերազմը: Այս աշխարհում ընթանում է շատ իրական պայքար՝ ձեր անձի զորության համար: Ժամանակն է, որ զբաղեցնեք *ձեր* տեղն այս աշխարհում: Եկեք բացահայտենք բոլոր ստերը և խանգարող հանգամանքները և պարզենք, թե իրականում ով եք դուք:

Կորսված և գտնված

Ես սիրում եմ շներ: Վերջերս, երբ ուղևորության էի Հարավային Կորեայում, մեր սիրելի շուն Թիան հայտնվել էր շների ապաստարանում: Պարզ է, որ աշխատողներից մեկը բաց էր թողել մեր տան մուտքի դուռը, և Թիան թողել էր մեր տան ջերմությունը՝ չափչփելու ձմեռային Կոլորադոյի փողոցները, երբ ջերմաստիճանը դրսում զրոյից ցածր էր: Ինչ-ինչ պատճառով, այդ օրը նա չէր գտել տան ճանապարհը: Բարեբախտաբար,

մեր հարևաններից մեկը, որի ինքնությունն անհայտ մնաց, այնքան բարի էր գտնվել, որ նրան տարել էր իր տուն՝ գիշերելու, իսկ առավոտյան տարել էր կենդանիների ապաստարան:

Թիայի վրա պիտակ կար, բայց այն գրեթե անօգուտ էր, որովհետև դրա վրա նշված հեռախոսահամարն այլևս միացրած չէր մեր տանը: Բացի այդ՝ նրա թույլտվությունը ժամկետանց էր (ես մտածում էի, որ դա մեկանգամյա գործընթաց էր): Այսպիսով, հայտնվել էր մի շուն, որն անչափ սիրված էր և տուն ուներ, բայց չկար ոչ մի ձայն և ինքնության նշան, որ կարող էր օգնել նրան գտնել իր տունը:

Ես գտնվում էի Սեուլում՝ Կորեայում, և լիովին անտեղյակ էի այդ մասին: Որդիներս իմաստուն կերպով որոշեցին չպատմել ինձ Թիայի ձախորդության մասին, բայց անկասկած՝ բոլորը մեր տանը խուճապի էին մատնվել: Նրանք շարունակ փնտրում էին մեր շանը, բայց ոչ մի տեղ չէին գտնում: Նրանք վախենում էին, որ նա կարող էր դաշտագայլերի ձեռքն ընկնել: Որպես վերջին տարբերակ, գրեթե կատակի համար, նրանք հետևեցին ինչ-որ մեկի խորհրդին և զանգահարեցին շների ապաստարան:

Երբ Օսթինը կենդանիների ապաստարան հասավ և տեսավ Թիային, նրան թվաց, թե նա մեր շունը չէ: Այդ ծանր փորձությունն այն աստիճան էր փոխել նրա վարքագիծը, որ տեսնելով Օսթինին՝ նա ավելի ճնշված էր թվում, քան ուրախ: Նա մնաց վանդակի անկյունում՝ վախից դողալով: Այն բանից հետո, երբ Օսթինը վճարեց նրա «հյուրանոցի» մեկօրյա գումարը, ինչպես նաև մի շարք մեծ տույժեր (ակնհայտ է, որ ժամկետանց թույլտվությունը վերականգնելն էժան չնստեց նրա վրա), մենք կրկին կարողացանք տուն բերել Թիային:

Երբ ես տուն վերադարձա և իմացա ամեն ինչ, մի փոքր վիրավորվեցի: Ոչ թե իմ որդիներից, այլ՝ իմ շնից: Թիան տասը տարուց ավելի՝ մեր շունն էր, և առաջին անգամն էր, որ նա հեռացել էր տնից և ինքնուրույն չէր կարողացել վերադառնալ: Ես մտածում էի, թե ինչու այդպես եղավ: Միգուցե նա կատարակտի պատճառով թո՞ւյլ էր տեսնում: Միգուցե ապակողմնորոշվել էր իր տարիքի՞ պատճառով: Իսկ միգուցե նա ի՞նձ էր փնտրում:

Ի վերջո, կարևոր չէ, թե ինչու հեռացավ տնից: Նա մեր ընտանիքի մասն էր, և այն, որ նա չկարողացավ ինքնուրույն գտնել տան ճանապարհը, չի ժխտում այդ փաստը: Նա գտնվել էր, նրա տույժը վճարվել էր, և նրա թույլտվությունը վերականգնվել էր: Նա դուրս էր բերվել իր ամոթի վանդակից և վերադարձվել իր տեղը, որը մեր անկողինն էր՝ իմ ոտքերի մոտ. մեկ «սխալված գիշերը» նրանից հրաժարվելու պատճառ չէր:

Հավանաբար, դուք հասկանում եք, թե ինչ եմ ուզում ասել: Եթե մենք (ընտանի կենդանու անկատար տերերը) պատրաստ էինք այսքան բան անել շան համար, որքա՜ն բան կանի մեր երկնային Հայրը մեզ համար: Ձեր ինքնությունը ճշմարտապես ճանաչելու համար պետք է հասկանաք, թե ով եք դուք Նրա համար: Առաջին Հովհաննես 3.1-ը հուշում է, թե ինչպես է Աստված տեսնում մեզ:

> «Որքա՜ն հրաշալի կերպով է Հայրը սիրում մեզ: Միայն տեսեք՝ մենք կոչվում ենք Աստծո զավակներ: Ահա թե ով ենք մենք իրականում: Բայց հենց այս պատճառով էլ աշխարհը չի ճանաչում և լրջորեն չի վերաբերվում մեզ, քանի որ այն գաղափար չունի, թե ով է Նա, և որն է Նրա նպատակը» (Ուղերձ):

Խոսենք այն մասին, թե որքան հրաշալի է Աստծո սերը: Այն ակնածալի է, տպավորիչ և անսահման: Այն միապաղաղի և սովորականի ճիշտ հակառակն է: Նրա սիրո խորություններն ապշեցնում են մեզ: Եվ այս հրաշալի սերը տրված է մեզ որպես նվեր՝ նման այն բանի, երբ մենք նվեր ենք ստանում գնումներ անելիս: Այնուամենայնիվ, Նրա սերը մեծապես գերազանցում է հասարակ նվերը, քանի որ այն նվեր է՝ նվերի հետ: Մենք ստացանք փրկության պարգևը: Աստված տեսավ մեզ թշվառության մեջ, վախից կծկված կրոնական-հումանիստական հասարակության վանդակի անկյունում և գին վճարեց՝ մեզ փրկելու համար: Բայց Նա չսահմանափակվեց դրանով: Նա մոտեցրեց մեզ Իրեն, վերականգնեց մեր թույլտվությունը և անվանեց մեզ Իրենը (այս ամենը տեղի ունեցավ՝ նույնիսկ մինչև մենք կհասցնեինք

լոգանք ընդունել): Դուք ճշմարտապես Նրանն եք: Նա հրաշալի կերպով սիրում է Իր բոլոր զավակներին, բայց ամեն մեկին սիրում է յուրովի:

Հավասարապե՞ս, թե՞ յուրովի

Հաճախ, մարդկայնորեն փորձելով այնպես անել, որ ամեն ինչ ազնիվ լինի, մենք սկսում ենք մտածել, որ Աստված նույն կերպով է սիրում բոլորիս: Որքան էլ դա ճիշտ թվա առաջին հայացքից, *նույնը* այնքան էլ մեծ չէ: «Նույն» բառը ենթադրում է, որ մենք կարող ենք փոխանակելի և փոխարինելի լինել: Պատկերացրեք, որ ինչ-որ մեկն ասի. «Ափսո՛ս, ես կոտրեցի այն մանուշակագույն բաժակներից մեկը, որոնք այս շաբաթ գնել էի հանրախանութից: Հուսով եմ՝ նրանք դեռ վաճառում են այդպիսի բաժակներ»: Կամ, օգտագործելով իմ՝ արդեն բերած օրինակը. «Իմ սիրելի շունը, որը տասը տարուց ավելի կողքիս է եղել, կորել է: Բայց խնդիր չկա. ես մեկ այլ շուն կգնեմ՝ հնին փոխարինելու համար, և կսիրեմ նրան ճիշտ նույն կերպով»:

Ես չեմ կարող այդպես վարվել, և համոզված եմ, որ Աստված՝ նույնպես: Եվ ես կասեմ ձեզ դրա պատճառը:

Մի օր, ցերեկվա ժամերին ես քնել էի (խնդիրն այն էր, որ պառկել էի իմ դյուրակիր համակարգչի վրա, ոչ թե՝ անկողնու), և մի պահ գլուխս առաջ շարժվեց, և ես կտրուկ արթնացա՝ տեսնելով, որ ութ էջ շարունակ գրված էր «տ» տառը:

Այդ պահին զգացի, որ պետք է իսկապես քնեմ: Ես վերցրի շանս, որը ոտքերիս մոտ էր նստած, և ննջասենյակ գնացի: Մինչ նիրհում էի, լսեցի Սուրբ Հոգու շշնջոցը. «Ես հավասարապես չեմ սիրում Իմ զավակներին»:

Ես հանկարծակիի եկա և անմիջապես նստեցի անկողնումս. որտեղի՞ց եկավ այս հայհոյալից միտքը: Ես ասացի. «Դու պետք է նույն կերպով սիրես մեզ, այլապես դա ազնիվ չի լինի»:

Իմ առարկությունը ստացավ հետևյալ պատասխանը. «Ո՛չ: *Հավասարապես-ը* նշանակում է, որ Իմ սերը կարելի է չափել,

իսկ Ես հավաստիացնում եմ քեզ, որ այն անչափելի է: *Նույնը* նշանակում է, որ Իմ զավակները փոխանակելի կամ փոխարինելի են, իսկ դա ճիշտ չէ: Իմ սիրտը բաղկացած չէ նույնակերպ բաժանմունքներից: Ոչ ոք չի կարող զբաղեցնել մեկ ուրիշի տեղը կամ փոխարինել մեկ ուրիշին Իմ սրտում, քանի որ Ես հավասարապես չեմ սիրում Իմ զավակներին. Ես յուրովի եմ սիրում նրանց»:

Խորը շունչ քաշեք և լսեք. *Ասված յուրովի է սիրում մեզ, ոչ թե հավասարապես:* Հավատացեք, որ յուրովին ավելի լավ է:

Ես հավասարապես չեմ սիրում Իմ զավակներին. Ես յուրովի եմ սիրում նրանց:

Եթե դուք մեկից ավելի երեխաներ ունեք, հավանաբար, արդեն հասկանում եք սա: Երբ ծնվեց ձեր երկրորդ, երրորդ կամ վերջին երեխան, ձեր սերը չբաժանվեց նրանց միջև: Այն ավելացավ անհաշվելի չափերով: Դուք չեք կարող որոշել ձեր սիրո չափը ձեր երեխաներից յուրաքանչյուրի հանդեպ, նույնիսկ եթե փորձեք: Ինչպե՞ս կարող եք չափել ձեր սրտի մղումը: Դուք յուրովի եք սիրում ձեր երեխաներից ամեն մեկին: Ամեն մեկն այլ կերպով է զարթնեցնում ձեր ծնողական սերը: Հետաքրքիր է, որ ձեզ կարող է դուր գալ որևէ հատկանիշ ձեր երեխաներից մեկի մեջ, և այլ հատկանիշ՝ մյուսի մեջ, որը գրեթե նախորդի հակապատկերն է: Օրինակ՝ ես կայտառ թոռնուհի ունեմ. նա ասես փոքրիկ փոթորիկ լինի: Նրա եղբայրը՝ իմ առաջին թոռնիկը, զուսպ և մեղմ բնավորություն ունի: Ես չեմ համեմատում նրանց: Ես սիրում, վայելում և գնահատում եմ կյանքի հանդեպ նրանց տարբեր մոտեցումները: Չեմ ցանկանա, որ նրանք նույն կերպով դրսևորեն իրենց: Նրանցից մեկը չի զբաղեցնում ավելի շատ տեղ իմ սրտում, քան մյուսը: Ես սիրում եմ երկուսին էլ ամբողջ սրտով, բայց՝ յուրովի:

Հավասարապես-ը նույնպես ենթադրում է, որ Աստծո սերը չափ ունի կամ չափելի է, ինչն այդպես չէ: Այն անսահման է: *Յուրովին* ենթադրում է շատ ավելի մեծ խորություն: Դուք միակն եք, ձեզ նմանը գոյություն չունի: Սուրբ Օգոստինոսը լավագույնս

ձևակերպել է սա. «Աստված սիրում է մեզնից յուրաքանչյուրին այնպես, ասես մենք միակը լինենք այս աշխարհում»:

Մեր Հոր սերը չի կարող համեմատվել շոկոլադե թխվածքի կամ բալով տորթի հետ, որը գորովալի ծնողը ջանասիրաբար բաժանում է հավասար կտորների, որպեսզի երեխաներից ոչ մեկն անտեսված չզգա: Նրա հրաշալի սերը չի տրվում չափաբաժիններով: Դուք հասկանո՞ւմ եք, որ Նա սիրեց ձեզ՝ նախքան ամեն ինչի սկիզբը, և Նրա սերը ձեր հանդեպ վերջ չունի: Դուք կարող եք հեռանալ Նրանից, կարող եք փախչել և դժոխքը դարձնել ձեր հանգրվանը, բայց ձեր գործերը չեն խափանի Նրա սերը (իսկապես, ո՞վ կուզի հանգստանալ դժոխքում):

Տերը խոսեց Իր սիրո մասին Երեմիա մարգարեի միջոցով. «Հավիտենական սիրով սիրել եմ քեզ. դրա համար քաշեցի քեզ ողորմությամբ» (Երեմիա 31.3):

Ուշադրություն դարձրեք, որ այս նախադասությունն անցյալ ժամանակով է: Նրա սերը՝ որոշված հարց է: Նա սիրեց ձեզ, հենց ձե՛զ՝ ձեր եզակի հատկանիշներով, անվերջ և հավիտենական սիրով: Կարևոր չէ, թե որքան տարեց կամ երիտասարդ եք, որքան գեր կամ վտիտ եք: Նա սիրեց ձեզ՝ երբ դեռ երիտասարդ և անմիտ էիք: Նա սիրում է ինձ հիմա, երբ ես ավելի հասուն եմ, և սիրում էր այն ժամանակ, երբ իմ կյանքը դեռ անկանոն էր: Աստված սեր է: Նա *չունի սեր* ձեզ համար. Նա Ինքը *սեր է*՝ ձեզ համար:

Մեր Հոր հրաշալի սերը մեր հանդեպ՝ անսահման է, մտերմիկ և եզակի: Դուք յուրովի եք սիրված, քանի որ յուրովի եք ստեղծված:

«Եզակի» բառը նշանակում է. «ինչ-որ բանի բացառիկ օրինակը, նախատիպ, միայն մեկը»: Այս բառի իմ սիրելի սահմանումը հետևյալն է. *«անզուգական՝ առանց հավասարի կամ մրցակցի»:* Մեր Հայրն առանձնահատուկ և անզուգական է. ուրեմն, մենք չպետք է զարմանանք, որ Նրա համար մենք անզուգական դուստրեր ենք: Այսպիսով, չկա ոչ մի պատճառ՝ միմյանց հետ մրցակցելու համար:

Դուք՝ ձեր միակ օրինակն եք:

Դուք՝ ձեր սկիզբը և վերջն եք: Գոյություն չունի որևէ մարդկային նմուշ՝ նախատեսված մասսայական արտադրության համար: Նրա ստեղծած սերունդների մեջ չկան կրկնօրինակներ, չկան միևնույն մարդիկ, և ոչ մեկը հավասար չէ մյուսին: Չկա ոչ մի մրցակից՝ Նրան սիրելու կամ Նրա սերն ընդունելու հարցում: Ոչ ոք չի կարող լինել ձեր տեղում այնպես, ինչպես դուք:

Աստված եզակիորեն ստեղծեց ձեր ԴՆԹ-ն և կազմեց ձեզ ծածուկում, որպեսզի զարմացնի աշխարհը: Նա հորինեց ձեր ինքնարտահայտման ձևը: Նա ձևավորեց ձեր ժպիտը և ձեր ձայնի մեղեդին: Նա ստեղծեց ձեր բոլոր դիմագծերը՝ քնքշորեն մտածելով միայն ձեր մասին: Ձեր ծնողների հետ միասին Նա ուրախանում էր ձեր առաջին ժպիտով, և սիրով համակված՝ հետևում էր ձեր առաջին քայլերին:

Այսպիսի նուրբ և առանձնահատուկ խնամքի շնորհիվ ձեր կյանքը նման է բազմաթիվ երեսակներ ունեցող ադամանդի, որոնցից ամեն մեկը յուրովի է արտահայտում Նրա սերը: Նա միավորեց բոլոր այդ բացառիկ հատկանիշները և տաղանդները ձեզ համար, այսինքն՝ Իր դստեր համար: Նա գիտեր, որ դրանցից ամեն մեկը լավագույնս կարտահայտվեր ձեր կանացի էությամբ:

Նա գիտեր, որ դուք լավագույնս կներկայացնեիք Իրեն և կհաղորդակցվեիք Իր հետ՝ որպես դուստր: Ահա թե ինչու Նա որոշեց, որ ձեր սեռն իգական լինի: Հոր և դուստրերի միջև շատ քնքուշ կապ կա:

Նա չէր մտածում մեկ այլ դստեր մասին, երբ ստեղծում էր ձեզ... դուք Նրա բերկրանքն եք:

Սա նշանակում է, որ ձեր կյանքն ավելի լավը չէր լինի, եթե դուք ավելի բարձրահասակ կամ ցածրահասակ լինեիք, ավելի մուգ կամ բաց մաշկ ունենայիք:

Սա նույնպես նշանակում է, որ դուք ավելի լիարժեք կերպով չէիք կրի Նրա սերը, եթե տղամարդ լինեիք: Աստված չի սիրում որդիներին ավելի շատ, իսկ դուստրերին՝ ավելի քիչ: Եվ Նա հա-

վասարապես չի սիրում երկու սեռերին: Նա յուրովի է սիրում տղամարդկանց և կանանց: Միգուցե երբ մեծացել եք, դուք լսել եք շշնջոցներ կամ նույնիսկ՝ բղավոցներ այն մասին, որ ձեր հայրը կամ մայրը կցանկանային, որ դուք տղա ծնված լինեիք: Միգուցե եղել են պահեր, երբ ինքներդ կուզեիք տղա ծնված լինել, բայց իմացեք՝ Աստված երբեք չի ուզել դա:

Մեր Հայրը ցնծաց, երբ դուք առաջին անգամ շնչեցիք, և տարիներ անց երկնային հրեշտակները ցնծացին Նրա հետ, երբ դուք վերստին ծնվեցիք, Նրա Հոգով կենդանություն ստացաք և դարձաք Նրա դուստրը:

Սքանչելիորեն սիրված դո՛ւստր, ձեզանում ոչինչ պատահական չէ:

Դուստր՝ առանց մրցակցության

Եվ ի՞նչ է նշանակում այս ամենը: Այն, որ Նրա անչափելի և անսպառ սերը բոլորիս հանդեպ ավելի քան բավական է: Դուք ստիպված չեք պայքարել ձեր տեղի համար Նրա սեղանի շուրջ կամ շահել Նրա սերը: Ոչ ոք չի կարող հեռացնել կամ փոխարինել ձեզ... դուք չունեք ոչ մի մրցակից:

> «Բայց ընկերնե՛ր, ահա թե ով ենք մենք իրականում՝ Աստծո զավակներ: Եվ դա միայն սկիզբն է: Ո՞վ գիտի, թե ինչ կլինի մեզ հետ վերջում: Մենք գիտենք հետևյալը. երբ Քրիստոսը բացահայտ կերպով հայտնվի, մենք կտեսնենք Նրան, և տեսնելով Նրան՝ կդառնանք Նրա նման: Ովքեր ակնկալում են Նրա գալուստը, պատրաստ են մնում՝ Հիսուսի կյանքի լուսավոր մաքրությունը դարձնելով օրինակ իրենց կյանքի համար» (Ա Հովհ. 3.2,3, Ուղերձ):

Միասին կբացահայտենք, թե ինչպես լիարժեք կերպով դրսևորենք մեր անհատականությունը, ոչ թե ապրենք մեկ այլ անձնավորության պես՝ փորձելով վաստակել մեզ շրջապատող մարդկանց սերը և հավանությունը: Մենք կդադարենք համեմատել մեզ այլ մարդկանց հետ, քանի որ համեմատությունը ոգեշնչում չի բերում: Համեմատության պատճառով մենք

խաբում ենք ինքներս մեզ և ամբողջ աշխարհին այն հարցում, թե իրականում ով ենք մենք: Մի՞թե կա համեմատության կամ մրցակցության կարիք այն դեպքում, երբ մեր արժեքը և ինքնությունը բխում են մեր ներքին եզակի ինքնությունից: Այդպես մենք միայն կսպառենք մեզ: Դուք դուստր եք, ով չունի մրցակիցներ. ձեր ներսում կա լույս, որի հավասարը գոյություն չունի. դուք սպառազինված եք մի պատերազմի համար, որում ոչ մի թշնամի չի կարող գերազանցել ձեզ: Ամեն ինչ ձեր կյանքում եզակի է:

> «Այնպես որ, տեսնելով, որ մենք տեղադրված ենք Քրիստոսի մարմնի գերազանցաբար կազմված և զարմանալիորեն գործող անդամների թվում, եկեք պարզապես լինենք այնպիսին, ինչպիսին ստեղծված ենք՝ չհամեմատելով մեզ մյուսների հետ նախանձի կամ հպարտության պատճառով, և ո՛չ էլ փորձելով լինել այն, ինչ մենք չենք» (Հռոմ. 12.5,6, Ուղերձ):

Այս աստվածաշնչյան հատվածը ցույց է տալիս այն երկու գլխավոր գործոնները, որոնք շեղում են մեզ անզուգական կյանքից՝ հպարտությունը և նախանձը: Այն, որ դուք ծանոթացաք մրցակից չունեցող Աստծո եզակի դստեր նկարագրին, դեռ չի նշանակում, որ ձեր կյանքն անմիջապես այդպիսին կդառնա: Դա նշանակում է, որ կա ճանապարհ, որը պետք է անցնել, կան գլուխկոտրուկի մասեր, որոնք պետք է ճիշտ հավաքել, և կա ծառայություն Քրիստոսի մարմնում, որում դուք պետք է ունենաք ձեր ավանդը:

Հպարտությունն անջատում է մեզ մարմնից. այն շշնջում է մտքեր, որոնք չափից ավելի բարձրացնում են մեզ և դրդում են ասել. *«Իմ դերն ամենակարևորն է: Ես առանձնահատուկ եմ՝ ինքնուրույն եմ, նշանակալի եմ, ինքնագոհ եմ և վեր եմ բոլորից»:*

Նախանձը, իր հերթին, գայթակղեցնում է մեզ, որ անտեսենք այն դերը, որն Աստված տվել է մեզ այս աշխարհում՝ պատկերելով այն որպես աննշան մի բան: Նախանձն ասում է. *«Ես չեմ արժևորում իմ դերը և կոչումը. ես միայն ուզում եմ, որ դու հեռանաս ասպարեզից, որ զբաղեցնեմ քո տեղը»:*

Երկուսն էլ մահացու թրի երկու սայրեր են, որի նպատակն է՝ առանձնացնել անհատներին և պառակտել միաբանությունները՝ թույլ չտալով մարդկանց կատարել իրենց կոչումը և հեռացնելով նրանց իրենց տեղից: Երբեմն թշնամին օգտագործում է երկուսն էլ. նա հարձակվում է Քրիստոսի մարմնում գտնվող տղամարդկանց վրա մրցակցությամբ և աղավաղված տողամարդկային հպարտությամբ, իսկ կանայք կանացի նախանձի զոհ են դառնում:

Ոչ ոք չի՛ կարող հեռացնել կամ փոխարինել ձեզ... դուք չունեք ո՛չ մի մրցակից:

Եղե՛ք ճշմարիտ ընկեր բոլորի համար՝ պահպանելով ձեր ճշմարիտ ինքնությունը: Ժամանակն է, որ Աստծո դուստրերն արժևորեն իրենց եզակի անհատականությունը և դադարեն բավարարվել նույն չափանիշներով՝ ընդամենը ձգտելով ունենալ ավելին, քան մյուսները: Երբ չեք արտահայտում ձեր ճշմարիտ ինքնությունը, դուք, փաստորեն, թույլ եք տալիս մարդկանց անարգել ձեզ: Մարդիկ միշտ տարբերում են կեղծիքը կամ կրկնօրինակն իրականից: Նույնիսկ եթե նրանք չտեսնեն դա, նրանք կլսեն և կզգան դա ձեր դատարկ խոսքերից, գործերից և արտաքինից: Կա շատ մեծ տարբերություն որևէ մեկի օրինակին հետևելու և որևէ մեկին նմանակելու միջև: Պատահական չէ, որ դուք հիասթափվում եք, երբ փորձում եք վարվել ինչ-որ մեկի պես: Կյանքը նման է ստուգման, որում պատասխանների մի քանի տարբերակ կա, և դուք սխալ եք պատասխանում միայն մեկ դեպքում՝ երբ ինքներդ չեք ընտրում պատասխանները:

Մենք արհամարհում ենք մեր Հոր սերը, երբ չենք արտահայտում մեր իրական ինքնությունը: Եվ խնդրում եմ, հասկացե՛ք, որ դուք պետք է մտահոգվեք ձեր արտաքինով: Շատերը մտածում են, որ արտահայտում են իրենց յուրօրինակությունը հագուստի, սանրվածքի, թանկարժեք զարդերի և շպարի միջոցով: Նման արտաքին դրսևորումներն ընդամենը կողմնակի պարագաներ են և նույնիսկ չեն ակնարկում ձեր անձի իրական խորությունը:

Իրականում, դուք կարող եք փոխել ձեր արտաքինը, բայց միևնույն է՝ չհասկանալ եզակի լինելու իմաստը:

Եկեք դադարենք ժամանակ ծախսել՝ նայելով մեր շուրջը և թույլ տալով, որ մշտապես փոփոխվող հասարակական կարծիքը պատճենի իր պատկերը կամ գաղափարները մեր կյանքում: Եկեք վստահությամբ ընդունենք այն, ինչ մեր կյանքը պետք է արտահայտի՝ համաձայն Աստծո եզակի ծրագրի:

Ո՞ւմ եք դուք պատկանում

Ինձ պետք չէ իմանալ, թե ովքեր են ձեր ընկերները: Ինձ պետք չէ իմանալ ձեր ծնողների, ուսումնական հաստատության կամ գործատուի անունները: Ինձ պետք է իմանալ Նրա անունը, Ով զոհել է Իր կյանքը՝ ձեզ գնելու համար: Բայց, միևնույն է, դուք այնքա՛ն շատ բան եք բաց թողնում, եթե համարում եք, որ Նրա զոհն այլևս չի ազդում ոչնչի վրա: Երբ Նա գտավ ձեզ, Նա չվանեց ձեզ և չվերադարձրեց այնտեղ, որտեղ գտնվում էիք. Նա բարձրացրեց ձեզ և շնորհեց Իր արդարությունը:

Ասե՛ք այս խոսքերը հենց հիմա, նույնիսկ եթե սա ընդամենը ձեր սրտի շշնջոցն է. *«Ես Նրանն եմ, և Նա իմն է»*:

Ձեր հավիտենական Հայրը միակն է, Ով իրավունք ունի ասելու, թե ով եք դուք և ինչպիսին եք: Ձեր մայրը հղացել է ձեզ, կրել է ձեզ և հոգ է տարել ձեր մասին, բայց ձեր երկնային Հայրը հորինել է ձեզ, ստեղծել է ձեզ և կյանքի է կոչել Իր խոսքով: Երբ դուք կորած էիք, Նա փրկեց ձեզ, որ կրկին Իրենը լինեք: Կգա մի օր, երբ ժամանակը կավարտվի այնպես, ինչպես մենք գիտենք: Նա կվերածնի յուրաքանչյուրիս, և մենք կհասկանանք, որ կյանքն այս երկրի վրա ընդամենը սերմ է, և այնտեղ՝ Երկնքում, ի հայտ կգա մեր ճշմարիտ ինքնությունը:

Չգիտեմ, թե որտեղ է կյանքը հասցրել ձեզ, բայց խնդրում եմ, հասկացե՛ք, որ ձեր գտնվելու վայրը, ձեր կյանքի փուլերը և հանգամանքները մշտապես փոփոխման ենթակա են: Որտեղ էլ

հայտնվեք ճակատագրի բերումով, իրականում կարևորն այն է, թե ով եք դուք և ում եք պատկանում:

Այս գլխի սկզբում ես տեղադրեցի իմ ամենասիրելի խոսքերից մեկը, որը պատկանում է Ռալֆ Ուոլդո Էմերսոնին. «Մեր մեծագույն կարիքն այն է, որ ինչ-որ մեկը խրախուսի մեզ՝ լինելու այնպիսին, ինչպիսին մենք գիտենք, որ պետք է լինենք»: Այդ ինչ-որ մեկը Աստված է: Նրա ինքնությունը և Նրա բոլոր գործերը ոգեշնչում են մեզ: Արարիչը վարպետորեն կազմել է այն ամենը, ինչ մենք տեսնում ենք, լսում ենք և արարչագործություն ենք անվանում, որպեսզի մենք կրկին կապ հաստատենք մեր աստվածային ինքնության հետ: Եվ Նա ուղարկեց Իր Որդուն, որ վերականգնի մեր կապն Իր հետ:

Այնուամենայնիվ, նույնիսկ մեր ճշմարիտ ինքնությունը վերագտնելուց հետո շատերը թույլ են տալիս, որ իրենց կյանքը բնորոշվի *իրենց գործերի*, *իրենց ունեցածի* և նույնիսկ՝ *իրենց ցանկությունների* մակերեսային սահմանափակումներով: Բայց անմտություն է կապակցել ձեր ինքնությունն այնպիսի բաների հետ, որոնցից դուք կարող եք հեշտորեն զրկվել: Աշխատանքները փոխվում են, հմտությունները կարող են մոռացվել, իսկ իրերը՝ գողացվել: Մենք կարող ենք զրկվել նույնիսկ կարևոր հարաբերություններից: Ձեր ունեցվածքը, ձեր զբաղվածությունը և ձեզ շրջապատող իրականությունը կարող են փոխվել, բայց անչափ կարևոր է, որ դուք երբեք չկորցնեք ձեր ինքնությունը և ձեր Արարչին, Ում պատկանում եք:

Եթե միայն իմանաք, թե ուր եք գնում, դուք պատրաստ կլինեք կորցնել ձեր անձը ճանապարհին: Եթե միայն իմանաք, թե ինչի համար եք կանչված, դուք պատրաստ կլինեք զիջումների՝ ձեր նպատակին հասնելու համար:

Այս դարավոր հարցը հնչում է մեզ համար. «Ինչ օգուտ ունի մարդը, եթե ամբողջ աշխարհը ստանա և կորցնի իր անձը» (Մատթ. 16.26):

Գիտելիքն այն մասին, թե *ով եք դուք*, անսահմանորեն ավելի կարևոր է, քան իմանալը, թե ուր եք գնում, կամ նույնիսկ՝ թե ինչ

կարող եք անել: Քանի որ Աստված ձեր Արարիչն է, Նա շատ բան ունի ասելու այն մասին, թե ով եք դուք: Եվ ձեր ճշմարիտ ինքնությունն ի հայտ կբերի այն, թե ինչպիսին կարող եք լինել:

Ո՞վ եք դուք

Չպետք է ձեզ դիտարկեք՝ ըստ ձեր գործերի և նույնիսկ այն իրավիճակների, որոնցով անցել եք: Մի՛ նկարագրեք ձեզ ձեր զբաղվածությամբ: Կարիք չկա, որ հիշատակեք ձեր ամուսնական կարգավիճակը՝ ամուրի, ամուսնալուծված, ամուսնացած կամ՝ հարաբերությունների մեջ գտնվող: Սա «Ֆեյսբուքի» կարգավիճակի թարմացում չէ: Սա չի վերաբերում ո՛չ ինձ, ո՛չ այլ մարդկանց:

Ես ուզում եմ, որ հենց *դուք* իմանաք, թե ով եք:

Մինչև շարունակելը, գրիչ վերցրեք, փակեք ձեր աչքերը և խնդրեք ձեր Արարչին շշնջալ ձեզ այն եզակի հատկանիշները, որոնք Նա դրել է ձեր մեջ: Մի՛ վախեցեք՝ մտածելով, որ բառերն այն մասին, թե որքան սիրված և արժեքավոր եք դուք, ընդամենը ձեր մտքի արդյունքն են: Դուք հենց այդպիսի՛ն եք Նրա համար: Մի պահ կանգ առեք և ճանաչեք: Ես քաջալերում եմ ձեզ, որ գրի առնեք երեք բառ կամ արտահայտություն, որոնք Նա շշնջում է ձեզ: Երբ ավարտեք, նայեք այդ բառերին, որոնք լսեցիք, երբ կարողացաք մի կողմ թողնել բոլորի կարծիքները ձեր մասին և լսել այն, ինչ Աստված շշնջաց ձեզ: Միգուցե դուք նույնիսկ մի փոքր զարմացած լինեք ձեր ցուցակով: Արդյոք շա՞տ ժամանակ է անցել այն պահից, երբ վերջին անգամ այսպես էիք մտածել ձեր մասին:

Ուզում եմ հավաստիացնել ձեզ, որ Աստված երբեք չի խոսի այն, ինչը հակառակ է Իր Խոսքին: *Սուրբ Հոգին կենդանացնում է այն, ինչ հայտնում է Աստծո Խոսքը:* Բայց մի՞թե Աստվածաշունչ ունենալը նշանակում է, որ մենք պետք է միայն կարդանք և դադարենք լսել: Եբրայեցիների 12.28-ի թարգմանությունը՝ ըստ «Ուղերձ» Աստվածաշնչի, հավաստիացնում է մեզ, որ «Աստված

անտարբեր դիտորդ չէ»: Ես համոզված եմ, որ այն երկնային հարցը, որը յոթ անգամ տրվում է Հայտնություն գրքում, այսօր ուղղված է մեզ.

> «Ձեր ականջներն արթուն են: Լսե՛ք: Լսե՛ք Քամու Խոսքերը՝ Հոգուն, որը փչում է եկեղեցիներում» (Հայտն. 2.7,11,17,29, 3.6,13,22, Ուղերձ):

Այն, որ այս հարցը կրկնվում է յոթ անգամ Աստվածաշնչի մեկ գրքում, միանշանակ ընդգծում է դրա կարևորությունը... և դրդում է ինձ գիտակցել, որ իմ ականջները կարող են քնած լինել, նույնիսկ երբ ես արթուն եմ: Ես մեծ հույս ունեմ, որ այս գիրքը կարթնացնի ձեր ականջները՝ լսելու համար:

Մենք դեռ կարող ենք դիմել Սուրբ Հոգուն և լսել Նրա ձայնը: Ի՞նչ կլիներ, եթե խնդրեինք Սուրբ Հոգուն խոսել մեր կյանքի այն բնագավառներում, որոնցում լռեցրել ենք Նրան: Դուք թույլ կտա՞ք Նրան խոսել ձեզ հետ երես առ երես: Արդյո՞ք Աստված թույլտվություն ունի խոսելու ձեր ընկերների, ամուսնության և ընտանիքի մասին: Մենք բազում ձևերով փակում ենք մեր ականջներն Աստծո զգուշացումների համար, և անելով դա՝ բաց ենք թողնում շատ բաներ, որոնք Նա ցանկանում է փոխանցել մեզ: Աստծո ձայնը լսելը՝ որպես Քրիստոսի մարմին, սկսվում է առանձին մարդկանցից, ովքեր որոշում են լսել Նրա ձայնը: Արդյո՞ք մենք կհամարձակվենք արթնացնել մեր ականջները՝ լսելու համար:

Մենք չենք կարող թույլ տալ մեզ՝ կասկածել Աստծուց տրված մեր եզակի ընթացքին և կոչմանը: Վարանելու, վախի և բարկության պատճառով մենք վտանգի կենթարկենք այն ամենը, ինչ վստահված է մեզ: Աստված ցանկանում է փրկել, վերականգնել և փոխել ձեր ինքնությունը, որ չմնա ոչ մի միջադեպ, ժամանակահատված կամ անուն ձեր անցյալից, որը կարող է որոշել, թե ով եք դուք: Այո՛, կյանքի փուլերը, քննադատությունը և տարբեր իրադարձությունները կարող են մաքրել ձեր անձը և ամուր բնավորություն ձևավորել ձեր մեջ, բայց դրա՛նք չեն ձեր կյանքի էությունը, այլ՝ Աստված...

Աստված փնտրել է ձեզ Իր ամբողջ սրտով, քանի որ դուք յուրովի սիրված եք Նրանից և յուրովի եք արտահայտում Նրա սերն այլ մարդկանց հանդեպ: Այն ինքնությունը, որը մենք ստացել ենք՝ Աստծո զավակներ դառնալով, սկսում է արտահայտվել, երբ Նրա զավակներից յուրաքանչյուրը դառնում է այնպիսին, ինչպիսին ստեղծված է: Նա ավարտում է այն, ինչը սկսել է այս աշխարհում, որում բոլորը կա՛մ փնտրում են իրենց, կա՛մ նմանակում են այլ մարդկանց: Այս գիրքը՝ Նրան փնտրելու հրավեր է, որպեսզի Նա, Իր հերթին, բացահայտի ձեզ:

Հարցեր քննարկման համար

1. Ինչո՞ւ է ավելի կարևոր, որ իմանաք, թե *ով* եք դուք, քան, օրինակ, թե *ուր* եք դուք գնում:
2. Խոսե՛ք այն մասին, թե ինչու է *եզակին* ավելի լավ, քան *հավասարը* կամ *նույնը:*
3. Անվանե՛ք մի քանիսին ձեր մրցակիցներից, որոնց պատճառով դուք չեք կարողանում լիարժեք կերպով ընդունել ձեր ճշմարիտ ինքնությունը և Աստծո սերը:
4. Ձեզ համար դժվա՞ր է պատկերացնել ինքներդ ձեզ՝ առանց ձեր զբաղվածության: Եթե այո՝ ի՞նչն է պատճառը:
5. Ի՞նչ է Աստված շշնջում ձեզ:

2

Մեր անզուգական Աստված

Այստեղ գրված բառերը հասկացություններ են: Դուք պետք է վերապրեք այն, ինչ դրանք նկարագրում են:
Սուրբ Օգոստինոս

Չկա Նրա նմանը

Հյուսիսային Ամերիկայում, ուշ 1980-ական թվականներին, քրիստոնեական երկրպագության երաժշտությունը փոփոխություն կրեց, երբ «Ինթեգրիթի Մյուզիք» ընկերությունը սկսեց որոնել փառաբանության երգեր տարբեր աշխարհամասերից՝ մեզ ներկայացնելու համար: Մեր ընտանիքը ոգեշնչված սպասում էր նոր ձայներիզների, որոնք ստանում էինք ամսական բաժանորդագրությամբ (այո, ես այդքան տարեց եմ), իսկ հետո անընդմեջ լսում էինք: Մենք այնքան շատ էինք վերափաթաթում լսաժապավենները՝ մեր սիրած երգերը կրկին ու կրկին լսելու համար, որ մինչև ամուսինս, վերադառնալով իր հերթական ճանապարհորդությունից, հասցնում էր լսել դրանք, երգերի վարպետորեն մշակված բարձր և ցածր ձայնային տոնները գրեթե անորսալի էին դառնում: Կար մի ձայներիզ, որը մեր ընտանիքն ամենից շատ էր սիրում. այն կոչվում էր *«Ցնծա՛, Աֆրիկա»:* Մինչև օրս ես ասես տեսնում եմ երկրորդ որդուս՝ Օսթինին, ով իր ճոճվող ձիու վրա նստած՝ Միկի Մաուսի պատկերով

անդրավարտիքով և վեր ու վար ցատկոտող ոսկեգույն մազերով, կոկորդալիր երգում էր այդ երգերը:

Այդ երգերից մեկում հարավաֆրիկյան փառաբանության ավագը ջերմեռանդորեն կրկնում էր «Չկա Նրա նմանը» արտահայտությունը:

Առանց՝ նույնիսկ մի փոքր վարանելու, իմ երեքամյա որդին փորձում էր հնարավորինս նմանակել այդ փառաբանության ավագի ջերմեռանդ հռչակումն ամեն անգամ, երբ հնչում էր այդ երգը:

Մեկ օր Օսթինը մի հարց տվեց ինձ, որը ես միգուցե պետք է կանխատեսեի.

– Մայրիկ, իսկ որտեղ է Աստծո նմանը:

Ես հնարավորինս բացատրեցի որդուս, որ նա չէր երգում, որ Աստծո *նմանը այլ տեղում է*, այլ՝ որ *չկա ոչ ոք՝ Նրա նման:*

Այն, որ Աստված միակն է, չի նշանակում, որ մենք ծառայում ենք միայնակ կամ ձանձրացած Աստծո: Նույն կերպով, օրինակ, «Նա վեր է բոլորից» արտահայտությունը չի նշանակում, որ Նա թույլ չի տալիս ոչ ոքի մոտենալ Իրեն:

Մեր Աստված չի դիտում և սպասում՝ ոչինչ չանելով: Նա հոգացել է ամեն ինչի մասին: Այժմ Նա հանգստանում է Իր ավարտած գործի մեջ և բերկրանք է ապրում, երբ Իր զավակները խնդրում են Իրեն՝ ցույց տալ, թե ինչպես է ամեն ինչ լինելու:

Ո՛չ էլ կարելի է ասել, որ Բարձրյալը և Սուրբը դրսում է և ներս է նայում՝ տեսնելու համար, թե ինչ է տեղի ունենում այս աշխարհում:

Նրա տեսանկյունն անցյալի, ներկայի և ապագայի վերաբերյալ՝ համաժամանակյա է. Նա տեսնում է վերջը՝ սկզբից, և սկսում է ինչ-որ բան անել՝ դա ավարտին հասցնելուց հետո:

Նա ցանկանում է լինել մեր ներսում և նայել մեր միջից, ոչ թե այն պատճառով, որ Նրան պետք են մեր աչքերը, այլ որովհետև մեզ պետք է Նրա տեսողությունը:

Բարձրյալ Աստված վեր է այն ամենից, ինչը մենք երբևէ կարող ենք ընկալել:

Սաղմոս 96-ում տեսնում ենք, որ սաղմոսերգուն համակված էր երկյուղածությամբ այս հայտնությունից:

«Տիրոջը նոր ե՛րգ երգեք.
Երգե՛ք Տիրոջը, ամե՛ն երկիր:
Երգե՛ք Տիրոջը, օրհնե՛ք Նրա անունը,
Քարոզե՛ք օրեցօր Նրա փրկությունը:
Պատմե՛ք հեթանոսների մեջ Նրա փառքը,
բոլոր ազգերի մեջ՝ Նրա հրաշքները:
Որովհետև Տերը մեծ է և շատ օրհնված.
ահավոր է Նա ամեն աստվածների վրա:
Որովհետև ազգերի բոլոր աստվածները կուռքեր են,
բայց Տերն արեց երկինքը:
Փառք և մեծություն կա Նրա առջև,
Զորություն և գեղեցկություն՝ Նրա սրբության մեջ:
Տվե՛ք Տիրոջը, ո՛վ ազգերի ցեղեր,
Տվե՛ք Տիրոջը փառք և զորություն,
Տվե՛ք Տիրոջը Նրա անվան փառքը,
Ընծա՛ բերեք և մտե՛ք Նրա սրահները:
Երկրպագությո՛ւն արեք Տիրոջը սուրբ զարդարանքով.
Վախեցե՛ք Նրա երեսից, ո՛վ ամեն երկիր» (խոսք 1-9):

Աստծո Խոսքը շարունակաբար առաջադրում է միևնույն հարցը՝ այս կամ այն կերպով. «Ո՞վ կա Բարձրյալի պես»:

Սա պարզապես հռետորական հարց չէ, որի նպատակը՝ մեզ մտածությունների գիրկը գցելն է: Սա որոշիչ հարցադրում է, որը պահանջում է հստակ պատասխան՝ «Ոչ ո՛ք»: Մեր պատասխանը ցույց է տալիս մեր դիրքորոշումը. մենք կա՛մ ընդունում ենք, կա՛մ ակամա ժխտում ենք այն, ինչ Նա արել է մեզ համար: Գիտեք, մի ժամանակ կար մեկը, ով պատկերացնում էր, որ ինքն Ամենակարողի նման է: Նա հրեշտակապետ էր, ով շատ առումներով կատարելության գագաթնակետն էր: Նա հայտնի է մեզ որպես սատանա, բայց այդ ժամանակ նրա անունը Լյուցիֆեր էր՝ առավոտյան աստղ, և նա պատասխանատու էր երկրպագության համար: Նա տեսնում էր Աստծո փառքը և կանգնում էր

Նրա սուրբ ներկայության մեջ Գահի սրահում: Եզեկիել 28.12-17-ում նկարագրվում է նրա այդ վիճակը.

«Դու կատարելության կնիքն ես՝
լի՝ իմաստությամբ, և գեղեցկությամբ կատարյալ:
Եդեմում՝ Աստծո դրախտում էիր.
բոլոր պատվական քարերը քո ծածկոցն էին... և ոսկի:
Քո թմբուկների և քո սրինգների գործը
քեզ համար քո ստեղծված օրը պատրաստվեց:
Դու մի օծված քերովբե էիր՝ ծածկող,
և Ես քեզ շինեցի. Աստծո սուրբ սարի վրա էիր:
Կրակե քարերի մեջտեղով էիր ման գալիս:
Դու կատարյալ էիր քո ճանապարհներում
քո ստեղծված օրից,
մինչև որ քեզանում անօրինություն գտնվեց:
Քո առևտրի շատության համար
լցվեց քո ներսը զրկանքով, և դու մեղանչեցիր:
Եվ Ես քեզ, իբրև պիղծ, հեռացրի Աստծո սարից
և քեզ փչացրի, ո՛վ ծածկող քերովբե,
կրակե քարերի միջից:
Սիրտդ հպարտացավ քո գեղեցկությունից:
Դու ապականեցիր քո իմաստությունը քո գեղեցկության պատճառով»:

Աստված ստեղծել էր նրան գեղեցիկ, իմաստությամբ լեցուն և կատարյալ՝ տեսքով և գործերով: Ինչ-որ պահի նրա երկրպագության մակարդակը ցածրացավ: Միգուցե այն վերածվեց ընդամենը հիացմունքի: Նրա անօրինության ճանապարհը պարզորեն նշված չէ, բայց մենք գիտենք, որ այս փառահեղ և իմաստուն արարածը սկսեց դիտարկել իր Արարչին որպես մրցակցի: Ճշմարիտ երկրպագուն գիտակցում է, որ առանց Աստծո ինքը ոչինչ է: Եսային նկարագրում է նրա անկումը հետևյալ կերպով.

«Ինչպե՞ս վայր ընկար Երկնքից,
ո՛վ առավոտը ծագող Արուսյակ.
Կտրվեցի՞ր՝ գետին ընկար,
ո՛վ ազգեր նկուն անող:
Բայց ինքդ ասել էիր քո սրտում.

«Վեր կելնեմ Երկինք,
Աստծո աստղերից բարձր կդնեմ իմ աթոռը,
կնստեմ աստվածների ժողովի սարի վրա
հյուսիսի ծայրերում:
Վեր կելնեմ ամպերի բարձրությունների վրա,
Բարձրյալին կնմանվեմ»» (Եսայի 14.12-14):

Նա չէր կարող դառնալ Բարձրյալի նման... նա ընդամենը կարող էր *հրաժարվել իր ինքնությունից:* Եվ Լյուցիֆերը՝ առավոտյան աստղը, դարձավ սատանան՝ ստախոսը: Սեփական անձն ուրանալը սկսվեց նրա սրտում: Նրա սկիզբը կատարյալ էր, բայց վերջում նա արատավորեց ինքն իրեն: Մենք արատավորված և անկատար ենք ծնվելուց ի վեր, բայց Քրիստոսում լիարժեք և կատարյալ ենք դառնում՝ վերստին ծննդյան միջոցով: Հպարտությունը խրախուսում է մեզ՝ երկրպագել մեր անձը, իսկ խոնարհությունը գահազուրկ է անում մեր եսասիրությունը, որն առաջացել է հպարտության պատճառով: Երբ Եսային տեսավ Տիրոջը, կորցրեց իրեն:

«Եվ ես ասացի. «Վա՜յ ինձ, որովհետև կորած եմ: Որովհետև ես պիղծ շրթունքով մարդ եմ, և ես պիղծ շրթունքով ժողովրդի մեջ եմ բնակվում, և իմ աչքերը տեսան Զորաց Տեր Թագավորին»» (Եսայի 6.5):

Աստված հոգաց այդ մասին, և այն քարերից մեկը, որոնց վրա Լյուցիֆերը մի ժամանակ քայլում էր, բերվեց խոնարհված Եսայու մոտ:

«Եվ սերովբեներից մեկը թռավ ինձ մոտ՝ ձեռքին մի կրակի կայծ, որ ունելիով առել էր սեղանի վրայից: Եվ նրանով դիպավ իմ բերանին և ասաց. «Ահա սա դիպավ քո շրթունքներին, և քո անօրինությունը հեռացավ, և քո մեղքը քավվեց»» (Եսայի 6.6,7):

Երբ փնտրում ենք Աստծուն, մենք գտնում ենք Նրան: Ունենալով այս հայտնությունը՝ մենք երկրպագում և հռչակում ենք, որ միայն Նա է սուրբ, միայն Նա է բարի, միայն Նա է ճանապարհը, ճշմարտությունը և կյանքը: Միայն Նա է Բարձրյալ Աստված:

Մեր Աստծո գոյությունն իսկ աննախադեպ է. այն չունի նախադեպ կամ սկզբնակետ: Նրանից առաջ ոչ ոք չի եղել: Մեր Աստված չի կազմավորվել կամ զարգացել: Մեր Աստված կար, կա և գալու է: Մենք եզակի ինքնություն ունենք, քանի որ եզակիությունը բխում է Աստծուց:

Նրանից առաջ չի եղել ոչ մի աստված. ահա թե ինչու մենք չպետք է ունենանք ոչ մի աստված Նրա առջև: Թեև մեր Աստված անտեսանելի է, Նրա գոյությունն անհերքելի է: Հռոմեացիների գիրքը հաստատում է սա.

> «Բայց հիմնական գիտելիքն Աստծո մասին պարզորեն հայտնված է: Բացեք ձեր աչքերը, և ահա՛ այն: Երկար և մտածկոտ կերպով ուսումնասիրելով Աստծո ստեղծագործությունը՝ մարդիկ միշտ կարողացել են տեսնել այն, ինչ նրանց աչքերը, որպես այդպիսին, չեն կարող տեսնել. օրինակ՝ հավիտենական զորությունը և Նրա աստվածային կյանքի առեղծվածը: Այնպես որ, ոչ ոք գոհացուցիչ արդարացում չունի» (Հռոմ. 1.19,20, Ուղերձ):

Անգլերեն Ստանդարտ Աստվածաշնչում այսպես է գրված.

> «Որովհետև այն, ինչ կարելի է իմանալ Աստծո մասին, պարզ է նրանց համար, որովհետև Աստված ցույց է տվել դա նրանց: Որովհետև Նրա անտեսանելի հատկանիշները, այսինքն՝ Նրա հավիտենական զորությունը և աստվածային բնությունը, պարզորեն ընկալվում են նույնիսկ աշխարհի արարումից ի վեր՝ այն բաներով, որոնք ստեղծվել են: Այնպես որ, նրանք արդարացում չունեն»:

Ամբողջ արարչագործությունը հաստատում է իր Արարչի գոյությունը, բայց դա չի նշանակում, որ այն լիովին հայտնում է մեր Աստծուն: Հուսով եմ, որ այս գլուխը կարթնացնի ձեր հոգին, որ ավելի սերտ կապ հաստատեք Նրա հետ:

Մենք արդեն նշեցինք, որ մենք՝ Աստծո դուստրերս, չունենք մրցակիցներ, քանի որ մեր երկնային Հայրը սիրում է մեզ անզուգական կերպով: Որպեսզի ավելի սերտ կապ հաստատենք մեր գերբնական պարգևի հետ՝ այն ինքնության, որն Աստված տվել է մեզ, անչափ կարևոր է, որ ավելի լավ հասկանանք այն: Եկեք

ավելի ընդլայնենք մեր պատկերացումն այն մասին, թե ով է մեր անզուգական Աստված: *«Մերիամ-Վեբսթերի բառարանը»* սահմանում է Աստծուն որպես «Էակ, որը կատարելապես զորավոր, իմաստուն և բարի է, որին պետք է երկրպագել՝ որպես տիեզերքի արարիչ և իշխան»:

Միգուցե դուք համարեք, որ սա համապարփակ և ամփոփիչ սահմանում է, բայց այն ընդամենը սկիզբն է: Մեր մարդկային լեզվի խոչընդոտող բնույթի և մեր նեղ երկրային տեսանկյան պատճառով չենք կարող նկարագրել Անսահմանին՝ առանց սահմանափակումների: Ինչպե՞ս կարող ենք բառեր գտնել, որ նկարագրենք Նրան, Ում հայտնությունն իսկ անխոս կթողնի մեզ:

Աստված վեր է սահմանումներից:

Որևէ առարկա կամ երևույթ սահմանելու համար դուք պետք է ընկալեք դրա էությունը և ձևակերպեք այն ձեր բառերով: Քանի որ Աստված գերազանցում է այն ամենը, ինչ կարող է արտահայտել մեր խոսքը, Նա արհամարհում է դրանով արտահայտված չափանիշները:

Լավ, մոռացե՛ք Նրան սահմանելու մասին: Միգուցե կարելի է նկարագրե՞լ Նրան: Կրկին, դա անհնար է: Ինչպե՞ս մենք կարող ենք նկարագրել Նրա պատկերը, եթե ոչինչ չենք նշմարում Նրա անմատույց լույսի մեջ:

> «Նա կգա ճիշտ ժամանակին. Նրա գալուստը երաշխավորված է Օրհնյալ և Անառարկելի Իշխանի՝ Բարձրյալ Թագավորի, Բարձր Աստծո կողմից: Նա Միակն է, Ում չի կարող դիպչել մահը. Նրա լույսն այնքա՜ն պայծառ է, որ ոչ ոք չի կարող մոտենալ: Նա երբեք չի տեսնվել մարդկային աչքերով. մարդկային աչքերն անկարող են ընկալել Նրան. պատի՛վ Նրան և հավիտենական իշխանությո՛ւն: Այո՛» (Ա Տիմոթ. 6.15,16, Ուղերձ):

Եթե մեր տեսողությունը չի կարող նույնիսկ ընկալել մեր Աստծո կերպարանքը, միակ բանը, որը մենք ի զորու ենք անել, Նրա զարմանալի էության պատկերը մեր մտքում կառուցելն է: Մեր խոսքերն անօգնական կգտնվեն, և մենք կկրկնենք Հոբի ասածն

այն բանից հետո, երբ Աստված հայտնվի Իր սքանչելիքների պտտահողմով. «Ականջի լսելով ես լսել էի Քո մասին, բայց հիմա աչքս տեսնում է Քեզ: Այդ պատճառով նվաստանում եմ և զղջում հողի և մոխրի վրա» (Հոբ 42.5,6):

Ինձ շատ է դուր գալիս այն, թե ինչպես է «Ուղերձ» թարգմանությունը վերծանում այս խոսքերը.

> «Ես խոստովանում եմ, որ մի ժամանակ ապրում էի Քո մասին լսածով. այժմ ինքս եմ ըմբռնում ամեն ինչ՝ իմ աչքերով և ականջներով: Ես ցավում եմ. ների՛ր ինձ: Ես այլևս չեմ անի դա, խոստանո՛ւմ եմ: Ես այլևս չեմ ապրի մարդկանց խոսքերի մնացորդներով, իմ լսածի փշրանքներով»:

Այս հայտնությունն Աստծո մասին՝ Հոբի ներսում արթնացրեց քաղց ավելիի հանդեպ: Մեզնից այնքա՜ն շատերն են բավարարվում Աստծո մասին հայտնության այնպիսի մակարդակով, որը լավագույնս կարելի է անվանել «մնացորդներ և փշրանքներ»: Մենք բավարարվում ենք քարոզներ լսելով, տեսանյութեր դիտելով, «Ֆեյսբուքում» և «Ինստագրամում» փակցրած նյութերը հավանելով և կիսվելով «Թվիթերում» այլ մարդկանց խնջույքների մնացորդներով: Այս ամենի մեջ սխալ բան չկա, բայց ի տարբերություն այն խնջույքի, որն Աստված պատրաստել է ձեզ համար, դրանք պարզապես մնացորդներ և փշրանքներ են: Ես ուզում եմ գրգռել ձեր ախորժակը: Դուք կարող եք խոսել Աստծո *մասին*, կամ Աստված կարող է խոսել ձեզ *հետ*. այս երկուսի միջև ահռելի տարբերություն կա:

Ես գիտեմ՝ ոմանք ասում են, որ այն Աստված, որին մենք ծառայում ենք, այլևս չի խոսում: Բայց նման դատողությունը վիրավորանք է՝ ուղղված Նրա էությանը: Նույնիսկ եթե Նա որոշեր լռել, արարչագործությունը կդառնար Նրա ձայնը: Նա ուղարկեց Իր Սուրբ Հոգուն՝ մեզ մխիթարելու և առաջնորդելու համար: Երբ կարդում ենք Աստվածաշունչը, Աստծո Սուրբ Հոգին է, որ խրատում է մեզ և առաջնորդում դեպի ամեն ճշմարտությունը: Աստված՝ խուլուհամր կուռք չէ: Նա այնպիսի Հայր չէ, ով

լսում է, բայց չի պատասխանում: Եթե մենք չընդունենք Աստծո առեղծվածային ինքնությունը, չենք իմանա, թե ինչպես մոտենալ Նրան: Աստված խոսում է բազմաթիվ կերպերով՝ Իր Խոսքի, Իր արարչագործության, Իր ծառաների, տեսիլքների, երազների և Իր մարմնի անդամների: Համոզված եղեք, որ Նա կխոսի ձեզ հետ այս գրքի էջերով, քանի որ ես աղոթել եմ դրա համար: Աստված մշտապես խոսում է: Հարցը հետևյալն է՝ մենք լսո՞ւմ ենք Նրան, թե՞ սահմանափակում ենք: Անչափ կարևոր է, որ ընդունենք անհամեմատելի և անսահման սքանչելիքների Աստծուն, և հավատանք, որ Նա ցանկանում է անձամբ հաղորդակցվել մեզ հետ:

Փայլուն աստվածաբան Թովմա Ակվինացին կյանքի մեծ մասը նվիրել էր Աստծո մասին աշխատություններ կազմելուն: Լինելով և՛ քահանա, և՛ փիլիսոփա՝ նա ձգտում էր համադրել գիտական հայտնագործությունները՝ Արարչի մասին իր պատկերացման հետ: Այնուամենայնիվ, իր մահից երեք ամիս առաջ Ակվինացին տեսիլքով տեսնում է հավիտենական աշխարհը, և դրա երկյուղածությունը դրդում է նրան գրել այս վերջին բառերը, ինչից հետո նա այլևս գրիչ չի վերցրել: Ակվինացին հայտարարեց.

> «Եկել է իմ գործերի վերջը: Այն, ինչ ես գրել եմ, նման է հարդի՝ այն ամենի համեմատ, ինչ հայտնվեց ինձ»:

Բայց և այնպես, խոսքն այն մարդու մասին է, ով մեծ ուսումնասիրություններ է կատարել և հատորներ գրել՝ ազդարարելով Աստծո փառքը և եկեղեցու առեղծվածային էությունը: Այն ժամանակը, որում նա ապրում էր, շատ էր տարբերվում այսօրվանից: Նրա օրերում մարդիկ ավելի շատ էին կարևորում խոսքը, և այդ պատճառով ավելի զգուշորեն էին խոսքեր ընտրում: Կարդալը և գրելը արտոնություն էր, որը հասանելի էր միայն հարուստներին, արքայազուններին և նվիրյալներին: Թովմա Ակվինացին խոսքի մեծ վարպետ էր, սակայն նա ընտրեց «հարդ» բառը՝ իր կյանքի գործը նկարագրելու համար: Այս բառը հաճախ է գործածվում «անարժեք բան» իմաստով: Հարդը հասկե-

րի կողմնակի արդյունքն է, որն ամենից հաճախ օգտագործում են անասունների տակ փռելու կամ ցանքածածկ գցելու համար: Ըստ էության, նա ասում էր, որ լավագույնը, ինչին արժանի են իր կյանքի գրավոր աշխատությունները, անասուններից և մարդկանցից տրորվելն է:

Սա ամենատեղին համեմատությունն էր, որը նա կարող էր անել Աստծո մասին իր աշխատությունների և իր հայտնության միջև: Նույնպես, հնարավոր է, որ այս երկու նախադասություններն ավելի բարձր խոսեն, քան բոլոր այն էջերը, որոնց վրա նա աշխատել էր ավելի, քան երկու տասնամյակի ընթացքում: Այս խոսքերը կազմվել էին խոնարհությամբ և ակնածանքով, քանի որ Ակվինացին վերապրել էր այն, ինչի մասին Օգոստինոսը գրել էր նրանից ավելի քան մեկ հազարամյակ առաջ. «Աստված լավագույնս ճանաչվում է Նրան չճանաչելու դեպքում»:

Հայտնությունն Աստծո մասին սկսվում է, երբ մենք գիտակցում ենք, որ իրականում դեռ չենք ճանաչում Նրան: Ցանկացած սահմանում, որը մենք ունենք, դասակարգված է ըստ մարդկային պատկերացումների և հասկացողության: Մենք կարող ենք համեմատել Աստծուն պատկերելու մեր կարողությունը նորածնի հետ, ով փորձում է նկարագրել իր մորը, սակայն դեռ ընդունակ չէ բառեր կազմելու: Մարդիկ բնակեցնում են անսահման տիեզերքի աննշան մի հատված: Այնպես է, ասես մենք կանգնած ենք ավազահատիկի վրա և ջանում ենք նկարագրել օվկիանոսի մեծությունը և այն բազմապիսիությունը, որը բովանդակվում է դրա խորքերում:

Ո՞վ է մեր Աստված

Այնուամենայնիվ, մեր Հայրը փափագում է, որ մոտենանք Իրեն, որպեսզի ավելի լավ ճանաչենք Իրեն, վերապրենք Իր ներկայությունը և սովորենք լսել Իր ձայնը: Այլ բան է՝ իմանալ կրակի մասին, և այլ բան է՝ զգալ դրա լույսն ու ջերմությունը, և տեսնել, թե ինչպես է այն այրվում: Աստված հրավեր է հղում մեզ, որ ճանաչենք Իրեն, ոչ թե պարզապես իմանանք Իր մասին: Ահա մի

քանի բան, ինչ մենք միանշանակ կերպով գիտենք Աստծո մասին, քանի որ Նա այդպես է ներկայանում Աստվածաշնչում.

Ես... մեկ եմ (Երկր. Օր. 6.4, Մարկ. 12.29, Գաղատ. 3.20, Ա Տիմոթ. 2.5, Հակոբ. 2.19):
Ես... եմ Ալֆան և Օմեգան (Հայտն. 1.8, 21.6, 22.13):
Ես... եմ, Որ Եմ (Ելից 3.14):
Ես... եմ հավիտենից մինչև հավիտյան (Ա Մնաց. 16.36):
Ես... եմ քո հավատքի Ջորագլուխը և Կատարողը (Եբր. 12.2):
Ես... եմ երկնքի և երկրի Արարիչը (Ծնն. 1.1):
Ես... կարող եմ (Մատթ. 3.9):
Ես... սեր եմ (Ա Հովհ. 4.7-8,16):
Ես... բարի եմ (Մարկ. 10.18, Ղուկ. 18.19, Ա Տիմոթ. 4.4):
Ես... քո ներսում և քո մեջ եմ (Երկր. Օր. 6.15, Ղուկ. 17.21, Ա Կորնթ. 14.25):
Ես... ճշմարիտ եմ (Հովհ. 3.33):
Ես... քո բժիշկն եմ (Ելից 15.26):
Ես... Հոգի եմ (Հովհ. 4.24):
Ես... Հայր եմ (Հովհ. 6.46, Փիլիպ. 2.11):
Ես... փառավորված եմ Որդու մեջ (Հովհ. 13.31):
Ես... քո վկան եմ (Հռոմ. 1.9, Փիլիպ. 1.8, Ա Թեսաղ. 2.5):
Ես... հայտնված եմ (Հռոմ. 1.17):
Ես... քո կողմն եմ (Հռոմ. 8.31):
Ես... ամենի վրա եմ (Հռոմ. 9.5, Եփես. 4.6):
Ես... ողորմած եմ (Երկր. Օր. 4.31, Հռոմ. 12.1):
Ես... հավատարիմ եմ (Ա Կորնթ. 1.9, 10.13, Բ Կորնթ. 1.18):
Ես... մարդկանցից իմաստուն եմ (Ա Կորնթ. 1.25):
Ես... խռովության Աստված չեմ (Ա Կորնթ. 14.33):
Ես... խաղաղության Աստված եմ (Ա Կորնթ. 14.33):
Ես... քո բավականությունն եմ (Բ Կորնթ. 3.5):
Ես... գթած և առատաձեռն եմ (Ելից 34, Նեեմիա 9):
Ես... երկայնամիտ եմ (Հովել 2.13, Նաում 1.3):
Ես... շատ բարձրացված եմ (Փիլիպ. 2.9):
Ես... ներգործում եմ քեզանում (Փիլիպ. 2.13):
Ես... անտեսանելի եմ (Կողոս. 1.15):
Ես... Աստված եմ, որ գալիս է (Կողոս. 3.6):
Ես... արդար Դատավոր եմ (Բ Թեսաղ. 1.5):

Ես... բոլոր մարդկանց Փրկիչն եմ (Ա Տիմոթ. 2.3, 4.10):
Ես... կապված չեմ (Բ Տիմոթ. 2.9):
Ես... ամեն ինչ անողն եմ (Եբր. 3.4):
Ես... անիրավ չեմ (Եբր. 6.10):
Ես... կենդանի եմ (Եբր. 10.31):
Ես... մաշող կրակ եմ (Երկր. Օր. 4.24, Եբր. 12.29):
Ես... լույս եմ (Ա Հովհ. 1.5):
Ես... քո սրտից ավելի մեծ եմ (Ա Հովհ. 3.20):
Ես... եմ Տերը, որ է, որ էր, և որ գալու է (Հայտն. 1.8):
Ես... սուրբ եմ (Հայտն. 4.8):
Ես... ամենակարող եմ (Հայտն. 11.17):
Ես... եմ քո զորությունը (Ելից 15.2):
Ես... եմ քո գոհության երգը (Ելից 15.2):
Ես... նախանձոտ եմ (Ելից 34.14, Երկր. Օր. 4.24):
Ես... մարդ չեմ (Թվոց 23.19):
Ես... աստվածների Աստվածն եմ և տերերի Տերը (Երկր. Օր. 10.17):
Ես... մեծ, հզոր և ահեղ եմ (Երկր. Օր. 10.17):
Ես... աչառություն չեմ անի (Երկր. Օր. 10.17):
Ես... քո պարծանքն եմ (Երկր. Օր. 10.21):
Ես... քեզ հետ եմ պատերազմում (Երկր. Օր. 20.4):
Ես... հզոր պատերազմող եմ (Ելից 15.3):
Ես... քո ապավենն եմ (Երկր. Օր. 33.27):
Ես... վեմ և բերդ եմ (Բ Թագ. 22.32,33):
Ես... եմ միակ Աստված (Երկր. Օր. 4.32,35, Գ Թագ. 8.60):

Իհարկե, այս ցուցակն ամբողջական չէ: Ես առաջարկում եմ ուսումնասիրել Նրա ինքնության այս բոլոր հատկանիշները, բայց այս գլխում ցանկանում եմ կենտրոնանալ երեքի վրա:

Աստված մեկ է

«Լսիր, ո՛վ Իսրայել, մեր Տեր Աստված՝ Տերը, մեկ է: Եվ սիրիր քո Տեր Աստծուն ամբողջ սրտով, ամբողջ հոգով և ամբողջ զորությունով» (Երկր. Օր. 6.4,5):

«Մեկ» բառն այս խոսքում ոչ մի դեպքում չի ենթադրում, որ մեր Աստված առաջին տեղում է ինչ-որ տիեզերական աստվա-

ծային մրցույթում: «Մեկ» բառը նույնպես չի վերաբերում Աստծուն թվային արժեք վերագրելուն, այլ նշանակում է, որ Աստված միակն է: «Մեկ»-ը նշանակում է, որ մեկ ուրիշը չկա: Գոյություն չունի Աստված համար երկու, երեք կամ չորս: Միայն Նա է արժանի, որովհետև միայն Նա է Աստված: Հիսուսը գրեթե կրկնում է այս հատվածը՝ խոսելով առաջին և մեծ պատվիրանի մասին.

> «Հիսուսն էլ ասաց նրան. «Սիրի՛ր քո Տեր Աստծուն քո ամբողջ սրտով, քո ամբողջ անձով և քո ամբողջ մտքով: Սա է առաջին և մեծ պատվիրանը» (Մատթ. 22.37,38):

Մեր սերն Աստծո հանդեպ պետք է միասնաբար արտահայտվի մեր սրտով, անձով և մտքով: Միայն Աստված է մեր ամբողջ ուշադրության կենտրոնը, և միայն Նա է արժանի մեր երկրպագությանը: Աստված հասկանում է, որ մեր կյանքը լիարժեք չի լինի, եթե մեր սիրտը բաժանված լինի, և Նա չի հանդուրժի ցանկացած աստվածների, որոնք կփորձեն մրցակցել Իր հետ. այնպես որ, Նրա պատվիրանը բարի է: Մենք չենք ստացել այս պատվիրանը, քանի որ Աստված համարում է, որ Իր դիրքը մեր կյանքում վտանգված է: Նպատակը՝ մեզ պաշտպանելն է, որպեսզի մենք չշեղվենք և չմոլորվենք:

Այս աստվածաշնչյան հատվածն այսօր կարող է մի փոքր շփոթեցնել մարդկանց, երբ շատերը չէ, որ այլ աստվածների երկրպագուներ են համարում իրենց: Մենք ավելի հակված ենք երկրպագելու հասարակության կողմից ստեղծված կուռքերի, քան հին ժամանակների աստվածությունների: Աստված հենց սկզբից զգուշացրեց Իր զավակներին.

> «Դուք ձեզ համար չաստվածներ և կուռքեր չշինեք և ձեզ համար արձաններ չկանգնեցնեք և պատկերավոր կոթող չդնեք՝ ձեր երկրի մեջ նրան երկրպագություն անելու համար, որովհետև Ես եմ Տերը՝ ձեր Աստվածը» (Ղևտ. 26.1):

Մեզնից շատերը սյուներ կամ քարե արձաններ չեն կանգնեցրել իրենց տներում կամ բակերում, բայց դա չի նշանակում, որ մեր սրտերում կուռքեր չկան: *Կուռքը այն է, ինչին դուք տալիս եք*

ձեր ուժերը կամ ինչից ուժ եք ստանում: Կուռքը կարող է կյանքի իմաստ հաղորդել կամ ապաստան լինել ձեզ համար: Դա կարող է լինել կերակուրի պես անշուք մի բանից մինչև ձեր ներգրավվածությունը սոցիալական ցանցերում: Եթե կրկին կարդաք վերոբերյալ ցուցակն այն մասին, թե ով է Աստված, դուք կիմանաք, որ Նա մեր զորությունն է, կյանքը և ապաստանը: Ոչ մի *մարդ*, *փոխհարաբերություն*, *կազմակերպություն* կամ *առարկա* չպետք է իշխանություն ունենա ձեր կյանքում, այլ միայն՝ Աստված:

ԿՈՒՌՔԸ ԱՅՆ Է, ԻՆՉԻՆ ԴՈՒՔ ՏԱԼԻՍ ԵՔ ՁԵՐ ՈՒԺԵՐԸ ԿԱՄ ԻՆՉԻՑ ՈՒԺ ԵՔ ՍՏԱՆՈՒՄ:

Մեզնից ոմանց համար կուռքը՝ մեր զգացմունքներն են: Եթե մեզ գեղեցիկ ենք *զգում*, մենք համարում ենք, որ գեղեցիկ ենք: Եթե մեզ լավ ենք *զգում*, մենք համարում ենք, որ լավն ենք: Եթե մենք ապրենք միայն մեր զգացմունքներով, դրանք կստեն մեզ, և կարճ ժամանակ անց մոլորության մեջ կհայտնվենք:

Ճշմարտությունն այն է, որ դուք գեղեցիկ եք, քանի որ մեր Աստված գեղեցկացնում է խոնարհներին՝ փառավորելով նրանց փրկությամբ (տե՛ս Սաղմ. 149.4): Դուք գեղեցիկ եք, որովհետև Աստված ամեն բան գեղեցիկ է անում իր ժամանակին (տե՛ս Ժողով. 3.11): Թույլ մի՛ տվեք, որ անմիտ կուռքերը և այն, ինչ այս աշխարհը գեղեցկություն է անվանում, խոսեն *ձեզ հետ*, երբ Աստված արդեն օրհնություն է հռչակել *ձեր կյանքում:* Դավիթը, ով երկրպագու և պատերազմող էր, այսպես նկարագրեց կռապաշտությունը.

«Նրանց կուռքերն արծաթ ու ոսկի են,
Մարդու ձեռքի գործեր.
բերան ունեն և չեն խոսում,
աչքեր ունեն և չեն տեսնում,
ականջներ ունեն և չեն լսում,
քիթ ունեն և հոտ չեն առնում,
ձեռքեր ունեն և չեն շոշափում,
ոտքեր ունեն և չեն գնում,

և իրենց կոկորդով ձայն չեն հանում:
Նրանց շինողներն էլ նրանց նման են,
և այն ամենը, որ հույս են դնում նրանց վրա» (Սաղմ. 115.4-8):

Ինչ է նշանակում «Նրանց շինողներն էլ նրանց նման են» արտահայտությունը: Երբ դուք մեծարում եք մարդկայինը, դուք սահմանափակվում եք մարդկային կարողությամբ: Կուռքերը կերպարանք են՝ առանց գործողության: Նրանք ունեն կենդանության կերպարանք, բայց չեն կարող կյանք տալ: Այսպիսով, նրանց երկրպագուները փոխզիջման են ենթարկում Աստծուց իրենց տրված միտքը, կորցնում են իրենց ձայնը և ազատությունը: Երբ երկրպագում եք Աստծուն, դուք վերափոխվում եք Նրա պատկերով՝ փառքից դեպի փառք: Քանի որ չկա ոչ ոք՝ մեր Աստծո նման, չկա ավելի լավ միջոց՝ ձեր եզակի ինքնությունն ի հայտ բերելու համար, քան Նրան փնտրելը: Դուք կարող եք սովորել մարդկանցից, բայց երբեք չպետք է մարդկանց երկրպագու լինեք:

Աստված Ալֆան և Օմեգան է

Երկրորդ ճշմարտությունն այն է, որ Աստված հավիտենից հավիտյան է: Այլ կերպ ասած՝ Նա Ալֆան և Օմեգան է: Ալֆան և Օմեգան՝ հունարեն այբուբենի առաջին և վերջին տառերն են: Այս համատեքստում այս երկու տառերը նշանակում են ամեն ինչ՝ սկզբից մինչև վերջ: «Ալֆա» նշանակում է «սկիզբ, ծագում, ծնունդ, ելակետ և շեմ»: «Օմեգա» բառի սահմանումն այնքան էլ պարզ չէ, բայց այն նշանակում է «վերջը, վերջնակետը» և «մինչև ծայրագույն աստիճանը»: Միգուցե «Օմեգայի» սահմանումն ավելի անորոշ է այն պատճառով, որ մարդիկ ավելի ծանոթ են այն բանին, ինչ *եղել է*, քան թե՝ ինչ *կլինի:* Ահա թե ինչու մենք պետք է մոտենանք Աստծուն, որպեսզի լսենք Նրա խորհուրդը: Միայն Նա է եղել այն բանի վերջում, ինչը մեզ հայտնի է որպես ժամանակ: Չկա ոչ ոք՝ Աստծո նման: Եսայի մարգարեն գրում է.

«Հիշեք առաջինները ի հավիտենից, որովհետև Ես եմ Աստված, և ուրիշ աստված չկա, և Ինձ պես մի ջոկը չկա, որ պատմում եմ առաջուց

> վերջինը, և վաղուց այն, որ եղած չէ, որ ասում եմ, թե՝ «Իմ խորհուրդը պիտի հաստատվի», և անում եմ Իմ ամեն ուզածը» (Եսայի 46.9,10):

«Ուղերձ» Աստվածաշնչում այսպես է գրված.

> «Հիշեք ձեր պատմությունը՝ ձեր երկար և հարուստ պատմությունը: Ես *Աստված եմ՝ միակ Աստված, Ում դուք ունեցել եք կամ երբևէ կունենաք՝ անհամեմատելի և անփոխարինելի, Ով ամենասկզբից ասում է ձեզ, թե ինչ է լինելու վերջում,* Ով մշտապես թույլ է տալիս տեսնել, թե ինչ է տեղի ունենալու, Ով հավաստիացնում է ձեզ. «Ես երկար ժամանակ է՝ զբաղվում եմ սրանով: Ես կանեմ ամեն ինչ ճիշտ այնպես, ինչպես որոշել եմ»»:

Աստված ազդարարում է ամեն ինչի վերջը՝ սկզբից: Նա ազդարարում է Օմեգան՝ անմիջապես Ալֆան գրելու պահին: Այս հատվածն առաջարկում է մեզ ետ նայել՝ Նրա հավատարմությունը տեսնելու համար: Նա գիտի, թե ինչպես կավարտվի ամեն օրը, երբ այն դեռ նոր է լուսանում:

> «Արդեն երկար ժամանակ է, որ Ես թույլ եմ տվել ձեզ՝ տեսնել, թե ինչպես եմ գործում: Ես նախապես ասում էի ձեզ, թե ինչ էի պատրաստվում անել, իսկ հետո *անում էի այդ բանը, և դա կատարվում էր, և վերջ»* (Եսայի 48.3, Ուղերձ):

Աստծո գործն ավարտին է հասցրած և վերջնական է: Նա ոչինչ անկատար չի թողել: Եվ Նա չի պատրաստվում մտափոխվել կամ նահանջել. Նրա վերջնական պատասխանը՝ Հիսուսն է:

> «Այնպես որ, Ես սկիզբ դրեցի Իմ գործին և սկսեցի ասել ձեզ գալիք իրադարձությունների մասին, նույնիսկ՝ մինչև դրանց կատարվելը: Ահա թե ինչու դուք չեք կարող ասել. «Իմ աստված-կուռքն արեց սա», «Իմ սիրելի աստված-քանդակը պատվիրեց սա»: Այս վկայությունը հաստատվեց բոլորիդ աչքերի տեսածով և ականջների լսածով: Արդյոք չպե՞տք է խոսեք այդ մասին: Եվ դա ընդամենը սկիզբն էր: Կա շատ ավելին, որ Ես ուզում եմ ասել ձեզ՝ այնպիսի բաներ, որոնց գոյության մասին դուք երբեք չէիք իմացել» (Եսայի 48.5-7, Ուղերձ):

Մեր Աստված ասում է մեզ սկզբում, որպեսզի մենք չվստահենք մարդկանց կամ առարկաների, որոնք ի վերջո հիասթա-

փեցնելու են կամ ձախողելու են մեզ: Մի՞թե մենք չպետք է ավելի շատ խոսենք այն մասին, թե ինչ է Աստված արել, փոխարենը՝ թե ինչ ենք մենք արել: Մի՞թե մենք չպետք է ավելի լավ իմանանք Արարչի, քան Նրա ստեղծածների կանխատեսումները:

Աստված շարունակում է.

> «Սա նույն հին բանի նոր տարբերակ չէ, այլ՝ նոր, լիովին նոր բան, ինչը դուք երբեք չեք կարողանա գուշակել կամ հորինել: Երբ լսեք սա, դուք չեք ասի. «Ես միշտ գիտեի այս մասին»» (Եսայի 48.7, Ուղերձ):

Միանգամայն ճիշտ է...
Մեր Աստված հռչակում է վերջը՝ սկզբից:
Քրիստոսում Աստված սիրեց մեզ՝ նախքան մեր սիրելը,
Նա բռնեց մեզ՝ նախքան մեր ընկնելը,
ներեց մեզ՝ նախքան մեր ներում խնդրելը,
հագցրեց մեզ արդարությամբ՝ նախքան մենք կհասկանայինք,
որ մերկ ենք,
և մաքրեց մեզ՝ նախքան մեր իմանալը մեր կեղտի մասին:

Աստված անվանեց բոլոր թշնամիներին, հեռավորներին և օտարականներին Իր զավակները և ընկերները: Եվ Նա գրեց մեր կյանքի պատմությունը՝ մինչև մեր առաջին շունչն առնելը:

Ես կոչ եմ անում ձեզ, որ սկսեք տեսնել այս անզուգական Աստծո ինքնությունը և սկսեք նմանակել ձեր Հորը՝ որպես քնքշորեն սիրված, հրաշալի զավակներ:

Աստված «Ես եմ, Որ Եմ»-ն է

Հաջորդը՝ ուզում եմ խոսել «Ես եմ, Որ Եմ» անվան մասին: Ելից 3.13,14-ում գրված է.

> «Եվ Մովսեսն ասաց Աստծուն. «Ահա ես գնում եմ Իսրայելի որդիների մոտ և կասեմ նրանց. «Ձեր հայրերի Աստված ինձ ձեզ մոտ է ուղարկել»»: Եվ երբ որ ինձ ասեն, թե «Ինչ է Նրա անունը», ես ի՞նչ ասեմ նրանց:
>
> Եվ Աստված ասաց Մովսեսին. «Ես եմ, ՈՐ ԵՄ», և ասաց. «Այսպես ասա Իսրայելի որդիներին՝ Ինձ ԵՄ-ը ուղարկեց ձեզ մոտ»»:

Համոզված եմ՝ Մովսեսը միգուցե մտածում էր. «Այդ ի՞նչ անուն է»: Պատկերացրեք, որ ծանոթանաք ինչ-որ մեկի հետ, և երբ հարցնեք նրա անունը, նա ասի. «Իմ անունը Ես եմ է»: Իսկ երբ խնդրեք, որ նա պարզաբանի, նա ընդամենը ասի. «Ես եմ, որ եմ»: Հավանաբար, դուք կշփոթվեք, և ոչ՝ առանց պատճառի: Պատկերացրեք, թե ինչպես կխոսեք նման մարդու հետ. «Բարև, Ե՛ս եմ, ինչպե՞ս ես»: Դուք կխոսեք նրա հետ, բայց այնպիսի տպավորություն կստեղծվի, որ դուք դիմում եք ինքներդ ձեզ: Մեր շփոթության պատասխանն այն է, որ Աստված միակն է, Ով ընդգրկում է ամեն ինչ: Ես ոչ մի դեպքում «Ես եմ, որ եմ»-ը չեմ: Ավելի ճիշտ կլինի անվանել մեզ «Ես եմ, որովհետև Նա է»:

Աստված Նա է, որ է: Աստված գոյություն ունի, որովհետև Աստված գոյություն ունի: Ես գոյություն չունեմ, որովհետև ես գոյություն ունեմ, և ո՛չ էլ՝ որովհետև իմ ծնողները գոյություն ունեն: Ի վերջո, ես գոյություն ունեմ, որովհետև Աստված գոյություն ունի: Նա է *բոլոր* կենդանի հոգիների Արարիչը:

Քանի որ Նա է *«Ես եմ, Որ Եմ»-ը*, ես կարող եմ ասել. *«Ես Քրիստոսում եմ*, Ով «Ես եմ»-ն է»: Չեմ կարծում, որ մենք ճշմարտապես հասկանում ենք, թե որքան զորավոր են այս չորս բառերը. հակառակ դեպքում, մենք այլ կերպով կվերաբերվեինք կյանքին: Այս աշխարհը կփորձի ասել մեզ, թե ով է Աստված, բայց Նա հայտնվել է Իր Որդու միջոցով: Աստված ուզում է հայտնել Իրեն Իր Որդու միջոցով, և միաժամանակ ցույց տալ ձեր ինքնությունը: Մատթեոս 16.13-18-ում Հիսուսը փորձում էր բացատրել սա Իր աշակերտներին.

> «Երբ Հիսուսը հասավ Կեսարիա Փիլիպեի գյուղերը, Նա հարցրեց Իր աշակերտներին. «Ինչ են մարդիկ ասում այն մասին, թե ով է Մարդու Որդին»:
>
> Նրանք պատասխանեցին. «Ոմանք կարծում են, որ Նա Հովհաննես Մկրտիչն է, մյուսներն ասում են՝ Եղիան, իսկ ուրիշները՝ Երեմիան կամ մարգարեներից մեկը»:
>
> Նա շարունակեց. «Իսկ դո՞ւք. Ո՞վ եմ Ես՝ ըստ ձեզ»:
>
> Սիմոն Պետրոսն ասաց. «Դու Քրիստոսն ես՝ Մեսիան, կենդանի Աստծո Որդին»:

> Հիսուսը պատասխանեց. «Աստված օրհնի՛ քեզ, Սիմոն՝ Հովնանի որդի: Դու չիմացար այդ պատասխանը գրքերից կամ ուսուցիչներից: Անձամբ Իմ Հայրը, որ Երկնքում է, թույլ տվեց քեզ իմանալ գաղտնիքն այն մասին, թե *իրականում* ով եմ Ես: Իսկ այժմ Ես կասեմ քեզ, թե ով ես դու *իրականում:* Դու Պետրոսն ես. դու քար ես»» (Ուղերձ):

Դուք հասկացա՞ք սա: Երբ մենք հայտնություն ստանանք այն մասին, թե *իրականում* ով է Հիսուսը, մենք կլսենք Աստծուց, թե *իրականում* ով ենք մենք: Սիմոնն իրականում Պետրոս էր: Նա մշտապես ձկնորս չէր լինելու և միշտ չէր առաջնորդվելու իր զգացմունքներով: Նա Հոգով վարվող առաջնորդ և ժայռ էր դառնալու: Ես գրեթե զգում եմ այն ոգևորությունը, որով Հիսուսը շարունակեց Իր խոսքը Մատթեոս 16.18,19-ում.

> «Սա է այն ժայռը, որի վրա Ես ի մի կբերեմ Իմ եկեղեցին, որն այնքան մեծ ուժ կունենա, որ նույնիսկ դժոխքի դարպասները չեն կարողանա կանգնեցնել այն:
>
> Եվ սա դեռ ամենը չէ: Դու կունենաս բացարձակ և ազատ մուտք դեպի Աստծո թագավորությունը, բանալիներ՝ ցանկացած դուռ բացելու համար. այլևս չեն լինի խոչընդոտներ երկնքի և երկրի միջև, երկրի և երկնքի միջև: «Այո»-ն երկրի վրա՝ «այո» է երկնքում: «Ոչ»-ը երկրի վրա՝ «ոչ» է երկնքում» (Ուղերձ):

Երբ դուք գիտեք, թե ով եք, դուք գիտեք, թե ինչ է հասանելի ձեզ: Եկեղեցու ինքնությունը և մուտքը դեպի երկնային մատակարարումը սերտորեն կապակցված է Քրիստոսի մասին հայտնություն ունենալու հետ: Երբ մենք գիտենք Խոսքը, մենք աղոթում ենք ըստ Խոսքի, և Երկնքի պատասխանը «այո և ամեն» է:

Ո՞վ է Հիսուսը՝ ձեր կարծիքով

Ձեր պատկերացումն Աստծո մասին՝ կարտացոլվի ձեզանում: Այն, թե ինչպես եք դուք ընկալում Աստծուն, ի վերջո կարտացոլվի ձեր առօրյայի և ձեր կայացրած որոշումների մեջ: Աստված հայտնվում է մեր կյանքում այնպես, ինչպես մենք անվանում ենք Հիսուսին: Եթե մենք անվանենք Հիսուսին Բարի Վարդապետ,

Նա կխրատի մեզ: Եթե մենք անվանենք Նրան Իմաստուն Խորհրդատու, Նա իմաստություն կփոխանցի մեզ: Իսլամը, օրինակ, անվանում է Հիսուսին և՛ մարգարե, և՛ բժիշկ: Այնուամենայնիվ, առանձին-առանձին այս տիտղոսներն ընդամենը բեկորներ և փշրանքներ են: Բայց երբ անվանում եք Հիսուսին *Քրիստոս՝ կենդանի Աստծո Որդի*, ձեր մեջ հաստատվում է հայտնությունը Տեր Հիսուսի մասին: Հովհաննեսի առաջին գրքում ասվում է.

Ձեր պատկերացումն Աստծո մասին՝ կարտացոլվի ձեզանում:

«Ով որ դավանի, թե Հիսուսն է Աստծո Որդին, Աստված նրանում է բնակվում, և նա՝ Աստծո մեջ: Եվ մենք ճանաչեցինք և հավատացինք այն սերը, որ Աստված ունի մեզ վրա: Աստված սեր է, և ով որ մնում է սիրո մեջ, Աստծո մեջ է բնակվում, և Աստված՝ նրանում: Սրանում է սերը կատարյալ մեզ հետ, որ համարձակություն ունենանք դատաստանի օրը, որովհետև ինչպես Նա է, այնպես էլ մենք ենք այս աշխարհում» (Ա Հովհ. 4.15-17):

Այս դավանությունը հավիտենական կապ է ստեղծում, և սահմանները Նրա փրկության և մեր իրականության միջև՝ անհայտանում են: Երբ մենք խոսում ենք Աստծո Խոսքը, մեր և ճշմարտության միջև կամուրջ է ձևավորվում: Մենք մոտենում ենք Աստծուն Նրա ինքնության հիման վրա, ոչ թե՝ մեր: Սա նշանակում է, որ ես այն եմ, ինչ Նա է ասում իմ մասին: Այն, թե ինչպես եմ ես անվանում Հիսուսին, որոշում է, թե արդյո՞ք ես հայտնություն կունենամ Աստծո բոլոր խոստումների մասին, որոնք հասանելի են ինձ համար Քրիստոսում: Նա Տե՛ր է, Բժի՛շկ է, Խաղաղության Իշխանն է, իմ հավատքի Ջորագլուխը և Կատարո՛ղն է: Ես անվանում եմ Հիսուսին *Աստվա՛ծ,* թե՛ պարզապես՝ Բարի Վարդապետ:

Քանի որ Նա սեր է, ես սիրված եմ և կարող եմ սիրել:

Քանի որ Նա կյանք է, ես կյանք ունեմ:

Քանի որ Նա զորավոր է, ես զորություն ունեմ:

Քանի որ Նա իմ Եղբայրն է, ես Աստծո դուստրն եմ:

Քանի որ Նա ամենակարող է, ես կարողություն ունեմ:

Քանի որ Նա բժշկող է, ես բժշկված եմ:

Քանի որ Նա իմաստություն է, ես իմաստուն եմ:

Քանի որ Նա է, ես եմ:

Քանի որ Նա է, ես այն եմ, ինչ Նա ասում է իմ մասին:

Ես ահավոր և զարմանալի կերպով եմ ստեղծված:

Ես կոչ եմ անում ընդգրկել Աստծո Խոսքը ձեր առօրյայի մեջ: Դա հենց հիմա սկսելու համար, եկեք մի պահ կանգ առնենք և աղոթենք.

«Սիրելի՛ երկնային Հայր,

Շնորհակա՛լ եմ, որ ես այն ամենն եմ, ինչ Դու ասում ես իմ մասին: Ների՛ր ինձ Քո պատկերը նվազեցնելու և իմ պատրաստած կուռքերին խոնարհվելու համար: Ես հրաժարվում եմ երկրպագել սահմանափակ պատկերների, որոնք մարդու ձեռքի գործն են: Սո՛ւրբ Հոգի, հայտնի՛ր ցանկացած բնագավառ իմ կյանքում, որում այդ կուռքերը դեռ տեղ ունեն: Դու սեր ես, և այդ պատճառով ես ոչ միայն սիրված եմ, այլև կարող եմ սիրել մարդկանց այնպես, ինչպես Դու ես սիրում: Դու իմ կյանքի աղբյուրն ես՝ Միակը, Ում շնորհիվ ես ապրում ու շնչում եմ:

Դու կարող ես ավարտել այն, ինչ սկսել ես իմ կյանքում: Դու զորություն ես տվել ինձ, որ անեմ այն ամենը, ինչ որոշել ես ինձ համար: Քրիստոսում ես Քո դուստրն եմ, և քանի որ իմ երկնային Հայրն ամենակարող է, ես ունեմ ինձ անհրաժեշտ ամբողջ կարողությունը՝ Քո Հոգով: Դու իմ ճշմարիտ Բժիշկն ես: Ես այլևս չեմ սպասի, որ աշխարհը բժշկի ինձ այն վերքերից, որը հենց ինքն է հասցրել: Քանի որ Դու ամբողջ իմաստության աղբյուրն ես, ես կապավինեմ Քո առաջնորդությանը:

Ների՛ր ինձ, որ իմ կյանքում սահմանափակել եմ Քեզ այլ մարդկանց բեկորներով և փշրանքներով: Ես ուզում եմ մտերմո-

րեն և խորապես ճանաչել Քեզ: Ես հավատում եմ, որ Դու ավելին ես, քան ես երբևէ պատկերացրել եմ, և ես խնդրում եմ, որ առաջնորդես ինձ դեպի անզուգական կյանք, որտեղ չկան մրցակիցներ: Քանի որ Դու կաս, ես այն եմ, ինչ Դու ասում ես իմ մասին: Անկախ այն բանից, թե ինչպես եմ զգում ինձ այս պահին՝ ես ահավոր և զարմանալի կերպով եմ ստեղծված:

Հիսուսի անունով, ամե՛ն»:

Հարցեր քննարկման համար

1. Պատահե՞լ է, որ համեմատեք Բարձրյալին այն բաների հետ, որոնք դուք ճանաչել կամ վերապրել եք: Օրինակ՝ գուցե մտածել եք, որ Նա ձեր հոր նման է (թե՛ լավ, թե՛ վատ իմաստով): Ինչպե՞ս եք դիտարկում Նրան հիմա:
2. Ձեր կյանքում կա՞ն բնագավառներ, որոնցում դուք ապրում եք բեկորներով և փշրանքներով, կամ՝ այլ մարդկանց խոսքերով:
3. Ձեր կարծիքով, ի՞նչ նկատի ուներ Օգոստինոսը՝ ասելով. «Աստված լավագույնս ճանաչվում է Նրան չճանաչելու դեպքում»:
4. Ո՞ր բնագավառներում դուք պետք է ավելի լավ ճանաչեք Աստծուն՝ որպես «Ես եմ»:
5. «Կուռքը այն է, ինչին դուք տալիս եք ձեր ուժերը կամ ինչից ուժ եք ստանում»: Ըստ այս պնդման՝ ձեր կյանքի ո՞ր բնագավառներում եք դուք անգիտակցաբար կուռքեր կանգնեցրել:
6. Երբ դուք դավանում եք Աստծո մասին ճշմարտությունը՝ Նրա ներկայության մեջ, ի՞նչ է Նա հայտնում ձեր մասին:

3

Խոստում՝ առանց մրցակցության

Եթե մտածենք վարձատրությունների խոստումների մասին... որոնք բացահայտ կերպով տրված են Ավետարաններում, կարող է թվալ, որ մեր Տիրոջ կարծիքով՝ մեր ցանկությունները ոչ թե չափազանց ուժգին են, այլ՝ չափազանց թույլ: Մենք անտարբեր արարածներ ենք, ովքեր իրենց հիմարացնում են խմիչքով և սեռական կյանքով, այնինչ մեզ հավիտենական ուրախություն է առաջարկվում: Մենք նման ենք անմիտ երեխայի, ով ուզում է խաղալ ցեխի հետ կեղտոտ ետնախորշում, քանի որ չի պատկերացնում, թե ինչ է նշանակում ծովի ափին հանգստանալու առաջարկը: Մեզ գոհացնելը չափազանց հեշտ է:

Կ. Ս. Լյուիս

Շատ դիպուկ էր:

Ձեր կյանքում կա խոստում՝ առանց մրցակցության, որը նույնպես ձեր գանձն է: Այս գանձը վեր է ամեն ինչից և ենթակա չէ ժամանակին: Այն տրվում է ձեզ ոչ նյութական ներուժի տեսքով: Ոմանց կյանքում այս պարգևն անգործունյա է... այն ներկա է, բայց ննջող է:

Միգուցե ավելի հեշտ և սկզբնապես ավելի ոգեշնչող կթվար, եթե ասեի, որ ինչ-որ մեկը մեկ միլիարդ դոլար է ավանդել ձեր

բանկային հաշվին: Բայց նույնիսկ եթե ձեզ տրվեր ավելին, քան դուք կարող էիք ծախսել ամբողջ կյանքում... դա երբեք ճշմարտապես ձերը չէր լինի: Պատճառը երկրային գանձերի օրենքն է. դրանք պետք է մնան իրենց ծագման միջավայրում: Հեռանալով այս կյանքից՝ դուք կկորցնեիք դրանք: Բայց այն գանձը, որը դուք ունեք, դրսևորվում է տարբեր կերպերով՝ հարստացնելով ձեր կյանքը: Եվ այն ձեզ հետ կմնա ամբողջ հավիտենության ընթացքում:

Այն խոստումը, որի մասին ես խոսում եմ, անզուգական է ոչ միայն իր առատությամբ, այլև իր ազդեցությամբ: Այս խոստման պտուղը կուղեկցի ձեր երեխաներին՝ երբ դուք այլևս չլինեք այս երկրի վրա, ինչպես նաև՝ կդիմավորի ձեզ Երկնքում: Այս խոստումն անկարելի է գողանալ ձեզնից, սակայն կարելի է փոխարինել մի ափսե ոսպով ապուրի պես չնչին բանով, ինչպես դա արեց Եսավը (տե՛ս Ծնն. 25): Այն ապահով է, երբ պահվում է՝ ծրարված մեր երազանքների և հույսերի մեջ: Որքան ավելի եք փխրեցնում ձեր սրտի հողը, այնքան այս գանձն ավելի է ծաղկում և ավելանում: Միլիոնավոր մարդիկ կրում են այս խոստման սերմն իրենց սրտում, բայց որքան էլ մարդիկ վերցնում են իրենց բաժինը, այս գանձը երբեք չի պակասում:

Ես խոսում եմ թագավորների Թագավորի և տերերի Տիրոջ օրհնության մասին: Այս գանձն անսահմանորեն ավելին է բոլոր թղթադրամներից, և նույնիսկ՝ արծաթից և ոսկուց: Եթե դուք զրկվեք ամեն ինչից և ոչինչ չունենաք՝ ձեր վրայի հագուստից բացի, միևնույն է՝ այս գանձը կմնա ձեզ հետ: Այն կցված չէ մարդկային ծագում ունեցող որևէ բանի. այն հավիտենական է և կարող է փոխանցվել կամացուկ արված աղոթքի միջոցով: Դուք, իմ ընկեր, արքայական ծագում ունեք՝ նման հեքիաթային արքայադստեր:

Արքայական հրավեր

Պատկերացրեք, որ ինչ-որ մեկը թակում է ձեր դուռը: Դուք վազում եք, որ բացեք, և տեսնում եք թագավորի եթերային սուրհանդակի: Ուզում եմ, որ պատկերացնեք դա Մոխրոտի մասին

հեքիաթի ոճով, բայց սուրհանդակի փոխարեն ձեր դռան շեմին հրեշտակ է կանգնած: Այդ հրեշտակն այնքա՜ն մեծ և լուսավոր է, որ գրեթե ոչինչ չեք տեսնում նրա ետևում, բայց դուք գիտեք, որ այնտեղ վկաների մեծ խումբ կա, և նրանք սպասում են, որ լսեն ձեր պատասխանը: Այդ աստվածային ավետաբերը կանչում է ձեզ անունով և բարձրաձայն հայտարարում է, որ դուք ժառանգորդ եք, որ դուք երկնային արքայադուստր եք: Նրա ետևում բուռն ծափահարություններ են լսվում: Ցնցված՝ դուք հարցով եք պատասխանում նրա հայտարարությանը. «Իսկապե՞ս»: Նա գլխով է անում և հրավեր-նամակ է դնում ձեր ափի մեջ: Դողդոջուն ձեռքերով դուք բացում եք նրա տված ծրարը: Չկա ոչ մի սխալմունք. դրանում գրված է ձեր անունը՝ ոսկե թավատառերով: Դուք խորը շունչ եք քաշում և բարձրացնում եք ձեր արցունքներով ողողված աչքերը, բայց դուք արդեն մենակ եք դռան շեմին: Հրեշտակը և նրա շքախումբն անհայտացել են: Ինչ-որ մեկը ձեր տնից ձայն է տալիս.

– Ո՞վ է դռան մոտ:

Դուք կամացուկ պատասխանում եք.

– Ես:

Դուք համակված եք այն զգացումով, որ ամեն ինչ փոխվել է, բայց նայելով ձեր շուրջը՝ ձեր հանգամանքներին, տեսնում եք, որ ամեն ինչ նույնն է: Այս այցելության նպատակը՝ ձեզ շրջապատող հանգամանքները կամ ձեր գտնվելու վայրը փոխելը չէր: Այն անզուգական փոփոխությունը, որի համար դուք կանչվեցիք, պետք է տեղի ունենա ձեր ներսում:

Դուք իջեցնում եք ձեր հայացքը: Դուք կրում եք նույն հագուստը, որ ձեր հագին էր դուռը բացելիս, բայց, չգիտես ինչու, այն ավելի թեթև է թվում, ասես արդեն չունի իշխանություն՝ ձեզ սահմանափակելու, պիտակելու կամ ձեր ինքնությունը որոշելու համար: Դուք շրջվում եք, որ կրկին տուն մտնեք՝ հասկանալով, որ ապրում եք այդտեղ, բայց դա այլևս ձեր իրական տունը չէ: Ձեզ գրավում է մի հեռավոր քաղաք, որի հիմնադիրը ձեր Աստված և Թագավորն է: Դուք անցնում եք ձեր հյուրասենյակով՝

ձեր սիրելիների կողքով (որոնց դեմքերին մի փոքր շփոթություն կա) դեպի ձեր ննջասենյակը: Ձեր սենյակի լռության և միայնության մեջ դուք բացում եք այդ ծրարը և զգուշորեն դուրս եք հանում հրավերի ոսկեզօծ նամակը:

«Սիրելի՛ դուստր, այժմ դու վերածնված ես. դու Սառան ես՝ Բարձրյալի արքայադուստրը:

Որքան ավելի մտերմորեն ճանաչես Հիսուսին, այնքան Նրա շնորհքը և խաղաղությունը կավելանան քո կյանքում:

Այս արքայական նշանակումը ենթադրում է, որ դու կարող ես ստանալ այն ամենը, ինչի կարիքը երբևէ կունենաս, եթե ձգտես աստվածապաշտության և անցնես քո կյանքի ընթացքը: Վստա՛հ եղիր, որ երբ խորասուզվես Սուրբ գրքերի մեջ, քո երիտասարդությունը, միտքը կնորոգվեն, և դու կիմանաս քեզ շնորհված մեծ և պատվական խոստումների անսահման հարստության մասին: Դրանցից ամեն մեկը հրաշքով տրված է քեզ: Սիրելի՛ս, եթե քո մեջ կասկածներ առաջանան, իմացի՛ր, որ սա լավագույն հրավերն է, որը երբևէ ստացել ես: Դու միայն պետք է երես թեքես այս աշխարհից, որն արդեն իսկ երես է թեքել քեզնից»:

Ես որոշակի ազատություն թույլ տվեցի ինձ և անձնավորեցի Բ Պետրոս 1.2-4 խոսքերը: Բայց եկեք կարդանք նաև այս հատվածն այնպես, ինչպես այն գրված է Աստվածաշնչում.

> «Շնորհք և խաղաղություն շատանա ձեզ վրա Աստծո և մեր Տեր Հիսուսի գիտությամբ: Ինչպես որ Նրա աստվածային զորությունը շնորհեց մեզ այն ամենը, որ կյանքի և աստվածապաշտության համար պետք է՝ Նրա գիտությամբ, որ մեզ կանչեց փառքով և առաքինությամբ, որոնցով ամենամեծ և պատվական խոստումներ են տրված մեզ, որ նրանցով հաղորդակից լինեք աստվածային բնությանը՝ աշխարհի մեջ ցանկությունից եղած ապականությունից հեռու փախչելով»:

Եթե Հիսուսը չթակեր իմ սրտի դուռը, ես ձեռնունայն կմնայի: Ինձ համար հրաշք կլիներ, եթե ես ընդհանրապես ինչ-որ բան ժառանգեի: Իմ ընտանիքը չէր աշխատել, որ ժառանգություն

թողներ եղբորս և ինձ: Այնուամենայնիվ, ի՞նչ կգերադասեի ես. մնացորդնե՞ր, թե՞ ժառանգություն: Ես շատ վաղուց սովորել եմ, որ Աստծո խոստումը գերազանցում է ցանկացած ունեցվածք:

Ինչպե՞ս ենք մենք ստանում այս մեծ խոստումները: Դրանք մերն են դառնում հավատքով: Գաղատացիների 3.14-ում գրված է.

> «Որ Աբրահամի օրհնությունը հեթանոսների մեջ լինի Քրիստոս Հիսուսով, որ մենք Սուրբ Հոգու խոստումն ընդունենք հավատքով»:

Ի՞նչ կգերադասեի ես. մնացորդնե՞ր, թե՞ ժառանգություն:

Ծանոթացե՛ք Աբրամի և Սառայի հետ

Որպեսզի ավելին իմանանք այս խոստումների մասին, վերհիշենք մի հայտնի պատմություն Աստվածաշնչից: Աստված բազմաթիվ պատմություններ է գրել Աստվածաշնչում, որպեսզի մենք կարողանանք մեծ դասեր քաղել այլ մարդկանց փորձառությունից: Երբ ես կարդում եմ այդ պատմությունները, բառերը կենդանանում են ինձ համար: Մտովի պատկերացնում եմ ամեն մի պատմությունը և ականջ եմ դնում Սուրբ Հոգուն. այս կերպով ես տեսնում և լսում եմ այն, ինչ չեմ նկատում այն ժամանակ, երբ պարզապես կարդում եմ դրանք: Ես հարց եմ տալիս. «Ինչպե՞ս կզգայի, եթե լինեի նրանց փոխարեն: Ի՞նչն ամենից շատ մարտահրավեր կնետեր կամ կվախեցներ ինձ»:

Սա Աստծո Խոսքը սերտորեն ուսումնասիրելու բազմաթիվ միջոցներից մեկն է: Այն չի հակասում Աստվածաշնչին. սա մտորելու ձև է, որի շնորհիվ Աստվածաշունչը կենդանանում է մեզ համար: Մեր հավատքի նախահայրերը և նախամայրերն անում էին նույնը. նրանք այս ամենի մեջ մեր եղբայրներն ու քույրերն են: Այսպիսին է իմ «սելան»[1]-ն... ես այսպես եմ կանգ առնում և մտորում:

Նախ ուզում եմ, որ ծանոթանաք Աբրամի հետ: Նա մեր հավատքի հայրն է: Պատկերացրեք հավատարիմ, ձախողումներ ունեցած, տարեց և աստվածապաշտ տղամարդու: Ապա կծանո-

թանաք Սառայի հետ: Նա մեր խոստման մայրն է: Նա անչափ գեղեցիկ է և նմանապես հավատարիմ, ձախողումներ ունեցած, տարեց և աստվածապաշտ:

Այս երկուսը բավականին խիզախ գտնվեցին և, հնազանդվելով Աստծո կանչին, թողեցին այն ամենը, ինչ հարազատ էր իրենց: Աստված խոստացավ օրհնել և շատացնել այս ամուլ զույգին: Միասին նրանք արկածային ընթացք սկսեցին: Նրանք փնտրում էին այն, ինչ երբեք չէին տեսել՝ Աստծո կողմից կազմված մի ազգ: Այն պահին, երբ մենք միանում ենք նրանց, նրանք արդեն տասնամյակներ շարունակ ճանապարհորդել են: Աբրամն իր հարյուրամյակի շեմին էր, իսկ Սառան՝ ինսունամյակի:

Նրանք շատ վերելքներ և վայրէջքներ ունեցան, երբ ճանապարհորդում էին անապատով: Ես կարճ կամփոփեմ նրանց անցած ճանապարհը: Նրանք տեղի չտվեցին վիճաբանություններին, որոնք սկսվեցին, երբ Աստված օրհնեց նրանց, և արդյունքում Ղովտը՝ Աբրամի զարմիկը, առանձնացավ նրանցից: Սառան տարվեց փարավոնի հարեմը, իսկ հետո արձակվեց այնտեղից: Նրանք մի փոքրիկ պատերազմ հաղթեցին, փրկեցին իրենց զարմիկին և հավատքով տասանորդ տվեցին Մելքիսեդեկին՝ Բարձրյալ Աստծո քահանային: Նրանք լուրջ հիասթափություն ապրեցին և սխալ որոշում կայացրին, երբ Սառան տվեց Հագարին իր ամուսնուն՝ որդի ծնելու համար, որին Իսմայել անվանեցին: Իր հուսահատության պատճառով, Սառան բարկության պոռթկում ունեցավ և ընտանեկան բռնություն գործադրեց: Չեմ կարծում, որ այս ամուսին-կին-աղախին եռանկյունին հաճելի էր:

Ահա մի քանի բան Աբրամի և Սառայի պատմությունից, որոնք ուզում եմ շեշտել, որպեսզի դրանք անուշադրության չմատնվեն իմ հակիրճ ամփոփումից:

1. *Նրանք ամբողջովին նվիրված էին:* Աբրամը և Սառան հեռացան Ուր քաղաքից՝ առանց ետ նայելու: Ետդարձի ճանապարհ չկար: Աստված կանչեց, նրանք գնացին և վերջ: Ծննդոց 12.1,2-ում գրված է.

«Եվ Տերն ասաց Աբրամին. «Գնա՛ քո երկրից, և քո ազգականներից, և քո հոր տնից այն երկիրը, որ Ես քեզ ցույց կտամ: Եվ Ես քեզ մեծ ազգ պիտի շինեմ և քեզ օրհնեմ և քո անունը մեծացնեմ, և դու օրհնյալ կլինես»:

Աստված ճանապարհ էր պատրաստում, որ նոր բան աներ՝ նոր կերպով: Նա առաջնորդեց նրանց հավատքով և հույսով: Նրանք սխալներ գործեցին, բայց ոչ մի անգամ ետ չնայեցին:

2. *Նրանք հեռացան վիճաբանություններից:* Աբրամը և Սառան հեռացան Ուրից, բայց իրենց հետ վերցրին Ղովտին (ինչն այնքան էլ լավ միտք չէր): Աբրամի օրհնությունն առատություն բերեց նաև Ղովտին: Երբ նրանց արոտավայրերն արդեն բավական չէին երկուսի հոտերի համար, նրանց գառնարածները սկսեցին վիճել: Որպեսզի վեճերը չշարունակվեին, Աբրամը թույլ տվեց Ղովտին՝ ընտրել իր ուզած տարածքը: Ավելի լավ էր, որ նրանք բաժանվեին, քան մշտապես վիճաբանությունների մեջ լինեին: Որպես նշում՝ եթե դուք անցնում եք ձեր կյանքի ճանապարհն այնպիսի մարդու հետ, որի հետ չպետք է լինեք, կգան ժամանակներ, երբ Աստված կմեծացնի երկուսիդ էլ այնքան, մինչև որ դուք առանձնանաք իրարից: Վիճաբանությունները կփակեն Աստծո օրհնությունը, և դուք արդյունավետ չեք լինի կյանքում:

3. *Նրանք զոհաբերեցին՝ հավատքի քայլ անելով:* Աբրամը տասանորդ տվեց Մելքիսեդեկին՝ ակնկալելով Աստծո խոստումները: Փոխարենը վերցներ Սոդոմից կողոպտված ավարը, նա հավատքով զոհաբերեց, ինչը հաստատություն տվեց նրա հույսին:

Այս երեքն արդեն տեղի էին ունեցել, երբ Աստված հայտնվեց Աբրամին և հռչակեց հետևյալը Ծննդոց 17.4,5-ում.

«Ահա Իմ ուխտը քեզ հետ է, և ազգերի բազմության հայր կլինես: Այսուհետև քո անունը Աբրամ չասվի, այլ քո անունն Աբրահամ լինի, որովհետև քեզ ազգերի բազմության հայր արի»:

Հավիտենական ուխտ

Երբ դուք բացահայտեք, որ ժառանգ եք, Աստված կփոխի ձեր անունը: Երբ Աստված փոխեց Աբրամի անունն Աբրահամի, նրա կյանքն ընդլայնվեց: Նա այլևս անազգ մարդ չէր լինելու, այլ ազգերի հայր էր դառնալու: Ծննդոց 17-րդ գլխում Աստված մանրամասնորեն նկարագրեց, թե ինչ չափերի էր հասնելու այդ ուխտը: Աբրահամի կյանքը բնութագրվելու էր *«սերունդներ»* և *«հավիտենական»* բառերով: Այն հողը, որի վրա Աբրահամն ապրում էր՝ որպես կողմնակի անձ և օտարական, լինելու էր իր սերունդների ժառանգությունը և հավիտյան պատկանելու էր նրանց: Աստված խոստացավ, որ Աբրահամի ժառանգների հետ լինելու էր այնպես, ինչպես որ նրա հետ էր: Ես պատկերացնում եմ, որ Աբրահամը լաց եղավ Աստծո ներկայության մեջ՝ կանխատեսելով նրանց բարի ապագան:

Իմ մտքում ես տեսնում եմ Աբրահամին՝ երեսնիվայր պառկած Աստծո առջև: Ապա նա վեր ելավ ծնկների վրա և բարձրացրեց արցունքներով ողողված երեսը դեպի աստղերը: Նա պարզեց իր ձեռքերը՝ ասես հպվելով լույսի պայծառ կետիկներին, որոնք շարված էին անապատային պարզ երկնքի խավարում: Նա համակված էր շնորհակալությամբ: Այդ խոստման ամեն մի բառն արձագանքում էր մինչև իսկ նրա ոսկրածուծի մեջ: Մի ակնթարթ ժամանակի քողն ընկավ, և Աբրահամը կրկին երիտասարդացավ. նրա ամեն մի բջիջը լցվեց բերկրալից կյանքով:

Նրա նոր՝ *Աբրահամ* անունը համակեց նրա սիրտն ուրախությամբ և հույսով: Իր ներսում նա տեսնում էր Իսմայելին և մտածում էր. *«Այս ամենը կլինի քոնը, որդի՛ս: Քո կյանքը կընդլայնվի. դու առատ, օրհնված և նշանակալի կյանք կունենաս»*:

Տերն ասաց Աբրահամին, որ այդ ուխտը նշան էր պահանջում: Դա գեղեցիկ հրապարակային նշան չէր՝ նման Նոյին տրված ծիածանին, այլ՝ ցավոտ, թաքուն նշան: Աբրահամի տան բոլոր տղամարդիկ և տղա երեխաները պետք է թլփատվեին:

Այս կերպով կատարվող մարմնի հեռացումը հաստատում էր, որ Աբրահամը և նրա սերունդներն ուխտի մեջ էին Բարձրյալ Աստծո հետ: Դրանից հետո զրույցն Աստծո հետ այլ ընթացք ստացավ:

> «Եվ Աստված ասաց Աբրահամին. *«Քո կնոջ՝ Սառայի անունը Սառա չասես, այլ Սարրայ է նրա անունը: Եվ նրան կօրհնեմ, նաև նրանից մի որդի կտամ քեզ: Եվ կօրհնեմ նրան, և նա ազգեր կլինի. ժողովուրդների թագավորներ կլինեն նրանից»* (Ծննդ. 17.15,16):

Ես գրեթե տեսնում եմ Աբրահամի շփոթմունքը: Նրա ճակատը կնճռոտվեց տարակուսանքից: «Սառա՞ն: Այդ ուխտն ինձ հետ է, և ես արդեն որդի ունեմ՝ Իսմայելը: Նա իմ որդին է՝ Հագարից»: Դեպքերի այս նոր զարգացումը դրդեց Աբրահամին կրկին վայր իջեցնել իր երեսը:

> «Եվ Աբրահամը երեսի վրա ընկավ և *ծիծաղեց* և իր սրտում ասաց. «Արդյոք հարյուր տարեկան մարդուն զավակ կլինի՞, և թե ինսնուն տարեկան Սարրան կծնի՞»» (Ծննդ. 17.17):

Մենք շատ ենք լսում այն մասին, որ Սառա մայրիկը ծիծաղեց, երբ իմացավ, որ որդի է ունենալու, բայց Աբրահամն առաջինն էր, որ ծիծաղեց՝ լսելով Աստծո խոստումը: Այնուամենայնիվ, Աբրահամը չսահմանափակվեց ծիծաղով. նա այլընտրանք առաջարկեց Աստծուն.

> «Եվ Աբրահամն ասաց Աստծուն. «Ո՜հ թե Իսմայելն ապրեր Քո առջև» (Ծննդ. 17.18):

Ինձ թվում է՝ Աբրահամը փորձում էր ընդգրկել Իսմայելին Աստծո ծրագրի մեջ: Մի՞թե արժեր նեղություն կրել Սառայի հետ: Նույնիսկ իր նոր անունով, նրա արգանդը մեռած էր, և նրա ամուսինը ծեր էր: Ես հասկանում եմ, թե ինչպես էր նա մտածում: Բայց Աստված չհամաձայնեց դրան.

> «Եվ Աստված ասաց. «Այո՛, քո կինը՝ Սարրան, որդի կծնի քեզ համար, և նրա անունն Իսահակ կդնես: Եվ Ես Իմ ուխտը կհաստատեմ

նրա հետ՝ հավիտենական ուխտ նրանից հետո նրա սերնդի համար»» (Ծննդ. 17.19):

«Այո՛, քո կինը՝ Սարրան...». սա շատ պարզ է: Աստված ասես կարդում էր նրա միտքը: Պատկերացրե՛ք դա: Աստված լսեց Աբրահամին և օրհնեց Իսմայելին, բայց *ոչ՝ որպես* Իր հավիտենական ուխտի մասը:

Երբ երկուսը մեկ են դառնում ամուսնության միջոցով, ուխտն Աստծո հետ ընդգրկում է երկուսին էլ: Իհարկե, Աբրահամը սիրում էր Իսմայելին, և բնական է, որ ուզում էր փոխանցել նրան Աստծո բոլոր խոստումները: Բայց Իսմայելը ստրկության մեջ գտնվող կնոջ որդին էր՝ կապված մարմնական գործերին և բնությանը: Անզուգական խոստումը պետք է տեղի ունենար անսնախադեպ հրաշքի և նշանի միջոցով. մի շատ ծեր և ամուլ կին երեխա էր ունենալու:

«Բայց Իմ ուխտը կհաստատեմ Իսահակի հետ, որ Սարրան քեզ համար կծնի մյուս տարի այս ժամանակ» (Ծննդ. 17.21):

Որքա՜ն հաճախ ենք մենք նույն կերպով վարվում:

Աստված ասում է, որ նոր և հրաշալի գործ է անելու, և մենք տատանվում ենք անհավատությամբ: Նա ասում է, որ լայնացնելու է մեր կյանքը, և մենք ասում ենք Նրան, որ կարիք չկա այդքան նեղություն քաշել... *«պարզապես օրհնի՛ր այն, ինչ ես ունեմ»:* Այն, ինչ մենք ունենք, և այն, ինչ մենք անում ենք, բավական չէ: Աստված ուզում է ներգրավված լինել մեր կյանքում: Նա մտածում է սերունդներով: Այդ ուխտը հաստատվելու էր Իսահակի հետ, ով դեռ չէր ծնվել: Հենց նրա հետ, ում մասին լսելով՝ Աբրահամը ծիծաղեց... ոչ թե նրա հետ, ում նա ծնել էր մարմնով:

Ես այնքա՜ն խրախուսված եմ Աբրահամի մարդկային հատկանիշներով: Բոլորս կարող ենք դաս քաղել դրանցից: Իր ողորմությամբ, Աստված կօրհնի նույնիսկ այն, ինչ կառուցում ենք մեր ուժերով, բայց Նրա հավիտենական ուխտը հաստատվում է այն պայմաններով, որոնք վեր են մարդկային կարողությունից:

Նոր անուն = նոր կյանք

Ըստ հրեական ավանդության՝ անունը բովանդակում է մարդու ներուժը և նրա կյանքի ընթացքը: Այնպես որ, անվան փոփոխությունը կարող է փոխել ձեր բնությունը, ինչն, իր հերթին, ազդելու է ձեր կյանքի ընթացքի վրա: Օրինակ, մենք մտածված ընտրեցինք մեր չորս որդիների անունները. մենք ակնկալում էինք, որ մեծանալով՝ նրանք կնմանվեն իրենց անուններին: Ես սովորեցի սա իմ Հայր Աստծուց: Ամեն անգամ, երբ տալիս եմ նրանց անունները, ես հռչակում եմ դրանց նշանակությունն իմ երեխաների կյանքում:

Աստված հաճախ էր փոխում մարդուն տրված անունը, եթե նրա անունն այլևս չէր արտահայտում նրա ինքնությունը: Հալածող Սողոսը Պողոս կոչվեց, իսկ ձկնորս Սիմոնը ստացավ Պետրոս անունը Հիսուսից: Իսահակի որդի Հակոբի անունը փոխվեց Իսրայելի, որը նշանակում է «Աստծո արքայազն»: Մեր Աստված անուններ է փոխում: Երբեմն ես համեմատում եմ սա յուրօրինակ դատական վկաների պաշտպանության ծրագրի հետ, որում բոլորս ներկայանում ենք Հիսուսի անունով:

Երբ Աստված ուխտ կնքեց Աբրամի հետ, Նա լայնացրեց Աբրամի կարողությունը՝ փոխելով նրա անունը: Ես մի հիանալի ընկեր ունեմ՝ Բրայան Բիլեչի անունով, ով մեսիական ռաբբի է: Նա բացատրեց ինձ, թե որքան նշանակալի էին այդ անվանափոխությունները: Որպեսզի Աստված ընդլայներ Աբրամի անունը՝ դարձնելով Աբրահամ, Նա մեկ տառ վերցրեց Իր անունից և ավելացրեց Աբրամի անվանը: *Աբրամ* անունը նշանակում է «բարձր հայր», իսկ ընդլայնված *Աբրահամ* անունը՝ «բազմության հայր»:

Այս նոր անունն ազդարարում էր, թե *ով* էր լինելու Աբրահամը: Իր կյանքի ընթացքում Աբրահամն այդպես էլ լիովին չէր հասկանալու իր անվան իրական իմաստը: Քանի որ Աբրամի կյանքը մեծարեց Աստծուն, նրա ժառանգությունը անսահմանորեն ընդլայնվելու էր: Երբեք մի՛ մոռացեք. *ձեր ինքնությունը սեր-*

փորեն կապակցված է ձեր կյանքի ընթացքի հետ: Ռաբբի Բրայանը նույնպես նշեց, որ Աստծո խոստումը չիրականացավ, քանի դեռ Աստված չէր ընդլայնել նաև Աբրահամի կնոջ անունը: *Սառա* անունը նշանակում է՝ «Յահվեհն արքայազն է», իսկ փոխված *Սարրայ* անունը՝ «Աստծո արքայադուստր»: Աստված մի տառ ավելացրեց Իր *Յահվեհ* անունից նրա անվանը:

Այս անվանափոխությունը ցույց տվեց, թե ով էր Սառան Աստծո ծրագրի մեջ: Այն մտերմորեն կապակցեց նրան Աստծո հետ, և միևնույն ժամանակ ազդարարեց, որ նրանք, ովքեր դառնալու են նրա դուստրերը՝ ըստ խոստման, նույնպես արքայական դիրք են ունենալու: Այս նոր անվան շնորհիվ Սառայի կյանքն այլևս չէր կառուցվելու իր ուժերով, այլ՝ Աստծո զորությամբ:

Երբ Սառայի անվան նշանակությունն արականից («Յահվեհն արքայազն է») փոխվեց իգականի («Աստծո արքայադուստր»), այն մեղմացավ և ավելի ընկալունակ դարձավ: Աբրահամի նոր անունն ընդլայնեց նրան՝ բազմություններ ընդգրկելու համար, բայց նրա խոստման սերմը նույնպես խոստում ունեցող հողի կարիք ուներ: Սառայի կյանքը դարձավ նրա հողը և նրա սերմի արգանդը, որը կենդանացել էր խոստման շնորհիվ:

Սառայի անվան փոփոխությունը փխրեցրեց նրա անմշակ հողը և պատրաստեց նրան այն ընդլայնման համար, որը վստահվել էր և՛ Աբրահամին, և՛ իրեն: Աստված ասաց Աբրահամի մասին, որ *նա ազգերի բազմության հայր կլինի*, իսկ Սառայի մասին՝ որ *նա ազգեր կլինի, ժողովուրդների թագավորներ կլինեն նրանից:* Աստված բառացիորեն պատկերացում և տեսիլք տվեց երկուսին էլ:

Երբ մարդիկ պատվում են իրենց միությունը և իրենց Աստծուն, Աստված միջամտում է՝ կատարելով այն, ինչն անհնար է: Ամուլ արգանդները լցվում են կյանքով և զորանում են՝ ծնունդ տալու համար. առանց սիրո ամուսնությունները բժշկվում են. որդիները և դուստրերն ազատվում են դևերից, և երեխաները հարություն են առնում մեռելներից: Հույսը վերականգնվում է, հավատքը բոցավառվում է, սերը հաղթում է: Թշնամին ետ է մղվում, և խաբեության ձայները լռեցվում են:

Անկախ այն բանից՝ հասկանում եք դա, թե՝ ոչ, ձեր անունը փոխվեց, երբ դուք վերստին ծնվեցիք: Ձեր անունը նույնպես ընդլայնվեց: Հիսուսը՝ Աբրահամին խոստացված սերունդը, պարզապես չփոխեց մեր անունները՝ ընդլայնելով դրանք, այսինքն՝ ավելացնելով մեկ տառ Իր անունից, այլ շնորհեց մեզ անսահմանափակ մուտք Հոր մոտ՝ Իր անունն օգտագործելու շնորհիվ: Ինչպես գրված է Հովհաննես 16.26,27-ում.

> «Այն օրում Իմ անունով կխնդրեք, և չեմ ասում ձեզ, թե Ես ձեզ համար կաղաչեմ Հորը, նրա համար, որ Հայրն Ինքը սիրում է ձեզ, որովհետև դուք Ինձ սիրել եք և հավատացել եք, թե Ես Աստծուց դուրս եկա»:

Հիսուսը մերկացվեց և ծածկվեց մեր ամոթով, երբ զբաղեցրեց մեր տեղը խաչի վրա: Նա տվեց Իր անբիծ կյանքը՝ մեր արատավորված կյանքերի փոխարեն: Շնորհիվ Իր բացարձակ զոհի՝ Նա կատարելապես փրկեց յուրաքանչյուր խոստման որդուն և դստերը ու բոլորիս մոտեցրեց Իրեն:

Երևի դու կատակում ես

Մեր պատմությունը շարունակվում է Ծննդոց 18-րդ գլխում, երբ Աստված կրկին այցելում է Աբրահամին: Աբրահամը նստած էր իր վրանի մուտքի մոտ, որտեղ պաշտպանված էր արևից և կարող էր զգալ նույնիսկ քամու թեթև հոսանքները: Նա բարձրացրեց իր հայացքը և տեսավ, որ երեք մարդ կանգնած էին իր առջև՝ Մամբրեի կաղնիների մոտ: Աստվածաբանների մեծ մասը համարում է, որ դրանք հրեշտակներ էին: Աբրահամը վազելով մոտեցավ նրանց, խոնարհվեց և հարկադրեց հյուրընկալել իրեն:

> ««Տե՛ր, եթե շնորհք գտա Քո առջև, աղաչո՛ւմ եմ Քեզ, Քո ծառայից մի՛ անցիր: Թող մի քիչ ջուր բերվի, և լվացեք ձեր ոտքերը և ծառի տակ հանգստացեք: Եվ ես մի պատառ հաց բերեմ, և ձեր սրտերը զորացրեք, հետո կգնաք, որովհետև սրա համար ձեր ծառայի մոտ եկաք»: Եվ նրան ասացին. «Այնպես արա, ինչպես ասացիր»» (Ծնն. 18.3-5):

Ինձ դուր է գալիս այն, թե ինչպես նա կանգնեցրեց և պահեց այդ ճանապարհորդներին՝ պատիվ տալով նրանց: Եվ, անկասկած, Աբրահամը համեստ խոստումներ տվեց և կատարեց իր խոստացածից շատ ավելին: Նախ՝ նա վազեց Սառայի մոտ և պատվիրեց շոթեր պատրաստել իրենց լավագույն ալյուրից, ապա գնաց դեպի իր նախիրը, ընտրեց լավագույն հորթը և հանձնեց իր ծառաներից մեկին՝ պատրաստելու համար: Ավարտելով՝ նա կաթնաշոռ և կաթ մատուցեց իր հյուրերին: Այն խնջույքը, որն Աբրահամը կազմակերպեց իր հյուրերի համար, շատ ավելին էր, քան մի կտոր հացը:

Աբրահամն իր հյուրերի հետ էր, երբ նրանք հարցրին.

> ««*Որտեղ է քո կին Սառան»,* - հարցրին նրա այցելուները:
>
> «Նա վրանի ներսում է», - պատասխանեց Աբրահամը:
>
> Եվ նրանցից մեկն ասաց. «Ես կվերադառնամ քեզ մոտ հաջորդ տարի՝ մոտավորապես այս ժամանակ, և քո կին Սառան որդի կունենա»:
>
> *Սառան լսում էր այս խոսակցությունը վրանից»* (Ծննդ. 18.9,10, NLT):

Երբ կարդում եմ այս հատվածը, ասես այդ վրանում լինեմ՝ Սառայի հետ: Ես սևեռում եմ հայացքս վրանի կտորների բացվածքից և նայում եմ նրա ուսի վրայով:

Աբրահամն իր հյուրերի հետ նստած էր դրսում՝ ստվարախիտ ծառի շվաքի տակ: Չոր անապատային զեփյուռը, որը անցնելով օազիսի ծառերի և վրանների միջով, շարժում էր նրանց հանդերձները, հեշտորեն փոխանցում էր նրանց ձայները:

Սառան լսում էր կիսախավար վրանից. նա բավականին մոտ էր, որ լսեր, բայց առանձնացված էր նրանց խոսակցությունից: Սառան զգուշանում էր, որ անձայն մնար, բայց Աստվածաշունչը հայտնում է նրա մտքերը.

> «Այդ ժամանակ Աբրահամը և Սառան՝ երկուսն էլ արդեն շատ ծեր էին, և Սառայի երեխաներ ունենալու ժամանակը շատ վաղուց անցել էր: Այնպես որ, *նա կամացուկ ծիծաղեց իր ներսում* և ասաց. «Ինչպե՞ս ինձ պես մաշված կինը կարող է նման հաճույք վայելել, հատկապես երբ իմ տերը՝ իմ ամուսինը, նույնպես շատ ծեր է»» (Ծննդ. 18.11,12, NLT):

Նա գրեթե նույնությամբ կրկնեց Աբրահամի արձագանքը, և ես մտածում եմ՝ միգուցե Սառան առաջին անգամ էր լսում դա: Ակնհայտ է, որ նա հանկարծակիի եկավ: Երբեմն խոստումը մոտ է այն ժամանակ, երբ այն բոլորովին անհնար է թվում:

Ծննդոց 17.21-ում գրված է. «...մյուս տարի՝ այս ժամանակ», իսկ երբ նույն խոստումը կրկնվում է Սառայի ներկայությամբ, այն այսպես է հնչում. «...հաջորդ տարի՝ մոտավորապես այս ժամանակ»: Ակնհայտ է, որ արդեն որոշ ժամանակ էր անցել: Մենք ոչ մի կերպ չենք կարող իմանալ, թե որքան ժամանակ էր անցել Աստծո և Աբրահամի զրույցից մինչև հրեշտակների հայտնվելը, բայց հնարավոր է, որ շատ ժամանակ անցած չլիներ: Կարելի է ենթադրել, որ չէր անցել նույնիսկ մեկ ամիս: Այնուամենայնիվ, Տերը որոշել էր, որ Սառան նույնպես մասնակցեր այդ խոսակցությանը:

> «Եվ Տերն ասաց Աբրահամին. «Ինչո՞ւ Սառան ծիծաղեց: Ինչո՞ւ նա ասաց. «Կարո՞ղ է ինձ պես ծեր կինը երեխա ունենալ»: Մի՞թե Տիրոջ համար ինչ-որ դժվար բան կա: Ես կվերադառնամ հաջորդ տարի՝ մոտավորապես այս ժամանակ, և Սառան որդի կունենա»:
>
> Սառան վախեցավ. այնպես որ, նա ժխտեց դա՝ ասելով. «Ես չծիծաղեցի»:
>
> Բայց Տերն ասաց. «Ո՛չ, դու ծիծաղեցիր»» (Ծնն. 18.13-15, NLT):

Սառան ոչ միայն ծիծաղեց... նա նույնպես ստեց: Նա վախեցավ, որովհետև նրա ծիծաղը նշանակում էր. «Երևի դու կատակում ես», որն ավելի շուտ ծաղրի էր նման:

Որտեղ է քո կին Սառան

Կարդալով նախորդ հատվածից առաջ և հետո գտնվող խոսքերը՝ ես սկսեցի մտածել, թե որքա՞ն բան են դրանք ենթադրում, թեև այդ ամենը բացահայտ կերպով գրված չէ: Ես նշել եմ որոշ դիտարկումներ, որոնց ցանկանում եմ անդրադառնալ: Դրանցից մի քանիսը նախկինում վրիպել էին իմ ուշադրությունից:

Առաջինը՝ ես ուզում եմ հարցնել հետևյալը՝ որտեղ է Սառան: Ինչո՞ւ է նա թաքնվում իր վրանում: Ինչո՞ւ նա իր ամուսնու կողքին չէ և ինչո՞ւ չի մասնակցում այդ խոսակցությանը:

Իհարկե, դուք գիտեք, թե ինչպես է ավարտվում այս պատմությունը, բայց կարևոր է հիշել, որ Սառան չգիտեր դա: Հաշվի առնելով նրա տարիքը՝ նա կարող էր մտածել, որ ամեն ինչ իր կյանքում ավարտված էր: Միգուցե նա կարծեր, որ իր ամուսնու կապը Հագարի հետ և իր վատ վերաբերմունքը Հագարի հանդեպ որակազրկել էին իրեն:

Նա չէր հասկանում, որ այն ցավը, որը կրել էր, և այն սխալները, որոնք գործել էր կրկնվող հիասթափությունների և դժվարին հանգամանքների մեջ, խորություն էին ձևավորել նրա պանդուխտ անձի մեջ: Հղանալու համար խորություն անհրաժեշտ չէ: Մակերեսային և անհոգ մարդիկ հեշտորեն կարող են հղանալ: Բայց Սառան դառնալու էր Իսահակի, ինչպես նաև՝ Իսրայելի ժողովրդի մայրը, և նա պետք է պատրաստ լիներ:

Տասներեք տարի շարունակ նա հետևում էր, թե ինչպես էր մեծանում Իսմայելը: Նա հույս ուներ դաստիարակել Հագարի որդուն՝ իր որդու պես, բայց Իսմայելը բոլորովին որդու պես չէր նրա համար: Աբրահամը գոհ էր, իսկ Սառան՝ կոտրված: Ամեն ինչ անարդարացիորեն դեմ էր նրան: Բայց ամենից ողբերգականն այն էր, որ թե՛ Սառան, թե՛ Աբրահամը, մոռացել էին, թե ով էր ինքը՝ Սառան:

Ինձ ցնցեց այս հարցը. «Որտեղ է քո կին Սառան»:

Երբ ինչ-որ մեկը մեր տուն է գալիս և ուզում է տեսնել ինձ, նա չի հարցնում Ջոնին. «Որտեղ է կինդ՝ Լիզան»: Կարիք չկա նման տարբերակում անել: Այդպես կարելի էր ասել միայն՝ եթե մեր տանը Լիզա անունով մեկից ավելի կին լիներ: Օրինակ՝ եթե որդիներիցս մեկն ամուսնանար Լիզա անունով աղջկա հետ, կարիք կլիներ տալ հարցը հետևյալ կերպով. «Ես եկել եմ, որ տեսնեմ քո կին Լիզային, ոչ թե քո հարս Լիզային»:

Ինձ ճանաչող մարդիկ պարզապես կհարցնեին. «Որտեղ է Լիզան»: Իսկ ինչ-որ մեկը, ով չի ճանաչում մեզ և ուզում է խոսել տանտիրուհու հետ, կհարցներ Ջոնին. «Որտեղ է ձեր կինը»:

Ինձ խիստ հետաքրքրեց, որ այդ այցելուները ճանաչում էին թե՛ Աբրահամին, թե՛ Սառային, բայց հարցնելով նրա մասին՝ հիշատակեցին նրա անունը և հարաբերություններն Աբրահամի հետ:

Հնարավո՞ր է, որ այդ հրեշտակներն ուզում էին ասել. «Աբրահա՛մ, մենք եկել ենք, որ հիշեցնենք քեզ, որ Սառան քո կինն է: Ես գիտեմ, որ հիմա ձեր միասնական կյանքն այլ է, և դու երեխա ունես Հագարից, բայց Սառան դեռ քո կինն է»: Միգուցե սա կօգնի հասկանալ, թե ինչու էր Սառան բավարարվում այդ խոսակցությունը *լսելով*, փոխարենը *միանար* դրան: Այցելուները պետք է որ հազվագյուտ լինեին նրա քոչվոր առօրյայում: Աբրահամը վեր ցատկեց, երբ տեսավ երեք մարդու, ովքեր կանգնած էին նրա վրանի մոտակայքում գտնվող ծառերի մոտ: Երբ կարդում ենք այս պատմությունն Աստվածաշնչում, թվում է՝ կերակուրը պատրաստելու համար պահանջվեց մի քանի րոպե, բայց նման խնջույք կազմակերպելու համար ժամեր էին պահանջվում:

Ինչո՞ւ մեզնից որևէ մեկը կգոհանար միայն լսելով Աստծո խոստումների մասին, փոխարենը անձամբ մասնակցեր այդ խոսակցությանը: Միգուցե այդ հարցը տվող այցելուն նայեց շուրջը և ասաց. «Ահա հավատքի հայրը: Իսկ որտե՞ղ է հավատքի մայրը»:

Եթե հանկարծ մեր տուն այցելեր հրեշտակների մի խումբ կամ Տերը, և Ջոնը ճաշի հրավիրեր նրանց, նա ստիպված կլիներ ուժով դուրս անել ինձ մեր հյուրասենյակից: Ջոնի հյուրերն իմ հյուրերն են, և իմ հյուրերը՝ Ջոնի հյուրերն են: Կարող եմ նաև ավելացնել, որ եթե ինչ-ինչ պատճառով ես չլինեի այդ սենյակում, և հանկարծ լսեի, որ նրանք խոսում էին իմ մասին, ես կպարտավորեցնեի նրանց անմիջապես ներս թողնել ինձ:

Ես չեմ գտնում ոչ մի պատճառ՝ հավատալու, որ Սառային խնդրել էին հեռանալ այդտեղից, կամ՝ որ Աբրահամը թույլ չէր տվել նրան միանալ իրենց: Ես մտածում եմ, որ միգուցե հենց նա էր առանձնացել բոլորից: Այս խնդիրն առաջանում է, երբ մարդիկ այնքան խորը հիասթափություն են ապրել, որ մոռանում են, թե ով են իրենք: Նոր հույսը կարող է ցավ պատճառել. այնպես որ, նրանք թաքնվում են, հետո՝ ծիծաղում, հետո՝ ստում:

Անկախ այն բանից, թե ինչու էր Սառան հեռվից հետևում այդ իրադարձությանը, Աստված վերադարձրեց նրան իրեն շրջապատող իրականության մեջ: Ես համոզված եմ, որ դա սկսվեց և՛ Աբրահամին, և՛ Սառային ուղղված հիշեցումից այն մասին, որ Սառան դեռ Աբրահամի կինն էր: Այս պնդման նպատակն էր՝ հեռացնել նրա մրցակցին՝ Հագարին, և հիշեցնել բոլորին այդտեղ, թե ով էր Սառան. նա էր արքայադուստրը:

Ինչո՞ւ պետք է հարցնել Աբրահամին

Հաջորդ փաստը, որն աչքի ընկավ ինձ համար այս պատմության մեջ, այն էր, որ ծիծաղեց Սառան, բայց դրա մասին հարցրին Աբրահամին:

> «Եվ Տերն ասաց Աբրահամին. «Ինչո՞ւ Սառան ծիծաղեց: Ինչո՞ւ նա ասաց՝ կարո՞ղ է ինձ պես ծեր կինը երեխա ունենալ»» (Ծնն. 18.13, NLT):

Ինչո՞ւ էր պետք հարցնել Աբրահամին Սառայի արածի մասին: Տեսնելով սա՝ ես մտածում եմ, որ միգուցե Սառան չգիտեր Ծննդոց 17-րդ գլխի խոսակցության մասին: Միգուցե Աբրահամը դեռ ծանրութեթև էր անում Աստծո ասածը: Միգուցե նա չէր ուզում պատմել Սառային: Կան դեպքեր, երբ Ջոնը և ես մոռանում ենք ինչ-որ բան պատմել իրար: Բայց միգուցե նրանք խոսել էին այդ մասին և չէին հավատացել այդ խոստմանը: Ամեն դեպքում, մեկ բան ակնհայտ է. Սառան չէր սնուցել իր ներսում որդի ունենալու խոստումը: Ավետաբերները հարցրին Աբրահամին.

> «Մի՞թե Տիրոջ համար որևէ դժվար բան կա: Ես կվերադառնամ հաջորդ տարի՝ մոտավորապես այս ժամանակ, և Սառան որդի կունենա» (խոսք 14, NLT):

Սառան որդի էր ունենալու մեկ տարուց: Ինձ համար ծիծաղելի է, որ Սառան ստեց՝ ուրանալով, որ ինքը ծիծաղել էր, երբ հարցը նույնիսկ ուղղված չէր իրեն: Հարցն ուղղված էր Աբրահամին: Ինձ համար նույնպես շատ մխիթարական է, որ մեր Հայրը՝ հավիտենական ուխտի Աստված, լսեց նրա կամացուկ ծիծաղը,

քանի որ դրանից ես եզրակացնում եմ, որ Նա լսում է նաև լռության մեջ լաց լինող սիրտը:

Կա շատ մեծ տարբերություն որևէ գաղափարի վրա ծիծաղելու և ուրախության ծիծաղի միջև: Սառայի կյանքը զուրկ էր ծիծաղից, բայց Իսահակի ծնունդը փոխելու էր ամեն ինչ: Աբրահամը և Սառան միասին էին սկսել իրենց ընթացքը, և նրանք ծնունդ էին տալու իրենց խոստմանը, երբ սովորեին կրկին միասին ծիծաղել: Խոստումների իրականացման համար պահանջվում է, որ ամուսինները և կանայք, եղբայրները և քույրերը, տղամարդիկ և կանայք հաղորդակցվեն իրար հետ: Չափազանց երկար ժամանակ կանայք թաքնված են եղել, բայց Աստված ուզում է, որ իմանաք՝ Նա ուզում է, որ դուք նույնպես մասնակցեք այդ խոսակցություններին: Աստծուն անհրաժեշտ էր Սառայի ձգտումը և խորությունը՝ Իր ուխտի ժողովրդին ձևավորելու համար: Գաղատացիների 4.22,23-ում գրված է.

Աստծուն անհրաժեշտ էր Սառայի ձգտումը և խորությունը՝ Իր ուխտի ժողովրդին ձևավորելու համար:

> «Որովհետև գրված է, թե Աբրահամը երկու որդի ուներ, մեկն՝ աղախնից, և մյուսն՝ ազատից: Բայց նա, որ աղախնից էր, մարմնի կողմից էր ծնված, և նա, որ ազատից էր, խոստման համեմատ էր»:

Ո՞վ է պաշտպանում Սառային

Նախքան Իսահակին իր գրկում պահելը, տեղի ունեցավ ևս մեկ խոսակցություն, որին Սառան նույնպես որոշեց չմասնակցել: Սա լիովին առեղծված է ինձ համար, բայց այս անգամ, երբ նա լուռ մնաց և ստեց, միջամտեց Աստված:

> «Եվ Աբրահամն իր կնոջ Սարրայի համար ասաց. «Նա իմ քույրն է»: Եվ Գերարի թագավոր Աբիմելեքը մարդ ուղարկեց և առավ Սարրային: Բայց Աստված գիշերը երազում Աբիմելեքի մոտ եկավ և ասաց նրան. «Ահա դու պիտի մեռնես այդ կնոջ պատճառով, որ դու առար, որովհետև նա մի մարդու կին է»» (Ծնն. 20.2,3):

Ես ուրախ եմ, որ Աստված խոսեց նրա փոխարեն, քանի որ այնպիսի տպավորություն էր, որ երկուսն էլ գերադասում էին լուռ մնալ: Ինչ էին նրանք մտածում: Աստված *նոր* բան էր անում, բայց նրանք դեռ հաղորդակցվում էին իրար հետ *հին* կերպով: Այս եղբոր և քրոջ տարբերակը երբեք էլ ճիշտ չէր, բայց այժմ այն շատ ավելի սխալ էր, քան առաջ: Սառայի անունը փոխվել էր, և այժմ նա Իսահակով հղանալու շեմին էր:

Ակնհայտ է, որ Սառան անզուգական գեղեցկություն ունեցող կին էր... բայց չէ՞ որ նա իննսուն տարեկան էր: Նա կա՛մ *չափազանց* դանդաղ էր ծերանում, կա՛մ Աստված արմատապես *նորոգել* էր նրա երիտասարդությունը՝ պատրաստելով նրան Իսահակի համար: Ամեն դեպքում, Աբրահամը, իմանալով, որ Սառան պետք է հղանար և այդ տարվա ընթացքում կրեր իրենց երեխային, պետք է պաշտպաներ իր կնոջն Աբիմելեք թագավորի հավակնություններից: Հակառակ դեպքում, ինչպե՞ս Աբրահամը համոզված կլիներ, որ ինքն էր լինելու Սառայի երեխայի հայրը: Շատ հաճախ մենք մտածում ենք, որ լռությունը՝ հնազանդություն է, այնինչ այդպես չէ... լռելով՝ մենք ստում ենք: Հնազանդությունը նշանակում է՝ իմանալ, թե երբ և ինչպես խոսել, իսկ սա հենց այն դեպքերից էր, երբ պետք էր խոսել:

Հնարավոր է, որ այդ տարիքում Աբրահամը և Սառան ապրում էին եղբոր և քրոջ պես, բայց այդ օրերը ետևում էին: Եթե Սառայի անվան փոփոխությունից առաջ նրանք չունեին մտերիմ հարաբերություններ, ապա լիովին պարզ էր, որ դրանք պետք է սկսվեին հրեշտակային այցելությունից հետո: Սառայի և Աբրահամի նորացված անունները պետք է վերածվեին նոր մտերիմ հարաբերությունների: Երկուսն էլ հասկացան, որ նա հղանալու էր և երեխա էր ունենալու մեկ տարուց պակաս ժամանակահատվածում: Սառան չխոսեց, երբ հնչեց այս կես ճշմարտությունը, բայց հետաքրքիր է, թե ինչ էին նրանք մտածում:

> «Եվ Աբիմելեքը կանչեց Աբրահամին ու ասաց. «Մեզ ինչ ես արել: Եվ ես քեզ դեմ ինչ հանցանք եմ արել, որ ինձ վրա և իմ թագավո-

> ության վրա մեծ մեղք ես բերել: Այնպիսի բաներ ես արել ինձ, որ մարդ չի անի»» (Ծնն. 20.9):

Այն բանից հետո, երբ Աբրահամը բացատրեց իր ստելու կասկածելի պատճառները, Աբիմելեք թագավորը, չնայած այդ ամենին, օրհնեց Աբրահամին և առաջարկեց բնակվել իր երկրում: Աբրահամն աղոթեց Աբիմելեքի համար, և Աստված բացեց նրա տան բոլոր կանանց արգանդները: Ձավեշտական է, որ Աբրահամն աղոթեց այն բանի համար, ինչը դեռ պետք է տեսներ իր կյանքում: Աստված պաշտպանեց Սառային, նույնիսկ երբ նրա ամուսինը իր ապահովությունը նրա ապահովությունից վեր դասեց: Աստված երազում խոսեց թագավորի հետ, որպեսզի պաշտպաներ Սառային, քանի որ նա թանկ գանձ էր Իր համար: Մենք կարող ենք վստահել Աստծուն մեր անվտանգությունը և հավատալ, որ Նա կիրականացնի Իր խոստումը մեր կյանքում, նույնիսկ եթե մարդիկ, ովքեր ամենից մոտ են մեզ (օրինակ՝ մեր ամուսինները), ձախողեն մեզ:

Ազատ կինը և ստրկուհին

Առաջին Պետրոս 3.6-ում գրված է. «Եվ հիմա դուք նրա ճշմարիտ դուստրերն եք, եթե ճիշտ եք վարվում և թույլ չեք տալիս, որ որևէ բան սարսափեցնի ձեզ [տեղի չեք տալիս հիստերիկ վախերին և թույլ չեք տալիս, որ անհանգստությունը թուլացնի ձեզ]» (AMPC): Սառան այդպես էլ դուստր չունեցավ, բայց այս խոսքը պնդում է, որ մենք կարող ենք լինել նրա ճշմարիտ դուստրերը: Մենք խոստման դուստրեր ենք՝ ազատ կնոջ դուստրերը, երբ թույլ չենք տալիս, որ վախը վերահսկի մեր քայլերը, և որ անհանգստությունը գողանա մեր համարձակությունը:

Սառան ազատ կին էր, ով գնահատում և պատվում էր Աստծուն և իր ամուսնուն: Հագարը ստրկուհի էր, ով անարգում էր իր տիրուհուն՝ Սառային: Հագարի զավակը՝ Իսմայելը, հետևեց իր մոր օրինակին և սկսեց ծաղրել Իսահակին: Սառան հասկացավ, որ ստրկությունը և ազատությունը պետք է բաժանվեին իրարից:

Մենք նույնպես պետք է հասկանանք դա: Գաղատացիների 4.30-ում գրված է. «Դո՛ւրս հանիր աղախնին ու նրա որդուն, որ աղախնի որդին ժառանգություն չպիտի ստանա ազատի որդու հետ»:

Ստրկուհու որդին զրկվեց ժառանգությունից: Նա կորցրեց իր հորը և այն ամենը, ինչն իր ընտանիքն էր համարում: Եվ ազատ կնոջ, և՛ ստրկուհու ամուսինը նույն մարդն էր: Երկուսն էլ որդիներ ունեին: Բայց նրանց հարաբերություններն Աբրահամի հետ շատ էին տարբերվում իրարից: Հագարը խորհրդանշում էր մարմնական բնությունը և դրա ստրկությունը: Սառան խորհրդանշում էր ազատությունը և խոստումը: Գաղատացիների 4.22-26-ում այսպես է նկարագրվում սա.

> «Հիշե՛ք, որ Աբրահամը երկու որդի ուներ. մեկը՝ ստրկուհուց, իսկ մյուսը՝ ազատ կնոջից: Ստրկուհու որդին ծնվել էր մարդկային թողտվության արդյունքում, ազատ կնոջ որդին ծնվել էր Աստծո խոստմամբ: Սա պատկերում է հենց այն, ինչի մասին մենք հիմա խոսում ենք: Այս երկու ծնունդները խորհրդանշում են Աստծո հետ հարաբերություններ ունենալու երկու ձևերը: Մեկը՝ Սինա սարից, որն Արաբիայում է: Դա համապատասխանում է այն ամենին, ինչ հիմա տեղի է ունենում Երուսաղեմում՝ ստրկական կյանք, որի սերունդները ստրուկներ են: Սա Հագարի ուղին է: Ի հակադրություն, գոյություն ունի անտեսանելի Երուսաղեմ՝ ազատ Երուսաղեմ, և նա մեր մայրն է. սա Սառայի ուղին է» (Ուղերձ):

Ինձ դուր է գալիս «սա Սառայի ուղին է» արտահայտությունը: Այս անթառամ գեղեցկություն ունեցող կինը խորհրդանշում էր այն անժամանակյա և մշտադալար գեղեցկությունը, որը Քրիստոսում է: Դուք ծնվել եք խոստման արդյունքում:

Հավատքի հայր Աբրահամը և նրա արքայադուստր Սառան Քրիստոսի և Նրա հարսնացուի՝ եկեղեցու խորհրդապատկերներն են: Մենք կանչված ենք, որ կախվածություն ունենանք Քրիստոսից և հետևենք Նրան: Նա մեր Գլուխն է, և բոլոր հավատացողները հնազանդ են Նրա իշխանությանը և առաջնորդությանը: Եվ կարիք չկա, որ վախենանք: Նա մեր Ամուսինը և մեզ Ստեղծողն է, Ով ձևավորել է մեզ Իր սիրով:

Հերի՛ք է թաքնվեք

Եթե Աստված փափագ է դրել ձեր մեջ, Նա նույնպես զորություն կտա, որ կրեք դա և ծնունդ տաք դրան: Այդ զորությունը գալիս է, երբ Աստված այցելում է ձեզ Իր խոստմամբ: Միգուցե այս էջերը նման են Սառայի այցելուներին: Միգուցե այս խոսքերը հասել են ձեզ, որ հիշեցնեն, թե ով եք դուք:

Իրականում, ոչինչ չի կարող փոխարինել այն, որ դուք լսեք Աստծո ձայնը՝ ուղղված անձամբ ձեզ: Դուք պետք է սկսեք զրուցել Աստծո հետ ձեր կյանքի մասին: Մեզ անհրաժեշտ է այն, ինչ կա ձեր կյանքում: Այսօր ժամանակը չէ, որ կանայք թաքնվեն: Ժամանակն է, որ մենք դուրս վազենք՝ լսելով մեր անունները, և բղավենք. «Ես այստեղ եմ: Ես այստեղ եմ, և ես ուզում եմ լսել»:

Եթե ուզում եք ապրել անզուգական կյանքով՝ առանց մրցակիցների, դուք պետք է դադարեք թաքնվել և մասնակցել այդ զրույցին:

Մեկ տարում շատ բան կարող է տեղի ունենալ: Այդ տարին Սառայի համար նման չէր նախորդ տարիներից ոչ մեկին: Սա զարմանալի չէ, քանի որ Աստված ծրագրել էր այն սկզբից մինչև վերջ՝ Իր այցելություններով:

Դուք գիտակցո՞ւմ եք, որ նույնը կարող է տեղի ունենալ ձեր կյանքում: Այս տարին կարող է սկսվել ձեր թաքստոցում՝ ծիծաղելով և ստելով, և ավարտվել այն բանով, որ դուք կստանաք Աստծո խոստումը:

Միգուցե մտածեք. «Բայց ես չեմ ստում»:

Դուք ստում եք, եթե կրկնում եք այս արտահայտություններից որևէ մեկը:

Շատ ուշ է:

Ես չափազանց երիտասարդ եմ:

Ես չափազանց տարեց եմ:

Ես չեմ կարող անել դա:

Ես չափազանց շատ սխալներ եմ գործել:

Ինձ մոտ ամեն ինչ լավ է:

Ինձ երազանք պետք չէ:

Մի՛ ստեք՝ ասելով, որ ձեզ պետք չէ ավելին: Մի՛ ուրացեք ձեր երազանքները: Եթե անեք դա, սկզբում դուք կծիծաղեք դրանց վրա, իսկ հետո կստեք՝ փակելով ձեր սրտի դուռը: Բացե՛ք ձեր սիրտը և ընդունե՛ք բոլոր հրաշքները, որոնց համար Աստված կանչում է ձեզ: Փոխարենը ծաղրենք Նրա հրավերը՝ ասելով, որ մենք չենք կարող ապրել հրաշքներով լի աստվածային կյանքով, եկե՛ք ուրախանանք այն հրաշքների համար, որոնք տեսնելու ենք: Մենք նման ենք մոխրոտների, իսկ այս աշխարհը կարելի է նմանեցնել մեր չար խորթ քույրերին: Որքա՞ն ժամանակ ենք մենք լաց լինելու երեկվա մոխիրներով լցված օջախի կողքին, մինչդեռ Արքայազնը կանգնած է մեր դռան մոտ: Ձեր տրամադրության տակ կա այն ամենը, ինչ անհրաժեշտ է, որպեսզի ունենաք այնպիսի կյանք, որը միայն Նա կարող է երազել ձեզ համար: Ինչո՞ւ եք թույլ տալիս, որ մեկ այլ մարդ կամ ձեր անցյալը պատասխանի այդ հրավերին ձեր փոխարեն:

Այսպիսով, ինչի՞ց եք դուք թաքնվում:

Ո՞ր երազանքն եք դուք ծաղրում այսօր: Ո՞ր հույսը: Դուք ճանաչո՞ւմ եք ձեր կոկորդը սեղմող նյարդային ծիծաղը, որը սկսվում է, երբ փորձում եք շրջանցել այն, ինչը լրջորեն ընդունելը չափազանց ցավոտ է ձեզ համար: Լսե՛ք, դուք ո՛չ կարող եք, ո՛չ էլ անկարող եք ապրել Աստծո խոստմամբ: Դուք ստացել եք Նրա խոստումը, որովհետև Քրիստոսն է տվել այն ձեզ:

Կամ միգուցե ձեր կյանքում այլևս ցավ չկա: Տանջող զգացողությունը հեռացել է, և միայն թմրություն է մնացել: Արդյո՞ք ձեր կյանքում կա այդպիսի բնագավառ: Եվ դուք լաց եք լինում ամեն անգամ, երբ Աստված փորձում է հպվել դրան: Շատ-շատերի կյանքը դատարկ է. այնպես որ, նրանք ծիծաղում են՝ փորձելով ծաղրել հույսը:

Միգուցե պատճառն այն է, որ ինչ-որ չափով դուք նման եք ձեր հայր Աբրահամին, երբ հավատում եք, որ որոշ բաներ շատ դժվար են Աստծո համար: Մի՞թե Նրա համար դժվար կլինի իմաստալից դարձնել ձեր կյանքը:

Մի՞թե արդեն ուշ է, որ Նա լցնի ձեր կյանքը սիրով: Ձեր կարծիքով, ի՞նչը Աստված դժվար թե կարողանա անել ձեզ համար:

Գաղատացիների 4.4-7-ում գրված է.

> «Բայց երբ եկավ Հայր Աստծո կողմից որոշված ժամանակը, Աստված ուղարկեց Իր Որդուն, Ով ծնվեց կնոջից, ծնվեց օրենքի պայմանների ներքո, որպեսզի ազատի մեզ՝ օրենքի կողմից առևանգվածներիս: Այսպիսով, մենք ազատվեցինք, որպեսզի ստանանք մեր օրինավոր ժառանգությունը: Կարող եք վստահաբար ասել, որ այժմ դուք լիովին որդեգրված եք՝ որպես Նրա զավակներ, որովհետև Աստված ուղարկեց Իր Որդու Հոգին մեր մեջ, որն աղաղակում է. «Հայրիկ: Հա՛յր»: Մի՞թե Աստծո հետ մտերիմ հաղորդակցման արտոնությունը ցույց չի տալիս, որ դուք ստրուկ չեք, այլ՝ զավակ: Եվ եթե դուք զավակ եք, դուք նույնպես ժառանգ եք, ում լիովին հասանելի է իր ժառանգությունը» (Ուղերձ):

Դուք առևանգված ժառանգորդ էիք, ով փրկագնվել է: Ամենից փառավոր և համարձակ բաներից մեկը, որ դուք կարող եք անել, հետևյալն է. ապրե՛ք այն ամենի լիությամբ, ինչ Հիսուսի մահը գնել է ձեզ համար: Դուք հայտնաբերում եք այն ամենը, ինչ պատկանում է ձեզ, երբ կարդում եք Նրա Խոսքը, ասես այն անձնական նամակ լինի, ոչ թե՝ պատմական տեղեկություն: Դուք հաստատում եք Նրա Խոսքը ձեր սրտում, երբ ինքներդ եք խոսում այն: Անկախ այն բանից՝ դուք տեսնո՞ւմ եք կամ զգո՞ւմ եք դա, դուք այնպիսին եք, ինչպիսին Աստծո Խոսքը նկարագրում է ձեզ, և ձեզ պատկանում է այն ամենը, ինչի մասին գրված է Աստծո Խոսքում: Նույնիսկ այսօր՝ հենց հիմա, Աստված նոր անուն է տալիս ձեզ, կատարում է Իր խոստումները և հաստատում է ձեր դիրքը՝ որպես Աստծո զավակ: Աստծո կոչումն ու ճանապարհը ձեր կյանքի համար և Նրա խոսքերը ձեր մասին չեն սահմանափակվում ձեր ներկա իրավիճակով: Նա անզուգա-

կան խոստում է ուղղել ձեզ, որին ոչ ոք չի կարող հավակնել. մի՛ թաքնվեք դրանից:

Ընդունեք այդ խոստումը:

Հարցեր քննարկման համար

1. Դուք գիտեի՞ք, որ Աստված հրավեր է ուղղել մեզ՝ բաժնեկցելու Իր Որդու աստվածային բնությանը *հիմա*՝ այն խոստումների միջոցով, որոնք Քրիստոսում են:
2. Ձեր կյանքում կա՞ որևէ բնագավառ կամ հարաբերություն, որը մշտական վիճաբանության աղբյուր է, և դուք պետք է առանձնանաք դրանից կամ կարգավորեք դա, որպեսզի Աստված կարողանա իրականացնել Իր խոստումը ձեր կյանքում:
3. Դուք թաքնվո՞ւմ եք: Եթե այո, ինչի՞ց:
4. Դուք միայն լսողի՞ դերում եք այն խոսակցությունների ժամանակ, որոնցում Աստված ուզում է, որ մասնակցեք: Ինչո՞ւ:
5. Ճրբ լռությունը հնազանդություն չէ:
6. Ձեր կյանքում կա՞ խոստում, որը դուք ստացել եք Աստծուց, որի վրա ծիծաղում եք և որի մասին ստում եք:
7. Ինչ քայլեր կարող եք ձեռնարկել, որպեսզի դադարեք դրսից ներս նայելու փորձեր անելուց, և սկսեք գործուն ու եռանդուն կյանք վարել:

4

Չհամարձակվե՛ք համեմատել

Համեմատությունը՝ ուրախության գողն է:

Թեոդոր Ռուզվելտ

Այս գլուխը, հավանաբար, պետք է սկսվի զգուշացմամբ: Այն, ինչ դուք կարդալու եք, շատ բաներ կբացահայտի ձեզ համար: Ցավոք, շփոթեցնելու աստիճան զավեշտական պատմությունն իմ մասին՝ ճշմարտություն է: Հուսով եմ՝ ձեզնից ոչ ոք չի տառապել այն ժամանակավոր մտավոր խանգարումով, որի մասին ես պատմելու եմ այստեղ, բայց եթե նման բան վերապրել եք... դուք մենակ չեք: Եկեք սկսենք:

Իմ օրը սկսվեց շատ անմեղ ձևով: Ես գնացի խոհանոց՝ խալաթով փաթաթված, որը հագել էի ֆլանելե ննջազգեստի վրայից, որպեսզի անցկացնեի ևս մեկ սառը հունվարյան առավոտ Կոլորադոյում: Ջոնն արդեն մեկ ժամից ավելի արթուն էր և լուռ ընթերցում էր իր աշխատասենյակում: Ես անկանոն կերպով այսուայն կողմ էի գնում խոհանոցում՝ պտտվելով իմ էսպրեսոյի սարքի մոտ՝ մինչ երկու որդիներս պատրաստվում էին դուրս գնալ տնից: Օսթինը գնում էր աշխատանքի, իսկ Ալեքը՝ դասի: Երբ դրսի դուռը փակվեց, ես տեղավորվեցի բազմոցի վրա, որպեսզի արդեն երկրորդ անգամ խմեի էսպրեսոյի և հարած սերուցքի կատարյալ համադրությունը՝ պատված մաքուր կակաոյի և դարչինի քերուկներով, չզտված շաքարի փոշով և մի փոքր պա-

տիճապղպեղի փոշով (կարո՞ղ եմ ասել, որ կուզեի պատրաստել այսպիսի սուրճ իմ բոլոր ընկերների համար): Ձմռան արևը նոր էր բարձրանում մեր տան ետևի բակի կողմից: Ես հարմարավետ կծկվեցի բազմոցի վրա, որպեսզի դիտեի, թե ինչպես են վարդագույն ճառագայթները հեռացնում մուգ կապույտ շողքերը: Այդ օրը չկար թռիչք, որին ես պետք է հասցնեի: Չկային առավոտյան հանդիպումներ. այնպես որ, վաղ առավոտյան կարելի էր ցնցուղ չընդունել: Ես կարող էի հանդարտ սկսել օրս՝ այնպես, ինչպես ուզում էի: Ես դանդաղ հոգոց հանեցի և ափերով գրկեցի ալիքաձև բաժակը՝ պահպանելու համար այն ջերմությունը, որն անցնում էր ամբողջ մարմնովս: Ես զգում էի, թե ինչպես էր արյունը հոսում դեպի իմ ուղեղը. ես կատարելապես հանդարտ էի:

Այդ պահին արժեր վերցնել Աստվածաշունչը և ամենօրյա ընթերցանության նյութը, կամ պարզապես մնալ այդպես և վայելել Աստծո բարությունն իմ հանդեպ: Եվ ոչ մի դեպքում չարժեր միացնել հեռախոսս: Հավատացեք ինձ... հիմա ես հասկանում եմ դա: Բայց իմ թույլ կողմերից մեկը նույնպես իմ ուժեղ կողմն է: Ես դիտարկում եմ սոցիալական ցանցերը՝ որպես ընկերներիս հետ կապ պահպանելու հնարավորություն: Թերթելով գրառումները՝ ասես սուրճ եմ խմում սրտակից ընկերուհիներիս հետ: Մարդկանց հետ շփվելու ձգտումը հրաշալի է ճիշտ ժամանակին և ճիշտ տեղում, բայց դա ո՛չ ճիշտ ժամանակն էր, ո՛չ էլ ճիշտ տեղը: Ես այն մարդկանցից մեկն եմ, ով նախ՝ պետք է հանդիպում ունենա սուրճի հետ, իսկ հետո՝ Սուրբ Հոգու, մինչև մարդկանց հանդիպելը:

Ցուցակը

Թերթելով իմ «Թվիթերը»՝ նկատեցի գրառումների մի շարան, որում երևում էին գրեթե իմ բոլոր ընկերների անունները: Մարդիկ, որոնց ես ճանաչում էի, սիրում էի, և նույնիսկ նրանք, որոնց շնորհիվ պաշտպանված էի զգում ինձ, շնորհակալություն էին ուղղում ինչ-որ մեկին, ով ընդգրկել էր իրենց մի ցուցա-

կի մեջ: Բայց դա հասարակ ցուցակ չէր: Դա ՇԱՏ ԿԱՐԵՎՈՐ ՑՈՒՑԱԿ էր: Եվ ես շատ էի ուզում լինել դրանում:

Մինչև շարունակելը, ես պետք է պատմեմ ձեզ այդ մասին:

Խոսքը մի ցուցակի մասին է, որը վերակազմվում է ամեն տարի: Վերջին մի քանի տասնամյակների ընթացքում այդ ցուցակը կազմելու համար պատասխանատու են եղել մի շարք կազմակերպություններ և անհատներ: Այդ տարի այդ ցուցակը կազմում էր մի կին, ոչ թե կազմակերպություն: Ես գիտեի այդ կնոջը, բայց մենք ծանոթ չէինք. սակայն դա չէր նշանակում, որ ես չէի ուզում լինել նրա ցուցակում:

Ես աչքի անցկացրի դրանում ընդգրկված անունները: Քանի որ ցուցակը կառուցված էր այբբենական կարգով, իսկ իմ ազգանունը սկսվում է «Բ» տառով, ես շատ արագ հասկացա, որ... կրկին այդ ցուցակում չէի:

Իրականում, ես երբեք չէի եղել այդ ցուցակում: Բայց ակնհայտ է, որ այս անգամ գրեթե բոլորը, որոնց ես ճանաչում էի, ընդգրկված էին դրանում: Այդ ցուցակում այնպիսի մարդիկ էին, որոնց ես բարձրացրել էի ծառայության մեջ: Մի կին, ով թարգմանում է իմ գրքերն իսպաներենով, նույնպես այդտեղ էր:

Միգուցե մտածեք... ի՞նչ ցուցակ էր դա, և ինչո՞ւ էր այն այդքան կարևոր ինձ համար:

Դա Ամերիկայի հարյուր ամենահայտնի կին-ծառայողների ցուցակն էր:

Սիրտս սկսեց արագ բաբախել: Մտքովս ծիծաղելի հարցեր և համեմատություններ էին անցնում: Ինչո՞ւ ես այդ ցուցակում չէի:

Միգուցե պատճառն այն էր, որ ես չունեի՞ բավականաչափ նյութեր իմ բլոգում:

Միտքս սկսեց պրպտել...

Ինչո՞ւ միլիոնից ավելի վաճառված գրքերը և ավելի քան երկու տասնամյակ շարունակ ճանապարհորդելը և կանանց ծառայելը չարժանացրին ինձ այդ ցուցակում ընդգրկվելուն:

Ես լավ ընկեր եմ: Մի՞թե հաշվի չի առնվել այն, որ ավելի քան երեսուն տարի է՝ ամուսնացած եմ, չորս որդի եմ մեծացրել և այնպիսի ընտանիք ունեմ, որտեղ բոլորը սիրում են իրար:

Ես կարդացի ցուցակին կից հետգրությունը: Իհարկե, այդ ցուցակը կազմող կինը խոստովանում էր, որ ինքը միգուցե անտեսել էր որոշ կանանց, որոնց անունները պետք է լինեին այդ ցուցակում, բայց... չկային: Իր բացթողումները շտկելու համար նա տեղ էր թողել ավելացումների համար:

Ես շարունակեցի կարդալ:

«Մի՞թե սխալ կլինի, եթե ավելացնեմ իմ անունը»:

Ինչ էի ես մտածում: Իհարկե, դա սխալ կլիներ:

«Միգուցե խնդրեմ իմ օգնականներից մեկին ավելացնել իմ անունը»: Հասկանալով, որ ես գրեթե հասել էի անմտության աստիճանի, որը հատուկ է միջնակարգ դպրոցի աշակերտուհիներին՝ գնացի ամուսնուս մոտ:

Ես ներխուժեցի նրա աշխատասենյակ՝ թանձր փոթորիկ ստեղծելով, և ասացի ողբալի ձայնով.

– Ջո՛ն, ես այդ ցուցակում չեմ... նորի՞ց:

Իմ սիրելին, ով Աստվածաշունչ էր կարդում, նայեց ինձ իր ընթերցանության համար նախատեսված ակնոցի տակից: Նա շփոթված էր: Նա ոչինչ չգիտեր այդ ցուցակի մասին: Տարուբերելով ձեռքերս՝ ես սկսեցի բացատրել, թե ինչ ցուցակի մասին էր խոսքը: Դա ոչ մի տպավորություն չգործեց նրա վրա: Ես պատմեցի, թե ովքեր էին այդ ցուցակում, և կիսվեցի իմ ակնհայտ վրդովմունքով այն մասին, որ իմ անունն այդ ցուցակում չէր: Նա չշարժվեց իր նստած տեղից: Մի կողմ դրեց ֆլոմաստերը, որով խոսքեր էր ընդգծում աստվածաշնչից, և բարձրացրեց հոնքերից մեկը: Երբ իմ վերամբարձ ճառն ավարտվեց, նա հանդարտորեն առաջարկեց ինձ կարդալ մի քանի հատվածներ Աստվածաշնչից:

Ես այլ պատասխանի էի սպասում նրանից: Ես ուզում էի, որ նա ասեր. «Լի՛զա, ես այնքա՜ն եմ ցավում: Համաձայն եմ, որ սարսափելի սխալ է տեղի ունեցել: Բե՛ր իմ հեռախոսը, և ես կավելացնեմ քո անունը այդ ցուցակում»: Բայց նա այդպես չասաց:

Ես ընդդիմացա.

– Ես չեմ կարդալու այդ հատվածները: Եվ հենց հիմա կարող եմ անգի՛ր ասել դրանք: Հիմա ինձ ա՛յլ բան է պետք քեզնից:

Մի՞թե չես հասկանում: Ես արդեն հիսունն անց եմ, և այդպես էլ իմ անունը երբեք չի լինի այդ ցուցակում:

– Ո՞վ է կազմել այդ ցուցակը, - հարցրեց Ջոնը:

Ես ասացի այդ կնոջ անունը... բայց նա չճանաչեց նրան:

– Իսկ դու ճանաչո՞ւմ ես այդ կնոջը:

Ես տարուբերեցի գլուխս: Նա դանդաղ գլխով արեց և կրկին նայեց իր Աստվածաշնչին՝ կրկնելով իր առաջարկած հատվածները և, ի լրացում, ևս մեկ խոսք ավելացրեց:

Ես հասկացա, որ կարեկցանք չէի ստանալու իմ ամուսնուց: Դուրս վազեցի նրա աշխատասենյակից՝ բղավելով.

– Ինձ պետք չէ՛ կարդալ այդ աստվածաշնչյան հատվածները, որ իմանամ, որ ես սխալ եմ: Ես *գիտեմ*, որ ես սխալ եմ: Բայց նույնիսկ այդ դեպքում, ես չե՛մ մտածում, որ սա *ճիշտ* է»:

Ինձ կին զրուցակից էր պետք: Ես խիզախելով դուրս եկա մեր ծածկապատշգամբը իմ գիշերազգեստով՝ զրոյից ցածր ջերմաստիճանին, որպեսզի ամուսինս ևս մեկ անգամ չլսեր իմ վերամբարձ ճառը: Ամեն դեպքում, որոշեցի զանգահարել ինչ-որ մեկին, ով կասեր ինձ ճշմարտությունը, ոչ թե պարզապես կկարեկցեր: Ես սկսեցի հրաժարումով. «Ես գիտեմ, որ սխալ եմ...», և ներկայացրի ամբողջ պատումն այդ ցուցակի մասին:

– Իսկ իմ անունը կա՞ այդ ցուցակում, - հարցրեց զրուցակիցս:

– Իհա՛րկե: Բոլորն այդ ցուցակում են:

– Իսկ ո՞ւմ է դա պետք, - սկսեց նա:

– Հասկանալի է, որ ինձ, և իհարկե՝ ոչ քեզ. չէ՞ որ քո անունը կա դրանում, - ընդդիմացա ես: Իսկ հետո խոստովանեցի. – Ես չեմ ուզում մտահոգվել դրանով, բայց չեմ կարողանում չմտահոգվել: Ես գիտեմ, որ դա սխալ է, և ես պարզապես պետք է կիսվեմ ինչ-որ մեկի հետ: Ջոնն արդեն առաջարկեց ինձ աստվածաշնչյան հատվածներ կարդալ...

Լռություն:

Երբևէ պատահե՞լ է, որ ինքներդ ձեզ կողքից նայեք և մի խելագար կնոջ տեսնեք:

Ես հենց այդ վիճակում էի: Որքան շարունակում էի, այնքան իմ խոսքերն ավելի ծիծաղելի էին թվում: Ես ուզում էի արագորեն

ավարտել այդ հեռախոսազանգը, որը երանի՜ թե երբեք չանեի: Ես թռցրի բերանիցս.

– Ես ուզում եմ խոստովանել քեզ այս ամենը: Ուզում եմ ազատվել այս վիճակից: Ես պետք է ազատվեմ այս վիճակից:

Նա սրտանց համաձայնեց ինձ հետ (որ ես սխալ էի), և մենք ավարտեցինք մեր խոսակցությունը:

Ես գիտեի, թե որն էր ճիշտը: Ամուսինս նույնպես գիտեր, թե որն էր ճիշտը: Նույնիսկ իմ ընկերուհին գիտեր, թե որն էր ճիշտը: Բայց միևնույն է՝ ես սխալ էի համարում դա:

Ես բարկացած էի այդ ցուցակի ստեղծման գաղափարի պատճառով, և զայրույթ էի զգում այդ տարվա հեղինակի հանդեպ: Ո՞վ էր նման բան որոշել: Երբ կրկին կարդացի այդ ցուցակը, ես տեսա, որ կային շատ այլ կանայք, որոնց անունները պետք է լինեին այդ ցուցակում, բայց հեղինակը հաշվի չէր առել նրանց... Միգուցե ես ինքս մի ցուցակ կազմեմ: Ես կարող էի ընդգրկել նրանց իմ ցուցակում: Ի վերջո, ինձ հետևում են ավելի շատ մարդիկ «Ֆեյսբուքում» և «Թվիթերում», քան այդ ցուցակի հեղինակին: Ինչն էր ընդունելի դարձնում նրա ցուցակը: Ես մտածեցի այդ մասին մոտավորապես տասը վայրկյան: Ես ոչ մի դեպքում նման բան չէի անի:

Մարդկանց ցուցակագրելու իմ փորձերը լավագույն դեպքում սահմանափակ կլինեին, և անկախ այն բանից, թե որքան ուշադրությամբ ես կկազմեի այդ ցուցակը՝ անպայման բաց կթողնեի ինչ-որ մեկին: Մի՞թե ես կուզեի առաջացնել նրանցում միևնույն պայքարը, որն այդ պահին ինձանում էր (թեև կասկածում էի, որ եթե սխալմամբ չընդգրկեի ինչ-որ մեկին, նա կհայտնվեր միևնույն անհեթեթ վիճակում, որում ես էի վերջին կես ժամվա ընթացքում):

Ես ցած դրի հեռախոսս, փակեցի աչքերս, խորը շունչ քաշեցի և բաց թողեցի այդ ամենը: Արտաշնչելիս լսեցի, թե ինչպես Սուրբ Հոգին մեղմորեն հարցրեց. «Լի՛զա, դու այդքան բարկացած կլինեի՞ր այդ ցուցակի պատճառով, եթե քո անունը լիներ դրանում: Դու կասեի՞ր, որ այն սխալ կամ անվավեր է, եթե տեսնեիր քո անունը դրանում»:

Ահա և ճշմարտության պահը: Ես այդպես չէի վարվի: Բարկանալու փոխարեն կօգտագործեի իմ սոցիալական ցանցերի

հարթակը, որպեսզի շնորհակալություն հայտնեի այդ կնոջից, որին չէի ճանաչում, և միգուցե կկիսվեի այդ ցուցակով «Թվիթերում», որպեսզի ավելի շատ մարդիկ իմանային դրա մասին:

Ես այնքա՜ն կոտրված զգացի ինձ:

Այո՛, ես մեկ ամուսնու կին, չորս երեխայի մայր և տատիկ եմ, բայց երբ մոռանում եմ իմ ճշմարիտ ինքնությունը, ես դեռ կարող եմ բախվել համեմատության դաժան իրողությանը: Այդ առումով, այդ ցուցակը պարգև էր ինձ համար, քանի որ այն օգնեց, որ գտնեի ինքս ինձ:

Եթե մենք ուզենք հավանություն ստանալ մարդկանցից, միշտ կզգանք մեզ դրսում՝ ներս նայելիս: Անկեղծ ասած, չկա նույնիսկ մեկ մարդ, որը կարող է լիարժեք կերպով լրացնել ձեր հավանություն ստանալու կարիքը (ներողություն, բայց նույնիսկ եթե ձեր ամուսինը կատարյալ լիներ, դա տեղի չէր ունենա): Գոյություն չունի այնպիսի ձեռքբերում, ցուցակ կամ մրցանակ, որը կարող է վստահաբար գրել այն բառերը, որոնք միայն Աստված կարող է փորագրել ձեր սրտին.

«Դու սիրված, գեղեցիկ, գնահատված և մտերմաբար ճանաչված ես... դու Ի՛մն ես»:

Ուրախության գողը

Անկախ արտաքին տպավորությունից՝ միայն Աստված է հասկանում, թե ինչն է ցնցում առաջացնում կնոջ սրտում, և միայն Աստված գիտի, թե ինչպես հանդարտեցնել ննջազգեստով կանանց մոլեգնող սրտերը, որոնք մոռանում են խաղաղեցնել իրենց անձը՝ նախքան կգա համեմատությունը՝ նրանց խաղաղությունը գողանալու համար: Հավաստիացնում եմ ձեզ՝ ցանկացած բան, որը սնուցում է մրցակցությունը ձեզանում, կթուլացնի ձեր ուժերը: Թեոդոր Ռուզվելտը շատ դիպուկ գրել է. «Համեմատությունը՝ ուրախության գողն է»:

Ցանկացած բան, որը սնուցում է մրցակցությունը ձեզանում, կթուլացնի ձեր ուժերը:

Անկասկած, այդ առավոտ ես հասկացա, թե ինչպես այն գողացվեց ինձնից: Ես մտածում էի, որ վեր էի նման վարվելակերպից: Ճիշտն ասած, տարիներ շարունակ ես նման զգացմունքային պոռթկում չէի ունեցել: Բայց այդ առավոտ ինձ անտեսված զգալը՝ դաշտանադադարի հետ մեկտեղ, պայթյունավտանգ արդյունք ունեցան: Այնպիսի տպավորություն էր, որ իմ կյանքի աղբյուրների մի մասը պղտորվել էր, և իմ սրտի խաղողի այգին հուսահատորեն ուշադրության կարիք էր զգում: Թվում էր՝ իմ այգու որթերից մի քանիսը լցվել էին ապստամբությամբ, այնինչ նրանց պարզապես լավ էտում էր պետք:

Համեմատությունը ձգողական ուժ ունի: Եթե թույլ տաք, այն մշտապես կհեռացնի ձեզ ձեր իրական ինքնությունից: Համեմատությունը նենգաբար կփորձի բարձրացնել ձեզ հպարտության միջոցով, կամ ցած գլորել՝ դեպի անապահովության ճիրանները: Երկու դեպքում էլ դուք անհավասարակշռված վիճակում կլինեք. դուք կհայտնվեք դրսում՝ փորձելով ներս նայել:

Ինձ համար անտանելի է տեսնել, որ ինչ-որ մեկը միտումնավոր կերպով անտեսված է: Այնուամենայնիվ, կան դեպքեր, երբ ձեզ *դրսում* զգալը միակ բանն է, որը կդրդի ձեզ *ներս նայել:* Ինչ վերաբերում է այդ ցուցակը կազմող անձնավորությանը, նա երիտասարդ, խելացի և ուշիմ կին է: Անկախ այն բանից՝ ես համաձայն եմ նրա մոտեցմանը, թե՞ ոչ, ես անչափ շնորհակալ եմ նրանից այն ամենի համար, ինչ նրա ցուցակը բացահայտեց ինձանում:

Ես մի հաղորդագրություն գրեցի իմ համբերատար ընկերուհուն, ով միգուցե արդեն կասկածում էր իմ ողջամտության մեջ: Ես կրկին գնացի իմ սուրբ ամուսնու գրասենյակը՝ նրան գրկելու համար: Այնուհետև իմ հողաթափերով ոտքերն ուղղեցի դեպի իմ ննջասենյակ, փակեցի դուռը և ծնկի եկա: Ահա մի հատված իմ աղոթքից:

Երկնայի՛ն Հայր,

Շնորհակալություն իմ սխալները բացահայտելու համար:

Ների՛ր ինձ: Ցո՛ւյց տուր այս մոլախոտի արմատը: Հիսուսի անունով, ամե՛ն:

Օրվա ընթացքում ես ետ էի նայում իմ խելագարության նոպային և ծիծաղում էի անմտությանս վրա: Ավելի ուշ այդ օրը ես հանդիպեցի իմ օգնականին: Միասին նայելով իմ փոստը՝ մենք մի անսովոր առարկա գտանք: Պարզվում էր, որ ես ընտրվել էի մի քանի այլ կանանց հետ՝ որպես կանանց նվիրված մի միջոցառման պատվավոր մասնակից, որը վերջերս էր տեղի ունեցել: Թեև մենք չէինք կարողացել ներկա լինել, բայց մեզ պատվելու համար նրանք պատրաստել էին երեսուն սանտիմետր հասակով լամինացված տիկնիկներ՝ ամեն մեկիս պատկերով: Իմ տիկնիկն ուղարկել էին Ջոնին՝ հուսալով, որ այն ինչ-որ տեղ կգտներ նրա գրասենյակում: Վերցնելով այդ տիկնիկը՝ ես բարձրաձայն ծիծաղեցի. ես երբեք սպիտակ ջինս չեմ հագնում բեմի վրա: Ես մի կողմ դրեցի այն և լսեցի մի ծանոթ ձայն, որը շշնջաց. «Քեզնից տիկնիկ են սարքել: Դու ուրա՞խ ես դրա համար»:

Ես թափահարեցի գլուխս: Իմ պլաստիկ պատկերը՝ սպիտակ ջինսով և միկրոֆոնը ձեռքին, նույնքան արհեստական էր, որքան այն ցուցակը: Ես կրկին ծիծաղեցի: Փորձեցի դեն նետել այդ տիկնիկը, բայց ամուսինս առգրավեց՝ հիշեցնելով, որ այն ուղարկել էին իրեն, ոչ թե ինձ: Ինձ թվում է՝ նա պահում է այն, որ մոտ ապագայում ետ պահի ինձ նման անմտության նոպաներից:

Երեք «Չի կարելիներ»

Եվ ի՞նչ աստվածաշնչյան հատվածներ ինձ առաջարկեց Ջոնը, որոնք ես արդեն գիտեի: Առաջինը՝ Բ Կորնթացիների 10.12-ն է.

> «Ոչ թե, որ մենք համարձակվում ենք *դասակարգել* կամ *համեմատել* մեզ ոմանց հետ, ովքեր իրենց անձերը *հանձնարարում* են: Բայց երբ նրանք չափում են իրենց մեկը մյուսի հետ և համեմատում են իրենց մեկը մյուսի հետ, նրանք հասկացողություն չունեն» (ESV):

Մի՛ համարձակվեք դասակարգել, համեմատել կամ հանձնարարել ինքներդ ձեզ:

Սովորե՛ք ինձնից: Մի՛ համարձակվեք դասակարգել, համեմատել կամ հանձնարարել ինքներդ ձեզ:

Ինչո՞ւ: Նման արարքը բխում է հպարտությունից, նույնիսկ եթե ձեր արած համեմատությունը ձեր օգտին չէ: Բոլորս գիտենք, որ հպարտությունը նախորդում է կործանմանը: Այս երեքի պատճառով դուք կարող եք հայտնվել այնպիսի վիճակում, որը վտանգավոր է, իսկ երբեմն՝ սարսափելի:

Ինչ է կատարվում, երբ մենք դասակարգում ենք

Իմաստուն մարդիկ չեն դասակարգում ոչ ոքի, և ո՛չ էլ ուզում են դասակարգված լինել: Մարդկանց դասակարգելը սխալ է: Ինչ-որ բան դասակարգելը նշանակում է՝ դնել այն իր տեղում կամ վերագրել այն ինչ-որ խմբի: «*Դասակարգել*» բառի այլ բացատրություններն են՝ «*գնահատել*», «*տեսակավորել*», «*ցուցակագրել*», «*դասել*» և միգուցե ամենատհաճը՝ «*պիտակել*»: *Մերիամ-Վեբսթեր բառարանն* այսպես է սահմանում «պիտակել» բառը. «առանձին դասակարգի նկարագրություն, որը, սովորաբար, չի արտացոլում դրա իրական բազմապիսիությունը»:

Կյանքում չկան առանձին դասակարգեր: Կյանքը, հիմնականում, խճճված է: Իրականում, յուրաքանչյուր մարդու կյանքը շատ ավելի բարդ է, քան մենք տեսնում ենք: Եվ իհարկե, ոչ մի խելացի մարդ չի ցանկանա, որ իրեն նսեմացնեն՝ պիտակելու միջոցով: Սոցիալական ցանցերը՝ այն բազմաթիվ ժամանակակից միջոցներից մեկն է, որոնք կարող են սահմանափակել կամ ընդլայնել թե՛ մեր նախապաշարումները, թե՛ մեր ճանաչողությունը:

Մեր օրերում սխալ չէ մշտապես տալ հետևյալ հարցը. «Ինչի՞ կառուցման մասն եմ ես ուզում լինել: Արդյո՞ք ուզում եմ դասակարգվել, գնահատվել և դասվել ինչ-որ շարքերում՝ այլ մարդկանց հետ»: Ես գիտեմ՝ այն ցուցակը, որը կարդում էի, այդ կանանց ձեռքբերումները միավորելու փորձ էր: Այն ստեղծված էր, որ արժևորեր այն, ինչը միշտ չէ, որ արժևորում էր ծառայության մեջ գտնվող կանանց:

Բայց եթե ուզում ենք, որ մեզ դասակարգեն, մենք կհայտնվենք սահմանափակումների մեջ: Տարիներ առաջ մի

իմաստուն տարեց զգուշացրեց ամուսնուս. «Թույլ մի՛ տուր մարդկանց՝ դասակարգեն քեզ: Եթե թույլ տաս, մեկ օր նրանք կօգտագործեն քո վրայի պիտակը՝ քեզ որակազրկելու համար»:

Թույլ տվեք պարզապես ասել ձեզ, որ մարդկանց մեծամասնությանը հնարավոր չէ վերագրել որևէ հստակ դասակարգի: Եվ այն մարդիկ, որոնց կոպտորեն են վերաբերվել կամ չեն ընդգրկել որևէ դասակարգի մեջ, մեծ հաճույքով *կպիտակեն* ձեզ, եթե հնարավորություն ունենան:

Ինչ է կատարվում, երբ մենք համեմատում ենք

Համարձակ մարդիկ չեն համարձակվում համեմատել իրենց ուրիշների հետ, նույնիսկ եթե համեմատությունն իրենց օգտին է: Նրանք գիտակցում են, որ իրենց առջևում դեռ շատ քայլեր կան: Նրանք ճաշակել են երկնայինը և գիտակցում են, որ ոչինչ այս աշխարհում չի կարող համեմատվել դրա հետ: Այդ փառավոր տեսիլքն *ավելի* է խթանում նրանց՝ առաջ գնալու համար: Համեմատությունը՝ վախկոտների ապաստանն է, ովքեր չեն համարձակվում հավատալ, որ գոյություն ունի ավելին:

Ինչպե՞ս է կոչվում այն սարը, որը մենք մագլցում ենք. համբա՞վ: Հավիտենական տեսանկյունից դա մոխրակույտ է: Իսկ եթե ուզենք ավելի սուրբգրային լինել և մեջբերենք Պողոսին՝ Փիլիպեցիների 3.8-ից, դա շան կեղտ է: Ոչ ոք չի գնում դեպի շան կեղտը. այն շրջանցում են՝ աշխատելով չտրորել: Մեզնից շատերի խնդիրն այն է, որ մեր ոտքերը շան կեղտի մեջ են, և մենք քայլում ենք՝ մեր ետևից գարշահոտ արահետ թողնելով: Մենք սովորել ենք այդ հոտին, բայց դա չի նշանակում, որ այդ հոտը լավն է: Փիլիպեցիների 3.7-9-ում գրված է.

> «Նույն հանձնարարականները, որոնք այս մարդիկ ծածանում են, քանի որ յուրահատուկ են համարում, ես պատռում եմ և աղբն եմ նետում այն ամենի հետ, ինչն իմ արժանիքն էի համարում: Բայց ինչո՞ւ: Քրիստոսի պատճառով: Այո՛, այն ամենը, ինչ ես մի ժամանակ խիստ կարևոր էի համարում, այլևս չկա իմ կյանքում: Համեմատելով իմ Տեր

Հիսուս Քրիստոսին անձամբ ճանաչելու բարձր արտոնության հետ՝ այն ամենը, ինչ ես օգուտ էի համարում, նշանակություն չունի. դա շան կեղտ է: Ես աղբն եմ նետել այդ ամենը, որպեսզի կարողանամ ընդունել Քրիստոսին և ընդունված լինել Նրա կողմից» (Ուղերձ):

Հիսուսին որպես Տեր ճանաչելը՝ մեր մեծագույն արտոնությունն է: Երբ ես վերցրի հեռախոսս, փոխարենը ընտրեի Նրան ավելի շատ ճանաչելու տարբերակը, ես ընտրեցի ավելի ցածր տարբերակը:

Շատ ավելի լավ է ճանաչել Աստծուն, քան ճանաչված լինել մարդկանց կողմից:

Ինչ է կատարվում, երբ մենք հանձնարարում ենք ինքներս մեզ

Իսկ ինքներս մեզ հանձնարարելը: Ինչ խնդիր կա, որ ժամանակ առ ժամանակ ցուցադրենք «մեր» ձեռքբերումները: Այո, կա ժամանակ մեր աճը ցուցադրելու և գովեստներ ստանալու համար: Բայց սխալ է վերագրել մեզ այն, ինչը մենք ձրիաբար ստացել ենք՝ ներկայացնելով դա որպես մեր անձնական ձեռքբերումը: Պտուղը պետք է զարգացնել, իսկ պարգևները մենք պարզապես ստանում ենք, և նույնիսկ այդ դեպքում, մենք ընդամենը մեզ վստահված Աստծո պարգևների տնտեսներ ենք:

Ոմանք շլացուցիչ գեղեցկություն ունեն: Մյուսները ծնվում են անասելի հարստություն ունեցող և արտոնություններ վայելող ընտանիքներում: Հազվագյուտ մարդիկ ունենում են այս երկուսն էլ: Եվ կան մարդիկ, ովքեր ծնվում են լիովին հակառակ պայմաններում: Նրանք ապրում են սոսկալի աղքատության մեջ և դաստիարակվում են հասարակական կապերից զուրկ ընտանիքներում: Կան մարդիկ, ովքեր բոլորովին զուրկ են արտաքին գեղեցկությունից: Մեզնից շատերն այս ծայրահեղությունների մեջտեղում են: Այնուամենայնիվ, այդ հանգամանքներից ոչ մեկը չի կարող վերջնականորեն որոշել ձեր կյանքի ընթացքը և ձեր արժեքը: Աստված չի նայում երեսին... Նա նայում է սրտին: Մի սերնդի հարստությունը կարող է թև առնել և հեռանալ հաջորդ սերնդից:

Մտածելով այս մասին՝ ես տեսնում եմ, որ կյանքն անարդար է: Այնուամենայնիվ, ես մեկ բան գիտեմ. Աստված արդար է: Նա գիտի, թե ինչպես կշռել ամեն մարդու նեղությունները և արտոնություններն Իր ձեռքում: Միայն Նա է արդարությամբ չափում: Սա ևս մեկ պատճառ է, թե ինչու չպետք է համեմատենք: Քանի որ այն ամենը, ինչ մենք կշռում ենք այս ժամանակավոր իրողության մեջ, բոլորովին այլ կերպով է դիտարկվում հավիտենության տեսանկյունից:

Մենք ձախողվում ենք այս ժամանակավոր իրականության մեջ, քանի որ հակված ենք անել այն, ինչը պատիվ է բերում մարդուն, ոչ թե այն, ինչը պատիվ է բերում Աստծուն, և արդյունքում ոչ անհրաժեշտ մրցակցություն ենք ստեղծում: Եկեք առաջ անցնենք և բացատրենք Բ Կորնթացիների 10.12-ի երկրորդ մասը.

> «Բայց երբ նրանք չափվում են մեկը մյուսի հետ և համեմատում են իրենց մեկը մյուսի հետ, նրանք հասկացողություն չունեն» (ESV):

Դուք գիտեք, որ ես այսպես վարվել եմ: Կարծում եմ՝ բոլորս ենք այսպես վարվել: Մենք չափել և համեմատել ենք: Ոմանք ամբարտավան կերպով համեմատում են իրենց այլ մարդկանց հետ, իսկ մյուսները հիմարաբար թույլ են տալիս, որ համեմատությունը նսեմացնի այն, ինչ Աստված ցանկանում է անել իրենց կյանքում:

Հպարտությունն անհավասարակշռություն է ստեղծում՝ մի կողմից, իսկ անապահովությունը սահմանափակում է՝ մյուս կողմից: Երկու ծայրահեղություններն էլ վտանգավոր են: Գոյություն ունի միայն մեկ ճշմարիտ չափանիշ՝ մեր անչափելի Քրիստոսը, Ով թագավորների օծյալ Թագավորն է: Միայն Նա է սուրբ, անարատ և զորավոր: Մենք նման ենք մրջյունների՝ մեր հողե բլրի մեջ, և հիմարաբար երևակայում ենք, որ մրջնակերը վախենում է մոտենալ մեզ, այնինչ մրջնակերը դողում է այն առյուծից, որի շողքն ընկել է մեր բնի վրա: Անկախ այն բանից, թե որքան ջանասեր ենք մենք և որքանով ենք գովեստի արժանի՝ մեզ անկարելի է համեմատել Նրա հետ, Ով վերստին ծնունդ է տվել մեզ:

Ես կարող եմ մեջբերել ևս մեկ աստվածաշնչյան խոսք՝ Հովհաննես 5.44-ը.

> «Ինչպե՞ս եք ակնկալում, որ ինչ-որ բանի կհասնեք Աստծո հետ, երբ մշտապես դիմում եք ցանկացած քայլի՝ մեկդ մյուսի առջև դիրք ձեռք բերելու համար, դասակարգում եք ձեր մրցակիցներին և անտեսում եք Աստծուն» (Ուղերձ):

Ինչո՞ւ վատնել մեր ժամանակը՝ մեր մրցակիցներին դասակարգելու համար, երբ մենք հրավիրված ենք անզուգական Աստծո ներկայության մեջ: Երբ ես թույլ եմ տալիս, որ իմ կյանքը գնահատվի մարդկանց կողմից, իմ կապն իմ երկնային Հոր հետ խաթարվում է: Կարճ ժամանակ անց իմ դիրքորոշումն աղավաղվում է մարդկային կարծիքների պատճառով, և ես մոռանում եմ Աստծո հռչակումն այն մասին, թե ինչպիսին եմ ես դառնում: Երբեմն մտածում եմ, թե ինչպիսի հետևանքներ ունեն իմ հիմար արարքները և սահմանափակ միտքը՝ այնպիսիք, որոնք վեր են իմ պատկերացումից:

Հուսով եմ՝ դուք կարող եք ծիծաղել իմ անհեթեթ առավոտվա վրա և համեմատություններ անել ձեր սեփական հակվածության հետ: Շատ հոգնեցուցիչ կլիներ, եթե դա ոչ թե մեկանգամյա իրադարձություն լիներ, այլ տեղի ունենար ամեն օր: Համեմատությունը մշտական տեղ չունի իմ կյանքում, քանի որ իմ կողքին կան այնպիսի մարդիկ, ինչպիսիք են իմ ամուսինը և իմ հավատարիմ ընկերուհին, ովքեր հեռացնում են այդ թուլությունն ինձնից:

«Կծելը և ուտելը»

Սոցիալական ցանցերի միջոցով հնարավոր է թույլ տալ բազմաթիվ մարդկանց և ձայներ՝ մուտք գործել ձեր կյանք: Դա կարող է լավ թվալ, բայց միաժամանակ, ձեր կողքին կհայտնվեն բազմաթիվ անբարյացակամ մարդիկ: Եթե չեք կարողանում սիրել նրանց, միգուցե ավելի լավ կլինի, որ կրկին որոշ սահմաններ կանգնեցնեք ձեր կյանքում: Եթե ինչ-որ մեկը թշնամաբար է արտահայտվում, մի՛ պատասխանեք նույն կերպով. ավելի լավ է՝ սահմաններ կանգնեցրեք: Շնորհքի ներքո ապրելը թույլ չի տա-

լիս մեզ կոպտորեն վարվել մեկս մյուսի հետ: Այն նույնպես չի ենթադրում, որ դուք պետք է համեմատվեք այլ մարդկանց հետ և ամեն բան անեք՝ նրանց գերազանցելու համար:

Պողոսը գրում է. «Որովհետև ամբողջ օրենքն այս մեկ խոսքում է կատարվում. «Քո ընկերոջը քո անձի՛ պես սիրիր»: Բայց եթե իրար կծեք և ուտեք, զգուշացե՛ք, որ իրարից չփչանաք» (Գաղատ. 5.14,15): Այս խոսքում մենք հաճելի պատկեր չենք տեսնում: Երկու մարդ կտորներ են պոկում իրարից՝ անզգա գիշատիչ գազանների պես, մինչև որ երկուսն էլ սպառվում են. մենք՝ Քրիստոսի հետևորդներս, չպետք է այսպիսին լինենք: Այնուամենայնիվ, մեր էլեկտրոնային և բլոգային հաղորդակցության մի մասն այսպիսին է: Միգուցե այս կոտորածն ակնհայտորեն չի երևում ձեր հեռախոսի մեջ կամ ինչ-որ կայքում, բայց հոգևոր աշխարհում այդ վեճերն արյունոտ են: Մարդկանց հետ շփվելը երբեք այսքան հասանելի չի եղել: Այժմ դուք կարող եք «կծել և ուտել» մեկ ակնթարթում: Ցավոք, ես գիտեմ այդ մասին, քանի որ ինքս եմ արել դա:

Այն, ինչը ես «կծում և ուտում» եմ, սովորաբար բացահայտում է այն ոլորտներն ինձանում, որոնց վրա ես դեռ պետք է աշխատեմ: Եթե ինչ-որ մեկը դիպչում է իմ զգայուն տեղին, առաջին պատասխանը՝ իմ վերքը ծածկելն է: Ես սովորել եմ մի կողմ դնել հեռախոսս և հեռու գնալ դրանից՝ ասես լիցքավորված հրացանից: Հաճախ պատահում է, որ մարդիկ պարզապես վատ օր են ունեցել. մի՛ ավելացրեք նրանց լարվածությունը:

Կա անասելի տարբերություն մարդկանց ոգեշնչելու և նրանցում նախանձ առաջացնելու միջև: Նույնպես, կա անասելի տարբերություն մարդկանց ընդունելու և միտումնավոր կերպով նրանցում մերժվածության զգացում առաջացնելու միջև: Եթե դուք հետևում եք ինչ-որ մեկին սոցիալական ցանցերում, և նա միշտ վատ զգացումներ է առաջացնում ձեզանում, մեղքը նրա վրա բարդելու փոխարեն՝ միգուցե դո՛ւք պետք է մի պահ կանգ առնեք և փորձեք հասկանալ դրա պատճառը:

Մրցակցությունը կթալանի ձեզ, քանի դեռ դուք չեք սովորել դեպի բարին շրջել այն, ինչով թշնամին ուզում էր վնաս հասցնել

ձեզ, և թույլ տալ, որ Աստված բարու գործակից դարձնի դա: Հետևյալ աստվածաշնչյան հատվածը ցույց է տալիս, թե ինչպիսի միջավայրերում է արտահայտվում մրցակցությունը:

> «Ակնհայտ է, թե ինչ տեսակի կյանք է ձևավորվում, երբ փորձում եք մշտապես ամեն ինչ ձեր ուզածով անել. կրկնվող էժան սեռական հարաբերություններ՝ առանց սիրո, մտավոր և զգացմունքային աղբի գարշահոտ կուտակում, կատաղի և ուրախությունից զուրկ երջանկության ձգտում, կախազարդ աստվածներ, կախարդություններով լի ցուցադրական կրոն, ցնորամիտ միայնություն, անխնա մրցակցություն, կլանող և երբեք չբավարարվող ցանկություններ, դաժան բնավորություն, սիրելու և սիրվելու անկարողություն, պառակտված ընտանիքներ և կյանքեր, փոքրամիտ և միակողմանի ձգտումներ, *բոլորին անանձնականացնելով՝ մրցակից դարձնելու արատավոր սովորությունը*, չվերահսկվող և անվերահսկելի կախվածություններ, համայնքային կյանքի անճոռնի նմանակում: Ես կարող եմ շարունակել: Դուք գիտեք՝ սա առաջին անգամը չէ, որ զգուշացրել եմ ձեզ: *Եթե դուք օգտագործեք ձեր ազատությունն այս կերպով, դուք չեք ժառանգի Աստծո թագավորությունը*» (Գաղատ. 5.19-21, Ուղերձ):

Իրականում, միայն կարդալով այս խոսքերը՝ ես ուզում եմ լաց լինել: Այն ամենը, ինչ Պողոսը թվարկում է այս հատվածում, վերջին ժամանակներում այնքա՜ն է տարածվել: Եվ ես մատնացույց չեմ անում այս աշխարհին. Գաղատացիների նամակն ուղղված է եկեղեցուն: Ի՞նչ է նշանակում *անանձնականացնել* ինչ-որ մեկին: Նշանակում է՝ զրկել մարդուն իր անհատականությունից և բացառիկ առանձնահատկություններից: Նացիստներն անանձնականացրին հրեաներին այն աստիճան, որ գերմանացի ժողովուրդն այլևս չէր դիտարկում նրանց՝ որպես Աստծո պատկերով ստեղծված մարդկանց... նրանք տեսնում էին հավաքական խնդիր, որը չէր արտացոլում իրենց արիական պատկերացումը: Ցավոք, այս մարտավարությունը դեռ կիրառվում է այսօր՝ թե՛ տարբեր խմբերի, թե՛ անհատների վերաբերյալ:

Մարդիկ չափազանց արագ են դատում և պիտակում: Մարդիկ սրտեր ունեն, և անկախ այն բանից՝ դուք գիտակցում եք դա, թե՝

ոչ, էլեկտրոնային խոսքերը խոցում են սովորականի պես: Եզոպոսը նկատել էր. «Հեշտ է համարձակ լինել մեծ հեռավորությունից»: Մեր սոցիալական ցանցերից շատերը «ապահով հեռավորության» ձևաչափ են ստեղծում: Սա համարձակություն է տալիս երկչոտ կամ քննադատող մարդկանց՝ ճնշելու կամ չարախոսելու նրանց, ում իրենք անանձնականացրել են: Նրանք երբեք չէին համարձակվի երես առ երես նման բաներ ասել ինչ-որ մեկին: Ինչո՞ւ: Քանի որ դժվար է ձևացնել, թե ձեր դիմացինը ռոբոտ է, երբ արցունքներ տեսնեք նրա աչքերին: Ես ականատես եմ եղել, թե ինչպես են քրիստոնյաները մեկը մյուսին անվանել՝ ինչպես ասես՝ հերձվածողներից մինչև պոռնիկներ... և այդ ընթացքում սատանան պարզապես ծիծաղում էր: Որքան ավելի ենք մենք անում նրա գործը, այնքան քիչ բան է մնում նրան:

Ինչպես հանդիմանել և շտկել

Նույնիսկ այս դեպքում, ձեզնից ոմանք կարող են չհամաձայնել ինձ հետ՝ ասելով. «Բայց չէ՞ որ պետք է հրապարակավ հանդիմանել նրանց, ովքեր սխալ են»: Բարի լուրն այն է, որ Աստված հատուկ հավելված ունի դրա համար:

> «Ավելի լավ է բաց հանդիմանությունը, քան թաքուն սերը: Հավատարիմ են ընկերոջ տված վերքերը. առատ են թշնամու համբույրները» (Առակաց 27.5,6, ESV):

Ինչ նկատի ունի Աստվածաշունչը՝ խրախուսելով *բաց* հանդիմանությունը: Մենք կհասկանանք սա՝ ուշադրություն դարձնելով *«բաց»* բառին: Մարդկանց հանդիմանելու համար պետք է ունենալ բաց սիրտ, բաց ձեռքեր և բաց երես: Բոլորս պետք է շտկենք մարդկանց այնպես, ինչպես ինքներս կուզեինք շտկվել: Լավագույն տարբերակն այն կլինի, որ ինձ հանդիմանեն մարդիկ, ովքեր ցանկանում են լավագույնը ինձ համար:

Աստվածաշունչը հատկապես խոսում է ընկերների միջև հանդիմանության մասին, բայց հանդիմանել կարող է նաև ղեկավարը, ուսուցիչը կամ աշխատողը: Պատճառն այն է, որ կա ավե-

լի մեծ հավանականություն, որ հանդիմանությունը կընդունվի, եթե այն գա ձեզ ճանաչող և ձեր հանդեպ հոգատար մարդուց: Լավագույն տարբերակն այն կլինի, որ այս խոսակցությունը տեղի ունենա երես առ երես: Եթե հնարավոր չէ հանդիպել տվյալ մարդուն, հեռախոսազանգը՝ երկրորդ լավագույն տարբերակն է:

(Եվս մեկ բան. ես խորհուրդ չէի տա հանդիմանել մարդկանց տեքստային հաղորդագրության միջոցով: Այդպես շատ բան կարող է կորսվել: Տեքստային հաղորդագրությունը զուրկ է ժեստերից և խոսքի երանգավորումից: Ջոնի և իմ միջև բազմաթիվ ծիծաղելի թյուրըմբռնումներ են եղել, երբ մենք հաղորդագրություններ ենք ուղարկել մեկս մյուսին: Մեզնից մեկը (սովորաբար՝ ես) գրում է որոշ բառեր գլխատառերով՝ ՇԵՇՏԱԴՐԵԼՈՒ համար, ինչը սխալմամբ ընկալվում է որպես ԲՂԱՎՈՑ):

Բոլորիս կյանքում եղել է փակ հանդիմանություն, երբ մարդիկ հանդիմանել են մեզ թիկունքից: Երբ մարդիկ որոշում են հանդիմանել ձեզ՝ առանց ձեր ներկայության, նրանց անկեղծությունը վիճարկելի է: Թեև նրանք կարող են ճիշտ խոսել, բայց եթե դուք ընդգրկված չեք, դա չի նպաստի ձեր աճին:

Իրականում, նման հանդիմանությունը սովորաբար վնասում է ձեր աճին, քանի որ, երբ մարդիկ խոսում են ձեր մասին ձեր թիկունքից, նրանք դրդում են ձեզ պաշտպանական դիրք զբաղեցնել: Անկեղծ ընկերոջ «բաց հանդիմանությունը», որն արվում է երես առ երես, հաղորդակցման հնարավորություն է ստեղծում և թույլ է տալիս երկուսին էլ աճ ունենալ հանդիմանության ընթացքում:

Ինչ-որ մեկին սոցիալական ցանցերում հանդիմանելը բաց հանդիմանություն *չէ* միայն այն պատճառով, որ դա բացահայտ է հանրության համար: Ես հրաշալի, ուժեղ ընկերներ ունեմ, որոնց սիրում և հարգում եմ: Ես բավականին մոտ եմ նրանց՝ իմանալու համար, թե ինչպես են նրանք ապրում: Ես տեսել եմ, որ այդ աստվածապաշտ մարդկանց մասին բացահայտ կերպով չարախոսել են մարդիկ, ովքեր նույնիսկ չեն ցանկացել գալ նրանց մոտ և հայտնել իրենց մտահոգությունները: Փոխարենը՝ նրանք հրապարակավ աղավաղել են ճշմարտությունն իրենց

ուզած կերպով, որպեսզի ցավ պատճառեն իմ ընկերներին: Աստվածաշունչը շատ պարզ խոսում է այս մասին.

> «Հերձվածող (կամ՝ բաժանություններ առաջացնող) մարդուց, երբ որ առաջին և երկրորդ անգամ խրատել ես, *եփ կաց:* Գիտենալով, որ այնպիսին ծռված է և մեղք է գործում՝ իր անձը դատապարտելով» (Տիտոս 3.10,11):

Մի՛ կարդացեք նրանց բլոգները, մի՛ միացեք նրանց վեճերին, մի՛ հետևեք նրանց «Թվիթերում», մի՛ ընկերացեք նրանց հետ «Ֆեյսբուքում»... ոչ մի կերպով մի՛ առնչվեք նրանց հետ: Դա օգուտ չի բերի ձեզ. փնտրե՛ք ոգեշնչում, ոչ թե՝ պառակտում:

Աստվածաշնչի «Ուղերձ» թարգմանության մեջ Տիտոսի 3.10, 11-ն այսպիսին է.

> «Զգուշացրո՛ւ վիճաբանող մարդուն մեկ կամ երկու անգամ, բայց հետո այլևս գործ մի ունեցիր նրա հետ: Ակնհայտ է, որ նման մարդը շեղում ունի և ապստամբում է Աստծո դեմ: Համառելով իր պառակտիչ բնավորությամբ՝ նա կտրում-հեռացնում է ինքն իրեն» (Ուղերձ):

Ժամանակի ընթացքում իմ կյանքում մնացել են ավելի քիչ, բայց ավելի հավատարիմ ընկերներ: Իմ ընկերները ցույց են տալիս ինձ, թե ինչպիսին եմ ես ուզում լինել, իսկ թշնամիներս՝ թե ինչպիսին ես չեմ ուզում լինել: Այն միջավայրը, որը սնուցում է մրցակցությունը, կարող է ի հայտ բերել վատագույնը մեզանում: Երբ մենք տեսնում ենք, որ այլևս չենք կարողանում հաստատ մնալ, Աստված կարող է միջամտել և օգտագործել մեր պայքարը, որպեսզի ամուր բնավորություն ձևավորի մեր մեջ:

Հաջորդ խոսքը՝ Առակաց 27-րդ գլխից, ավելի գերազանց ճանապարհ է առաջարկում.

> «Կուշտ անձը կոխ է տալիս մեղրախորիսխը, բայց սոված անձի համար ամեն լեղի բան քաղցր է» (խոսք 7):

Ես քաղց ունեմ. ես ցանկանում եմ ավելի շատ աստվածապաշտության պտուղ տեսնել իմ կյանքում: Ես ցանկանում եմ ավելի շատ աճ ունենալ: Որքան ավելի եմ մոտենում Աստծուն,

այնքան ավելի լավ եմ տեսնում, թե ինչն է խոչընդոտում իմ մեջ աստվածային կյանքին: Իմ կյանքի ամենաքաղցր պահերից մի քանիսը եղել են այն դեպքերը, երբ ընկերներս, ովքեր հոգ են տանում իմ մասին, ցավեցրել են ինձ ճշմարտությամբ: Թշնամիները կա՛մ կծաղրեն մեզ, կա՛մ կխոցեն ստերով: Եկեք չբավարարվենք մարդկային ցուցակներով և համեմատություններով: Երբ մրցակցությունը ցավ է պատճառում մեզ՝ անհամապատասխան անվանելով, կամ երբ հպարտությունն ինքնահավան է դարձնում և մեկուսացնում է մեզ, եկեք ծնկի գանք: Եթե դիմենք մեր Հորը, Նա մեծ ուրախությամբ կհեռացնի այն ամենը, ինչը թույլ չի տալիս մեզ ավելի մոտենալ Իրեն:

Հարցեր քննարկման համար

1. Երբևէ պիտակե՞լ են ձեզ (օրինակ՝ սեռի, ռասայի կամ տարիքի պատճառով): Ինչպե՞ս են այդ պիտակները սահմանափակել ձեզ: Ինչպե՞ս կարող եք հաղթահարել այդ դասակարգման սահմանափակումները:
2. Կյանքի ո՞ր բնագավառներում է համեմատությունը գողանում ձեր ուրախությունը:
3. Երբ մենք դասակարգում, համեմատում և հանձնարարում ենք ինքներս մեզ, ի՞նչ ավելի խորը խնդիր ունենք (հուշում՝ Առակաց 29.25):
4. Սոցիալական ցանցերը ոգեշնչո՞ւմ են ձեզ, թե՞ հրահրում են սխալ բաների: Ի՞նչ կարող եք ձեռնարկել, որպեսզի դրանց ազդեցությունը մշտապես կառուցողական լինի:
5. Բացատրեք թե՛ փակ, թե՛ բաց հանդիմանությունների մոտեցման և դրդապատճառների տարբերությունը:

5

Երբ ձեզ մրցակից են համարում

> Հակառակությունը՝ որոշ չափով, մեծ օգուտ է տալիս մարդուն: Օդապարուկները բարձրանում են քամուն հակառակ, ոչ թե՝ համընթաց:
>
> Լյուիս Մամֆորդ

Վերջերս հեռախոսով խոսում էի իմ ընկերուհիներից մեկի հետ: Նրա ամուսինը օժտված երաժիշտ և երաժշտական պրոդյուսեր է, իսկ նա ազդեցիկ ծառայող է և պարզապես հրաշալի անձնավորություն: Ես միշտ ճանաչել եմ նրանց որպես անարատ, խոնարհ և գթասիրտ մարդիկ, բայց վերջերս նրանք շատ դժվարություններ կրեցին: Նրանց զրպարտեցին, մերժեցին և թերագնահատեցին:

Իմ ընկերուհին ասում էր. «Նրանք չարախոսել են մեզ...», և թվարկում էր մի քանի անուններ: Ես լսում էի: Ես հասկանում էի: Բայց շուտով արդեն չէի լսում, թե ինչ էր նա ասում, քանի որ այլևս չէի տեսնում, թե ինչ վիճակում էին նրանք, և նույնիսկ՝ թե ինչով էին նրանք անցնում այդ պահին: Ես տեսնում էի, թե որտեղ էին նրանք լինելու ապագայում: Ես այնքա՛ն ոգեշնչվեցի՝ տեսնելով դա, որ ակամայից ասացի. «Լա՛վ է: Դու պետք է գոհանաս Աստծուց նրանց համար: Նրանց վատ վերաբերմունքի շնորհիվ՝ այսօր դուք փոխված մարդիկ եք:

Ճիշտ հասկացեք. ես չէի ուրախանում այն ամենի պատճառով, ինչ նրանք կրել էին: Այնուամենայնիվ, տեսնելով այդ զույգի արձագանքը՝ ես գիտեի, որ նրանց խոստումնալից ապագա էր սպասվում:

Իհարկե, ինձ համար հեշտ էր ասել դա՝ գտնվելով այդ ընթացքի մյուս կողմում: Բայց ես անկեղծորեն ուրախացա նրանց համար՝ ասելով. «Ես սովորել եմ ի սրտե շնորհակալ լինել, երբ մարդիկ թշնամացել են ինձ հետ և հակառակվել են ինձ»:

Պարզվեց, որ ես ինքս ունեի այդ զրույցի կարիքը: Այն խրախուսեց ինձ ամբողջ օրվա ընթացքում, որը շատ ծանր էր: Հուսով եմ՝ ձեզնից ոչ ոքի երբևէ խստորեն չեն դատի և հերետիկոս չեն անվանի: Եթե ձեզ այդպես անվանել են, դուք գիտեք, որ դա ցավոտ է:

Բայց հանձնվելու և հիասթափության ճահճի մեջ թավալվելու փոխարեն, ես սովորել եմ ետ նայել և տեսնել Աստծո հավատարմությունը, որը նորից ու նորից գործել է իմ կյանքում: Նա առաջ էր տանում ինձ ամեն անգամ, երբ մտածում էի, որ չէի դիմանա մինչև օրվա վերջ: Աստծո հավատարմության մասին ես ավելի շատ սովորել եմ իմ թշնամիներից, քան իմ ընկերներից:

Ընկերներն ապաստան կառաջարկեն ձեզ: Թեև ապաստանը լավ է, բայց, որպես կանոն, այն չի նպաստում ձեր աճին: Ընկերներն ուզում են պաշտպանել ձեզ կյանքի փոթորիկներից, իսկ թշնամին կանի ամեն ինչ, որ թողնի ձեզ դրսում՝ հորդառատ անձրևի ժամանակ: Բայց միգուցե դուք կյանքի այնպիսի փուլում եք, երբ Աստված ուզում է, որ սովորեք, որ Ինքն է ձեր վերջնական ապաստանը: Ուրեմն, ո՞վ է ավելի լավ սովորեցնում ձեզ, թշնամի՞ն, թե՞ ընկերը:

Թշնամիները՝ այս կյանքի իրականությունն են: Ես գիտեմ դա: Ներողություն, ինձ դա նույնպես դուր չի գալիս, բայց դա ճշմարիտ է: Այնուամենայնիվ, նրանց ներկայությունը ձեր կյանքում հատուկ նպատակ ունի: Առանց մրցակցության կյանք կառուցելը չի նշանակում՝ հեռացնել բոլոր մրցակիցներին ձեր կյանքից, այլ՝ հասկանալ, որ ամեն բան ճշմարտապես բարու գործակից է դառնում մեզ համար, երբ մենք կանչված ենք ըստ Աստծո

նպատակի: Մենք կարող ենք օգտագործել մրցակցությունը, որպեսզի ավելի մեծ աճ և իմաստություն ունենանք:

Եթե մենք ճիշտ կերպով դիտարկենք մեր թշնամիներին, նրանք կվերածվեն խթանի, որը կբացահայտի մեր թույլ կողմերը և կդրդի զարգացնել մեր ուժեղ կողմերը: Թշնամիները ստիպում են մեզ դուրս գալ մեր սահմաններից և դրդում են վեր նայել, երբ միայնակ ենք զգում մեզ:

Միգուցե դուք մտածեք. «Սպասի՛ր: Քիչ առաջ դու ասում էիր, որ ես անզուգական դուստր եմ, ով չունի մրցակիցներ, որ ես անզուգական խոստման ժառանգորդ եմ և ստեղծված եմ անզուգական Աստծուն երկրպագելու համար»:

Այդ ամենը ճշմարիտ է: Աստծո համար դուք անզուգական դուստր եք: Դուք պետք է այդպիսին տեսնեք ձեզ, երբ շփվում եք ձեր Արարչի հետ, և դուք պետք է հաղորդակցվեք մարդկանց հետ՝ ելնելով այդ տեսանկյունից: Բայց մենք ավելի քան միամիտ կլինեինք, եթե ձևացնեինք, թե մրցակցություն գոյություն չունի, և մենք ստացել ենք այս խոստումը՝ առանց դրա համար պատերազմելու: «Դուք աշխարհի լույսն եք» հռչակումը (Մատթ. 5.14) չի ժխտում խավարի գոյությունը: Մրցակիցներ չունեցող անզուգական դուստր լինելը չի նշանակում, որ դուք չեք բախվի մրցակցության՝ նույն կերպով, ինչպես լույս լինելը չի նշանակում, որ դուք երբեք չեք բախվի խավարին:

Մրցակից բառը կարող է արտահայտվել երեք իմաստով՝ որպես գոյական, ածական և բայ:

Քերականորեն այս բառը կարող է *նշանակել* որևէ անձ, վայր կամ առարկա, լինել որևէ անձի, վայրի կամ առարկայի *հատկանիշ*, և հանդես գալ որպես որևէ անձի, վայրի և առարկայի *գործողություն:* Որպես գոյական, «մրցակից» բառը լայն իմաստային շրջանակ ունի՝ սկսած դրական իմաստներից, ինչպիսիք են «ընկերակից», «հավասար» կամ «մրցող» բառերը, մինչև ավելի բացասական իմաստները, ինչպիսիք են «հակառակորդ», «թշնամի» կամ «ախոյան» բառերը: Որպես ածական, «մրցակից» բառի իմաստներն են՝ ընկերոջ հետ մրցելուց մինչև թշնամու դեմ պայ-

քարելը: Եվ վերջինը, որպես բայ, «մրցակցելը» կարող է նշանակել թե՛ «համապատասխանել», «նմանակել» և «համեմատել», թե՛ «առաջ անցնել», «հակառակվել» և «գերազանցել»:

Մրցակիցներն իրական են: Շատ հնարավոր է, որ հենց հիմա ինչ-որ մեկն իր մրցակիցն է համարում ձեզ, իսկ դուք նույնիսկ տեղյակ չեք այդ մասին: Մարդիկ մրցակիցներ չեն համարում իրենց, եթե սպորտային կամ ակադեմիական մրցույթների մասնակիցներ, գիտական մրցանակների հավակնորդներ կամ քաղաքական թեկնածուներ չեն: Դուք աշխատանքի չեք գնում՝ ակնկալելով, որ կբախվեք մրցակիցների, և դուք ոչ մի դեպքում չեք սպասում, որ կգտնեք նրանց եկեղեցում: Այնուամենայնիվ, մրցակիցներ կան կյանքի ամեն բնագավառում, և դուք գրեթե չեք վերահսկում այն, թե ինչպես են մարդիկ որոշում դիտարկել ձեզ: Ցավում եմ, բայց նույնիսկ եթե դուք օգտվեիք հասարակայնության հետ կապերով զբաղվող լավագույն ընկերության ծառայություններից, դուք ընդամենը կփորձեիք ազդել մարդկանց պատկերացման վրա: Որքան շուտ հասկանաք սա, այնքան լավ: Բարի լուրն այն է, որ դուք կարող եք լիարժեք կերպով վերահսկել այն, թե ինչպես եք *ինքներդ դիտարկում մարդկանց:* Իրականում, երբեմն, երբ դուք փոխում եք ձեր վերաբերմունքը մարդկանց հանդեպ, նրանց վերաբերմունքը ձեր հանդեպ արմատապես փոխվում է: Ես ավելի շատ կխոսեմ այս մասին հաջորդ գլուխներից մեկում:

Անկախ մրցակցի դրդապատճառներից՝ դուք մշտապես կարող եք շրջել մրցակցությունը հօգուտ ձեզ: Դուք միայն պետք է հիշեք այս երկու կարևոր սկզբունքները վերահսկողության մասին:

1. Դուք չեք կարող վերահսկել այլ մարդկանց խոսքերը, մտքերը և զգացմունքները, և պատասխանատու չեք դրանց համար:
2. Դուք կարող եք վերահսկել ձեր խոսքերը, մտքերը և զգացմունքները, և պատասխանատու եք դրանց համար:

Բոլորս գիտենք, թե ինչպես մրցակիցները կարող են *վնասել մեզ*, բայց այս բաժնում ուզում եմ ցույց տալ, թե ինչպես նրանք կարող են *օգուտ բերել մեզ:*

Մրցակիցներն ի հայտ են բերում Աստծո զորությունը

Ծնվելու պահից թաքցված, արքայադստեր ձեռքով փրկված և փարավոնի տանը մեծացած Մովսեսի կյանքը լի էր ինտրիգներով հենց ամենասկզբից: Աստված օգտագործեց այս ամենը՝ Մովսեսին պահպանելու համար: Բայց ինչպես և մենք, Մովսեսը սովորեց, որ *կյանքի կոչումն ի հայտ է գալիս առճակատման փուլերում, ոչ թե՝ մխիթարության:*

Մովսեսը սովորեց սա դժվարությամբ, երբ փորձեց անձամբ վերահսկել իրավիճակը: Արդյունքում նա արտաքսվեց իր երկրից և այն ամենից, ինչը ծանոթ էր իրեն: Կարծում եմ՝ նա զգում էր, որ իր քոչվոր կյանքն անապատում նման էր երկարատև ընդմիջման: Եվ հանկարծ Աստված Իր ձեռքը դրեց Մովսեսի ուսին: Դա տեղի ունեցավ անապատում, որտեղ նա փախստականի պես էր ապրում: Մենք կարող ենք դաս քաղել այս պատմությունից: Այն, որ ձեզ մոտ ինչ-որ բան չի ստացվել անցյալում, դեռ չի նշանակում, որ դուք այլևս չեք առնչվելու դրա հետ ապագայում: Մովսեսը գիտեր, թե ինչու էր իր կյանքը պահպանվել, և զգում էր, թե ինչ կոչում ուներ Աստծուց, բայց նա չուներ փրկչի բնավորություն: Աստված պետք է խորություն ձևավորեր Մովսեսի սրտում, ինչը նրան չէր կարող տալ պալատական կյանքը: Աստված պատրաստում է մեզ ծածուկում այն բանի համար, ինչին մենք բացահայտ կերպով բախվելու ենք ապագայում: Եկավ այն օրը, երբ փոխված Մովսեսը ետ վերադարձվեց իր եղբայր Ահարոնին, իր քույր Մարիամին և Իսրայելի ժողովրդին: Երբ եկավ ժամանակի լրումը, Աստված օծեց նրան որպես փրկիչ և դեսպան, ով պետք է հանդիպեր փարավոնին:

ԿՅԱՆՔԻ ԿՈՉՈՒՄՆ Ի ՀԱՅՏ Է ԳԱԼԻՍ ԱՌՃԱԿԱՏՄԱՆ ՓՈՒԼԵՐՈՒՄ, ՈՉ ԹԵ՝ ՄԽԻԹԱՐՈՒԹՅԱՆ:

Աստված պատրաստվում էր համաշխարհային համբավ տալ Մովսեսին՝ ստիպելով գնալ իր թշնամու՝ փարավոնի մոտ: Եվ ուղարկելով Մովսեսին փարավոնի մոտ՝ Աստված հայտնեց նրան, որ փարավոնը չէր լսելու նրան.

> «Դու խոսի՛ր այն ամենը, ինչ որ քեզ կհրամայեմ, և քո եղբայր Ահարոնը թող խոսի փարավոնի հետ, որ Իսրայելի որդիներին արձակի իր երկրից: Եվ Ես փարավոնի սիրտը կխստացնեմ և Իմ նշանները և հրաշքները Եգիպտոսի երկրում կշատացնեմ: Եվ փարավոնը ձեզ չի լսի, և Ես Իմ ձեռքը Եգիպտոսի վրա կգցեմ, և Իմ զորքերը՝ Իմ ժողովուրդ Իսրայելի որդիներին, կհանեմ Եգիպտոսի երկրից մեծ դատաստաններով: Եվ Եգիպտացիները կիմանան, որ Ես եմ Եհովաս, երբ որ Իմ ձեռքը Եգիպտոսի վրա երկարացնեմ և Իսրայելի որդիներին նրանց միջից հանեմ» (Ելից 7.2-5):

Աստված նպատակ ուներ այդ առաքելության մեջ, որը, թվում էր, դատապարտված էր ձախողման: Փարավոնը ստացել էր իր ակնառու դիրքը այն նպատակով, որ մեծարեր Աստծուն ամբողջ աշխարհի մարդկանց առջև.

> «Որովհետև հիմա Իմ ձեռքը կմեկնեմ և կզարկեմ քեզ և քո ժողովրդին ժանտախտով, և կկորչես երկրից: Եվ հենց սրա համար քեզ (փարավոնին) վեր կացրի, որ Իմ զորությունը քեզնով ցույց տամ, և ամբողջ երկրի մեջ Իմ անունը պատմվի» (Ելից 9.15,16):

Մրցակիցներն ի հայտ են բերում Աստծո զորությունը: Եգիպտոսի հետ հակամարտության նպատակն էր՝ բարձրացնել և առանձնացնել մի ճնշված ժողովրդի, որը, ապրելով կռապաշտ ազգի մեջ, երկրպագում էր ձև և անուն չունեցող Աստծո: Ի՞նչ հակամարտություն Աստված կարող է օգտագործել այսօր, որպեսզի ցույց տա, որ Իր ձեռքը ձեզ վրա է, և ազատի հարստահարումից թե՛ ձեզ, թե՛ այլ մարդկանց: Ուշադի՛ր եղեք, թե ինչն է պայքարում ձեր կոչման դեմ. հնարավոր է, որ ձեր թշնամին կամ մրցակիցը՝ ձեր պարգևն է:

Ո՞վ հայտնի դարձրեց Դավիթ թագավորին. մարգարեն, հա՛յրը, թե՞ ընկերը: Նրան հայտնի դարձրեց թշնամին՝ Գողիաթը:

Եթե չլիներ առճակատումը փղշտացի հակառակորդի հետ, Դավիթը կշարունակեր մնալ անհայտության անապատում: Չէ՞ որ նա ամենակրտսերն էր իր ութ եղբայրներից: Թեև Դավիթը թագավոր էր օծվել Սամուել մարգարեի կողմից, կային մի քանի հակառակորդներ, որոնք դեռ պետք է կանգնեին նրա ճանապարհին՝ մինչև թագավոր դառնալը: Օծությունն առանձնացնում է ձեզ, բայց դուք բարձրանում եք, երբ պայքարում եք գողիաթների դեմ:

Երբ Գողիաթը հայտնվեց մարտադաշտում, այնպիսի տպավորություն էր, որ նա մարտակոչ էր նետում Սավուղին: Սավուղն Իսրայելի պաշտպանն էր և հմուտ զինվոր, թեև նա Գողիաթի նման բարձրահասակ չէր: Աստվածաշնչում գրված է, որ Սավուղը բարձր էր բոլոր իսրայելցիներից՝ ուսից վեր: Աստվածաբանները համարում են, որ Սավուղի հասակը 1.8-2 մետր էր: Գողիաթի հասակը 2.7 մետրից ավելի էր:

Ինչևէ, Գողիաթը շատ ավելի բարձրահասակ էր Սավուղ թագավորից, իսկ Սավուղ թագավորը՝ գառնարած Դավթից: Այնուամենայնիվ, Դավիթն ուներ այնպիսի բան, ինչը համակշռում էր նրա ցածր հասակը: Դավիթը հաստատակամ էր: Հաստատակամ մարդիկ քաջ, խիզախ, նպատակաուղղված և վճռական են: Վերջերս անցկացրած մի հետազոտություն ԱՄՆ-ի «Վեսթ Փոյնթ» Ռազմական ակադեմիայում ցույց է տվել, որ կադետների հաստատակամության չափն ավելի ճշգրտորեն էր որոշում, թե ովքեր նրանցից կավարտեին ակադեմիան, քան նրանց ընդունելության քննությունների գնահատականները և առաջադիմությունն ուսման մեջ[1]: Այդ հետազոտության շրջանակներում կադետները գնահատում էին իրենց հաստատակամությունը 1-5 միավորով:

Ես լիովին համոզված եմ, որ Դավթի հաստատակամության չափը 5+ էր: Առանց մեծ հաստատակամության՝ հազիվ թե ինչոր մեկը հարձակվեր արջի և առյուծի վրա: Նա այնքան հաստատակամ էր, որ կասկած չուներ հսկայի հետ պայքարի արդյունքի մեջ: Սավուղն ավելի բարձրահասակ էր, բայց համոզված եմ՝ նրա հաստատակամությունը շատ ավելի ցածր էր, քան Դավթինը: Մարդը չի կարող առասպել դառնալ՝ առանց հաստատակա-

մության: Հավասար ուժերով մարտը հաղթելու մեջ առասպելական ոչինչ չկա: Անհավասարությունը պետք է այնքան մեծ լիներ, որ բոլոր տեսնողները հանկարծակիի գային: Բոլորը պետք է հեռանային այդտեղից՝ ասելով. «Չէի սպասում, որ այդպես կլիներ, բայց դա զարմանալի էր»: Դավթի հակառակորդը պետք է այնքան վիթխարի լիներ, որ Դավիթն անմիջապես հանրահայտ դառնար: Հոչակավոր, բայց անվճռական Սավուղի համբավը և փղշտացիների հսկայի տարածած սարսափը անզուգական զինվոր դարձրին Դավթին:

«Դավիթը և Գողիաթը» գրքում հեղինակ Մալկոլմ Գլեդվելը խորաթափանց կերպով մատնանշում է.

> «Այն ամենը, ինչ մենք արժևորում ենք այս աշխարհում, մեծ մասամբ ծագում է նման տեսակի անհավասար պայքարներից, քանի որ սեփական ուժերը մեծապես գերակշռող հակառակորդին բախվելը՝ վեհություն և գեղեցկություն է ստեղծում... Անհավասար մրցակից լինելը կարող է այնպիսի փոփոխություն առաջացնել մարդկանց մեջ, որը մենք հաճախ չենք գնահատում. այն կարող է դռներ բացել, հնարավորություններ ստեղծել, կրթել, լուսավորել և իրագործելի դարձնել այն, ինչը, հակառակ դեպքում, անհավատալի կթվար»[2]:

Եթե դուք պետք է բախվեք հակառակորդի, որին անհնար է հաղթել, դուք երկու ընտրություն ունեք. հանձնվել և տեղի տալ, կամ՝ կանգնել ձեր հասակով մեկ և արթնացնել հաստատակամությունը ձեր ներսում, որն ավելի մեծ է, քան ձեր հակառակորդը:

Դավիթը թոթափեց իր վրայից Սավուղ թագավորի սահմանափակումները և կանչեց իր Աստծո անունը.

> «Եվ Դավիթն ասաց փղշտացուն. «Դու սրով, նիզակով և գեղարդով ես գալիս ինձ վրա, բայց ես գալիս եմ քեզ վրա Զորաց Տիրոջ՝ Իսրայելի զորքերի Աստծո անունով, Ում դու նախատեցիր: Այսօր Տերը քեզ իմ ձեռքը կմատնի, և ես քեզ կմեռցնեմ և քո վրայից գլուխդ կառնեմ և փղշտացիների բանակի դիակներն այսօր երկնքի թռչուններին և երկրի գազաններին կտամ, որպեսզի ամբողջ երկիրն իմանա, որ Իսրայելն Աստված ունի» (Ա Թագ. 17.45,46):

Բացի այն, որ Գողիաթի շնորհիվ Դավիթը սկսեց քայլել դեպի իր կոչումը, նրա հաղթանակը ցույց տվեց *ամբողջ աշխարհին*, որ Աստծո ձեռքն Իսրայելի վրա էր: Ես գիտեմ, որ ինչպես և Դավիթը, դուք Աստծուն հայտնի դարձնելու քաղց ու ձգտում ունեք: Այս աշխարհում դեռ կան գողիաթներ: Նրանք մարտահրավեր են նետում մեզ և ծաղրում են Աստծո գոյության գաղափարը: Այս հսկաները ծպտվում են որպես կռվարար մարդիկ դպրոցում և աշխատավայրում, կամ ի հայտ են գալիս հասարակական կարծիքի դիմակով: Ժամանակն է, որ դադարենք թաքնվել ժայռերի ետևում և առաջ վազենք՝ Աստծո Խոսքը մեր շուրթերին:

Դուք լցված եք նույն Հոգով, որը հարություն տվեց Քրիստոսին գերեզմանից: Հակառակորդներն ուզում են, որ դուք կռվեք ըստ իրենց պայմանների և միայն ձեր ուժերով: Դուք չպետք է այդպես վարվեք: Դուք պետք է վեր լինեք այդ ամենից: Որպես Աստծո զավակներ՝ մենք ճիշտ ենք վարվում, երբ պարտության ենք մատնում չարին: Ի վերջո, սա ոչ թե մեր փառքի համար է, այլ՝ Նրա:

Գողիաթը հայտնի դարձրեց Դավթին: Սոցիալական ցանցերը կարող են հայտնի դարձնել ինչ-որ մեկին: Բայց համբավը չէ, որ թագավոր է դարձնում մարդուն: Սխալ գործածվելու դեպքում համբավը դառնում է եսակենտրոն բռնակալներին գոհացնելու միջոց, ոչ թե գործիք՝ ծառաներ պատրաստելու համար: Աստծուն պետք չէր ևս մեկ անապահովության զգացում ունեցող առաջնորդ, ինչպիսին Սավուղն էր: Նրան պետք էր այնպիսի մարդ, ով կերկրպագեր Իրեն և բացահայտ կերպով կցուցադրեր Իր զորությունը: Մենք մեր Աստծո թագավորները և քահանաներն ենք: Մենք նվիրված ենք մեր Աստծուն, ոչ թե մարդկային համբավին: Դավիթն ուներ Աստծո երկյուղը, իսկ Սավուղը վախենում էր մարդկանցից:

Հանրահայտ լինելու հակառակ կողմն այն է, որ դուք երկրպագուներ ունեք, ոչ թե՝ աշակերտներ կամ հետևորդներ: Երկրպագուներն անհաստատ են: Այսօր նրանք կսիրեն ձեզ, իսկ վաղը կատեն: Դավիթ թագավորին պետք չէին երկրպագուներ: Նրան պետք էին այնպիսի մարդիկ, ովքեր պատրաստ էին ընծայել

իրենց կյանքերը: Աստվածապաշտ թագավորներին պետք են իմաստուն խորհրդականներ, անձնվեր բանակ և հավատարիմ ծառաներ: Նման մարդկանց գրավելու համար Դավիթը պետք է զտվեր: Եվ Աստված նախատեսել էր մեկ այլ մրցակցի, որպեսզի պատրաստեր Դավթին թագավորության համար:

Մրցակիցներն ի հայտ են բերում ձեր կոչումը

Մրցակիցները կարող են դուրս բերել ձեզ միջակությունից կամ ցած գլորել այն ակնառու դիրքից, որը զբաղեցնում եք: Բարի լուրն այն է, որ դուք եք որոշում, թե ինչ են նրանք անելու ձեր կյանքում: Ձեր մրցակիցը կգերազանցի՞ ձեզ, թե՞ ի հայտ կբերի լավագույնը ձեզանում: Սա է պատճառը, որ ձեր մրցակիցը կարող է նաև ի հայտ բերել ձեր կոչումը:

Ձեր մրցակիցը կգերազանցի՞ ձեզ, թե՞ ի հայտ կբերի լավագույնը ձեզանում:

Դավիթը ճանաչում էր Աստծուն, երբ որդի և գառնարած էր: Նա երկրպագում էր Աստծուն Մերձավոր Արևելքի փայլող աստղերի լույսի ներքո՝ շրջապատված իր ոչխարներով: Երբ Դավիթը ոչխարներ էր արածեցնում անապատում, նա կռվում էր առյուծի և արջի հետ, և փրկում էր իր ոչխարներին: Իսկ այժմ նա ինքն էր իմանալու, թե ինչ էր նշանակում հալածվել՝ վայրի գազանի պես:

Սավուղ թագավորը կատարելապես «պատրաստված» էր, որ հեռացներ հաստատակամ Դավթին մարդկանց ներկայությունից դեպի Աստծո ներկայությունը, որտեղ Դավիթը կստանար Իր օծությունը, և որտեղ ի հայտ կգար նրա թագավորական կոչումը:

Սավուղի և Դավթի հարաբերությունները չսկսվեցին այնպես, ինչպես որ ավարտվեցին: Սկզբում Սավուղը սիրում էր Դավթին և տեսնում էր Աստծո ձեռքը նրա կյանքում: Սավուղը մոտեցրեց Դավթին իրեն, երբ խոցելի էր զգում և չարչարվում էր՝ վստահելով նրան իր թագավորության գործերը: Առաջին Թագավորաց 18.5-ում գրված է հետևյալը.

«Ինչ էլ Սավուղը հանձնարարեր Դավթին, նա կատարում էր, և լավ էր կատարում: Այնքան լավ, որ Սավուղը զինվորական հրամանատար դարձրեց նրան: Բոլորը՝ և՛ ժողովուրդը, և՛ Սավուղի ծառաները, հավանությամբ և հիացմունքով էին վերաբերվում Դավթի առաջնորդությանը» (Ուղերձ):

Հազիվ թե Սավուղը նրանից լավ գեներալ ունենար: Եվ երբ նա անհանգիստ էր չար ոգու պատճառով, Դավիթը տավիղ էր նվագում և երգում էր՝ նրան հանդարտեցնելու համար: Ամեն ինչ լավ էր, քանի դեռ Սավուղը չէր լսել մեկ այլ երգ: Հավանաբար, դուք գիտեք այս պատմությունը:

«Երբ նրանք տուն էին վերադառնում այն բանից հետո, երբ Դավիթը սպանեց փղշտացուն, Իսրայելի բոլոր գյուղերից կանայք դուրս եկան՝ երգելով և պարելով, ողջունելով Սավուղ թագավորին ծնծղաներով, տոնական երգերով և քնարներով: Կանայք ասում էին իրենց ուրախ երգեցողություններում. *«Սավուղը սպանում է հազարներով, Դավիթը՝ տասը հազարներով»:*

Սա բարկացրեց Սավուղին, շատ բարկացրեց: Նա անձնական վիրավորանք համարեց դա: Նա ասաց. «Նրանք վերագրում են Դավթին «տասը հազարներ», իսկ ինձ՝ ընդամենը «հազարներ»: Շուտով նրան կտան թագավորությունը»: Այդ պահից ի վեր Սավուղը զգուշանում էր Դավթից» (Ա Թագ. 18.6-9, Ուղերձ):

Թեև երկուսն էլ բառացիորեն այդքան մարդ չէին սպանել, Սավուղը վիրավորվեց այդ համեմատությունից: Այնպիսի տպավորություն էր, որ այդ կանանց երգը բացեց Սավուղի աչքերը, ինչից հետո նա բացեց իր բերանը և մարգարեացավ իր կործանման մասին: Կանայք երգում էին այդ երգը՝ ամբոխին ոգևորելու համար, բայց Սավուղի համար դա բոլորովին զվարճալի չէր: Այն ցավոտ հիշողություն արթնացրեց նրանում: Տարիներ էին անցել այն օրվանից, երբ մարգարեն ասել էր Սավուղին, որ իր անհնազանդության պատճառով նա կորցնելու էր թագավորությունը: Սամուելն ազդարարել էր, որ այն պատռվելու էր իրենից և տրվելու էր իր ընկերոջը, ով իրենից լավն էր (տես Ա Թագ. 15.28): Այս երգով Սավուղի կյանքի գործվածքը սկսվեց պատռվել: Մի ակն-

թարթում նա համակվեց վատ կանխազգացումով՝ հասկանալով, որ Դավիթն էր փոխարինելու իրեն: Այնուամենայնիվ, Սավուղը մտադրված չէր խաղաղ ճանապարհով հանձնել իր գահը:

Երբ դուք անապահովության զգացում ունեք, նույնիսկ մեկ անբարենպաստ համեմատությունը կարող է մեկ ակնթարթում մրցակցի վերածել ձեր ընկերոջը: Սավուղը դադարեց համարել Դավթին փորձված օգնական, ով ապացուցել էր իր հավատարմությունը. Դավիթը սպառնալիք դարձավ նրա համար: Հանկարծ ամեն ինչ փոխվեց:

> «Եվ հետևյալ օրը Սավուղի վրա Աստծուց չար ոգի եկավ, և նա տան մեջ մարգարեություն արեց, և Դավիթն ուրիշ ժամանակների պես իր ձեռքով քնար էր ածում» (Ա Թագ. 18.10):

Այս խոսքը մի փոքր շփոթեցնում է մեր աստվածաբանությունը և հիշեցնում է ծառայում բոլորիս... Աստված կարող է գործածել՝ ինչ ցանկանա՝ Իր նպատակին հասնելու համար: Այս դեպքում դա նշանակում էր՝ ուղարկել տանջահար անող հոգի, որը կդրդեր թագավորին այն քայլին, որի մասին նա միայն մտածում էր:

Այդ օրը Դավիթը կատարում էր իր սովորական գործը՝ տավիղ էր նվագում: Այնուամենայնիվ, Սավուղի ձեռքում մեկ այլ առարկա էր, քանի որ ինչ-որ բան նրա սրտում փոխվել էր:

> «Եվ նիզակը Սավուղի ձեռքին էր: Եվ Սավուղը նիզակը շպրտեց՝ ասելով. «Դավթին զարկեմ՝ պատին բևեռեմ»: Բայց Դավիթը նրա երեսից երկու անգամ խույս տվեց» (խոսք 10,11):

Պատկերացրե՛ք այս հակադրությունը: Սավուղը վազում էր իր տնով մեկ՝ նիզակը ձեռքին, իսկ Դավիթը խաղաղ կերպով երկրպագության գործիք էր նվագում: Մի՞թե հնարավոր է ավելի մեծ հակադրություն: Ո՞վ է նիզակով վազում իր տանը: Սավուղը վերածվել էր քարանձավաբնակ մարդու:

Քանի որ ես գիրք եմ գրել թրերի մասին, մեր տան տարբեր սենյակներում մի քանի թրեր կան, բայց դրանք շատ հազվադեպ են հայտնվում իմ ձեռքում: Ես չեմ համարձակվում վերցնել դրանցից ոչ մեկը, նույնիսկ՝ իմ ամենաբուռն հորմոնային

խանգարումների օրերին, քանի որ, գտնվելով ճնշման ներքո, մարդը պատրաստ է նետել ցանկացած բան, ինչն իր ձեռքում է (ես ասում եմ դա իմ փորձառությունից): Դավիթը ստիպված էր խույս տալ նույն մարդուց, ով նախորդ օրը ձիավարում էր իր կողքին, և ում կյանքն ինքը պաշտպանում էր կռվի ժամանակ: Դավթի *լավագույնը* ի հայտ բերեց *վատագույնը* Սավուղի մեջ: Սավուղին անհանգստացնող կանխազգացումը սաստկացավ՝ վերածվելով ակնհայտ վախի:

> «*Սավուղը վախենում էր Դավթից: Պարզ էր, որ Աստված Դավթի հետ էր և թողել էր Սավուղին:* Այնպես որ, Սավուղը հեռացրեց Դավթին իրենից՝ նրան իր բանակի սպա դարձնելով: Դավիթը հաճախ էր մարտերի մեջ լինում: Այն ամենը, ինչ Դավիթն անում էր, բարեհաջող էր ստացվում: Այո՛, Աստված նրա հետ էր: Սավուղը, տեսնելով, որ Դավիթն ավելի հաջողակ էր դառնում, ավելի էր համակվում վախով» (Ա Թագ. 18.12-15, Ուղերձ):

Դավթի ռազմական հաջողությունները պետք է համարվեին Սավուղ թագավորի հաղթանակները: Այնուամենայնիվ, Սավուղը չէր համարում, որ Դավթի սխրագործություններն ամրապնդում էին իր թագավորությունը և իշխանությունը. նրա կարծիքով՝ ամեն մի հերթական ճակատամարտ ավելի էր խարխլում իր իշխանությունը: Նա արդեն չէր վերաբերվում Դավթին որդու պես. Դավթի ընկերակցությունն այլևս ուրախություն չէր պատճառում նրան: Նա ուզում էր, որ Դավիթը հեռու լիներ իրենից, սակայն չէր սահմանափակվում դրանով: Նման դեպքում պարզապես աչքից և մտքից հեռու լինելը ոչինչ չէր փոխի: Սավուղ թագավորը կռվի էր ուղարկում Դավթին՝ հուսալով, որ նա կկորցներ իր կյանքը, այնինչ դա էլ ավելի էր ամրապնդում Դավթի դիրքը: Որքան Սավուղը փորձում էր ոչնչացնել Դավթին, այնքան նա ավելի էր բարձրանում:

> «Եվ Սավուղը, երբ որ տեսավ և հասկացավ, որ Տերը Դավթի հետ է, և Սավուղի Մեղքող աղջիկը նրան սիրում է, *Սավուղն առավել ևս վախեցավ Դավթից, և Սավուղը միշտ Դավթին թշնամություն էր անում»* (Ա Թագ. 18.28,29):

Շատ կարճ ժամանակահատվածում Սավուղի վերաբերմունքը Դավթի հանդեպ փոխվեց. Նրա կասկածը վերածվեց վախի, իսկ հետո՝ ատելության: Դավիթն այլևս սիրելի որդի, ռազմական հերոս և համախոհ չէր: Նա պիտակվեց որպես օրինազանց: Բարեհաճության կարճատև շրջանը Սավուղի արքունիքում ավարտվեց: Հանկարծակիի եկած այս շրջադարձի պատճառով, որին ինքը ոչ մի կերպով չէր նպաստել՝ Դավիթը փախուստի դիմեց, որպեսզի փրկեր իր կյանքը:

Սավուղի արքունիքը թողնելուց հետո Դավթի կյանքում բոլորովին նոր փուլ սկսվեց: Ի հակադրություն այն կարգավիճակին և վարձատրություններին, որոնք նա վայելում էր՝ այս փուլը բնութագրվում էր մշտական մերժվածությամբ, դաժան վերաբերմունքով, ինչպես նաև՝ անապատային հուսահատությամբ և վտանգներով: Որոշ աստվածաբանների կարծիքով՝ այն տևեց մոտավորապես ութ տարի: Հենց աքսորում և անջրդի ժայռոտ տարածքներում Դավիթը սովորեց այն դասերը, որոնք Աստծո սրտի համեմատ թագավոր էին դարձնելու նրան:

Դավթին հալածում էր մի կատաղի գայլ, որը քարանձավից՝ քարանձավ էր քշում նրան: Նա տրտմեց, երբ իմացավ, որ Սավուղը քահանայական ընտանիքներ էր կոտորել, միայն որովհետև այդ քահանաներն անգիտակցաբար օգնել էին իրեն: Այդ տառապանքով լի տարիների ընթացքում Սավուղի թշնամանքն օգնեց Դավթին հասկանալ. թե՛ պալատում, թե՛ քարանձավում կարևորն այն էր, որ իր ներսում աստվածապաշտ բնավորություն ձևավորվեր: Դավիթը բախվել էր իր երկրորդ Գողիաթին:

Թույլ տվեք բացատրել:

Չեմ կարծում, որ շատ հեռու կգնամ, եթե ասեմ, որ միգուցե Դավիթը խնդիրներ ուներ՝ կապված իր հոր հետ: Ամեն անգամ, երբ Դավիթը հանդիպում էր Սավուղ թագավորին անապատում, նա աղաղակում էր՝ նրան «հայր» անվանելով: Առաջին Թագավորաց 24.12-ը ցույց է տալիս նրա սրտի ցավը.

> «Եվ տես, *հայր* իմ, տես, քո վերարկուի ծայրն իմ ձեռքին է, և ես, քո վերարկուի ծայրը կտրելով, քեզ չմեռցրի: Հասկացի՛ր և տես, որ իմ

ձեռքին չարություն և անօրինություն չկա, և *քեզ դեմ մի հանցանք չեմ արել, բայց դու ուզում ես իմ անձը մեռցնել»:*

Մենք չունենք ոչ մի հիմք՝ մտածելու, որ Դավթի և նրա հոր միջև չարակամություն կար, բայց որպես ութերորդ որդի՝ նա հեշտորեն կարող էր անտեսված լինել: Դավիթն ասես կորած լիներ իր յոթ ավագ եղբայրների շուքի տակ: Ինչպես և բոլոր որդիները, Դավիթը հույս ուներ հավանություն և ճանաչում ստանալ իր հորից, բայց նրա հայրը՝ Հեսսեն, նույնիսկ չէր կանչել նրան, երբ Սամուել մարգարեն եկել էր օծելու իր որդիներին:

«Եվ Հեսսեն Սամուելի առջևով իր յոթ որդիներին անցկացրեց, և Սամուելը Հեսսեին ասաց. «Տերը սրանցից չընտրեց»: Եվ Սամուելը Հեսսեին ասաց. «Տղաներդ ամենքը սրանք են»: Եվ նա ասաց. «Տակավին մնացել է կրտսերը, և ահա նա ոչխարները արածեցնում է»: Եվ Սամուելը Հեսսեին ասաց. «Մարդ ուղարկիր և նրան բերել տուր, որովհետև մենք սեղան պիտի չնստենք, մինչև որ նա այստեղ չգա»» (Ա Թագ. 16.10,11):

Ինչո՞ւ պետք է Սամուելը ստիպված հարցներ, թե արդյո՞ք Հեսսեն ևս մեկ որդի ուներ: Հեսսեն պետք է որ կանչեր Դավթին Սամուելի եկած ժամանակ: Երևի թե Հեսսեն չէր համարում, որ Դավիթը կարող էր ընտրված լինել: Եթե Սամուել մարգարեն մեր տուն գար, ես կանեի՝ ինչ կարող էի, որ իմ *ամբողջ* ընտանիքը ներկա լիներ: Ես կկապվեի նրանց հետ «Սկայպ»-ով, «Ֆեյս-Թայմ»-ով, կզանգահարեի նրանց և կասեի, որ եթե նրանցից մեկը չգար այդ օրը, նա գործ էր ունենալու ինձ հետ:

Դավիթն ուներ յոթ մրցակից, որոնք պայքարում էին իր հոր ուշադրության համար՝ իր եղբայրները: Սուրբ գրքում մենք չենք տեսնում ջերմություն և աջակցություն Դավթի և նրա եղբայրների միջև: Օրինակ, նրա ավագ եղբայրը մեղադրեց նրան հպարտության մեջ, նսեմացրեց նրա դիրքն իր հոր տանը և ամբարտավան ու չար սիրտ ունեցող անվանեց նրան (տե՛ս Ա Թագ. 17.28):

Միգուցե սա՞ է պատճառը, որ կարդալով Դավթի սաղմոսները՝ չեմ լսում նրա բառերը... ես լսում եմ նրա սիրտը: Այդ տողե-

րի մեջ ես տեսնում եմ նրա ցավը, որը ծնվել էր տարիներ տևող մեկուսացումից և հոգնածությունից: Դավիթը շարունակ ապացուցում էր իր անմեղությունը Սավուղին, բայց պայքարն իր դեմ ավելի էր խստանում:

Եկավ մի պահ, երբ Դավիթը հասկացավ, որ մարդիկ այդպես էլ չէին ընդունելու իր անմեղությունը: Սավուղը ոչ մի դեպքում ներում չէր շնորհելու իրեն: Միայն Աստված էր անելու դա: Փախչելով և թաքնվելով Սավուղից՝ Դավիթը սովորեց փախչել և թաքնվել Աստծո *մեջ:* Շատերն են ուզում օծված լինել, բայց նրանք մոռանում են, որ օծությունը գալիս է հատուկ նպատակով, որը ձևավորվում է իրենց թշնամիների ներկայության մեջ:

Ավելի ուշ, երբ Դավիթը փախչում էր Աբիսողոմից, նա աղաղակեց.

«Ո՜վ Տեր, որքա՜ն շատացան իմ թշնամիները.
Շատերը վեր են կենում ինձ վրա:
Շատերն ասում են իմ անձի համար, թե.
«Սրա համար փրկություն չկա Աստծո մոտ»: Սելա:
Բայց Դու, Տե՛ր, իմ ասպարն ես,
իմ փառքը և իմ գլուխը բարձրացնողը:
Իմ ձայնով աղաղակում եմ դեպի Տերը,
և Նա պատասխանում է ինձ Իր սուրբ սարից: Սելա:
Ես պառկեցի և քնեցի
և զարթնեցի, որովհետև Տերը պահպանում է ինձ:
Ես չեմ վախենա բյուրավոր ժողովրդից,
որ չորս կողմովս պատել են»
(Սաղմ. 3.1-6):

Որքա՜ն շատացան նրա թշնամիները: Լավ հարց է: Ինչո՞ւ Աստված պարզապես չհեռացրեց նրանց: Օրինակ՝ թաղելով անապատային ավազահողմի տակ:

Դավիթը չէր խնդրել, որ Սամուել մարգարեն թագավոր օծեր իրեն: Նա հաստատակամ էր և չէր կարող արիաբար չկանգնել իր Աստծո համար: Նա իր հոր հավատարիմ որդին էր և իր թագավորի հավատարիմ զինվորը: Հոնաթանը չէր կարող ավե-

լի հավատարիմ ընկեր խնդրել: Նայելով Դավթի գործերին՝ նա անմեղ էր, սակայն շարունակ նեղություններ էր կրում իր կյանքի ընթացքում: Ո՞րն էր պատճառը:

Մենք ուզում ենք պատճառ գտնել, որովհետև այդ դեպքում մեր կյանքի խառնաշփոթն ինչ-որ իմաստ կունենա: Բայց ամեն ինչ անիմաստ է թվում: Դավիթը վերապրեց այս խոսքերը և մարգարեացավ դրանք, բայց նրա նեղությունը մատնանշում էր մեկ այլ անձնավորության պայքարը: Նրա խոսքերը սլացան դեպի ապագան՝ հայտնելով այն, ինչ տեղի էր ունենալու Հիսուսի հետ: Ինչո՞ւ ենք զարմանում, երբ մեր կյանքում թշնամիներ և մրցակիցներ են հայտնվում: Առաջին Պետրոս 4.12,13-ը հիշեցնում է մեզ.

> «Սիրելինե՛ր, օտար բան մի՛ համարեք այն բորբոքված նեղությունը, որ ձեզ փորձելու համար լինում է, իբր թե մի օտար բան է պատահում ձեզ: Այլ՝ ուրախ եղեք, իբրև թե Քրիստոսի չարչարանքին մասնակից եղածներ, որ Նրա փառքի հայտնության ժամանակ էլ ցնծալով ուրախանաք»:

Արտաքին ճնշումը փոխում է մեր ներսը: Մրցակիցներն ի հայտ են բերում այն կոչումը, որն Աստված պատրաստել է մեզ համար: Մենք նվազում ենք, որ Աստծո փառքն ավելանա մեր կյանքում: Թշնամին կամ մրցակիցը՝ պարգև է, որը կազմում է մեր սովորելու, մաքրվելու և մարզվելու ընթացքի մասը: Մարդկային բնությունը խուսափում է դժվարություններից: Բայցևայնպես, երբ նեղություն ենք կրում, մենք մասնակցում ենք ոչ միայն Հիսուսի չարչարանքին, այլև՝ Նրա փառքին, երբ Նա հայտնում է մեզ մեր կոչումը:

Մրցակիցները դրդում են ձեզ հսկել ձեր սիրտը

Երբ ձեր քարե սիրտը կոտրվում է, ի հայտ է գալիս մսեղեն սիրտը: Երբ հայտնաբերում եք, որ ներգրավված եք անմիտ մրցակցության մեջ, ձեր սիրտը հարձակման տակ է զգում իրեն: Ձեզ ռմբակոծում են հարցեր, որոնք դրդում են վիճարկել ինքներդ ձեզ և ձեր դրդապատճառները: Հարց է ծագում. «Միգուցե

խնդիրն իմ մե՞ջ է: Աստվա՛ծ, որտե՞ղ ես: Ինչպե՞ս սա տեղի ունեցավ: Ինչո՞ւ է սա շարունակվում»:

Հաճախ միակ պատասխանը այս հարցերին, որը մենք ստանում ենք, լռությունն է: Հարց է ծագում, թե արդյո՞ք Աստված լսում է մեզ: Ես հասկացել եմ, որ Նա լռում է ընդմիջման ժամանակ: Տեսարանը փոխվելու է, և դերասանները զբաղեցնում են իրենց տեղերը բեմի վրա: Թող սա խրախուսի ձեզ: Ձեր կյանքի ներկա փուլը փոխվելու է: Փոխարենը չափեք ձեր կյանքը ձեր ներկա հանգամանքներով, հիշե՛ք, թե ինչերով է Նա արդեն անցկացրել ձեզ:

Արդյո՞ք մենք թույլ կտանք, որ հարձակումները խստացնեն մեր սիրտը, թե՞ թույլ կտանք Աստծուն՝ բժշկել այն:

Լսելով լռության մեջ՝ մենք պատրաստվում ենք անցնելու համար: Արդյո՞ք մենք կհավատանք Աստծո ասածին, թե՞ ականջ կդնենք մեր մրցակիցներին, որոնք մեղադրում են մեզ: Նույն Աստված, Ով սկսեց այս բարի գործը մեզանում, հավատարմորեն կավարտի այն: Արդյո՞ք մենք թույլ կտանք, որ հարձակումները խստացնեն մեր սիրտը, թե՞ թույլ կտանք Աստծուն՝ բժշկել այն: Մենք կկենտրոնանանք թշնամո՛ւ, թե՞ մեր Արարչի խոսքերի վրա:

> «Թանկագի՛ն ընկեր, լսի՛ր իմ խոսքերը, լարի՛ր քո ականջներն իմ ձայնին:
>
> Պահի՛ր իմ ուղերձն աչքերիդ առջև ամեն ժամանակ: Կենտրոնացի՛ր: Անգի՛ր սովորիր այն: Նրանք, ովքեր հայտնաբերում են այս խոսքերը, ապրում են, իրականում ապրում են՝ մարմնով և անձով. նրանց առողջությունը ծաղկում է: Աչալուրջ կերպով հսկի՛ր քո սիրտը. հենց այդտեղից է սկսվում կյանքը» (Առակ. 4.20-23, Ուղերձ):

Մի՛ հետևեք նրանց գործերին: Մի՛ լսեք նրանց ասածները: Մի՛ համեմատեք ձեր ներկա վիճակը նրանց վիճակի հետ: Հսկե՛ք ձեր սիրտը և ձեր անձի խորքերում պահվող ամեն մի խոստում, որը Նա շշնջացել է ձեզ: Դադարե՛ք անգործունյա լինել և զարգացրե՛ք Աստծո ձայնը տարբերելու կարողությունը ձեր մեջ: Նա

չէր հորդորի, որ անեք դա, եթե չփափագեր խոսել ձեզ հետ: Նրա ձայնն ամուր պահում է ձեր սիրտը:

Այս կյանքում շատ հաճախ գրեթե ոչինչ չի փոխվում: Այնպես որ, դուք չեք կարող գտնել լեցուն և անզուգական աստվածային կյանքը, որին ձգտում եք, եթե անփութորեն որոնեք այն: Անհրաժեշտ է կենտրոնանալ, քանի որ այս աշխարհն անում է ամեն ինչ՝ ձեր ուշադրությունը շեղելու համար: Եթե նպատակաուղղված չլինեք, դուք կշեղվեք այն բազմաթիվ կողմնակի հանգամանքներով, որոնք պայքարում են ձեր ուշադրության համար:

Մեր ուշադրության կենտրոնում պետք է լինի Քրիստոսի ուղերձը: Մեր Արարչի խոսքերն ի զորու են ծնունդ տալու այն ամենին, ինչ որոշված է մեր կյանքի համար: Այս գիտակցված մերձեցումը կյանքի Աղբյուրին՝ ներդաշնակություն է բերում մեր մարմնի և անձի մեջ. մենք առողջ, նպատակաուղղված և ուժեղ ենք դառնում: Երբ մենք կենտրոնանում ենք Նրա Խոսքի վրա, մեր մրցակիցների հետ պայքարելու փոխարեն մուտք ենք գործում այնպիսի ոլորտ, որն անհասանելի է նրանց համար:

Մենք պետք է ոչ միայն կենտրոնանանք Աստծո Խոսքի վրա, որը նման է սերմի, այլև պետք է պահպանենք պարտեզը, այսինքն՝ մեր սիրտը:

Կա անասելի տարբերություն ձեր սիրտը *պահպանելու* և *բանտարկված* սիրտ ունենալու միջև: Առաջին դեպքում դուք զգոն եք, քանի որ մեծ արժեք ունեցող մի բան եք պահպանում, իսկ երկրորդը կարելի է նմանեցնել ձեր սիրտը կողպելուն:

Շատ-շատերը որոշում են խստացնել իրենց սիրտը՝ հուսալով, որ այդպես այն ավելի պաշտպանված կլինի, մինչև այն պահը, երբ իրենք կզգան, որ այն կարող է ապահով կերպով բժշկվել: Աճման շրջանում ես հաճախ էի ընտրում այս մարտավարությունը: Սկզբում մեծ թեթևություն էի զգում: Ես հեռացնում էի մարդկանց իմ կյանքից, երբ նրանք վիրավորում էին ինձ: Ես այնքա՛ն հաճախ էի շրխկացրել սրտիս դուռը, որ արդեն ապահով կերպով կողպված էի: Ես այնքա՛ն էի փակ պահել իմ սիրտը, որ դարձրել էի այն իմ բանտարկյալը: Ես մտածում էի, որ անընկա-

լունակ էի դարձել ցավի հանդեպ, սակայն հետագայում հասկացա, որ ես նույնպես անզգա էի ուրախության համար:

Ձեր սիրտը *պահպանել*՝ նշանակում է պաշտպանել այն, ոչ թե՝ բանտարկել: Եթե դուք կողպել եք ձեր սիրտը, ժամանակ հատկացրեք աղոթքի համար: Խնդրե՛ք Աստծուն ազատ արձակել ձեր սիրտն իր քարե բանտից և փոխարինել այն այնպիսի սրտով, որը զգում է և՛ ուրախություն, և՛ ցավ:

Ես գիտեմ, որ այդպես դուք ցավ կզգաք, բայց մի՛ զսպեք ձեր արցունքները: Թույլ տվեք, որ դրանք հոսեն և ոռոգեն ձեր սիրտը, որպեսզի այն զգայուն մնա: Մի՛ խորտակեք ձեր ցավն ալկոհոլով կամ թմրանյութերով, որոնք աղավաղում են ձեր զգայարանները, և որոնց պատճառով դուք անկում եք ապրում: Մի՛ խավարեցրեք ձեր անձը վրիժառության մասին մտքերով: Դադարե՛ք պտտել այդ ամենը ձեր մտքում: Նստե՛ք և լա՛ց եղեք այնքան, որքան ունեք դրա կարիքը: Առանձնացե՛ք բոլորից և թույլ տվեք, որ ցավը հարվածի ձեզ ամբողջ ուժով: Երբ խաղաղվեք, ուղղե՛ք ձեր երեսը երկնքին և բարձրացրե՛ք ձեր ձայնն Աստծուն: Հետևե՛ք Դավթի օրինակին և ամեն օր ձեր անձը, ձեր խնդիրն ու ձեր թշնամիներին վստահեք Աստծուն: Այս ամենն ամփոփված է Սաղմոս 51.8-12-ում.

«Լսել տուր ինձ ցնծություն և ուրախություն.
թող ցնծան այն ոսկորները, որ կոտրատեցիր:
Երեսդ թաքցրու իմ մեղքերից
և իմ բոլոր անօրինությունները ջնջիր:
Սուրբ սիրտ ստեղծիր ինձանում, ո՛վ Աստված,
և ուղիղ հոգի՛ նորոգիր իմ ներսում:
Դեն մի՛ գցիր ինձ Քո երեսից
և Քո Սուրբ Հոգին վեր մի՛ առ ինձնից:
Դարձյա՛լ տուր ինձ քո փրկության ուրախությունը
և կամավոր հոգով հաստատի՛ր ինձ»:

Խստացված, գերված սիրտը խուլ է դառնում, իսկ կապված ոսկորներն անկարող են արձագանքել: Այլ մարդկանց դատողները մշտապես ապրում են սեփական մեղքի ծանրության ներ-

քո: Միայն Աստված կարող է մաքրել այն, ինչն աղտոտում է մեր սիրտը, և շտկել այն, ինչը սխալ է, որ մենք կրկին բարձր գլխով կանգնենք Նրա ներկայության մեջ:

Խստացված սրտերը չեն դիմանում Աստծո ներկայությանը: Նրանք մեկուսանում են և նախընտրում ծաղրողների ընկերակցությունը՝ ծիծաղելով այն մարդկանց ցավի վրա, ովքեր ընտրել են բժշկության զգայուն ուղին:

Ես կրկին զգուշացնում եմ ձեզ. շատերն են սկսում այս մոտեցմամբ, բայց հետագայում, երբ արդեն շատ ուշ է լինում, հասկանում են, որ իրենց սրտերը ոչ թե պաշտպանված էին, այլ՝ բանտարկված: Կարեկցանքը և գթասրտությունը հեռանում են՝ տեղի տալով դաժանությանը և անտարբերությունը: Կա անասելի տարբերություն սրբազան գանձ պահպանելու և ձեր սիրտը կողպելու միջև:

Երբ մենք զգում ենք, որ մեր սիրտը դատարկ և անպտուղ է, ժամանակն է լցնել մեր շուրթերը երգով: Սավուղն այնքա՜ն տանջված էր, որ չէր կարող երգել իր համար. այնպես որ, Դավիթն էր երգում Սավուղի համար՝ զսպելով նրա տանջանքները: Մեզ շրջապատող երգերը որոշ բաներ հեռվում են պահում, բայց մեզ հետ իսկապես նշանակալի բան է տեղի ունենում այն ժամանակ, երբ մեր ներսում է երգ բարձրանում: Երբ մենք երգում ենք՝ միայն լսելու փոխարեն, մեր սրտերը բացվում են. մեր և Արարչի միջև կապ է ստեղծվում:

Սավուղ թագավորը թե՛ խոսում էր, թե՛ վարվում էր անմտածված կերպով: Նրա մոլեգնող սիրտն արտահայտվում էր իր գործողությունների մեջ: Այնուամենայնիվ, մենք կարող ենք սովորել հանդարտեցնել մեր սիրտն այնպես, ինչպես Դավիթը.

> «Ես պահել եմ ոտքերս գետնի վրա. ես հանդարտեցրել եմ իմ սիրտն ինձանում:
>
> Նման մանկան, որ գոհունակ է իր մոր գրկում, իմ անձը գոհունակ է՝ մանկան պես» (Սաղմ. 131.2, Ուղերձ):

Կարո՞ղ եմ կիսվել մի բանով, ինչը ցույց կտա ինձ ոչ նպաստավոր լույսի ներքո: Իմ անձը մանկան պես հանդարտեցնելու փոխա-

րեն ես հակված եմ վարվելու մանկան պես: Տասնամյակներ առաջ մեր եկեղեցում մի երգ կար՝ Սաղմոս 3-ի բառերով: Ես լաց էի լինում այդ երգի ժամանակ՝ փոքրիկ երեխայի պես: Տանը միացնում էի այդ երգը և պարում էի: Ես նմանեցնում էի իմ սուգն այն բանի հետ, ինչ զգում էր Դավիթը՝ գրելով այդ Սաղմոսը: Միակ խնդիրն այս էր, որ ես լաց էի լինում աննշան խնդիրների պատճառով: Այո՛, այդ պահին դրանք մեծ էին թվում: Ես համոզված էի, որ մարդիկ այնքա՛ն խորն էին խոցել ինձ, որ պատռել էին իմ անձը:

Ետ նայելով՝ ես ամեն ինչ այլ կերպ եմ տեսնում: Իմ խնդիրներն աննշան և խղճուկ էին: Մի թեթև բախում, մի կոպիտ խոսք, միգուցե՝ մի փոքր վեճ ամուսնուս հետ: Ես շա՛տ կանանց եմ հանդիպել, ովքեր ամեն ինչ կտային՝ նման խնդիրներ ունենալու համար: Ես հանդիպել եմ խիզախ կանանց այլ երկրներում, ովքեր ամեն օր մահվան սպառնալիք են կրում իրենց հավատքի համար: Ուր էլ գնամ, ես տեսնում եմ ուժեղ միայնակ կանանց, ովքեր անխոնջ աշխատում են՝ իրենց երեխաներին ապահովելու համար: Էլ ի՞նչ խոսք այն կանանց մասին, որոնց ծեծերի են ենթարկում, բռնաբարում են, որոնց վաճառում են իրենց իսկ ընտանիքի անդամները կամ առևանգում են:

Ես չեմ փոքրացնում ձեր ցավը: Ես գիտեմ, որ այն իրական է: Բայց երբ մենք ճշմարտապես հայտնություն ստանանք այն մասին, թե ինչպես է Աստված հոգուտ Իրեն պտտում նույնիսկ վատագույն հանգամանքը, կգա մի օր, երբ մենք կասենք Հովսեփի պես.

> «Եվ թեպետ դուք ինձ դեմ չարություն խորհեցիք, բայց Աստված այն լավի դարձնել խորհեց» (Ծնն. 50.20):

Եթե այլ կերպ դիտարկեք ձեր մրցակիցներին, Աստված կազատի ձեզ ցավից: Թատերագիր Էդմոնդ Բուրկեն ձևակերպել է այս սկզբունքը հետևյալ կերպով. «Նա, ով պայքարում է մեր դեմ, ամրացնում է մեր նյարդերը և սրում մեր հմտությունները: Մեր հակառակորդը՝ մեր օգնականն է»:

Ես հասկացել եմ, որ եթե դռներ փակեմ մարդկանց վրա, ապագայում ինքս էլ փակ դռների կհանդիպեմ: Եթե փորձենք

մեկուսացնել մարդկանց, դրսում հայտնվելու վտանգը կսպառնա նաև մեզ: Բաց սրտերը դռներ կբացեն և գրկաբաց կընդունեն մարդկանց: Աստված ուղարկեց Հիսուսին այն հույսով, որ ոչ ոք դուրս չի մնա: Կատարե՛ք այս դժվարին աշխատանքը ձեր սրտի հետ. ջանասիրաբար հսկե՛ք ձեր սիրտը, փոխարենը հսկեք այն, ինչը ձեր դիրքն եք համարում:

Այսօր շատերն են ուզում առաջնորդ լինել, բայց ազդեցություն ունենալը՝ երկսայրի սուր է, որը կտրում է երկու կողմից: Մշտապես կլինեն մարդիկ, ովքեր առանց հասկանալու կսիրեն ձեզ: Նույնպես կլինեն մարդիկ, ովքեր առանց հասկանալու կատեն ձեզ: Այս տեսակի մարդիկ դիտորդներ են: Նրանք ձեր մրցակիցները չեն. նրանք պարզապես հետևում են ձեր կյանքին: Մովսեսը մեծացավ փարավոնի հետ: Դավիթը որդու պես էր Սավուղի համար (Գողիաթը պարզապես նրա կյանքի հսկաներից մեկն էր): Որպես կանոն՝ մրցակիցն այնպիսի մարդ է, որին դուք մի ժամանակ շատ լավ եք ճանաչել: Դավիթն այսպես նկարագրեց մրցակցին.

> «Որովհետև եթե թշնամին ինձ նախատինք տար, կհամբերեի, և եթե ինձ ատողը պարծենար ինձ վրա, կթաքնվեի նրանից:
>
> Բայց դու ինձ հավասար մարդ ես՝ իմ սրտակիցը և իմ բարեկամը,
>
> Որ մենք իրար հետ քաղցրությամբ խորհուրդ էինք անում և Աստծո տունն էինք գնում ամբոխի հետ» (Սաղմ. 55.12-14):

Այսօր նման մարդուն կկոչեն «թշնամի՝ ընկերոջ դիմակով»: Պարզ ասած, խոսքը մրցակցի մասին է: Այն, որ մարդը հասկանում է, թե ով է իր ճշմարիտ ընկերը, իսկական պարգև է, բայց հաճախ հենց մեր մրցակիցներն են ճշմարտապես հավատարիմ դարձնում մեզ: Մենք կարող ենք չհաշտվել մեր իրավիճակի հետ, կամ բերել այն Աստծո առջև: Մենք կարող ենք գոհանալ Աստծուց, որ Նա օգտագործում է մեր մրցակցին, որպեսզի մաքրի և վերադիրքավորի մեզ, կամ կարող ենք բողոքել: Մենք կարող ենք տրտնջալ, կամ՝ աղոթել և երգել: Մենք ինքներս պետք է որոշում կայացնենք, և ոչ մի մրցակից չի կարող խլել դա մեզնից:

Հարցեր քննարկման համար

1. Հիշեք այնպիսի իրավիճակ, որտեղ ձեր մրցակիցն ակամա դարձել է ձեր ուսուցիչը:
2. Ինչ է բացահայտել ձեր մրցակիցը ձեզանում:
3. Ո՞ր բնագավառներում եք դուք հաստատակամ:
4. Կա՞ն բնագավառներ, որոնցում դուք այնքան էլ հաստատակամ չեք, և որոնք պետք է ամրացնեք:
5. Անվանեք երեք տարբերություն երկրպագուների և հետևորդների միջև:
6. Պատահե՞լ է, որ նիզակը բռնած վազեք ձեր տնով մեկ: Ինչպե՞ս կարելի է այն ցած դնել:
7. Ինչպե՞ս կարող եք պահպանել ձեր սիրտը՝ առանց այն բանտարկելու:

6

Սեռ՝ առանց մրցակցության

Ես չեմ կարող հակառակվել ռասիզմին, որի դեպքում մարդիկ խտրականության են ենթարկվում այնպիսի բանի համար, ինչն իրենք անկարող են փոխել՝ իրենց մաշկի գույնի, և միաժամանակ սառնարյուն կերպով ընդունել ևս մեկ կոպիտ անարդարություն, երբ մարդկանց պատժելի են համարում մեկ այլ բանի համար, ինչն իրենք անկարող են փոխել՝ իրենց սեռի:

Արքեպիսկոպոս Դեսմոնդ Տուտու

Ես ունեմ անձնական աղոթքներ, որոնց ժամանակ ես մենակ եմ: Որպես կանոն, մենակ լինելն ինձ համար նշանակում է լինել հյուրանոցային համարում կամ մեքենայի մեջ: Ես շատ անսովոր աղոթքներ եմ բարձրացրել մեքենայիս ղեկին: Չկա ավելի լավ բան, քան երբ երկրպագության բարձր երաժշտություն եմ միացնում և լիովին կենտրոնացած եմ դրա վրա: Մի քանի տարի առաջ իմ կյանքը պարզապես խելահեղ ընթացքի մեջ էր: Ես չգիտեի՝ գալիս էի ինչ-որ տեղից, թե՞ ինչ-որ տեղ էի գնում: Իմ «Երբ արթնանում են կին առյուծները» գիրքը լույս էր տեսել աշնանը, երբ ես Հորդանանում էի: Տարին ավարտվում էր, և արդեն մոտենում էր Գոհության տոնը: Իմ անձնական աղոթքն այդ ժամանակ մոտավորապես այսպիսին էր.

«Երկնայի՛ն Հայր, իհարկե, Դու գիտես, որ ես «Երբ արթնանում են կին առյուծները» վերնագրով գիրք եմ հրատարակել հինգ լեզուներով, բայց ուզում եմ իմանալ՝ արդյո՞ք դա Քո կամքն է: Միգուցե արդեն ուշ է հարցնել Քեզ այդ մասին, բայց ես նույնպես գիտեմ, որ Դու կախված չես ժամանակից, և ուզում եմ հաստատություն ստանալ Քեզնից, որ այդ գիրքը որոշված է եղել Քո կողմից, Հիսուսի անունով, ամե՛ն»: Այո՛, միգուցե մի փոքր անհարմար է նման բան ասելը, սակայն այդպես էլ եղել է: Ես գիտեի, որ պետք է ազատվեի այդ մտքից՝ հանձնելով այն Նրա ձեռքերի մեջ:

Իմ խնդրած հաստատությունը չուշացավ: Այդ երեկո՝ մոտավորապես ժամը ութին, ես անսպասելիորեն զբաղվեցի կրտսեր որդուս դպրոցական նախագծով: Ես մաս-մաս էի արել նրա ավագ եղբայրների դպրոցական նախագծերը, քանի որ դրանց մեջ կային մասեր, որոնք մենք կարող էինք օգտագործել, երբ հանկարծ կրտսեր որդիս ասաց, որ իրեն հատուկ տեսակի պաստառ էր պետք՝ իր նախագիծն ավարտելու համար: Ես սլացա՝ ճիշտ պաստառ գտնելու, բայց մինչ այդ համաձայնեցի վճարել նրա ավագ եղբայրներին, որպեսզի օգնեին նրան ավարտել իր նախագիծը: Երբ տուն վերադարձա, ինձ մեծ խառնաշփոթ էր սպասում. մեր ընտանեկան սեղանը ծածկված էր ամսագրերի կտորներով, հաստ ֆլոմաստերներով և նամակներով: Եղբայրներից մեկը տպում էր Արդենի թելադրածը, իսկ մյուսը կտրատում էր նկարներ, որոնք պետք էր սոսնձել: Հազիվ էի գետնին դրել այն պաստառը, որի վրա ամրացվելու էին բոլոր այդ կտորները, երբ հեռախոսը զանգեց. Ջոնն էր:

Նրա ձայնը ոգևորված էր: Իսկ ես խիստ հոգնած էի զգում ինձ:

Նա ասաց, որ այդ երեկո հանդիպել էր մի մարդու, ում հետ ես պետք է խոսեի: Ամուսինս մի սովորություն ունի. նա պարբերաբար զանգում է ինձ և փոխանցում հեռախոսն այնպիսի մարդկանց, որոնց ես ընդհանրապես չեմ ճանաչում: Չգիտեմ՝ ինչպես է դա ստացվում, բայց այդպես լինում է, և այն էլ՝ հա-

ճախ: Հիմնականում այդ մարդիկ բոլորովին չեն ցանկանում խոսել ինձ հետ, բայց Ջոնն ինչ-որ բան է որսում այդ պահին և զգում է, որ ես պետք է խոսեմ նրանց հետ:

Սկզբում հակառակվում էի այդ ծանոթություններին: Բայց այժմ զգում եմ, որ դրանք պարզապես անխուսափելի են: Ես մի խորհուրդ կտամ իմաստուն կանանց. եթե ձեր ամուսինը մի բարկացնող սովորություն ունի, և այն ավելի քան տասը տարի շարունակ կա նրա մոտ, դուք պետք է որոշեք, որ այն զվարճալի է: Այնպես որ, իմ ամուսինը ինձ լիովին անծանոթ մարդկանց հետ հեռախոսով ծանոթացնելու զվարճալի սովորություն ունի: Բայց այդ երեկո ես ընդդիմացա:

– Ջո՛ն, ես ժամանակ չունեմ, որ խոսեմ անծանոթ մարդկանց հետ: Հենց հիմա զբաղված եմ Արդենի դպրոցական նախագծով:

– Ոչի՛նչ, պետք չէ, որ հենց հիմա խոսես նրա հետ: Այդ մարդը զինվորական սպա է. հիմա նա զբաղված է, և այդ պատճառով, ես տվեցի նրան քո հեռախոսահամարը: Նա կզանգահարի քեզ մի փոքր ուշ: Անպայման պատասխանի՛ր նրան: Այլևս չեմ կարող խոսել, սիրում եմ քեզ, - և նա անջատեց հեռախոսը, մինչև որ կհասցնեի շարունակել:

Աշխատանքը նախագծի շուրջ թեժանում էր: Մեկ ժամ անց իմ հեռախոսը զանգեց: Ես որոշեցի պատասխանել իմ ամենահամոզիչ հոգնած տոնով.

– Ողջո՛ւյն, - ասացի ես միապաղաղ ձայնով:

Թվում էր՝ զանգողը վարանում էր:

– Սա Լիզա Բիվեռն է:

– Այո...

– Լի՛զա, այսօր երեկոյան հավաքույթի ժամանակ ձեր ամուսինը պատմեց ձեր՝ «Երբ արթնանում են կին առյուծները» գրքի մասին: Նա ասաց, որ առյուծները լավագույն սպանողներն են, իսկ էգ առյուծները՝ լավագույն որսորդները:

Ես մտածեցի՝ նա հենց դա էլ պետք է ասեր: Որովհետև ես ընդամենը դա եմ պատմել նրան... համոզված եմ՝ նա դեռ չի կարդացել իմ գիրքը:

Նա շարունակեց.

– Նա ճիշտ էր ասում: Իսկապես որ, էգ առյուծները՝ լավագույն որսորդներն են:

Ես չէի հասկանում, թե ինչ էր նա ուզում ասել ինձ: Ինչո՞ւ էր զանգել ինձ, որպեսզի կրկներ իմ ամուսնու խոսքերը, որոնք ես արդեն գիտեի, քանի որ ինքս էի գրել դրանք: Շուտով ես կիմանայի պատասխանը:

– Լի՛զա, դուք գիտեք, թե ինչու մենք չենք կարողանում հաղթել պատերազմն Աֆղանստանում:

Ես պատասխանեցի մի տեսակ դրական մրթմրթոցով: Իհա՛րկե, Կոլորադո Սփրինգսում ապրելը նշանակում է, որ վերջին անգամ ես ինքնաթիռով տուն էի թռչում այլ երկրներից վերադարձող բազմաթիվ զինվորականների հետ:

– Ուզո՞ւմ եք իմանալ պատճառներից մեկը, թե ինչու մենք չենք հաղթում այդ պատերազմը:

– Իհա՛րկե, - ցանկություն հայտնեցի ես:

– Մենք չենք կարողանում խոսել նրանց կանանց հետ, - շարունակեց նա: - Եթե չկարողանաք խոսել կանանց հետ, դուք չեք կարողանա փոխել մշակույթը, իսկ եթե չկարողանաք փոխել մշակույթը, դուք չեք կարողանա հաղթել պատերազմում:

Նա գրավեց իմ ուշադրությունը:

– Թույլ տվեք պատմել, թե ինչ աշխատանք եմ ես հիմա կատարում մեր ռազմակայանում: Ես աշխատում եմ հատուկ օպերատիվ խմբերի հետ: Այդ երկրում առկա վտանգների պատճառով մենք աշխատում ենք միայն տղամարդկանց հատուկ ջոկատների հետ, բայց պատրաստվում ենք ուղարկել այդ ժողովրդի մեջ կանանցից բաղկացած խմբեր: Նրանք պատմելու են աֆղան կանանց, որ նրանք ձայն և արժեք ունեն: Նրանք բացատրելու են, թե ինչու ժողովրդավարությունն օգուտ կտա նրանց որդիներին և դուստրերին: Նրանք թեթև բուժօգնություն են ցուցաբերելու և ծննդօգնություն են տրամադրելու: Դուք գիտեք, թե ինչպես է կոչվում այդ կանանց հատուկ խումբը:

Ես հավաստիացրի նրան, որ պատկերացում չունեմ այդ մասին:

– Նրանք կոչվում են «Կին առյուծների թիմ», և մենք արդեն պատրաստվում ենք ուղարկել նրանց: Կարո՞ղ եմ ստանալ մեկական օրինակ ձեր գրքից՝ նրանցից յուրաքանչյուրի համար:

Իհա՛րկե, մենք ուղարկեցինք գրքեր նրանց համար:

Այդ կանայք արժանի էին մեր աջակցությանը, քանի որ նրանք դիմում էին այդ երկրի կանանց և հույս էին տալիս, որ նրանց երեխաների համար գոյություն ունի ավելին, քան պատերազմը և սովը: Այդ կին առյուծները պետք է իմանային, որ պարզապես չէին հետևում զինվորական հրամանների, այլ կատարում էին հավիտենական առաքելություն, որն էր՝ բժշկություն բերել իրենց քույրերին, ովքեր մեկուսացված և հաճախ անարգված էին՝ ընդամենը իրենց սեռի պատճառով: Տղամարդ զինվորականներին արգելված էր խոսել աֆղան կանանց հետ. այնպես որ, այդ պատվերը ստացան կին զինվորականները:

Հեռախոսն անջատելուց հետո ես ևս մեկ անգամ հասկացա, որ գոյություն ունեն շատ մարտեր, որոնք անկարելի է հաղթել՝ առանց կանանց մասնակցության:

Եթե Ամերիկայի Միացյալ Նահանգների բանակը հասկանում է, որ առանց կանանց մասնակցության՝ երկիրը կարող է կռվել, բայց չհաղթել պատերազմը, մի՞թե ժամանակը չէ, որ եկեղեցին զորացնի իր դուստրերին՝ տղամարդկանց կողքին կանգնելու համար, որպեսզի մենք դադարենք միայն կռվելուց և սկսենք հաղթել:

ԳՈՅՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՆ ՇԱՏ ՄԱՐՏԵՐ, ՈՐՈՆՔ ԱՆԿԱՐԵԼԻ Է ՀԱՂԹԵԼ՝ ԱՌԱՆՑ ԿԱՆԱՆՑ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ:

Սեռերի մրցակցությունը վնաս է հասցրել երկու կողմերին էլ, սակայն շատ ավելի հաճախ խտրականության զոհը դարձել են կանայք: Ավելի քան երեք տասնամյակ շարունակ ես կրել եմ իմ սրտում կանանց, ովքեր վերքեր էին ստացել սեռերի մրցակցության պատճառով: Ես չեմ կարող որևէ գիրք գրել՝ առանց ինչ-որ կերպով այս խնդրին անդրադառնալու:

Այսօր հասարակությունը շատ է առաջադիմել բազմաթիվ հարցերում, բայց ամեն շաբաթ ես պատմություններ եմ լսում կանանց մասին, ովքեր տառապանք են կրում ամուսնության մեջ, ընտանիքում, աշխատավայրում կամ պաշտամունքի տանը: Ես պարբերաբար ատելությամբ լի մեկնաբանություններ եմ կարդում կանանց հասցեին սոցիալական ցանցերում: Այս ասելով՝ ես նույնիսկ չեմ անդրադառնում սեռական բռնությանը, սեռասպանությանը կամ պոռնոգրաֆիային:

Ցավոք, սեռական խտրականությունը դեռ շարունակում է աղոտացնել մեր Ավետարանի սահմանները: Թվում է՝ մենք օգտագործում ենք Ավետարանը, որ լիարժեք փրկություն և ազատություն շնորհենք տղամարդկանց, իսկ կանանց սահմանափակ չափաբաժիններ ենք հատկացնում:

Կրոնական առաջնորդների սպառնալիքները

Ես ուզում եմ բացել սեռական խտրականության թեման՝ անդրադառնալով այն ժամանակվան, երբ եկեղեցին նոր էր ծնվել, կենդանի էր և աճում էր: Այդ ժամանակ՝ հարությունից հետո, Աստծո Հոգին թափվում էր և՛ որդիների, և՛ դուստրերի վրա: Մարդիկ ազդարարում էին Հիսուսի հարությունը, և Ավետարանը քարոզվում էր խոսքով ու գործով: Կրոնական առաջնորդները խուճապի էին մատնվել: Փորձելով հանդարտեցնել ստեղծված իրարանցումը՝ նրանք ձերբակալեցին Պետրոսին և Հովհաննեսին, երբ բժշկվեց մի մարդ, ով քառասուն տարի կաղ էր:

> «Նրանք ետ կանչեցին նրանց և զգուշացրին, որ *ոչ մի դեպքում այլևս չխոսեն կամ չսովորեցնեն Հիսուսի անունով»* (Գործք 4.18, Ուղերձ):

«Նրանք» այդ օրերի կրոնական առաջնորդներն էին, իսկ զգուշացում ստացողները՝ Պետրոսը և Հովհաննեսը: Հիսուսի անունով կատարված այդ հրաշքը՝ մի տղամարդու բժշկությունը, դուռ բացեց հարություն առած Քրիստոս Փրկչին քարոզելու համար: Հրեա առաջնորդները հայտնվեցին աքցանի մեջ, քանի որ

այդ կաղի բժշկությունն անկարելի էր ժխտել: Նրանք մտածում էին, թե ինչպես վարվեն.

> «Արդեն ամբողջ քաղաքում հայտնի է, որ հրաշք է տեղի ունեցել, և որ նրանք են կանգնած դրա ետևում: Մենք ոչ մի կերպ չենք կարող ժխտել դա: Բայց որպեսզի դա ավելի չտարածվի, *եկեք լռեցնենք նրանց սպառնալիքներով*, որպեսզի այլևս չհամարձակվեն օգտագործել Հիսուսի անունը՝ որևէ մեկի հետ խոսելիս» (Գործք 4.16,17, Ուղերձ):

Բոլորս գիտենք, որ նրանք չկարողացան սպառնալ Պետրոսին և Հովհաննեսին: Այդ մարտավարությունը լիովին հակառակ արդյունք տվեց և էլ ավելի վճռական դարձրեց աշակերտներին:

> «Բայց Պետրոսը և Հովհաննեսն անմիջապես պատասխանեցին. «Դո՞ւք որոշեք, թե ինչն է ճիշտ Աստծո համար. լսել ձե՞զ, թե՞ Աստծուն: Իսկ մեզանում նույնիսկ կասկած չկա. մենք չենք կարող լուռ մնալ այն բանի վերաբերյալ, ինչ տեսել և լսել ենք»» (Գործք 4.18-20, Ուղերձ):

Կրոնական առաջնորդները կարող էին վիճել իրար հետ՝ որքան ուզում էին, բայց Պետրոսը և Հովհաննեսը կանգ չէին առնելու: Նրանք հասկացել էին, որ կրոնական առաջնորդներին համոզելը զուր էր. այնպես որ, նրանք այլ տարբերակ չունեին, քան սովորեցնել և քարոզել այն ճշմարտությունը, որն իրենք գիտեին: Այդ մարդիկ հասկացան, որ կան դեպքեր, երբ լռությունը հավասար է անհնազանդության:

Այս սպառնալիքները հնչում են նաև այսօր, բայց դրանք ուղղված են բոլորովին այլ խմբի: Խոսքն արդեն առանձին ցուցումի մասին չէ, որը կրոնական առաջնորդները տվեցին անկիրթ գալիլեացի ձկնորսներին: Այն վերածվել է մշակութային ճնշման և տարածվել աշխարհով մեկ: Այժմ այդ ցուցումն այլ կերպ է հնչում, բայց նպատակը նույնն է: Մեր աշխարհիկացված հասարակությունը թույլ կտա ձեզ խոսել Աստծո մասին և լինել այնքան հոգևոր, որքան ուզում եք, քանի դեռ դուք չեք օգտագործել Հիսուսի անունը:

Իհարկե, մենք չպետք է զարմանանք, որ աշխարհիկ հարթակները թույլ չեն տալիս, որ քարոզվի և ուսուցանվի Հիսուսի

անունը, բայց երբ եկեղեցին է խոչընդոտում իր անդամներին և լռեցնում է նրանց ձայները... սա արդեն բոլորովին այլ խնդիր է:

Ավելի քան երկու հազարամյակ կրոնական առաջնորդները սահմանափակել են, իսկ երբեմն նաև արգելել են եկեղեցու հազարավոր դուստրերի՝ քարոզել և սովորեցնել այն սրբազան տարածքներում, որոնք պատկանել են եկեղեցուն: Կրկին կարդացեք Գործք 4.18-ը.

> «Եվ նրանց կանչեցին, պատվեր տվին, որ ամենևին չխոսեն և ո՛չ էլ սովորեցնեն Հիսուսի անունով»:

Երբ մտածում էի այս խոսքի մասին, լսեցի Սուրբ Հոգու շշնջոցը. *«Ես կանչել եմ անթիվ դուստրերի և պարգևներ եմ տվել նրանց ծառայության համար՝ Իմ Հոգով, բայց եկեղեցին արգելել է նրանց և չի ընդունել նրանց կոչումը»:*

Միգուցե լսած լինեք կրոնական առաջնորդների, ովքեր ասում են. «Կանայք կարող են *սովորեցնել* այլ կանանց, բայց ոչ՝ տղամարդկանց», «Կանայք կարող են կիսվել Խոսքով, բայց չպետք է քարոզեն», նաև՝ «Կանայք կարող են առաջնորդել, բայց՝ ոչ եկեղեցում»: Այս քողարկված սպառնալիքներն ավելի քան ողջամիտ են թվում, բայց արդյունքը նույնն է. Ավետարանը սահմանափակվում է: Համարձակ հավատք ունեցող կանայք շատ արագ ագրեսիվ կնոջ պիտակ են ստանում: Իրենց Աստծո մեջ վստահ կանայք սխալմամբ հավակնոտ են անվանվում: Այնուամենայնիվ, բոլորիս առջև դրված է միևնույն հարցը, որը բարձրացրին Պետրոսը և Հովհաննեսը. ի՞նչն է ճիշտ Աստծո համար՝ հնազանդվել մարդկանց, թե՞ հնազանդվել Աստծուն: Եվ ի՞նչ պատվիրեց Աստված Իր որդիներին և դուստրերին: Պատասխանը Հիսուսի խոսքերի մեջ է, որոնք Նա ասաց համբարձվելուց առաջ.

> «Եվ նրանց ասաց. «Գնացեք ամբողջ աշխարհով, Ավետարանը քարոզե՛ք ամեն արարածի: Ով որ հավատաց և մկրտվեց, կփրկվի, և ով որ չհավատաց, կդատապարտվի: Նրանց էլ, որ հավատացին, այս նշանները կհետևեն. Իմ անունով դևեր կհանեն, նոր լեզուներով կխոսեն: Օձեր վեր կառնեն, և եթե մի մահադեղ խմեն, նրանց վնաս

> չի տա. հիվանդների վրա ձեռք կդնեն, և նրանք կառողջանան»: Արդ Տերը, նրանց հետ խոսելուց հետո, Երկինք համբարձվեց, Աստծո աջ կողմը նստեց» (Մարկոս 16.15-19):

Այս պատվերը տրվեց *նրանց,* ովքեր հավատում են: Մեծ Հանձնարարականը՝ թույլտվություն է. այն նույնիսկ չի պահանջում որևէ կազմակերպություն կառուցել, իսկ դրա առաքելությունն ընդգրկում է երկու սեռերին էլ: Քրիստոսում բոլորը կանչված են, և բոլորը ազատ են՝ Աստծո Բարի լուրն ազդարարելու համար: Աստծո ազատությունը և ճշմարտությունը ճանաչելուն պես մենք չպետք է թույլ տանք որևէ մեկին՝ լռեցնել մեզ:

Հնազանդվի՛ր քո Թագավորին

Աստված՝ մեր բարձր և սուրբ Թագավորն է: Մեր Թագավորը հանձնարարական է տվել ձեզ և զորացրել է՝ այն կատարելու համար: Նա խնդրել է ձեզ խոսել Իր ժողովրդի հետ՝ Իր փոխարեն: Եթե այդպես է, ինչպե՞ս դուք կարող եք թույլ տալ, որ ձեր Թագավորին ենթակա առաջնորդները ետ պահեն ձեզ: Մեզնից յուրաքանչյուրի կյանքը պետք է ազդարարի Մատթեոս 4.10-ը.

> «Մենք կերկրպագենք Տիրոջը՝ մեր Աստծուն, և կպաշտենք միայն Նրան»:

Եթե Թագավորի ենթականերին հնազանդվելը նշանակում է՝ անհնազանդ լինել Թագավորին, ուրեմն, հնազանդվելով նրանց, դուք խնդիրներ կունենաք Թագավորի հետ: Եսթերի գրքում մի օրինակ կա այս մասին: Պարսկաստանի թագավորը չէր կանչել Եսթերին, և արքունիքի կանոններն արգելում էին նրան թագավորի մոտ գնալ: Բայց Եսթերը հասկացավ, որ թագավորի չափանիշներին հնազանդվելը նշանակում էր անհնազանդ լինել Աստծուն: Եսթերը վախենում էր Աստծուց ավելի շատ, քան մարդկանց չհաճեցնելուց. այնպես որ, նա գնաց: Նա մոտեցավ թագավորին հատուկ մարտավարությամբ, բայց չհամարձակվեց լուռ մնալ այն ժամանակ, երբ խաղաքարտի վրա անթիվ մարդկանց կյանքեր էին: Հարց է ծագում. մի՞թե մեր աշխարհն այսօր այդպիսին չէ:

Բազմաթիվ դուստրեր թաքնված են մարտավարական վայրերում և հանգամանքներում: Նրանցից մի քանիսը նույնիսկ աղոթում և ծոմ են պահում իրենց քույրերի հետ՝ հետևելով և սպասելով հարմար պահի, որպեսզի միջամտեն և բարեխոսեն:

Իհարկե, սրանով ես չեմ դրդում ձեզ ապստամբել ձեր ամուսինների կամ եկեղեցու առաջնորդների դեմ: Ես ուզում եմ ցույց տալ ձեզ, որ գոյություն ունի շատ իրական թշնամի, ով չի բավարարվի պարզապես ձեզ լռեցնելով: Նրա վերջնական նպատակն է՝ խլել ձեր և ձեր երեխաների կյանքերը:

Եկեք ճիշտը խոսենք. եթե ձեր ամուսինն արգելի ձեզ քարոզել Ավետարանը, դուք կհնազանդվե՞ք նրան:

Ես չեմ խոսում որպես ավագ հովիվ՝ բեմ բարձրանալու և հրապարակավ քարոզելու մասին: Ես հարցնում եմ ձեզ. արդյո՞ք դուք անկեղծորեն ազատ եք և կարող եք վկայել: Դուք պատրա՞ստ եք պատասխանել մարդկանց հարցերին, աղոթել կամ աշակերտել ավելի երիտասարդ մի կնոջ:

Վերջերս Ջոնը և ես խոսում էինք այս մասին: Նա հարցրեց ինձ, թե ինչո՞ւ են շատ կանայք արդարացումներ փնտրում՝ Հիսուսի դեսպանը չլինելու համար: Ես ասացի, որ իմ կարծիքով՝ նրանց մեծ մասը պարզապես վախենում է բացասական հակազդեցությունից: Նույն շաբաթվա ընթացքում ես նստած էի ինքնաթիռում մի տղամարդու կողքին, ով ասաց, որ ինչ-որ մեկը ետևից մի արհամարհական խոսք ասաց իմ հասցեին: Ես պատասխանեցի. «Ես լսել եմ նման բան նաև առերես»:

Հիմա թուլասիրտների և թուլամորթների ժամանակը չէ: Այս աշխարհում լայնածավալ պատերազմ է ընթանում՝ ընդդեմ Աստծո պատկերը կրողների՝ թե՛ տղամարդկանց, և թե՛ կանանց: Վերջին բանը, որտեղ մեզ պետք է նկատեն, մեկս մյուսի հետ կռվելն է: Ես համոզված եմ, որ որոշ կանայք պետք է խիզախեն և սկսեն խոսել այս մասին: Միգուցե նրանց սովորեցրել են, որ հնազանդությունը լռություն է նշանակում, և նրանք չգիտեն, որ Աստված փոխել է իրենց անունները: Ինչի՞ է Աստված դրդում, որ անեք: Միգուցե կա մի երիտասարդ մայր, ով կարիք ունի, որ

աշակերտեք իրեն: միգուցե դուք պետք է աղոթքի հավաքույթ անցկացնեք ձեր տանը: Աստվածային հնազանդությունը նշանակում է, որ մենք պատվում ենք մեր ամուսիններին՝ Աստծո Խոսքը կատարելով հանդերձ:

Կան նաև կանայք, ովքեր վախենում են իրենց ուժեղ կողմերից, քանի որ ոչ ոք չի սովորեցրել նրանց, թե ինչպես տնօրինեն դրանք: Բոլորս ենք տեսել, թե ինչպես են կանայք ոչ պատշաճ վարք ցուցաբերել (ես ինքս որոշ սխալներ եմ գործել): Պատճառն այն չէր, որ ես ուզում էի բարդացնել ամեն ինչ, այլ՝ որ ես չգիտեի, թե ինչպես լսելի դառնալ: Մեր կայացման ճանապարհը քարքարոտ է, քանի որ մինչև վերջերս գործուն կանայք այս աշխարհում շատ քիչ էին և գրեթե չունեին կապեր իրար հետ:

Պատասխանը ոչ թե կնոջ ձայնը լռեցնելն է, այլ՝ կանանց կրթելը: Եթե ինձ աճելու հնարավորություն չտրվի, ես աճ չեմ ունենա: Եթե աճ չունենամ, ես հող չեմ պատրաստի այլ կանանց համար:

Մի՞թե մենք թույլ կտանք, որ մեզ պիտակեն՝ բարկացած կանայք անվանելով: Թե՞ իմաստություն ձեռք կբերենք, որպեսզի այն դուստրերը, որոնց բերանում իրենց Հոր Խոսքն է, կարողանան խոսել: Մի՞թե պետք է լռեցնել նրանց, ովքեր ունեն Աստծո պատասխանի ինչ-որ մասը: Քա՛վ լիցի: Մենք պետք է ջանք չխնայենք, որ կրթենք մեր դուստրերին աստվածապաշտության և հնազանդության մեջ: Եթե ինչ-որ մեկը հարցնի իմ կարծիքը Ա Պետրոս 3-րդ գլխի վերաբերյալ, որտեղ ընդգծվում է, որ կանայք պետք է հեզ և հանդարտ հոգի ունենան, ապա ես լիովին համաձայն եմ: Եվ ես կարող եմ օրինակներ բերել Հիսուսի և Մովսեսի կյանքերից այն մասին, թե ինչպես հեզ լինել:

> «Եվ Մովսես մարդը շատ հեզ էր՝ երկրի վրա եղած բոլոր մարդկանցից ավելի» (Թվոց 12.3):

Նաև՝

> «Ձեզ վրա առե՛ք Իմ լուծը և Ինձնի՛ց սովորեք, որովհետև Ես հեզ եմ և սրտով խոնարհ, և ձեր անձերի համար հանգստություն կգտնեք» (Մատթ. 11.29):

Եվ Հիսուսը, և՛ Մովսեսը ցույց տվեցին հեզության օրինակ, որին մենք պետք է հետևենք:

Մեր ունեցած որոշ խնդիրները՝ կապված սեռերի հետ, պարզապես անհեթեթ են: Ես չեմ հարցնում Ջոնին, թե արդյոք կարո՞ղ եմ տուն հրավիրել իմ ընկերուհիներին, իսկ նա չի հարցնում ինձ, թե արդյոք կարո՞ղ է գնալ գոլֆ խաղալու: Ես չեմ հարցնում Ջոնին, թե արդյոք կարո՞ղ եմ կիսվել Աստծո Խոսքով ինչ-որ մեկի հետ հանրախանութում, կամ թե արդյոք կարո՞ղ եմ քարոզել մեր տնային եկեղեցու երիտասարդներին: Մենք խորհրդակցում ենք այն հարցերի շուրջ, որոնք վերաբերում են երկուսիս և մեր ընտանիքին, բայց ոչ՝ այն մասին, թե ինչպես ենք տնօրինում մեր օրը: Եթե մենք թույլտվություն խնդրեինք իրարից ամեն ինչի համար, դա հոգնեցուցիչ կլիներ: Նա վստահում է ինձ, իսկ ես վստահում եմ նրան: Ես կին եմ, ոչ թե երեխա:

Մենք ապրում ենք այնպիսի ժամանակաշրջանում, երբ անթիվ մարդիկ բռնված են վախով: Նրանց անհրաժեշտ է այն փառքի հույսը, որը դուք կրում եք ձեր սրտում:

Ի վերջո, մենք ինքներս ենք մեղավոր Հիսուսի հանձնարարականին չհնազանդվելու մեջ: Այո՛, մարդիկ կարող են դրդել մեզ, որ սայթաքենք և մեղանչենք (Մատթ. 18.6, Մարկ. 9.42, Ղուկ. 17.2), բայց ինքներս պետք է որոշում կայացնենք, որ հնազանդվելու ենք մեր Թագավորին: Մեր եղբայրներ Պետրոսի և Հովհաննեսի նման, մենք՝ քույրերս, պետք է ապրենք Քրիստոսի զարմանալի լիության մեջ, ինչը նշանակում է, որ մենք նույնպես չենք կարող լուռ մնալ այն ամենի վերաբերյալ, ինչ տեսել և լսել ենք:

Խոսքային հարձակումներ

Այսօր կանայք, ովքեր ընտրում են այս ընթացքը, միգուցե չենթարկվեն ծեծի և բանտարկության, ինչպես Պետրոսը և Հովհաննեսը, սակայն պատրաստ եղեք, որ ձեզնից հեռու կմնան և ձեզ կհակառակվեն: Սա նշանակում է, որ ձեզ կարող են սխալ հասկանալ, և շատ հաճախ դուք կկրեք խոսքային հարձակումներ և կմատնվեք մեկուսացման:

Ջոնը և ես տարբեր տեսանկյուններ ունենք այս հարցի վերաբերյալ: Նա հավաստիացրեց ինձ, որ այն եկեղեցիների մեծ մասը, որոնցում նա ծառայում է, թույլ է տալիս կանանց քարոզել ամբիոնից: Նա անվանեց երեք կին ծառայողների, ովքեր քաջ հայտնի են և սիրված են մեր երկրում և ամբողջ աշխարհում: Նրանք առաջնորդում են, սովորեցնում են *և* քարոզում են: Ես համաձայնեցի Ջոնի հետ, որ դա ճիշտ է տեսականորեն, բայց ոչ՝ գործնականորեն: Երբ խնդրեցի նրան անվանել այնպիսի եկեղեցիներ, որոնցում կանայք պարբերաբար քարոզում են ամբիոնից (չհաշվելով տարին մեկ անգամ Մայրերի օրվա առթիվ քարոզելը), նա չկարողացավ անվանել նույնիսկ տասը:

Ջոնը հավաստիացրեց, որ ես, որպես կին, չեմ կարող ասել որևէ բան, ինչը կփոխի այն աստվածաբանների կարծիքը, ովքեր դեմ են, որ կանայք առաջնորդեն և սովորեցնեն: Նա առաջարկեց ինձ դիմել կանանց և սովորեցնել, որ նրանք կարող են քարոզել: Նա նշեց, որ ցանկացած փաստարկ, որը կարող եմ առաջարկել նման առաջնորդներին, պարզապես զուր կլինի:

Ես համաձայնեցի: Իմ գրքերն ուղղված չեն առաջնորդներին: Ես գրում եմ ահով ու դողով իմ քույրերի, մայրերի և դուստրերի համար, որոնց դեռ պետք է համոզել: Ես ասացի, որ չեմ կարող սովորեցնել կանանց, որ նրանք պետք է քարոզեն, քանի դեռ նրանք վստահ չեն՝ արդյոք ճի՞շտ է, որ իրենք *սովորեցնեն* և *խոսեն* եկեղեցում: Օրենքի տառն օգտագործվել է՝ նրանց սրտերը խոցելու համար: Աստծո անկեղծ դուստրերից ոչ մեկը չի ցանկանում խախտել կամ անարգել Հոր կամքը: Նրանք չեն սովորի այն բաները, որ նրանց առաջնորդները թույլ չեն տալիս: Եթե հեղինակային դիրք ունեցող մեկը, ով ներկայացնում է Աստծուն, ասում է ձեզ, որ դուք *ցածր դիրք ունեք*, դուք կհավատաք նրան: Այս սուտը հատկապես հեշտ է ընդունել, եթե դուք ստվերոտ անցյալ եք ունեցել:

Ես *գիտեմ* դա, քանի որ այդպիսին եմ *եղել:*

Երբ դուք անվստահ եք, դուք մշտապես կքննադատեք ձեզ և կվիճարկեք ինչ-որ բանում մասնակցելու ձեր իրավունքը: Ես ուզում եմ հանել ձեր ականջների խցանները, վերցնել ձեր աչ-

քերի կապոցները և հեռացնել օրինապաշտության փշերը ձեր նուրբ սրտից: Այդ դեպքում դուք կարող եք բժշկվել և անձամբ լսել Աստծուն: Սուրբ Հոգին կարող է կանչել ձեզ՝ որպես Ավետարանի դեսպան իրավագիտության, բժշկության, գործարարության կամ կառավարման ոլորտներում, ինչպես նաև՝ որպես մայր և տնային տնտեսուհի: Այն ամենը, ինչ մենք անում ենք, պետք է արվի՝ ինչպես Տիրոջ համար: Երբ այսպես ենք վարվում, այն, ինչ աշխարհիկ և հասարակ է, սուրբ է դառնում: Այնուամենայնիվ, սխալ է ասել ինչ-որ մեկին, որ Սուրբ Հոգին չի խոսում իր հետ, եթե նա զգում է, որ եկեղեցում սովորեցնելու, քարոզելու կամ առաջնորդելու կոչում ունի:

Սեռը գրեթե ոչ մի կապ չունի առաջնորդելու հետ: Մարգարետ Թեթչերը Միացյալ Թագավորության մեծագույն առաջնորդներից էր ոչ թե այն պատճառով, որ նա կին էր: Իրականում, խնդիրը սեռը չէ. մեր խնդիրը հպարտությունն է և հակվածությունը նախապաշարմունքների և մարդկանց դատելու հանդեպ: Այս հատկանիշները կուրացնում են նրանց, ովքեր այլապես լավ առաջնորդներ կլինեին: Խոնարհությունը, փորձառությունը, հավատարմությունը, կրթությունը և առաքինությունը՝ առաջնորդներին որակավորող հատկանիշներից մի քանիսն են, բայց միայն սեռը չի կարող որոշել առաջնորդ լինելը: Բացի այդ՝ առանց Քրիստոսի բոլորս էլ անպիտան ենք: Երկրորդ Կորնթացիների 3.4-6-ում գրված է.

> «Եվ այսպիսի վստահություն ունենք առ Աստված Քրիստոսի ձեռքով: Ոչ թե մենք մեզնից բավական ենք մի բան միտք անելու՝ ինչպես մեզնից, այլ մեր բավական լինելն Աստծուց է, որ մեզ բավական էլ արեց Նոր կտակարանի պաշտոնյաներ լինելու, ոչ թե գրի, այլ՝ Հոգու, որովհետև գիրը սպանում է, բայց Հոգին կենդանացնում է»:

Ահա թե ինչպես է մի ակնառու առաջնորդ մեկնաբանել Ա Տիմոթեոս 2-րդ գլուխը. «Պողոսը պարզապես պնդում է, որ կանայք հարմար չեն՝ որպես առաջնորդներ եկեղեցում, քանի որ նրանք ավելի դյուրահավատ են, քան տղամարդիկ, և նրանց կարելի է ավելի հեշտորեն խաբել, քան տղամարդկանց»[1]:

Շուտով մենք կխոսենք Տիմոթեոսի առաջին թղթի այս հատվածի մասին: Նախ՝ ես ուզում եմ իմանալ հետևյալը. ինչպե՞ս զգացիք ձեզ, երբ կարդացիք այս մեջբերումը: Ամոթահա՞ր, մեղադրվա՞ծ, ոտնահարվա՞ծ, թե՞ թեթևացած և արդարացված:

Անկասկած, դուք ուժեղ և ընդունված չզգացիք ձեզ: Ես օգտագործել եմ մի շատ փոքր հատված այդ մարդու խոսքից, բայց այն արտացոլում է կանանց անտեսելու ետևում կանգնած մտածելակերպը: Այս առաջնորդը շարունակում է. «Շատ բարկացած կանայք տարիներ շարունակ համաձայն չեն եղել նրա (այսինքն՝ Պողոսի) խոսքերին, և դա ցույց է տալիս, որ նման կանայք, ովքեր չեն վստահում նրա հրահանգներին և չեն հետևում նրա ուսմունքին, շատ հարցերում նման են իրենց մայր Եվային. նրանք ունեն լավ մտադրություններ, բայց անիրազեկ են»[2]:

Մի՞թե մենք բարկացած ենք, եթե չենք համաձայնում ինչ-որ բանի հետ: Ես կարող եմ չհամաձայնել ամուսնուս հետ՝ առանց բարկանալու: Իմ աշխատողները և ես անհամաձայնություններ ենք ունենում՝ առանց բարկանալու: Նույնը կարելի է ասել ընկերներիս և իմ մասին:

Համաձայն այս մեջբերման՝ եթե մենք համաձայն չենք Բ Տիմոթեոսի 2-րդ գլխի նման մեկնության հետ, մենք բարկացած և անիրազեկ կանայք ենք: Դրա հեղինակը նույնիսկ չի ենթադրում, որ մենք կարող ենք աստվածապաշտ, խորաթափանց և գիտելիքների ձգտող կանայք լինել, ովքեր փորձում են գրավել իրենց տեղը՝ ըստ իրենց սեռի, քանի որ ձգտում են հնազանդվել Աստծուն: Նա նույնիսկ չի համարում, որ միգուցե Պողոսը խոսում է մեկ այլ բանի մասին, որն առկա էր իր մշակույթում և չկա այսօր:

Այս մեկնությունը նույնպես ինքնության սխալ աղբյուր է առաջարկում մեզ: Եվան մեր մայրը չէ: Վերստին ծնվելուն պես մենք այլևս մեր անկում ապրած ծնողների՝ Ադամի և Եվայի երեխաները չենք, այլ՝ Աստծո զավակները:

Այս հեղինակի խոսքերում զգում եմ լռեցնելու և ամաչեցնելու ցանկություն: Ես զգում եմ ճնշում և խտրականություն՝ կնատյացի կողմից: Եվ ես չեմ լսում Սուրբ Հոգուն: Հիսուսը սովորեցնում

և խրատում է՝ սիրելով և ընդունելով բոլորին: Նա նմանեցրեց Իր եկեղեցին հարսնացուի: Այս հեղինակի խոսքերն ավելի շատ նման են օձի թշնամությանը՝ կանանց հանդեպ:

Տիմոթեոսին ուղղված իր առաջին նամակում Պողոսը խոսում էր այն խնդիրների մասին, որոնց Տիմոթեոսը բախվել էր՝ եկեղեցի սկսելով հունական մշակույթին պատկանող միջավայրում: Մի՞թե այն, ինչ վերաբերում էր նրանց, վերաբերում է մեզ այսօր. չէ՞ որ թե՛ մեր երկրպագության հավաքույթներում, թե՛ մեր մշակույթում բացարձակապես ոչինչ նման չէ այդ ժամանակվան: Միգուցե սա դեռ չհամոզեց ձեզ: Հավանաբար, քանի որ դուք ուզում եք պատվել Աստծուն և երբեք չվիճարկել առաջնորդների խոսքերը, դուք ընդունել եք այդ դերը՝ որպես ձեր բաժինը կյանքում:

Եկեք մի փոքր ավելի խոսենք այս մասին: Դուք թույլ կտա՞ք, որ ինչ-որ մեկն այդպես խոսի ձեր դստեր հետ: Դուք լուռ կկանգնե՞ք, եթե ինչ-որ մեկն ասի, որ նա անհամապատասխան է, դյուրահավատ է, հեշտորեն խաբվող և անիրազեկ է: Մի՞թե նման շտկումը կամ նկարագրությունը կարելի է կյանքով լեցուն կամ Հոգուց ներշնչված անվանել, անկախ այն բանից՝ դա վերաբերում է տղամարդկանց, թե՞ կանանց: Կարո՞ղ եք նույնիսկ մի պահ պատկերացնել, որ Հայր Աստված նայում է ձեր կյանքի որևէ բնագավառին և պիտակում է ձեզ այդպիսի բացասական հատկանիշներով:

Ես հասկանում եմ, որ միգուցե դուք ինքներդ եք ուղղել այս խոսքերը ձեր հասցեին: Եթե դուք արդեն որոշ ժամանակվա քրիստոնյա եք, հնարավոր է, որ երբեմն որևէ ուսուցիչ կամ առաջնորդ ներկայացրած լինի այս գաղափարները՝ խոսելով ձեր եկեղեցու կանանց մասին: Բոլորովին վերջերս մի կին, ով տարիներ շարունակ ծառայության մեջ է եղել, զանգեց մեր կազմակերպություն և հարցրեց, թե արդյո՞ք այն, ինչ նա անում է, համապատասխանում է Աստվածաշնչին: Նա տալիս էր այդ հարցը, քանի որ մեծ հալածանք էր կրում իր ծառայության պատճառով:

Իմ դո՛ւստր, իմ քո՛ւյր, իմ ընկե՛ր, ես կարող եմ խոստանալ ձեզ հետևյալը. մեր Փեսան և Տերը՝ Հիսուսը, երբեք նման ստորացնող խոսքեր չի ասել ձեր մասին: Նա նույնիսկ մեկ անգամ ինձ

չի ասել, որ ես անարգել եմ Նրան՝ քարոզելով: Սա չի նշանակում, որ ես չպետք է կատարելագործվեմ. ես գնահատում եմ ինձ ամեն ծառայությունից հետո, որն անցկացնում եմ: Հավատացեք ինձ, ես զգում եմ Հոգու շտկումն իմ կյանքի ամեն բնագավառում: Բայց երբ խոսքն իմ կոչման մասին է և այն մասին, թե ինչպես է Նա տեսնում ինձ, ես շարունակ խրախուսական շշնջոց եմ լսում: Ահա թե ինչ է Նա ասում ձեր և իմ մասին. Նա անվանում է ձեզ գեղեցիկ, համապատասխան և մեծ կարողություններ ունեցող: Նա տվել է ձեզ նոր սիրտ և կենդանացրել է ձեր հոգին՝ դարձնելով ձեզ իմաստուն և հավատարիմ: Նա լցրել է ձեզ Սուրբ Հոգով և վստահել է ձեզ Աստծո Խոսքը, ոչ թե՝ որ դուք խաբված դուստր լինեք, այլ՝ որ ձեր մտքի աչքերը լուսավորվեն ճանաչողությամբ (տե՛ս Սաղմ. 45.11, Եզեկ. 36.26, Բ Կորնթ. 3.6, Եփես. 1.18):

Նրա հարսնացուն բաղկացած է և՛ տղամարդկանցից, և՛ կանանցից: Նա լվաց բոլորիս կեղտերը Իր Խոսքի ջրով. Նա փրկագնեց երկու սեռերն էլ Իր արյամբ: Բայց, չնայած դրան, երբ ես Ա Տիմոթեոսի 2-րդ գլխի վերևում բերված մեկնությունը կարդացի այն կանանց, ովքեր հավաքվում են մեր տանը Աստվածաշնչի ուսումնասիրության համար, նրանց դեմքերի արտահայտությունից նկատեցի, որ համակերպվեցին այդ անցանկալի ճշմարտությանը՝ զարմանքով և սարսափով: Մի քանիսը մտածեցին, որ այդ մարդու խոսքերի մեջ ճշմարտության մաս կա. միգուցե անցյալում իրենք դյուրահավատ են եղել կամ անհամապատասխան են եղել որոշ գործերի համար: Մյուսները նույնիսկ դադարել էին մտածել, որ այդ հատվածը հնարավոր է այլ կերպ մեկնել:

Երբ ես հարցրի ձեր դուստրերի մասին, ինչ-որ բան արթնացավ ձեր ներսում: Հուսով եմ՝ ձեզանում մոլեգնեց մայրական բնազդը: Իսկ ի՞նչ կասեք ձեր մասին: Դուք բավարարվե՞լ եք այն սահմանափակումներով, որոնք կան ձեր կյանքում՝ Քրիստոսի փրկագնած ազատությանը ձգտելու փոխարեն: Եթե դուք թույլ չեք տա այդ սահմանափակումները ձեր դստեր կյանքում, դուք չպետք է թույլ տաք դրանք նաև ձեր կյանքում: Եփեսացիների

2.10-ում գրված է. «Որովհետև Նրա ստեղծվածն ենք՝ Քրիստոս Հիսուսով հաստատված բարի գործերի համար, որոնց համար Աստված առաջուց պատրաստեց մեզ, որ նրանցում վարվենք»:

Ես հուսով եմ և աղոթում եմ, որ դուք երբեք չեք համակերպվի այն բանի հետ, որ դուք անհամապատասխան եք, դյուրահավատ եք և հեշտորեն խաբվող եք: Եթե մենք անիրազեկ ենք, մենք կարող ենք փոխել դա՝ կրթված և իրազեկ դառնալով: Ես որոշել եմ ընդունել սա որպես մարտակոչ և գիտելիք ձեռք բերել այն մարդկանցից, ովքեր ինձնից ավելի խելացի են: Առաջինը, եկեք դիտարկենք Պողոսի ցուցումները՝ համեմատելով դրանք մեկը մյուսի հետ: Ա Կորնթացիների 14.34,35-ում գրված է.

> «Կանայք չպետք է ընդհատեն երկրպագությունը՝ խոսելով այն ժամանակ, երբ նրանք պետք է լսեին, տալով հարցեր, որոնք ավելի պատշաճ կլիներ տալ իրենց ամուսիններին տանը: Այս բանում Աստծո օրենքի գիրքն ուղղորդում է մեր բարքերն ու սովորույթները: Կանանց թույլատրված չէ օգտագործել երկրպագության ժամանակը անհիմն զրույցների համար» (Ուղերձ):

Հաջորդ հատվածը Ա Տիմոթեոս 2.11-15-ն է.

> «Ես թույլ չեմ տալիս կանանց իշխանություն վերցնել և ասել տղամարդկանց, թե ինչ նրանք պետք է անեն: Նրանք պետք է սովորեն և լուռ ու հնազանդ լինեն՝ մնացած բոլորի հետ միասին: Սկզբում ստեղծվեց Ադամը, իսկ հետո՝ Եվան: Սկզբում խաբվեց կինը (մեր առաջագնացը՝ մեղքի մեջ), որին անմիջապես հետևեց Ադամը: Մյուս կողմից, նրա որդեծնությունը փրկության պատճառ դարձավ՝ շրջելով Եվայի կատարածը: Բայց այս փրկությունը միայն գալիս է նրանց մոտ, ովքեր հարատևում են հավատքով, սիրով և սրբությամբ, և այդ կերպով հասունության են ձգտում: Կարող եք համոզված լինել սրանում» (Ուղերձ):

Բոլոր դարձի եկած հույները միասին էին սովորում քրիստոնեության մասին: Կանայք այլևս չպետք է ստանձնեին այն դիրքը, որն ունեին իրենց հեթանոսների միջավայրում. նրանք այլևս պատգամախոսներ չէին՝ ինչպես Դիոնիսի տաճարային պաշտամունքի ժամանակ: Երբ Պողոսը հրահանգներ էր տալիս Տի-

մոթեոսին եկեղեցու կարգի մասին, նա չէր մեջբերում Օրենքը: Նա չէր մեջբերում Հիսուսի խոսքերը: Նա սովորեցնում էր Տիմոթեոսին պատշաճ կերպով հավաքույթներ անցկացնել հունական մշակույթին պատկանող նորահավատների հետ: Այդ ժամանակ և այդ մշակույթում համարվում էր, որ կանայք հեղինակություն ունեին հոգևոր հարցերում[3]:

Ըստ «Ավյուն» թարգմանության, որն արվել է արամեերեն լեզվից, Պողոսի խոսքերն Ա Տիմոթեոս 2.11,12-ում հետևյալն են.

> «Թող այն կանայք, ովքեր նորահավատներ են, կամենան սովորել ամենայն հնազանդությամբ իրենց առաջնորդներից, և ոչ թե անհարկի խոսեն: Ես կողմնակից չեմ, որ նորադարձ կանայք ուսուցիչներ լինեն եկեղեցում, ինչը ենթադրում է իշխանություն տղամարդկանց վրա, այլ՝ որ ապրեն խաղաղությամբ: Որովհետև Աստված սկզբում կազմեց Ադամին, իսկ հետո՝ Եվային: Ադամը չմոլորեցրեց Եվային, այլ Եվան մոլորեցրեց նրան և խախտեց Աստծո պատվիրանը: Այնուամենայնիվ, կինը պետք է ապրի վերականգնված արժանապատվությամբ՝ իր երեխաների միջոցով, ստանալով այն օրհնությունը, որը գալիս է նրանց մեծացնելուց՝ որպես նվիրված զավակներ, ովքեր սնուցված են հավատքով ու սիրով և իմաստությամբ են վարվում» (TPT):

Որպեսզի պատասխաններ գտնեի այն հարցին, թե որքանով է սա վերաբերում մեր ժամանակակից կյանքին, ես դիմեցի մի աստվածաբանի և եկեղեցական առաջնորդի, ով գործնականորեն իրականացրել է քարոզող և առաջնորդող կանանց գաղափարն իր ծաղկունք ապրող տեղական եկեղեցում: Դոկտոր Գիլբերտ Բիլեզիկյանը, ով պրոֆեսոր է «Ուիտոն» համալսարանում և երեց է «Ուիլու Քրիք Չրչ» եկեղեցում, ձեռնարկել է տասնութ ամիս տևող հետազոտություն՝ կապված այն հարցերի հետ, թե արդյո՞ք կանայք կարող են առաջնորդ լինել եկեղեցում: Ահա մի քաղվածք նրա հետազոտություններից, որոնք առաջին անգամ հրապարակվել են նրա «Սեռային դերերից այն կողմ» գրքում.

> «Արդյունքում մենք եզրակացրինք, որ մեղանչումից առաջ տղամարդը և կինը հաղորդակցվում էին իրար հետ որպես ժառանգակիցներ.

երկուսն էլ կրում էին Աստծո պատկերը և կանչված էին միաբան հոգալու այն աշխարհի համար, որը Նա ստեղծել էր: Եվ տղամարդիկ, և՛ կանայք պատասխանատու են իրականացնելու իրենց ծառայության պաշտոնն Աստծո փառքի համար՝ այն կերպով, որով Աստված օժտել է նրանց, և այն չափով, որով նրանց հավատք է տրված: Ցավոք, մեղանչման արդյունքում այս միասնական հարաբերությունը խորապես խաթարվեց: Մենք հավատում ենք, որ Աստծո շնորհքով տրված փրկության ծրագրի իմաստն այն է, որ այն ամենը, ինչը խաթարվեց մեղքի միջոցով (ներառյալ՝ տղամարդու և կնոջ հարաբերությունները), կարող են վերականգնվել՝ հասցվելով այն հրաշալի վիճակին, որը գոյություն ուներ Արարչագործության առաջին օրերում: Բազմաթիվ նվիրյալ և բանիմաց քրիստոնյաներ համաձայն չեն մեր եզրահանգումներին: Գալու է մեկ օր, երբ ամեն մեկս իմանալու է այն չափը, որով շեղվել ենք Աստծո կատարյալ իմաստությունից՝ և՛ այս, և՛ շատ այլ հարցերում: Մինչ այդ պահը, ես պահպանում եմ այս դիրքորոշումը՝ խոնարհությամբ, բայց և հաստատուն կերպով: Ես կամենում եմ դիմել այս ռիսկին՝ խրախուսել կանանց, որպեսզի նրանք կատարեն այն, ինչը, իմ համոզմամբ, Աստծո Խոսքը խնդրում է նրանցից՝ լիովին հասանելի դարձնել իրենց բոլոր հոգևոր պարգևների համար»[4]:

Եթե կինը զգում է, որ կանչված է քարոզելու, սովորեցնելու կամ առաջնորդելու համար, և նրա կյանքը համապատասխանում է Սուրբ գրքում նշված առաքինություններին, այդ դեպքում կրթե՛ք նրան, թո՛ւյլ տվեք նրան սովորել, որպեսզի կարողանա քարոզել, սովորեցնել և առաջնորդել այն կարողությամբ, որն Աստված է տալիս: Ինչպես և դոկտոր Բիլեզիկյանը, ես պահպանում եմ այս դիրքորոշումը՝ խոնարհությամբ, բայց և հաստատուն կերպով:

Ռաբբիի իմաստությունը Եվայի մասին

Ոչ շատ վաղուց ես արտոնություն ունեցա երկար զրուցելու մի փայլուն մեսիական ռաբբիի հետ, որի անունը Բրայան Բիլեչի է: Ես կիսվեցի իմ մտահոգությամբ այն մասին, որ Աստծո դուստրերի մեծ մասը նույնիսկ գաղափար չունեն իրենց իրական ինքնության մասին: Այսօր ավելի ու ավելի ակնհայտ է դառնում, որ Աստծո դուստրերի ինքնությունը և արժանապատվությունը կա-

տաղի հարձակման է ենթարկվում այս աշխարհի հոգու կողմից, և որ բազմաթիվ երկրպագության տներում չգիտեն, թե ինչպես խթանել այն պարգևները, որոնք Աստված տվել է կանանց:

Ես ուզում էի իմանալ մի հրեա աստվածաբանից, ով ամբողջ կյանքում ուսումնասիրել է Աստծո Խոսքը, թե ինչ է Աստված մտածում Իր դուստրերի մասին: Ես խնդրեցի նրան սկսել Եվայից, իսկ հետո խոսել Սառայի մասին, և այդպես շարունակ՝ մինչև Քրիստոսի հարսնացուն: Ռաբբին շատ բաներ պատմեց ինձ, և ես ցանկանում եմ փոխանցել ձեզ մի քանի գանձեր նրա խոսքերից, քանի որ դրանք կօգնեն ձեզ հաստատվել ձեր ճշմարիտ ինքնության մեջ:

Տղամարդիկ և կանայք այնպես են ստեղծված, որ լինեն առանձին՝ իրենց արտահայտմամբ, բայց ոչ բաժանված՝ իրենց նպատակով:

Այնպես չէր, որ Աստված ավելի շատ էր սիրում Ադամին և ավելի քիչ՝ Եվային: Ամենասկզբից Եվան միշտ Ադամի հետ էր: Թեև Ադամն անվանեց նրան, և նույնիսկ ուներ նրա կարիքը, Եվան միշտ Աստծո գաղափարն է եղել: Աստված տվեց Եվային նրա եզակի կանացի առանձնահատկությունները և ինքնաարտահայտումը: Կինը միշտ տղամարդու մեջ է եղել, և հենց դա է պատճառը, որ տղամարդու մոտ ամեն ինչ ավելի լավ է ստացվում կնոջ հետ, քան՝ առանց նրա (տե՛ս Ծննդ. 2.18): Եվայի ի հայտ գալը փոխեց Ադամի «լավ չէ»-ն՝ դարձնելով այն «շատ բարի»:

Աստծո Խոսքից մենք գիտենք, որ Աստված խորը քուն տվեց Ադամին, բացեց նրա կողը և կազմեց Եվային (տե՛ս Ծննդ. 2.21): Տղամարդիկ և կանայք յուրահատուկ են և տարբերվում են իրարից, բայց դա չի նշանակում, որ նրանք մասնատված կեսեր են: Նրանք երկու լիարժեք ամբողջություն են: Տղամարդիկ և կանայք այնպես են ստեղծված, որ լինեն առանձին՝ իրենց արտահայտմամբ, բայց ոչ բաժանված՝ իրենց նպատակով: Սա կարևոր է նշել, քանի որ մեղանչումից առաջ նրանց միջև չկար դերաբաշխում: Այդ իսկ պատճառով, երկուսն էլ կարող էին մեկ նպատակ ունենալ, սրտանց միաբան լինել, ինչպես նաև՝ մեկանալ մարմնական մերձեցման միջոցով:

Մի ողբերգական օր Եվան խաբվեց, իսկ Ադամը՝ ապստամբեց: Եվայի ընտրությունը չդարձրեց *բոլոր* կանանց՝ հակված դեպի խաբեությունը, ինչպես որ Ադամի դավաճանությունը չդարձրեց *բոլոր* տղամարդկանց՝ նախատրամադրված դեպի ապստամբությունը: Չափազանց հաճախ մարդիկ փորձում են պնդել, որ Ադամի մեղքն *ավելի փոքր չարիք* էր, քան Եվայինը: Ես լսել եմ, որ այն անվանում են «բացթողման մեղք»: Ռաբբին համաձայն չէր դրան: Նա հաստատեց Սուրբ գրքի ուսմունքն այս մասին.

> «Որովհետև ինչպես որ մեկ մարդու անհնազանդությամբ շատերը մեղավորներ եղան, այնպես էլ մեկի հնազանդությամբ շատերն արդարներ կլինեն» (Հռոմ. 5.19):

Ադամի մեղքը բացթողում չէր: Լավագույն դեպքում այն կարելի է *գիտակցված անհնազանդություն* անվանել, բայց որոշ աստվածաբաններ *դավադրական ապստամբություն* են անվանում այն:

Կարծում եմ՝ ինչ-որ առումով, Ադամն ու Եվան նաև ինքնակոչների պես վարվեցին. չէ՞ որ նրանք ուզում էին Աստծո նման լինել:

Մեր տանը, երբ մեր երեխաները գիտակցաբար անտեսում են ծնողների խոսքերը և լսում են իրենց ընկերներին կամ նույնիսկ՝ մեկը մյուսին, մենք չենք անվանում դա բացթողում, այլ՝ անհնազանդություն: Ջինվորական տեսանկյունից, հրամանին գիտակցաբար չենթարկվելը կոչվում է անհնազանդություն, ոչ թե բացթողում: Իսկ հիմա կարդացե՛ք, թե ինչպես է Աստված նկարագրում Ադամի անօրինությունը.

> «Որովհետև դու լսեցիր քո կնոջ խոսքը և կերար այն ծառից, որի համար պատվիրեցի քեզ՝ ասելով, որ նրանից չուտես, անիծյալ լինի երկիրը քո պատճառով...» (Ծնն. 3.17):

Ինչ-ինչ պատճառով առաջացել է մի միտում, որը փորձում է թեթևացնել Ադամի արարքը (այնքան էլ համոզված չեմ, թե ինչո՞ւ են մարդիկ ցանկանում պաշտպանել Ադամի որոշումները կամ արարքները. չէ՞ որ բոլորս արդեն փրկված ենք Քրիստոսում): Այս միտման համախոհները կոչ են անում տղամարդկանց ոտքի ելնել և լավ առաջնորդներ դառնալ, ինչին անձամբ ես սրտանց «այո՛ և

ամե՛ն» եմ ասում: Ես համաձայն եմ, որ մեզ խիստ անհրաժեշտ են տղամարդիկ, ովքեր օրինակ կդառնան այլ տղամարդկանց համար: Ինձ մտահոգություն է պատճառում այն, թե ինչպես են ոմանք պատկերացնում դա: Նրանք համոզված են, որ եկեղեցու տղամարդիկ լավագույնս կառաջնորդեն՝ լռեցնելով կանանց, և հիմնավորում են իրենց փաստարկը մեղանչման պատմությամբ:

Ես բազմաթիվ թերություններ եմ գտնում այս հիմնավորման և մոտեցման մեջ: Անկասկած, կարելի էր շատ բան կանխել, եթե Ադամը միջամտեր և խոսեր ճշմարտությունը: Շնորհիվ իր կանխագիտության և Աստծո ցուցումներին հնազանդվելուն՝ նա արժանի հակահարված կտար օձին կամ ստախոսին, ոչ թե՝ Եվային: Ի վերջո, Ադամը պետք է օգտագործեր իր ձայնը՝ օձին լռեցնելու համար. չէ՞ որ մեր պատերազմը մարմնի և արյան դեմ չէ: Նմանապես, տղամարդիկ պետք է օգտագործեն իրենց ձայնը, որպեսզի լռեցնեն չարին, ոչ թե կանանց, որոնց Աստված ստեղծել է Իր պատկերով և բարի է անվանել:

Մարդուն ապագա սխալներից պաշտպանելու լավագույն միջոցը հասկանալի ցուցումներն են, ոչ թե արգելքը: Այն, որ Եվան մեծ սխալ գործեց անցյալում, չպետք է լռեցնի նրա դուստրերի ձայնն ապագայում՝ նույն կերպով, ինչպես որ Ադամի մեղքը չպետք է գերության մեջ պահի իր որդիներին: Ավելի քան քսան դար շարունակ տղամարդիկ և կանայք կողք կողքի սովորել են եկեղեցում: Ժամանակն է, որ հասկանանք, թե ով ենք մենք Քրիստոսում, և առաջնորդենք միասին՝ կողք կողքի կանգնած, այնպես, ինչպես մենք ստեղծված ենք եղել պարտեզում: Տղամարդիկ պետք է առաջնորդեն տղամարդու պես, իսկ կանայք՝ կնոջ պես:

Այսօր մենք ունենք Հիսուսի օրինակը, ով ցույց տվեց մեզ, թե ինչպես է պետք շփվել սատանայի հետ.

> «Դե՛ն գնա, սատանա՛: Որովհետև գրվա՛ծ է, թե «Տիրոջը՝ քո Աստծուն երկրպագիր և միայն Նրան պաշտիր»» (Մատթ. 4.10):

Մենք պետք է կրկնենք Աստծո խոսքերը, ոչ թե ներքաշվենք տրամաբանական փաստարկների մեջ: Եկեք ծառայենք Աստծուն

այնպիսի ցնցող կերպով, որ ինքներս հավատքի կյանքով ապրելու կենդանի փաստարկներ դառնանք: Մեր մեծագույն օրինակը Հիսուսն է: Մենք պետք է գնանք՝ ինչպես որ Նա գնաց: Մենք պետք է հետևենք Նրան շատ ավելի, քան ցանկացած մարդու, ներառյալ՝ Պողոսին: Պողոսն ինքը խորհուրդ տվեց հետևել իրեն այն չափով միայն, որով ինքը հետևում էր Քրիստոսին. «Ինձ նմանող եղեք, ինչպես ես էլ՝ Քրիստոսին» (Ա Կորնթ. 11.1):

Սատանայի ստերը և Աստծո բժշկությունը

Սատանան թալանում է թե՛ տղամարդկանց, թե՛ կանանց, երբ մենք լսում ենք նրա պառակտիչ խորհուրդները և ամրապնդում ենք մեր սեռի դիրքերը՝ մյուս սեռի հաշվին: Ժամանակն անցնում է: Ժամանակն է հետևել Հիսուսի հանձնարարականին և փնտրել ու փրկել կորածին (տե՛ս Ղուկ. 19.10): Արդեն վաղուց ժամանակն է, որ եկեղեցին կենդանի և փայլուն օրինակ դառնա կոտրված և մասնատված աշխարհի համար, և ցույց տա, թե ինչպես պետք է ապրել միջռասայական, միջմշակութային և միջսերնդային հասարակության մեջ, և թե ինչպես պետք է միաբանել երկու սեռերը մեկ նպատակի շուրջ: Սխալ վերաբերվելով սեռերի խնդրին՝ մենք մասնատել և խոցել ենք երկու սեռերին էլ: Երբ վերականգնենք մեր աստվածային ինքնությունը, սեռերի բժշկությունը կսկսվի:

Երբեմն շփոթությունն այնքան մեծ է, որ կանայք իրենք են վիճարկում իրենց սեռային ինքնությունը՝ մտածելով, որ իրենք պետք է տղամարդ ծնված լինեին: Շատերը փորձում են «բժշկել» իրենց՝ փոխելով իրենց սեռը կամ դրսևորելով որձէգության վարքագիծ: Կարդացե՛ք Աստծո Խոսքը Եսայի մարգարեի միջոցով.

> «Ո՜հ ձեր խոտորնակությանը: Մի՞թե կավի պես կհամարվի բրուտը, որ շենքն ասի իր շինողին՝ նա ինձ չի շինել, և արարածն ասի իր Արարչին՝ Նա չի հասկանում» (Եսայի 29.16):

Հարցը հետևյալն է՝ արդյո՞ք մենք վստահում ենք Աստծուն: Արդյո՞ք մենք հավատում ենք, որ Նա բարի և իմաստուն

է և սխալ չի գործել՝ ձևավորելով մեզ մեր մայրերի որովայններում որպես դուստրեր: Հնարավո՞ր է արդյոք, որ Նա ունի նպատակ մեր կյանքում, այնինչ՝ մենք հիասթափված ենք, և որ մենք շրջանցում ենք Նրա նպատակը, երբ ինքներս ենք փորձում տնօրինել մեր կյանքը:

Հավատացե՛ք ինձ, ես հասկանում եմ այդ ցավը: Ես նույնպես գիտակցում եմ, որ շատերի համար այդ ցավն ավելի խորն է, քան ես երբևէ վերապրել եմ... բայցևայնպես, Աստված կարող է թափանցել ձեր սրտի խորքը և բժշկել այն, ինչը երբեք չեն կարող անել մարդու ձեռքերը: Ես հստակորեն հիշում եմ, որ վրդովմունքով էի մտածում այն մասին, որ ես կին եմ: Չգիտեմ՝ արդյո՞ք պատճառն անկայուն փոխհարաբերություններն էին իմ մոր հետ, թե՞ թշնամու կանխարգելիչ հարձակումը, որի նպատակն էր՝ ի չիք դարձնել Աստծո ծրագիրն իմ կյանքում: Անկախ այն բանից, թե ինչն էր դրա պատճառը՝ որոշ իրադարձություններ իմ կյանքում, փոխհարաբերություններն այլ կանանց հետ կամ իմ փորձառությունը եկեղեցում, փաստն այն էր, որ ես չէի սիրում կանացիության խոցելի կողմերը: Երբ փոքր էի, ես տղայի վարք ունեցող աղջիկ էի. ավելի շատ ընկերություն էի անում տղաների հետ, քան՝ աղջիկների: Տղաներն ավելի շատ էին դուր գալիս ինձ: Երբ եկավ իմ հասունացման շրջանը, թվում էր՝ ես այլմոլորակային էի, որին ստիպում էին ապրել վարդագույնի և գեղեցիկի աշխարհում: Աղջիկները խոսում էին ակնարկների և շշնջոցների լեզվով, որը ես չէի հասկանում, և վարվում էին այնպիսի շնորհքով և գեղեցկությամբ, որոնց ես՝ անշնորհք աղջիկս, չէի տիրապետում: Բարձր դասարաններում ես ջինս և արտահագուստ էի կրում, հիմնականում՝ որ ծածկեի իմ ոչ այնքան կանացի կառուցվածքը, ինչպես նաև թաքցնեի իմ ցավոտ ինքնագիտակցությունը:

Երբ Ջոնը և ես նշանվեցինք, ես փորձում էի բացատրել նրան, որ ունեմ կնոջ մարմին և տղամարդու ուղեղ (Ջոնն անմիջապես ասաց ինձ, որ դա անընդունելի է): Բայց դրական առումով, ես իրականում հավատում եմ, որ այդ կերպով Աստված պատրաս-

տում էր ինձ չորս որդիներ ունենալու համար: Ժամանակի ընթացքում Աստված բժշկեց ինձ: Նա հայտնեց իմ կանացիության արժեքը: Նրա ներկայության մեջ ամբողջ ամոթը, որով կրոնը պատել էր կնոջ պատկերը, փոխարինվեց պերճաշուք հանդերձներով: Նա թափանցեց իմ անձի խորքերը և տվեց ինձ խիզախություն, ուժ՝ վախի և զոհի մտածելակերպի փոխարեն, որոնք մայրս անգիտակցաբար ավելացրել էր իմ կանացիությանը: Ես սովորեցի սիրել իմ մարմինը ոչ միայն տեսքի համար, այլև կարողությունների: Դա մի ընթացք էր, որով կիսվել եմ շատ կանանց հետ, որպեսզի նրանք նույնպես բժշկություն գտնեն:

Բայց ի՞նչ կլիներ, եթե ես պայքարեի իմ կանացիության հետ այս ժամանակաշրջանում, երբ սեռային դերաբաշխումը խրախուսվում է և նույնիսկ ողջունելի է համարվում: Մեր մշակույթը խորհուրդ կտար ինձ անձամբ տնօրինել իրավիճակը և տղամարդ դառնալ: Բայց անելով դա՝ ես կկասեցնեի Աստծո բժշկարար ընթացքը, և կկորցնեի այն ամենը, ինչ մինչ այդ սովորել էի: Երբ դադարենք համեմատվել այլ մարդկանց հետ, մենք կկարողանանք ընդունել մեզ՝ թերություններով հանդերձ:

Այսպիսով, ի՞նչ քայլեր պետք է ձեռնարկեք, որպեսզի բժշկության ընթացքը սկսվի ձեր կյանքում:

1. *Աղոթեք:* Խնդրե՛ք Սուրբ Հոգուն ամբողջական դարձնել ձեր սիրտը և հայտնել ցանկացած սխալ մտածելակերպ կամ այն բնագավառները, որոնցում դուք անհնազանդ եք: Սեռական խտրականությունը և վրդովմունքը կարող է սողոսկել մեր սիրտը և աղավաղել մեր պատկերացումն ինքներս մեր և մեր կողքինների մասին: Աղոթե՛ք, որ տարածեք հաշտություն, ոչ թե պառակտում:
2. *Հնազանդեցրեք ձեր կամքն Աստծուն:* Միգուցե դուք զսպել եք ձեզ կամ թաքնվել եք մարդկային կանոնների ետևում, փոխարենը հնազանդվեիք այն ամենին, ինչ գիտեք և տեսել եք Աստվածաշնչում, ինչպես նաև՝ այն ամենին, ինչ հայտնվել է ձեզ աղոթքի մեջ: Միգուցե դուք թույլ եք տվել,

որ մարդկային վախը (կամ՝ կին լինելու վախը) ետ պահի ձեզ Աստծո կամքը կատարելուց: Հարցրե՛ք Աստծուն, թե ինչպես պետք է կատարեք Մեծ Հանձնարարականը ձեր կյանքի այս փուլում՝ հասկանալով, որ հաջորդ փուլում դուք կարող եք այլ կերպով կատարել այն:

3. *Ճանաչեք ձեր թշնամուն:* Մենք չենք պայքարում մարմնի և արյան դեմ: Երբ մենք երկմիտ ենք, կրկնակի լրտեսի նման ենք վարվում: Հակոբոսն ասում է մեզ, որ հենց որ հնազանդվենք Աստծուն, մենք պետք է հակառակվենք սատանային, և նա կփախչի մեզնից:
4. *Ուշադրություն դարձրեք ձեր խոսքերին և գործերին:* Ձեր խոսքերից և գործերից ի՞նչը կարող է սեռական խտրականություն առաջացնել: Եթե Սուրբ Հոգին հայտնել է այնպիսի բնագավառներ ձեր կյանքում, որոնցում դուք փոխզիջման եք գնացել, ամենայն հավանականությամբ, դուք ինչ-որ կերպով արտահայտել եք սեռական նախապաշարմունքներ, կամ՝ վրդովմունք ձեր սեռի պատճառով:
5. *Հաստատ դիրքորոշում ունեցեք:* Հստակ արժեքներ չունեցող մարդիկ կարող են խաբվել ցանկացած բանով: Այն մարդիկ, ովքեր դեմ են, որ կանայք և տղամարդիկ միասին գործեն, առանց գիտակցելու հակառակվում են Աստծո սկզբնական ծրագրին:
6. *Պայքարեք Քրիստոսի մարմնի միաբանության համար:* Տղամարդիկ և կանայք մրցակիցներ չեն: Մենք եղբայրներ և քույրեր ենք, ինչպես նաև՝ մտերիմ համախոհներ և մեկս մյուսի պահապանը: Մենք պետք է քայլենք կողք կողքի՝ ընկերական շփմամբ, փոխադարձ հարգանքով, նաև՝ եղբայրական և քույրական սիրով: Եվ մենք պետք է խրախուսենք այն պարգևները, որոնք կան մեր կյանքում: Աստված երբեք ձայն չէր տա կանանց, եթե ուզեր, որ նրանք լուռ լինեին: Աստված գիտեր, որ թե՛ Ադամը, թե՛ այս աշխարհը ունենալու էին կնոջ ձայնի և ազդեցության կարիքը:

Փոխլրացնող և փոխկապակցված

Ես ուզում եմ, որ իմ թոռնուհիները մտածեն, ուսումնասիրեն և հարցեր տան, որպեսզի ճշմարտապես սովորեն հավատքի մասին և գործնականորեն կիրառեն այն իրենց կյանքում: Մենք ասում ենք, որ կանայք կարող են վերստին ծնվել, բայց դեռևս կան ուսմունքներ և դրույթներ, որոնք ժխտում են, որ կանայք կարող են ճշմարտապես և լիովին ազատ լինել: Ավելի ճիշտ կլինի ասել, որ կանանց մեծ մասն ազատ է եկեղեցու սահմանափակումների մեջ, ոչ թե՝ Քրիստոսի Հանձնարարականի սահմաններում:

Սկսած Եդեմի պարտեզից՝ իմաստությունից զուրկ տղամարդիկ և կանայք ընդամենը մեղադրում են միմյանց իրենց սխալ որոշումների համար: Ոչ ոք երբեք ճշմարիտ առաջընթաց չի ունեցել՝ մեղադրելով և ամաչեցնելով դիմացինին: Մեղադրանքները և ամոթը պղտորում և աղոտացնում են և՛ որդիների, և՛ դուստրերի պատկերը: Նման վերաբերմունքը կրկին կեղտոտ և անվայել է դարձնում այն, ինչ Աստված մաքրել է Քրիստոսում:

Սեռերը ստեղծվել են աստվածային գեղեցկությունն արտահայտելու համար: Ցավոք, մենք զրկել ենք մեկս մյուսին մեր աստվածային արժանապատվությունից և գեղեցկությունից՝ փորձելով միմյանցից ստանալ հավանություն և ընդունելություն, որոնք կարող է տալ միայն Աստված: Աստված ստեղծել է մեզ, որ արժևորենք մեկս մյուսի տարբերությունները, ոչ թե նվաստացնենք կամ անարգենք դրանք:

Եվ այժմ մեր մերկությունն արդարություն է հագել Քրիստոսում: Այն տղամարդիկ և կանայք, ովքեր Նրանում են, հիշում են, որ իրենք համախոհներ են, ոչ թե թշնամիներ: Պողոսի խոսքերն Ա Կորնթացիների 11.10-12-ում օգնում են մեզ ավելի լավ հասկանալ, թե ինչպիսին մենք կարող ենք լինել և ինչպիսին պետք է լինենք մեկս մյուսի համար: Եկեք խոսք առ խոսք մեկնաբանենք այս հատվածը: Աստվածաշնչի «Ուղերձ» թարգմանությունն այսպես է վերծանում խոսք 10-ը.

«Ի դեպ, չափից շատ մի՛ խորասուզվեք տղամարդկանց և կանանց տարբերությունների մեջ: Ո՛չ տղամարդը, ո՛չ կինը չեն կարող մենակ ինչ-որ բան անել կամ նախապատվության հավակնել» (Ուղերձ):

Քրիստոսում տղամարդիկ և կանայք փոխկապակցված են, ոչ թե՝ անկախ: Մեր աղբյուրն Աստված է, բայց այս խոսքերն ուղղված են այն դարավոր մրցակցությանը, որը հայտնի է որպես սեռերի պայքար:

Մեր միջև տարբերությունների նպատակը՝ մեկս մյուսին փոխադարձաբար լրացնելն է: Փոխադարձ կախվածության և ընդունելության պայմաններում գոյություն չունեն գերազանցության և ստորակարգության սկզբունքներ: «Ուղերձ» թարգմանության բանաստեղծական շրջասությունը շարունակում է քանդել այս մրցակցությունը.

«Սկզբում ստեղծվեց տղամարդը՝ որպես Աստծո գեղեցիկ արտացոլք. սա ճշմարիտ է: Բայց կնոջ մարմնի գլուխն ակնհայտորեն գերազանցում է գեղեցկությամբ նրա «գլխին»՝ ամուսնուն» (խոսք 11, Ուղերձ):

Այս հատվածում Պողոսն անցում է կատարում տղամարդուց և կնոջից դեպի ավելի մասնավոր թեմայի՝ խոսելով կնոջ և ամուսնու մասին: Ինձ դուր է գալիս, թե ինչպես է այս հատվածն արժևորում երկու սեռերը: Իմ ամուսինը գեղեցկացնում է ինձ՝ սիրելով Աստծուն, ինձ և մեր երեխաներին. ես նույնպես ցանկանում եմ գեղեցկացնել նրան՝ սիրելով Աստծուն, մեր ընտանիքը և նրան: Հաջորդ խոսքից Պողոսը, դադարելով խոսել ամուսնության մասին, կրկին անդրադառնում է սեռերին:

«Ճիշտ է, որ առաջին կինը վերցվեց տղամարդուց, բայց դրանից հետո ամեն տղամարդ աշխարհ է գալիս կնոջից» (խոսք 12, Ուղերձ):

Կինը կազմվեց տղամարդու կողից, բայց արդեն դրանից հետո տղամարդն է կազմվում կնոջ որովայնում: Կինը ծնվեց մարդուց՝ Ադամից, բայց հետագայում բոլորս վերածնվեցինք երկրորդ Ադամից՝ Հիսուսից: Պողոսը շարունակում է.

«Եվ քանի որ ամեն ինչ, ըստ էության, Աստծուց է, եկեք դադարենք խոսակցություններն այն մասին, թե ով է առաջինը» (խոսք 12, Ուղերձ):

Մրցակցությունը, որի պատճառով մարդիկ շարունակ քննարկում են, թե ով է առաջինը, կդադարի, երբ մարդիկ հայտնություն ստանան այն մասին, թե ով է Աստված: Մենք պետք է վերականգնենք ճիշտ պատկերացումն Աստծո մասին: Մենք պետք է հասկանանք, որ միայն Աստված է սուրբ: Նա է առաջինը և վերջինը: Նա է մեր Ալֆան և Օմեգան: Ոչ ոք չի կարող առաջնորդել և սիրել այնպես, ինչպես մեր Հայրը:

Սա նշանակում է, որ Նա ավելի շատ չի սիրում որդիներին, և ավելի քիչ՝ դուստրերին, և ո՛չ էլ հավասարապես է սիրում սեռերին: Երբ մենք բարձրացնում ենք մի սեռը մյուսից, հեռանում ենք Աստծո պատկերից, քանի որ Նա ընտրեց սեռերը՝ Իր էությունն արտահայտելու համար:

Տղամարդիկ և կանայք առաջին եկեղեցում

Չունենալով ողջամիտ պատկերացում մեր պատմության մասին՝ հաճախ թերագնահատում ենք մեր ընթացքը: Այնուամենայնիվ, ես նույնիսկ կասկած չունեմ, որ Սուրբ Հոգին պատռում է այն քողը, որը թշնամին փորձել է դնել մեր մտքի վրա: Կարդալով Աստծո Խոսքը՝ մենք չենք կարող չնկատել, որ առաջին եկեղեցին՝ մի ուժ էր, որի հետ պետք էր հաշվի նստել: Երբ նրանց մշակույթը փորձեց սահմանափակել նրանց շարժումը, նրանք է՛լ ավելի շատացան և նոր տարածքներ գրավեցին: Նրանք չէին վախենում երկրային թագավորների հրամաններից, քանի որ արդեն ծնկի էին եկել Բարձրյալ Աստծո առջև: Նրանք *ամեն օր* տեսնում էին նշաններ և հրաշքներ: Նրանք ապրում էին այն գիտակցմամբ, որ իրենց գերագույն իշխանությունը գտնվում է անտեսանելի տիրույթում:

Նրանք առանձնացված էին Սուրբ Հոգու կողմից՝ սխրագործությունների համար: Մի՛ պատկերացրեք, որ նրանք հավաքվում էին ինչ-որ սրբարանում, և տղամարդիկ կանգնում էին մի կողմում, իսկ կանայք՝ մյուս: Նրանք հիմնականում հավաքվում էին

տներում, աշխատավայրում, գաղտնի վայրերում՝ կատակոմբներում, և նույնիսկ՝ նավերում և բանտերում: Այս հավատացյալները կանչված էին ամեն ցեղից, լեզվից և մշակույթից, բայց նրանք միաբան էին նույն Սուրբ Հոգով: Երկու սեռերն էլ միաբան կանգնած էին կողք կողքի՝ կազմելով մեկ մարմին, որը Քրիստոսի հարսնացուն էր: Երբ մենք մեկ ենք, չկա ոչ ոքի կողմը՝ բացի Աստծո կողմից: Նրանք տնից տուն պատմում էին Ավետարանը: Գործք 2.42-44-ում տեսնում ենք, թե ինչպես էր այս մարմինն աճում բնականոն կերպով.

> «Եվ միշտ հետևում էին առաքյալների վարդապետությանը և հաղորդությանը և հացի կտրելուն և աղոթքներին: Եվ ամեն անձի վրա վախ եկավ. շատ հրաշքներ և նշաններ էլ էին գործվում առաքյալների ձեռքով: Եվ բոլոր հավատացյալներն իրար հետ մեկտեղ էին, և ամեն բան հասարակաց ունեին»:

«Ամեն բան հասարակաց» արտահայտությունը չպետք է սահմանափակել նրանց կարիքներով. սրանում ընդգրկված էր նրանց երկրպագությունը, պաշտամունքը, շփումը, կերակուրը, աղոթքը և ունեցվածքը: «Հասարակաց» բառը նշանակում է՝ փոխադարձ, տարածված, առօրեական և համայնական:

Տղամարդիկ և կանայք այնքան մոտ էին իրար, որ կարող էին նվիրված լինել մեկը մյուսին և՛ շփման, և՛ ուսմունքի բնագավառներում: Ուսմունքն առանց շփման՝ չի ստեղծում համայնքային կյանք, որում մարդիկ ծառայում են միմյանց կարիքներին: Ուսուցումն առանց սեղանի շուրջ տեղի ունեցող քննարկման՝ կձևավորի մարդու մեջ «հոգևոր էլիտային» պատկանելու մտածելակերպ կամ կաղավաղի ճշմարտությունը նրա մտքում: Մեր սովորածը ստուգվում է այն բանով, թե ինչպես ենք մենք կյանքի կոչում ճշմարտությունը, ոչ թե այն բանով, թե որքան ճշմարտություն գիտենք: Շատ-շատերը ներքին հակասության գերիներ են. նրանք ունեն գիտելիք, բայց չեն ապրում ըստ իրենց իմացածի: Մեզ պետք է և՛ մեր ընտանիքը, և՛ մեր ընկերները, որպեսզի ճիշտ դիրքորոշում ունենանք և լիարժեք կիրառենք ճշմարտությունը:

Առաջին եկեղեցում կանայք ձայն ունեին: Եթե այդպես չլիներ, Անանիայի և Սափիրայի պատմությունն այլ կերպ կլիներ: Գործք 5.1-11-ում գրված է մի մարդու մասին, ով իր կնոջ հետ չէր. նա ստեց Պետրոսին և մահացած ընկավ: Երեք ժամ անց եկավ նրա կինը: Նա ոչինչ չգիտեր իր ամուսնու մահվան մասին, բայց գիտեր, թե ինչպես պետք է պատասխաներ, եթե իրեն հարցեր տային: Երբ Պետրոսը հարցրեց նրան, նա կրկնեց այն սուտը, որն ինքը և իր ամուսինը որոշել էին ասել, և նույնպես մահացած ընկավ: Ես ուզում եմ նշել հետևյալը. ըստ հնազանդության մասին այսօրվա ուսմունքի՝ նա պետք է ստեր, որպեսզի «ծածկեր կամ պատվեր իր ամուսնու ցանկությունը»: Բայց երբ Սափիրան որոշեց ստել՝ ճշմարտությունն ասելու փոխարեն, նա վճարեց դրա համար իր կյանքով: Նա սխալ կերպով գործածեց իր ձայնը: Նրա կյանքը կպահպանվեր, եթե նա ճիշտն ասեր Պետրոսին:

Աստծո անսահման ողորմության և շնորհքի հայտնության մեջ ոչ ոք չի կարող անտեսված լինել: Եվ կանայք, և՛ տղամարդիկ կարող են իրենց ներդրումն ունենալ: Նրանցից շատերի կյանքում սա տեղի էր ունենում առաջին անգամ: Աստված օծել էր նրանց, որպեսզի միասին վերականգնեին այն, ինչը խլեց մեղանչումը մարդկանցից: Տղամարդիկ և կանայք միասին գործում էին իրենց քաղաքներում և մինչև աշխարհի ծայրերը՝ շնորհքով և զորությամբ: Գործք 2.46,47-ն այսպես է նկարագրում առաջին եկեղեցու կյանքի ռիթմը.

> «Ամեն օր միաբանությամբ տաճարում էին լինում և հաց էին կտրում տներում և ուրախությամբ և սրտի միամտությամբ կերակուր էին ուտում, Աստծուն օրհնում էին և ամբողջ ժողովրդի առջև շնորհք ունեին, Եվ Տերն ամեն օր փրկվածներին ավելացնում էր եկեղեցու հետ»:

Այս խոսքերը պատկերում են այն ամենօրյա կյանքի ռիթմը, որի պատճառով առաջին եկեղեցին շնորհք ուներ: Հրեա հավատացյալները միասին տաճար էին գնում, հավաքվում էին տներում, որտեղ շփվում էին իրար հետ և միասին սեղան էին նստում՝ շնորհակալ և առատաբուխ սրտերով: Նրանց կյանքը

գովաբանում էր իրենց Աստծուն, և նրանք վայելում էին մարդկանց բարեհաճությունը:

Ինչո՞ւ մենք պետք է մտածենք, որ Հիսուսի հարսնացուն՝ Նրա եկեղեցին, պետք է մերժի, նվաստացնի, անարգի կամ թերագնահատի կանանց: Ինչո՞ւ մենք ընդունեցինք այն սուտը, որ տղամարդկանց նման հերոսներ չենք:

Չափազանց երկար ժամանակ թաքնված է եղել գաղափարն այն մասին, որ *տղամարդիկ և կանայք պետք է միասնաբար գործեն:* Այս լեցուն կյանքի անկումը, որը տեղի ունեցավ եսասիրության և նախապաշարմունքների պատճառով, խոցեց երկու սեռերն էլ:

Այնուամենայնիվ, սրանով մեր պատմությունը չի ավարտվում: Երկնային ծրագրում սեռերի նպատակը՝ մեկը մյուսին վերքեր հասցնելը չէ, ո՛չ էլ՝ մրցակցային պայքար ծավալելը: Մեզ միաբանում են մեր տարբերությունները, և մենք շատ ավելի ուժեղ ենք, երբ միասին ենք, քան՝ երբ առանձին ենք: Աստծո որդիների և դուստրերի միաբանությունը միգուցե դեռ երբեք ի հայտ չի եկել այս երկրի վրա՝ իր ամբողջ վեհությամբ: Եվ մեր միաբանության միջոցով ի հայտ կգա Աստծո պատկերը, և Աստծո փառքն ի վերջո կճառագի շլացուցիչ պայծառությամբ:

Հարցեր քննարկման համար

1. Ո՞ր մարտերում են տղամարդիկ ստիպված լինում ինքնուրույն պայքարել:
2. Որպես կին՝ դուք երբևէ զգացել եք լարվածություն՝ գտնվելով Աստծո կոչման և մարդկային ավանդույթներից առաջացած սահմանափակումների միջև:
3. Ինչպե՞ս եք կատարում Մեծ Հանձնարարականը:
4. Ինչպե՞ս ձեզ զգացիք «անհամապատասխան», «դյուրահավատ» և «հեշտորեն խաբվող» բառերից:
5. Ի՞նչ կարող եք անել, որպեսզի ավելի հմտորեն փոխանցեք Ավետարանը մարդկանց:
6. Ո՞ր բնագավառներում եք դուք հայտնվել մեղքի զգացման ծուղակում:

7

Վախի և սիրո պատերազմը

Սերը՝ անձի գեղեցկությունն է:

Սբ. Օգոստինոս

Վերջերս Ջոնը և ես մի հավաքույթ անցկացրինք մեր սիրելի եկեղեցիներից մեկում, որի ընթացքում պատասխանում էինք մարդկանց հարցերին: Այդ կիրակի երեկոյան հավաքույթի ներկաները զգում էին իրենց մեկ ընտանիքի պես: Ժամանակն արդեն ավարտվում էր, երբ ինչ-որ մեկը մի կարևոր հարց տվեց. «Ավելի քան երեսուն տարի տևող ամուսնությունից հետո կա՞ արդյոք այնպիսի բան, ինչը դուք այլ կերպ կանեիք, եթե հնարավորություն ունենայիք: Պատասխանելու հերթն իմն էր: Քանի որ քիչ ժամանակ էր մնացել, ես ուզում էի և՛ ճիշտ, և՛ հակիրճ պատասխան տալ: Խորը շունչ քաշեցի և խոստովանեցի. «Ես թույլ կտայի Ջոնին ավելի շատ սխալներ գործել, և ես ավելի անվախ կերպով կսիրեի նրան»:

Մարդկանց մեջ ասես մի ալիք անցավ: Իմ նստած տեղից տեսա, թե ինչպես և՛ տղամարդիկ, և՛ կանայք արագ սրբեցին իրենց արցունքները. ես լսեցի բազմաթիվ խորը հոգոցներ և նկատեցի լուռ գլխի շարժումներ՝ ի նշան համաձայնության: Վախը՝ սիրո մեծագույն թշնամին է... հավասար՝ ուժով, սակայն մահաբեր և կործանարար՝ իր էությամբ:

Այն ամենի մեծ մասը, ինչից ես վախենում էի մեր ամուսնության մեջ, այդպես էլ չիրականացավ: Այն հոգսերը, որոնք

տանջում էին ինձ գիշերը, միայն կնճիռներ ավելացրին իմ դեմքին: Դրանք ընդամենը մի վրձնախազ էին իմ կյանքի կտավին: Եվ պատճառն այն չէր, որ ես լավ էի նկարում, այլ՝ որ Աստված զարմանալիորեն հավատարիմ էր իմ հանդեպ:

Ինձ դուր չի գալիս սխալներ գործել, իմ ամուսնուն՝ ևս, սակայն ետ նայելով՝ ես ավելի շատ ռիսկերի կդիմեի: Մինչև Երկնքում հայտնվելը ես չեմ իմանա, թե որքան բաներ է վախը գողացել երկուսիցս էլ: Ես մի բան գիտեմ... վախը սարսափելի խորհրդատու է ամուսնության մեջ: Վախը կաթվածահար է անում և գերում է այն ամենը, ինչ սերը ձգտում է կյանքի կոչել: Հասկանում ենք, թե՝ ոչ, սերը և ռիսկը սերտորեն փոխկապակցված են:

Ես մեծացել եմ մի ընտանիքում, որտեղ իշխում էր վախը, ոչ թե սերը: Վախը մշտապես ձայն ուներ իմ ծնողների ամուսնության մեջ: Այն թափանցում էր նրանց ընկերական հարաբերությունների մեջ և նույնիսկ սպառում էր մեր ընտանիքի ֆինանսները: Մեր ընտանիքում երբեք չկար բավարար գումար և բավականաչափ սեր. չկային մարդիկ, որոնց կարելի էր վստահել: Վախը կործանում էր ազդարարում մեր գեղեցիկ տան սենյակներում. այն ասես անդրադարձվում էր դատարկ պատերից, որոնց վրա փակցված չէր ոչ մի նկար: Իմ հայրը շինարար էր, բայց վախն այնպես արեց, որ այն տներում, որոնցում նա ապրում էր, չկար ընտանեկան մթնոլորտ: Անթիվ գիշերներ եղբայրս և ես պառկած էինք մեր մահճակալներին և չէինք կարողանում քնել, քանի որ մեր ծնողները կռվում էին մինչև ուշ գիշեր: Ես գրառումներ էի անում իմ օրագրում լապտերի լույսի տակ և խոստումներ էի տալիս ինքս ինձ խավարում: Ես մտածում էի, որ այդ խանդավառված գրառումները կպաշտպանեին ինձ: Ես խոստացա ինքս ինձ, որ *երբեք* խոցելի չեմ լինի: Իմ ծնողներն ամուսնալուծվեցին, այն էլ՝ երկու անգամ և, ի վերջո, ամեն մեկը գնաց իր ճանապարհով՝ որպես թշնամիներ, ոչ թե ընկերներ:

Երբ ես քրիստոնյա դարձա, իմ սիրտն ընտանիք գտավ, բայց դա չէր նշանակում, որ ես գիտեի, թե ինչպես վարվեմ ընտանիքում: Մեր ամուսնության առաջին տասը տարում ես պետք է բախվեի բազմաթիվ անվտանգության ցանցերի, որոնք կառուցել

էի մանկության տարիներին: Այն, որ ես հրաժարվում էի խոցված լինել, նշանակում էր, որ չգիտեի, թե ինչպես ներել և ներում ստանալ: Ես խճճվել էի այդ ցանցերի մեջ, և դրանք գրեթե կործանեցին իմ ամուսնությունը: Իմ ամուսինը բոլորովին նման չէր իմ հորը, իսկ ես իմ մայրը չէի, բայց մեր միջև անհամաձայնություն էր լինում: Ես հիշում էի այն վիրավորական խոսքերը, որոնք լսել էի, չնայած՝ ծնողներս մտածում էին, որ ես խորը քնած եմ:

Ես թույլ էի տալիս, որ իմ ծնողների թողած վախի ժառանգությունը թափանցեր իմ ապագան. ես պետք է կանգ առնեի, քանի դեռ այն իշխանություն չէր ստացել նաև իմ ընտանիքում: Ջոնի անկատարելությունները բացահայտում էին իմ իսկ թերությունները շատ ավելի մեծ չափով, քան ես մտածում էի: Փոխարենը վարվեի ըստ այն ճշմարտության, որը գիտեի, ես վարվում էի ըստ այն սցենարի, որը սովորել էի մանկությանս տարիներին:

Թեև ինձ շատ բան էր ներվել, ես ժլատորեն էի ողորմում Ջոնին: Մեր ամուսնական ուխտն արագորեն վերածվում էր պայմանագրի, և այդ ընթացքում մեր սերը նվազում էր:

Ես հրաժարվում էի համարձակորեն սիրել Ջոնին՝ *իմ* վախերի պատճառով:

Փորձելով պաշտպանել ինքս ինձ՝ ես սկսեցի փակել իմ սիրտը նրա համար: Մեր ամուսնության առաջին մի քանի տարվա ընթացքում ես իմացա, որ Ջոնը կապված էր պոռնոգրաֆիայով և ձեռնաշարժությամբ (Ջոնը և ես խոսել ենք այս մասին՝ առանց թաքցնելու): Մոռանալով, թե որքան ողորմած գտնվեց Ջոնը իմ հանդեպ, երբ իմացավ իմ անցյալը, ես սկսեցի հեռանալ նրանից: Երբ ի հայտ եկավ Ջոնի մեղքը, Հիսուսի խրատն այն մասին, որ մենք պետք է ներենք այնպես, ինչպես որ ներվել ենք, անհայտացավ ինձ համար: Ես ապրում էի վախի մեջ և ամաչեցնում էի նրան, մինչ նա փորձում էր ազատվել դրանից՝ ստանալով ինձնից աննշան կամ ոչ մի աջակցություն: Ես չէի վերաբերվում դրան որպես *մեր* խնդրի... այդ խնդիրը նրանն էր: Ես չէի օգնում նրան, մասամբ՝ այն պատճառով, որ սկսում էի զգալ իմ անցյալի ճնշումը և, հետևաբար, սկսում էի հավատալ, որ արժանի չէի ավելի լավ կյանքի:

Մենք սկսեցինք անդադար կռվել: Ես զգացմունքներս սառեցրի նրա նկատմամբ և սկսեցի հեռվից հետևել, թե ինչպես էր նա պայքարում այդ խնդրի հետ: Ինչ-որ առումով, դատելով նրան՝ ես ապահով էի զգում ինձ: Եթե նա չփոխվեր, ես ստիպված չէի լինի ներել նրան: Դա լարվածություն առաջացրեց նաև մեր կյանքի այլ բնագավառներում: Անկասկած, այդ պատճառով մեր ամուսնության առաջին տարիներն ավելի ծանր էին, քան պետք է լինեին:

Մի երեկո ես աղաղակեցի Աստծուն իմ ամբողջ բարկությունից և կոտրված սրտից. «Ես կներեմ նրան, երբ նա փոխվի»:

Այդ ժամանակ վստահությունը Ջոնի և իմ միջև լիովին խաթարված էր, և ես չէի ուզում կրկին հիասթափվել: Աստված պատասխանեց իմ հայտարարությանը մի հարցով. «Դու վստահո՞ւմ ես Ինձ, Լի՛զա»:

«Այո՛»:

«Լավ: Ես ուզում եմ, որ ներես Ջոնին, որպեսզի նա կարողանա փոխվել»: Նա նույնիսկ տվեց ինձ հետևյալ խոսքերը, որ ասեի Ջոնին. «Ես հավատում եմ, որ դու ուզում ես փոխվել, և ես ներում եմ քեզ»:

Դա լիովին հակասում էր իմ սովորական դարձած սցենարին, որում գրված էր. «Ես կհավատամ, որ դու զղջում ես, երբ փոխվես»:

Այս մտածելակերպն այնքա՜ն հեռու էր այն ամենից, ինչը ծանոթ էր ինձ, որ ես գիտեի՝ Աստված էր առաջնորդում ինձ: Երբ ես անպայմանական ողորմություն ցուցաբերեցի Ջոնի հանդեպ, երկուսիս կյանքում էլ բժշկություն սկսվեց: Նա կարողացավ դուրս գալ ամոթի խավարից դեպի լույսը և ազատություն գտնել իր կապվածությունից: Այդ փոփոխությունն իմ ներսում շրջադարձային պահ էր. ես կարող էի վստահել անփոփոխ Աստծուն:

Անվախ սեր

Անվախ սերը հիմնված չէ մարդու վարքի վրա, այլ՝ Աստծո սիրո և հավատարմության: Երբ խոստովանում եմ իմ մեղքերը և դժվարությունները Հորը՝ Հիսուսի անունով, Նա երբեք չի ամաչեցնում ինձ: Նա հավատում է, որ իմ ապագան ավելի լավն է լինելու:

Այնքան էլ անսովոր չէ, որ երբ մարդիկ հիասթափեցնում են մեզ, մենք սկսում ենք ժլատորեն կիսվել մեր սիրով՝ նրանց օրինազանցությունների համեմատ, որպեսզի նվազեցնենք դրանց հավանականությունն ապագայում: Վախենալով լիովին նվիրվելուց՝ մենք ետ ենք քաշվում: Կ. Ս. Լյուիսն իմաստուն կերպով բացատրում է այս մոտեցման սխալը իր *«Չորս սերեր»* գրքում.

> «Սիրելը ընդհանրապես նշանակում է խոցելի լինել: Սիրեք ցանկացած բան, և ձեր սիրտը կխոցվի, և միգուցե նաև կոտրվի: Եթե ուզում եք անխաթար պահել ձեր սիրտը, մի՛ տվեք այն ոչ ոքի, նույնիսկ՝ ոչ մի կենդանու: Խնամքով փաթաթեք այն նախասիրություններով և փոքրիկ ճոխություններով. խուսափեք ցանկացած բարդ իրավիճակներից: Ապահով փակեք այն ձեր եսասիրության արկղում կամ դագաղում: Բայց ապահով, խավար, անշարժ և անօդ արկղիկի մեջ այն կփոխվի: Չի կոտրվի. այն կդառնա կարծրացած, անթափանցելի և անուղղելի: Սիրել՝ նշանակում է խոցելի լինել»[1]:

Խնդրեմ. *սիրել՝ նշանակում է խոցելի լինել*: Միգուցե մեզ դուր չգա այս զուգադրումը, բայց ես հասկացել եմ, որ պարզապես անհնար է խուսափել դրանից (և հավատացեք ինձ՝ ես փորձել եմ անել դա): Բայց մի՛ ենթադրեք, որ *խոցելի* լինելը նշանակում է, որ ձեզ պետք է *ոտնահարեն:* Ավելի ճիշտ կլինի ասել, որ այդպես վարվելով՝ դուք *արդարացում* կստանաք, քանի որ սերը երբեք չի ձախողվում:

Եկեք մի փոքր ավելի խորը ուսումնասիրենք խոցելի լինելու վտանգը: *«Խոցելի»* բառի սահմանումներից մեկը *«մերկացված»* բառն է: *Խոցելիությունը* կարելի է հեշտությամբ նույնացնել *մերկության* հետ: Մերկ լինելը վտանգավոր է, քանի որ ոչինչ թաքնված և պաշտպանված չէ: Սիրո կատարյալ դրսևորումը այնպիսի վիճակ է, որում դուք մերկ եք և չեք ամաչում:

Մեր մշակույթում մերկություն ասելով՝ մարդիկ անմիջապես մտածում են սեռականի մասին: Ես ուզում եմ ցույց տալ ձեզ, որ մերկ և անվախ լինելը նշանակում է բացել ձեր սիրտը: Մենք ամենաուժեղ դիրքում ենք, երբ բաց սրտով կանգնում ենք մեր Աստծո առջև: Դա անտրամաբանական է թվում, բայց շատ

ավելի լավ է մերկացած կանգնել Աստծո առջև, քան ապարդյուն ծածկել մեր մարդկային էությունը ամոթի ցնցոտիներով և ինքնաարդարացման հանդերձներով:

Հիսուսը խոցելի դարձավ մեր փոխարեն. Նա թողեց Իր աստվածային բնությունը և դարձավ մեզ նման, որպեսզի մենք կարողանայինք դառնալ Իր նման: Հիսուսը խոցելի դարձավ, որ հայտներ մեզ Աստծո սերը: Ահա թե ինչու մենք կարող ենք սիրել առանց վախի... հավատալ վրդովեցուցիչ կերպով... և հուսալ անասելի բաների:

Եթե ուզում եք սիրել առանց վախի, ևս մեկ քայլ արեք և հավատացեք այնպիսի բաների համար, որոնք կվրդովեցնեն մարդկանց: Խարսխեք ձեր հույսերը սարսափ առաջացնող խորը ջրերում:

Մնում են հավատքը, հույսը և սերը: Այս երեքը ներդաշնակ են մեկը մյուսի հետ, որպեսզի կանգուն մնալու զորություն տան մեզ: Այս երեք ուժերից մեծագույնը սերն է: Առանց սիրո չկան ճշմարիտ հավատքի քայլեր, և առանց սիրո չկա հույս:

Աստված սեր է: Սերը հավիտենական է: Սերը չի ձախողվում. այն ամենը, ինչը վստահված է սիրուն, երբեք չի կորչի. այն ամենը, ինչը ծնված է սիրուց, չի կարող մահանալ: Այնուամենայնիվ, կան վայրեր, որոնցում սերը չի աճում: Այն չի կարող ծաղկունք ապրել իր մրցակցի՝ վախի կողքին: Վախը վերջ չունի. իրականում, վախը փակուղի է: Վախը պիղծ հոգի է, որը տանջանք է բերում: Վախը խորհուրդներ է տալիս իր գահից, որը դրված է կասկածի շուքի ներքո, իսկ սերը ստանում է իր իմաստությունը հավատքի լույսից: Եթե չափազանց երկար ժամանակ ականջ դնեք վախի խորհուրդներին... դուք կձախողվեք:

Վախի հակադրությունը հավատքը չէ, և ո՛չ էլ՝ խիզախությունը... այլ՝ սերը:

Տարիներ առաջ, երբ գրում էի իմ առաջին գիրքը, հայտնություն ստացա, որ վախի հակադրությունը հավատքը չէ, և ո՛չ էլ՝ խիզախությունը... այլ՝ սերը: Միգուցե ես հիշեցի իմ մանկության դասը «Օզ երկրի հրաշագործը» հեքիաթից, որում Վախկոտ

Առյուծը խիզախ է դառնում սիրո շնորհիվ: Այս գաղափարն իսկապես բացվեց ինձ համար, երբ ես տեղադրեցի վախի բացասական հատկանիշները Ա Կորնթացիների 13-րդ գլխի մի հատվածում.

> «Վախն անհամբեր է, դառն է: Վախը նախանձում է, գոռոզանում է, հպարտանում է: Վախը լրբանում է, իրենն է որոնում, բարկանում է, չարն է մտածում, չի ուրախանում ճշմարտության հետ, այլ՝ անիրավության պատճառով: Վախը ոչինչ չի հանդուրժում, ոչնչի չի հավատում, ոչ մի բանի համար հույս չունի, ոչնչի չի դիմանում: Վախը կվերջանա»:

Վախի պտուղը և դրդապատճառները հակառակ են սիրո ճանապարհներին: Ցանկացած բարի բան, որը ես արել եմ, և ցանկացած դաս, որը քաղել եմ կյանքում, տեղի է ունեցել այն բանից հետո, երբ հեռացրել եմ վախի քողը և գնացել եմ առաջ:

Գոյություն ունեն սուր զգացողություն փնտրողներ, ովքեր սիրում են շոշափել վտանգը: Նրանք համարձակ են. բայց միայն սիրողներն են ճշմարտապես անվախ:

Աստված սեր է: Սերն անվախ է: Աստված անվախ է: Մենք Աստծունն ենք: Մենք կարող ենք սիրել՝ առանց վախենալու: Մենք կարող ենք սիրել՝ առանց վախենալու, երբ ստանում ենք Աստծո սերը: Նրանք, ովքեր սիրում են առանց վախի, ապրում են առանց վախի:

Միգուցե այս հաջորդականությունն ակնհայտ է թվում, բայց շատ հավատացյալներ այնպես են վարվում, ասես Աստված հանկարծակիի է եկել: Մենք վախենում կամ բարկանում ենք մեր տեսածի և լսածի պատճառով և պատկերացնում ենք, որ Նրա արձագանքը դաժանությանը, չարությանը և աղետալի իրավիճակներին՝ կլինի ճիշտ այնպիսին, ինչպիսին մերն է: Բայց այդպես չէ:

Կատարյալ սեր

Եթե խիզախ մարդկանց դրդապատճառը սերը չէ, նրանք պարզապես ցուցադրում են իրենց խիզախությունը: Այդպիսինների շարժառիթը մարդկանց տպավորելն է, ոչ թե օրինակելի սեր

ցուցաբերելը: Համարձակ *թվալը* բավական չէ, քանի որ ամենահամարձակ քայլը, որը մարդը կարող է անել, մեկ այլ մարդու համար իրեն վտանգի ենթարկելն է: Նշանակում է՝ լինում են պահեր, երբ մենք ցած ենք դնում մեր կյանքը, ոչ թե բարձրանում՝ պատերազմելու համար:

> «Ոչ ոք նրանից ավելի մեծ սեր չունի, քան որ մեկն իր անձը դնի իր բարեկամների համար» (Հովհ. 15.13):

«Ուղերձ» թարգմանության մեջ գրված է.

> «Ահա սիրելու լավագույն ձևը. ռիսկի ենթարկեք ձեր կյանքը՝ ձեր ընկերների համար» (Ուղերձ):

Ոչ թե սեփական անձը ցուցադրելու համար... այլ՝ ընկերների համար: Ա Կորնթացիների 13.3-ն այսպես է կշռում զոհաբերությունը, որում սեր չկա.

> «Եթե իմ բոլոր ապրանքներն աղքատներին ուտեցնեմ և իմ մարմինը մատնեմ, որ այրվի, բայց սեր չունեմ, ես ոչ մի օգուտ չեմ ունենա»:

Աղքատության երդումը կամ նահատակությունը *առանց սիրո*՝ ընդամենը կրոնական զոհաբերություն է:

Հիսուսը խորապես սիրված էր Իր Հորից, և Նա որոշեց սիրել մեզ միևնույն խորությամբ, որով Հայրը սիրեց Իրեն: Սերը ուժ տվեց Նրան, որպեսզի Նա հավատքով համբերեր Իր հույսի տեսիլքի, այսինքն՝ մեզ համար:

Հիսուսը սիրում էր ինձ՝ անկախ իմ անցյալից: Նա չէր վախենում, որ ես սխալներ կգործեի ապագայում, և նույնիսկ գիտեր, որ դա տեղի էր ունենալու: Թեև բոլորս ենք *սխալներ գործում*, դա չի նշանակում, որ դուք սխալմունք եք: Եթե մտածում եք, որ դուք սխալմունք եք... նշանակում է՝ դուք սխալվում եք:

Թեև ես մեղանչում եմ, դա չի նշանակում, որ ես մեղք եմ: Անկախ այն բանից, թե ինչպես եմ զգում ինձ, Հիսուսն արդարացրել է ինձ: Ամենից անվախ և սիրով լցված պատասխանը, որով ես կարող եմ արդարացնել Նրա հույսերն իմ հանդեպ, իմ հնազանդ կյանքով Նրա հավատքը պատվելն է:

«*Աստված Նրան*, որ մեղք չգիտեր, մեզ համար *մեղք արեց*, որ մենք Աստծո արդարությունը լինենք Նրանում» (Բ Կորնթ. 5.21):

Հիսուսը խոստացավ լինել այնպիսի պատասխան, որը շատ ավելի մեծ է մեր ցանկացած խնդրից: Դուք կարող եք վատնել ձեր ամբողջ ժամանակը և ուժերը՝ կենտրոնանալով ձեր մեղքի վրա, և կարճ ժամանակ անց այլևս ոչինչ չեք տեսնի՝ բացի ձեր մեղքից: Դուք կլանված կլինեք ձեր մեղավորությամբ, և երբ արդեն չեք դիմանա այդ վիճակին, կսկսեք նայել այլ մարդկանց մեղքերին: Ես չեմ զարմանում՝ իմանալով, որ այն առաջնորդը, ով խստորեն է վարվում մարդկանց հետ, ամենից խստորեն է վարվում ինքն իր հետ: Երբ նայում եմ ինձ, ես թերություններ եմ տեսնում, իսկ երբ նայում եմ Քրիստոսին, իմ անկատարելությունները անհայտանում են Նրա պայծառության մեջ: Ինձ շատ ավելի դուր է գալիս այն, ինչ Նա է ցույց տալիս:

«Նրան են մտիկ տալիս և լուսավորվում, և նրանց երեսը չի ամաչի» (Սաղմ. 34.5):

Հիսուսը թույլ չի տալիս, որ մեր մեղքերը և ստվերները ծածկեն մեզնից Իր սերը: Երբ մենք խոցելի ենք զգում մեզ, դա լավագույն պահն է, որ հույսով բարձրացնենք մեր հայացքը, փոխարենը ամոթով թաքցնենք այն: Նրա կատարյալ սերն ընդդիմանում է մեր բոլոր վախերին: Ինչո՞ւ եմ ես թույլ տալիս, որ իմ անկատար վախերն ընդդիմանան Նրա անթերի սիրուն: Ես սովորել եմ, որ կարող եմ վստահել Նրան, նույնիսկ եթե ոչինչ չեմ հասկանում: Պատճառն այն է, որ Աստված սիրում է անզուգական կերպով: Նա որոշեց սիրել ինձ, և այդ պատճառով ես որոշեցի հուսալ Նրան: Թույլ տվեք մի փոքր փոփոխել Սաղմոս 91-ի խոսքերից մեկը, որպեսզի ցույց տամ Աստծո սերը կանանց հանդեպ:

«Որովհետև այս կինը սիրով հարեց Ինձ, և Ես կփրկեմ նրան: Ես կպաշտպանեմ նրան, որովհետև նա ճանաչում է Իմ անունը» (խոսք 14):

Եթե իսկապես մտածեք... եթե սերը ոչ մի դեպքում չի ձախողվում, ինչո՞ւ է երբեմն այն ռիսկի ենթարկում մեզ: Պատասխանն

այն է, որ սերն ի զորու է բժշկել ցանկացած վերք, որը կյանքը հասցնում է մեզ:

Գոյություն ունեն անվախ կերպով սիրելու բազմաթիվ միջոցներ:

Ձեր կողակցին համարձակ կերպով սիրելը՝ ընդամենը մեկ բնագավառ է: Մենք պետք է սիրենք առանց վախի նաև մեր ծնողներին և երեխաներին: Մեր հարաբերությունները մեր ընկերների հետ պետք է կառուցվեն սիրո վրա, ոչ թե՝ նախանձի, սեփականատիրական վերաբերմունքի և վախի: Նույնպես, դուք կարող եք սիրել այն, թե ինչով եք զբաղվում և որտեղ եք աշխատում: Դուք կարող եք սիրել այն փաստը, որ դուք որևէ կազմակերպության կամ որևէ եկեղեցու մասնիկ եք: Դուք կարող եք սիրել գրքեր կարդալ և ծիծաղել: Որ բնագավառում էլ սեր գտնեք, վաղ թե ուշ, դրանում կգտնեք նաև դժվարություններ, նույնիսկ՝ հիասթափություններ:

Այս պնդմամբ մենք անցնում ենք հաջորդ քայլին՝ մեր թշնամիներին սիրելուն: Ինչո՞ւ Հիսուսը նման բան պատվիրեց:

Քանի որ սա այն սերն է, որն առանձնացնում է ոչխարներին՝ այծերից: Մենք աչքի ենք ընկնում, երբ սիրում ենք նրանց, ովքեր մեր վատն են ցանկանում: Երբ դուք *որոշում եք* սիրել նրանց, ովքեր փորձում են ստրկացնել և վնասել ձեզ, ինչ-որ բան փոխվում է: Նույնիսկ եթե ձեր հանգամանքները չփոխվեն, դուք այլևս ծուղակի մեջ չեք լինի. դուք ազատ կլինեք:

Ես հիշում եմ, որ կարդում էի մի ստրուկի մասին, որը 1860–1865 թթ.-ին Հյուսիսային Ամերիկայում տեղի ունեցած քաղաքացիական պատերազմի ժամանակ որոշում կայացրեց բժիշկների մոտ տանել իր տիրոջը (ով հարավային նահանգների կողմնակից էր), փոխարենը փախչեր և թողներ նրան մարտի դաշտում: Դա հեշտ որոշում չէր, բայց նրա որոշումը ցույց էր տալիս, որ նա արդեն իսկ լիովին ազատ մարդ էր: Այդ մարդու արարքն ազատ արձակեց նրան շատ ավելի վաղ, քան Միացյալ բանակը պարտության մատնեց ապստամբներին:

Ինչ-որ մեկը կարող է ամեն օր ազատություն հռչակել ձեր կյանքում, իսկ դուք կարող եք ընտրել ստրկությունը: Կամ դուք

կարող եք որոշում կայացնել, որ ազատ կապրեք, նույնիսկ եթե ոմանք հիմարաբար կարծում են, որ դուք պատկանում եք իրենց: Ես հասկանում եմ, որ միգուցե դուք ձեր կյանքում երբեք չբախվեք փաստացի ստրկության. այնուամենայնիվ, այն, որ մարդիկ կարծում են, որ դուք ինչ-որ բան եք պարտք իրենց, նույնպես պարտավորության տեսակ է: Կան մարդիկ, ովքեր կարծես ազատ են, բայց ապրում են գերության մեջ: Դուք չեք կարող վերահսկել մարդկանց խոսքերը կամ կարծիքը ձեր մասին, բայց կարող եք որոշել, թե ինչպես եք արձագանքելու դրանց:

Սերը որոշում է կայացնում. վախը հակազդում է:

Սերը՝ ազատություն է. վախը՝ գերություն:

Կատարյալ սերը հեռացնում է վախը:

Միևնույն է՝ սիրե՛ք

Ստորև բերված Քենթ Մ. Քեյթի «Պարադոքսալ պատվիրաններ»-ը հաճախ վերագրում են Մայր Թերեզային, քանի որ նա մշտապես պահում էր դրանք իր առջև՝ որպես հիշեցում: Համոզված եմ, որ դուք լսել եք որոշ հատվածներ այս նյութից, բայց ես ներկայացնում եմ այն ամբողջությամբ.

Պարադոքսալ պատվիրաններ

Մարդիկ անտրամաբանական, անխոհեմ և եսակենտրոն են:
Միևնույն է՝ սիրեք նրանց:

Եթե բարի գործեք, մարդիկ կմեղադրեն ձեզ ծածուկ եսասիրական շարժառիթների մեջ:
Միևնույն է՝ բարի գործեք:

Եթե հաջողության հասնեք, դուք ձեռք կբերեք կեղծ ընկերներ և իրական թշնամիներ:
Միևնույն է՝ հաջողության հասեք:

Այն բարին, որը դուք գործում եք այսօր, կմոռացվի վաղը:
Միևնույն է՝ բարի գործեք:

Ազնվությունը և անկեղծությունը խոցելի կդարձնեն ձեզ:
Միևնույն է՝ ազնիվ և անկեղծ եղեք:

Մեծագույն գաղափարներ կրող մեծագույն տղամարդիկ և կանայք կարող են սպանվել նեղ միտք ունեցող աննշան տղամարդկանց և կանանց կողմից:
Միևնույն է՝ լայն մտածեք:

Մարդիկ ներողամտորեն են վերաբերվում թույլերին, բայց հետևում են միայն ուժեղներին:
Միևնույն է՝ պայքարեք մի քանի թույլերի համար:

Այն, ինչը դուք տարիներ շարունակ կառուցել եք, կարող է կործանվել մեկ օրում:
Միևնույն է՝ շարունակեք կառուցել:

Մարդիկ իրականում օգնության կարիք ունեն, բայց նրանք կարող են հարձակվել ձեզ վրա, երբ սկսեք օգնել նրանց:
Միևնույն է՝ օգնեք մարդկանց:

Տվեք այս աշխարհին ձեր ունեցած լավագույնը, և դուք ապտակ կստանաք:
Միևնույն է՝ տվեք այս աշխարհին ձեր ունեցած լավագույնը[2]*:*

Մարդիկ կհիասթափեցնեն ձեզ... միևնույն է՝ սիրեք նրանց: Ես այնքա՜ն բաներ եմ գտնում Քեյթի խոսքերում, որոնք վերաբերում են մարդկանց հետ իմ հարաբերություններին: Դուք երբևէ հիասթափեցրե՞լ եք մարդկանց: Ես արել եմ դա: Միգուցե նրանք տարուբերել են գլուխները և հեռացել են ինձնից՝ մրթմրթալով. «Ինչպե՜ս հիասթափվեցի նրանից»: Թշնամիները և նույնիսկ ընկերները կխոցեն և կդավաճանեն ձեզ: Բայց դուք գիտեք, թե ինչ պետք է անեք... միևնույն է՝ սիրեք նրանց: Եթե ուզում եք կառուցել կյանք՝ առանց մրցակցության, դուք պետք է վեր լինեք ձեր մարդկային դատողությունից և կարողություններից:

Ես գիտեմ՝ միգուցե սկզբում սա անիմաստ թվա, բայց եթե դուք արժանապատվորեն վերաբերվեք մարդկանց՝ թույլ տալով նրանց սովորել իրենց սխալներից, ապագայում նրանց մոտ ամեն ինչ ավելի լավ կստացվի:

Ցավոք, ես զգում եմ, որ պետք է մի վերապահում անեմ: Սխալներ ասելով՝ ես նկատի չունեմ բռնություն, դավաճանություն կամ ապօրինի գործողություններ: Խոսքը պարզապես ձախողումների, թյուրըմբռնումների և սխալ կարծիքների մասին է: Ես չեմ խոսում այլասերվածությունից, դաժանությունից կամ քինախնդրությունից դրդված արարքների մասին: Ես խոսում եմ այն ձախողումների մասին, որոնք պատահում են ամեն մեկիս հետ՝ ճիշտ ճանապարհով ընթանալիս:

Եվ արդարները, և անօրենները սխալվում են, թուլանում են և ընկնում են: Միակ տարբերությունն այն է, որ սերը դրդում է արդարներին ոտքի ելնել: Անօրենները ընկած են մնում և հաճախ փորձում են իրենց մոտ իջեցնել ուրիշներին, բայց արդարները ոտքի են ելնում, բարձրացնում են մյուսներին և շարունակում են առաջ գնալ (տե՛ս Առակ. 24.16): Սերը միշտ որոշում է կրկին ոտքի ելնել.

> «Բայց ճշմարիտ լինելով սիրո մեջ (կամ՝ *խոսելով ճշմարտությունը սիրով)*՝ աճենք Նրանում ամեն բանով, որ է գլուխը՝ Քրիստոսը, որից ամբողջ մարմինը միասին կազմվելով և միասին հարմարվելով, ամեն հոդվածի ձեռնտվությամբ ամեն մեկ անդամի ներգործության չափով մարմնի աճելը գործվում է՝ իր անձը սիրով շինելու համար» (Եփես. 4.15,16):

Ճշմարտությունը սիրով խոսելը կառուցում է մարմինը: Սերն աճ է բերում կյանքի ամեն բնագավառում: Ատելությամբ լի բառերն առաջացնում են քայքայում և ետընթաց: Այնուամենայնիվ, սերն ավելի զորավոր է, քան ատելությունը և վախը:

Ինչպես հաղթահարել հիասթափությունը

Հիասթափությունն առաջանում է, երբ սպասումները չեն կատարվում: Սերը *հավատում է* լավագույնին, ոչ թե *պահանջում է* լավագույնը, քանի որ այս երկուսի միջև ահռելի տարբերություն կա: Սպասումները կարող են արագորեն վերածվել պահանջների, իսկ սերը ավելանալով՝ վերածվում է հույսի:

Ես վստահում եմ իմ ամուսնուն, բայց իմ հույսը խարսխված է Աստծո մեջ: Ամուսինս և ես սիրում ենք իրար, բայց դա չի նշա-

նակում, որ մենք չենք հիասթափեցրել մեկս մյուսին... այդպես եղել է: Այնուամենայնիվ, հիասթափության քաղաքում բնակվելու փոխարեն, մենք որոշում ենք կայացրել հեռանալ դրա ցավոտ սահմաններից: Մենք շնորհակալ ենք այն ամենի համար, ինչ բացասական փորձառություններն ավելացնում են մեր հարաբերություններում. մենք ոտքի ենք ելնում, սովորում ենք մեր սխալներից այն ամենը, ինչ կարող ենք, և առաջ ենք շարժվում: Մենք հասկացել ենք, որ սա շատ ավելի լավ մոտեցում է, քան շարունակ մեր հիասթափությունների շուրջ պտտվելը:

Հավատացե՛ք ինձ, կար ժամանակ, երբ մենք մտածում էինք, որ դա լավ միտք էր (կամ՝ միգուցե միայն ես էի այդպես մտածում): Ես մտածում էի, որ եթե ուսումնասիրեի գործած սխալի ամեն մի կողմը և ծածկեի դրանք ամոթով, նման բան այլևս տեղի չէր ունենա (ես այդպես եմ վարվել թե՛ Ջոնի, թե՛ իմ սխալների հետ):

Այս մոտեցումը լավ արդյունք չունեցավ, քանի որ իմ տրամաբանությունը սխալ էր: Փոխարենը՝ այդ սովորությունն այն աստիճան արմատացավ մեզանում, որ մենք միայն տեսնում էինք մեկս մյուսի թերությունները, որոնք հմտորեն կարողանում էինք գտնել: Մենք սկսեցինք միմյանցից սպասել վատագույնը, փոխարենը հավատայինք լավագույնին: Երկուսս էլ միմյանց մեջ գտանք այն, ինչ փնտրում էինք:

Ես սիրում եմ իմ բոլոր երեխաներին, բայց դա չի նշանակում, որ մեր հարաբերությունների մեջ հիասթափություններ չեն եղել: Թեև դրանք հազվադեպ են եղել, և ավելի հաճախ ես եմ հիասթափեցրել նրանց, նման բաներ դեռ տեղի են ունենում մեր հարաբերություններում: Նույնպես պատահել է, որ ես հիասթափեցրել եմ իմ ընկերներին:

Հիասթափությունը չի նշանակում, որ ձեր սերը մահացել է. այն պարզապես նշանակում է, որ ժամանակն է հանդիպում նշանակել Սուրբ Հոգու հետ և խորհրդատվություն ստանալ: Սերը ներգրավվածություն է պահանջում, իսկ իրական ներգրավվածության արդյունքում դուք խնդիրներ եք ունենում և խոցելի եք դառնում:

Ի վերջո, ես չեմ կարող ակնկալել, որ իմ ամուսինը, երեխաները և ընկերներն ինձ համար կլինեն այն, ինչ միայն Հիսուսը կարող է լինել: Եթե գործեմ այդ սխալը և դարձնեմ նրանց իմ փրկիչը, նրանք միայն հիասթափեցնելու են ինձ, քանի որ այդ դիրքում նրանք չեն կարող չձախողվել:

Խնդիրը ոչ թե այդ մարդկանց թերություններն են, այլ՝ իմ սխալ սպասումները:

Երբ դուք սպասում եք լավագույնին, իսկ մարդիկ դրանից պակաս են անում, դուք հիասթափվում եք: Բայց երբ հավատում եք լավագույնին, իսկ նրանց մոտ այդպես չի ստացվում, դուք հասկանում եք, որ նրանք դեռ անցնելու ճանապարհ ունեն:

Երբ դուք ճնշում եք զգում, որ դատեք կամ ձեզնից հեռացնեք այն մարդկանց, որոնց Աստված կանչել է, որ Իր հետ միասին բարձրացնեք, դա պաշտպանական արձագանք է: Այո՛, կան մարդիկ, որոնցից պետք է առանձնանալ, քանի որ ձեր միջև համաձայնություն չկա: Բացի այդ՝ կան մարդիկ, որոնք կարող են փորձել վնաս հասցնել ձեզ: Բայց ամենից հաճախ հեռանալու պատճառն այն է, որ մարդուն ցավ են պատճառում, և նա չի ուզում կրկին խոցելի լինել:

Աստված միշտ ավելի մեծ հավատք ունի իմ հանդեպ, քան ես: Նա չի նայում ինձ՝ ըստ իմ անցյալի, քանի որ իմ ապագան Նրա ձեռքում է: Նա դուրս է բերում ինձ իմ երկչոտությունից և վախից, որպեսզի ի հայտ բերի լավագույնը ինձանում: Պողոսը նման ներքին պայքարների մեջ էր այն սպասումների պատճառով, որ ուներ Կորնթոսի եկեղեցուց.

> «Ես խոստովանում եմ, որ վախեր ունեմ, որ երբ գամ, դուք կհիասթափեցնեք ինձ, իսկ ես կհիասթափեցնեմ ձեզ, և որ իրարից հիասթափված լինելու պատճառով ամեն ինչ ի հայտ կգա՝ վեճերը, նախանձը, բռնկվող բնավորությունը, կողմնակալությունը, բարկացած խոսքերը, արատավոր խոսակցությունները, հպարտացած գլուխները և ընդհանուր խելագարանոցը» (Բ Կորնթ. 12.20, Ուղերձ):

Եկեք դադարենք հիասթափությունների սպասել, քանի որ ինչ կանչենք, այն էլ կունենանք: Եթե պահանջենք մարդկան-

ցից ավելին և հավանություն չտանք նրանց, քանի դեռ դա տեղի չի ունեցել, մենք մեկուսացած և բարկացած կդառնանք՝ ճիշտ նույն կերպով, ինչպես որ մերժելով մեր երազանքը՝ մենք առանց հույսի կմնանք: Եկեք հավատանք մարդկանց այնպես, ինչպես ուզում ենք, որ նրանք հավատան մեզ, որ լավագույնը մեր կյանքում դեռ առջևում է: Եկեք հավատանք, որ նրանց սխալները՝ ընդամենը սայթաքումներ են: Ձեր սխալներն իրավունք չունեն որոշելու, թե ինչ կլինի ձեզ հետ ապագայում:

Դուք կարող եք ընդունել Հիսուսի օգնությունը, կամ վրդովվել ձեր անցյալի պատճառով. միայն դո՛ւք եք որոշում դա:

Մենք հեռացնում ենք մարդկանց մեր կյանքից՝ առանց ողորմություն ցուցաբերելու, երբ ինքներս չունենք հայտնություն ողորմության մասին:

Վախի ճանապարհը

Վախը թանկ կնստի ձեզ վրա: Այն կթալանի ձեզ մինչև վերջին թելը: Այն կգողանա ձեր ուժերը, երազանքները, հարաբերությունները մարդկանց հետ, ֆինանսները, հավատքը և հույսը: Վախն ուզում է չարչարել ձեզ և խլել ձեզնից այն ամենը, ինչ սերը ձրիաբար տալիս է: Վախն ի հայտ չի գալիս ժամանակ առ ժամանակ. այն անդադար հարձակվում է, քանի որ գիտի իր անելիքը:

Վախը չի պատվի ձեր հանգիստը. այն կներխուժի ձեր քնի մեջ՝ աղավաղելով ձեր երազները:

Վախը՝ ուժ է, որը հակադրվում է Սուրբ Հոգու սիրուն, զորությանը և ողջամտությանը: Կարող եք համոզված լինել, որ վախի նպատակը՝ ձեզ կաթվածահար անելն է, ինչպես որ Սուրբ Հոգու նպատակը՝ ձեզ ազատություն շնորհելն է:

Վախը գողանում է ձեզնից բազմաթիվ հնարավորություններ և ուզում է խլել ձեր տեսիլքն ապագայի մասին: Եվ սերը, և՛ վախը ծրագիր ունեն ձեր կյանքի համար: Մեկը ձեր օգտի համար է, մյուսը՝ վնասի:

Սիրո ճանապարհը

Ի տարբերություն վախի՝ սերն անսահմանորեն առատաձեռն է: Այն ձգտում է վերականգնել ձեր հարաբերությունները մարդկանց հետ, ձեր երազանքները և ձեր հույսը: Մեզնից ամեն մեկը կարող է ստանալ այն սերը, որ Աստված խոստանում է: Այնուամենայնիվ, մարդիկ սխալվում են՝ մտածելով, որ սիրո նոր խոստումները կամրանան վախի հին գործվածքին: Աստված փափագում է միացնել նորը *նորոգվածի հետ:*

> «Եվ ոչ ոք չի լցնում նոր գինին հին տիկերի մեջ: Որովհետև հին տիկերը կպատռվեն ճնշումից, և գինին կթափվի, իսկ տիկերը կփչանան: Նոր գինին պահվում է նոր տիկերի մեջ, որպեսզի երկուսն էլ պահպանվեն» (Մատթ. 9.17, NLT):

Ձեր ներսում նոր բան կա, ինչը վախն ուզում է իր մեջ պահել: Թույլ մի՛ տվեք դա: Անվախ մարդկանց սերը լիովին նոր փաթեթավորում է պահանջում: Հենց որ ընդունեք սիրո նոր գինին, դուք ամեն ինչ այլ կերպ կտեսնեք: Դուք ծառայելու հնարավորություն կհամարեք այն, ինչը նախկինում պարտականություն էր ձեզ համար: Դուք կձգտեք առատաձեռն լինել՝ կուտակելու փոխարեն: Սիրո նպատակը՝ վախը հեռացնելն է:

Անվախ կին

Անցած տարի իմ մտերիմ ընկերուհիներից մեկը շնորհավորական բացիկ ուղարկեց ինձ ծննդյանս օրվա առթիվ: Այդ բացիկն ինձ այնքա՜ն դուր եկավ, որ փակցրի այն իմ հայելու վրա: Դրա առջևի կողմում պատկերված է մի երիտասարդ աղջիկ՝ վանդակավոր կտորից տաբատով, իսկ ներքևում գրված է. «Ոչ միայն հագուստն է կարևոր, այլև՝ վերաբերմունքը»: Այլ կերպ ասած՝ կարևորն այն չէ, թե ինչ եք դուք կրում, այլ՝ թե ինչպես եք կրում դա: Սերը կրելու լավագույն ձևը՝ համարձակությունն է: Սերն այնպիսի բան է, որը ինքներդ պետք է գործադրեք:

Կասեմ ձեզ մի անժխտելի ճշմարտություն. չկա ավելի գրավիչ բան, քան անվախ կինը:

Ոչ թե անհոգ կինը, այլ՝ անվախ կինը: Անվախ դուստրերը կրում են Աստծո խոստումները կրակոտ հավատքով: Մարդկայնորեն մենք *նայում ենք* միայն ինքներս մեզ, այնինչ՝ մենք պատվեր ունենք, որ նայենք մեզ Աստծո Խոսքի լույսի ներքո: Եվ մենք ոչ մի օգուտ չենք ստանա, եթե *անարգենք* ինքներս մեզ:

Չկա ավելի գրավիչ բան, քան անվախ կինը:

Վախը չափում է մեզ ըստ այն ամենի, ինչ մենք չենք կարող անել, իսկ հավատքը համարձակ օգտվում է Աստծո կարողությունից:

Վախը վանող է. սերը գրավիչ է:

Ի՞նչ է նշանակում գրավիչ լինել:

Հավատացե՛ք ինձ՝ գրավչությունն ավելին է, քան արտաքինը: Օրինակ՝ ավտովթարները նույնպես մեծ ուշադրություն են գրավում: Իմ խոսքերն ավելի լավ հասկանալու համար նայենք «գրավիչ» բառի արմատին, որը նշանակում է. «քաշել կամ ձգել դեպի իրեն՝ մագնիսի պես»: Այն նույնպես նշանակում է. «հետաքրքրություն և զգացմունքներ առաջացնել»:

Ձեր կյանքը մագնիս է կա՛մ անեծքների, կա՛մ օրհնությունների համար: Ուրեմն, հարցրե՛ք ինքներդ ձեզ.

Ինչի՞ց եք դուք վախենում:

Ինչի՞ն է սերը դրդում ձեզ բախվել:

Ո՞ւմ եք դուք հրաժարվում ներել, մինչև որ նա փոխվի:

Ո՞ր բնագավառում է ձեր սերը չափավոր և միախառնված վախի հետ:

Միգուցե դուք ոստա՞յն եք գործել ձեզ համար վախի հոչակումներով:

Ժամանակն է փոխել ամեն ինչ: Փոփոխության ընթացքը սկսելը նույնքան հեշտ է, որքան ձեր կյանքում հոչակելը այն, ինչ Երկինքն ասում է անզուգական և հրաշալի կյանքի մասին: Որպեսզի օգնեմ ձեզ սկսել այս ընթացքը, ես մի աղոթք եմ պատրաստել ձեզ համար այն խոսքերի հիման վրա, որոնք Պողոսն ուղղել էր Տիմոթեոսին:

«Իմ սիրելի դուստր, ես աղոթում եմ, որ Աստծո շնորհքը, սերը և լիարժեք բարօրությունն ավելի մեծ չափով արտահայտվեն քո կյանքում և լցնեն քո կյանքն Աստծուց՝ մեր Հորից, և մեր Տեր Հիսուս Քրիստոսից: Ես գրում եմ, որ խրախուսեմ քեզ բորբոքել և կրկին բոցավառել այն հոգևոր պարգևի կրակը, որն Աստված փոխանցել է քեզ: Որովհետև Աստված երբեք չի տա քեզ երկչոտության և վախի հոգի. Սուրբ Հոգին տալիս է քեզ մեծ զորություն, սեր և առողջ դատողություն»:

Այնպես որ, երբեք մի՛ ամաչիր մեր Տիրոջ վկայությունից, այլ հաղթի՛ր ամեն չարիք՝ այն հայտնությամբ, որ ունես Աստծո զորության մասին: Նա հարության կյանք տվեց մեզ և դեպի Իրեն քաշեց մեզ՝ Իր սուրբ կոչումով, որը մեր կյանքում է: Եվ դա տեղի չունեցավ որևէ բարի գործի համար, որը մենք արել էինք, այլ՝ Իր աստվածային հաճությամբ և զարմանալի շնորհքով, որոնք հաստատեցին մեր միությունն օծված Հիսուսի հետ նույնիսկ՝ մինչև ժամանակվա սկիզբը» (Բ Տիմոթ. 1.2,6-9, փոփոխված):

Համոզվե՛ք սրանում: Համաձայնե՛ք, որ այս խոսքերը՝ Աստծո կամքն են ձեզ համար: Դուք կաղոթե՞ք ինձ հետ:

«Երկնային՛ Հայր,

Ես ընդունում եմ Քո շնորհքը, սերը և բարօրությունն իմ կյանքում: Ես բորբոքում եմ այն հոգևոր պարգևը, որը փոխանցվել է ինձ: Ասրվա՛ծ, ես գիտեմ, որ Դու չես տվել ինձ վախի հոգի. այնպես որ, ես մերժում եմ վախի խորհուրդը: Հա՛յր, շնորհակա՛լ եմ, որ վերականգնում ես այն, ինչ գողը գողացել էր ինձնից:

Դու տվել ես ինձ Սուրբ Հոգուն, Ով տալիս է զորություն, իշխանություն, սեր և ողջամտություն՝ առողջ դատողությամբ: Այսօր ես որոշում եմ կայացնում սիրել: Ես չեմ ամաչում Ավետարանից: Ես վախեցած եր չեմ քաշվի և կսիրեմ՝ առանց վախենալու»:

Հարցեր քննարկման համար

1. Ի՞նչ կարելի է անել ավելի անվախ կերպով սիրելու համար:
2. Ձեր ամուսնության մեջ կա՞ այնպիսի խնդիր, որը դուք պիտակել եք որպես ձեր կողակցի խնդիրը, ոչ թե՝ ձեր ընդհանուր խնդիրը:

3. Ձեր կյանքում կան բնագավառներ, որոնցում դուք որոշել եք խոցելի չլինել, ինչի արդյունքում ձեր սերը պակասել է: Ինչ քայլեր կարող եք ձեռնարկել, որպեսզի փոխեք այդ իրավիճակը:
4. Ձեր կյանքի ո՞ր բնագավառներում եք դուք համարում, որ *ձեր գործած սխալները* նշանակում են, որ *դուք սխալմունք եք:*
5. Կա՞ արդյոք որևէ բնագավառ, որտեղ դուք ընկել եք և վախենում եք ոտքի ելնել: Կիսվե՛ք այդ մասին ձեր ընկերներից կամ մտերիմներից մեկի հետ:
6. Ինչ տարբերություններ կան անվախ կնոջ և անհոգ կնոջ միջև:

8

ԽՈՐԸ ՁՐԻՈՐՆԵՐ ԵՎ ԵՐԱԶԱՆՔՆԵՐԻ ՁՐԻՈՐՆԵՐ

Նեղությունները սովորեցնում են մեզ, թե ով ենք մենք. նրանք փորում են մեր սրտի հողը և ցույց են տալիս, թե որքանով ենք մենք հաստատուն:

Չարլզ Սփերջեն

Ես ենթադրում եմ, որ դուք ուզում եք Աստծո խորություն ունեցող դուստր լինել: Եթե ուզում եք խորություն ունենալ, պատրաստ եղեք փորել:

Ես համաձայն եմ Չարլզ Սփերջենի հետ. նեղություններն իսկապես որ հայտնություն են: Ես կարող եմ ասել դա գոնե իմ նեղությունների մասին: Դրանք պետք է լինեն մեր ուսուցիչները, բայց մենք ենք որոշում, թե ինչպիսի աշակերտներ ենք լինելու: Եղել են շատ օրեր, երբ ես «3» եմ ստացել. իմ գնահատականը ցածր էր, բայց՝ անցողիկ: Նման դեպքերում ես սովորաբար վերահանձնում եմ իմ առաջադրանքը: Ճշմարտությունն այն է, որ թեև իմ կյանքը կատարյալ չէ, ես ուզում եմ, որ այն լավ լինի: Ես ի զորու եմ որոշելու՝ փորձությունները և նեղությունները կլինեն իմ սուրհանդակները, թե՞ պարզապես խառնաշփոթի կվերածեն իմ կյանքը:

Մենք *գրեթե* կամ *բոլորովին* չենք վերահսկում այն, թե ինչ է կատարվում մեզ հետ, և թե ինչ են մարդիկ խոսում մեր մասին, բայց ամեն ինչ այլ է, երբ խոսքը մեր արարքների մասին է: Մենք կարող ենք ընտրել, այսինքն՝ մենք լիովին կարող ենք վերահսկել մեր արձագանքն իրավիճակներին: Եվ քանի որ մենք մեջբերում ենք Սփերջենի խոսքերից, եկեք մի փոքր ավելի խորը գնանք և տեսնենք, թե ըստ նրա՝ ինչպիսի՞ն պետք է լինի մեր արձագանքը նեղություններին:

«Ես սովորել եմ համբուրել այն ալիքը, որի պատճառով բախվել եմ ժայռին»:

Սա անսովոր և անսպասելի արձագանք է մեզ հանկարծակիի բերող իրավիճակներին: Վերջերս ես հետևում էի իմ թոռնուհի Սոֆյային, ով խաղում էր ալիքների հետ: Նա զվարճանում էր՝ բախվելով ամեն մի մոտեցող ալիքին: Անկախ այն բանից, թե քանի անգամ էին ալիքները ետ մղում նրան և ծածկում ջրով... դա միայն խաղ էր: Ծիծաղելով՝ նա ուղղում էր ոտքերը, սրբում էր աչքերը և առաջ էր գնում՝ պատրաստվելով հանդիպել հաջորդ ալիքին:

Սփերջենը չէր խոսում ժայռոտ ափի մասին, այլ՝ Քրիստոս Ժայռի: Ամեն օրը նոր հնարավորություն է՝ որոշելու, թե ինչպես կարձագանքենք կյանքի ալիքներին: Եթե մենք պաշտպանական դիրք զբաղեցնենք, ինչպիսի խնդիր էլ ի հայտ գա մեր կյանքում, այն չի լուծվի: Եթե մենք խոնարհվենք, մեր նեղությունը թույլ կտա Սուրբ Հոգուն ավելացնել մեր խորությունը, այսինքն՝ ավելի աստվածապաշտ դարձնել մեզ: Կյանքի դժվարությունները ցույց են տալիս, թե *որքանով ենք մենք հասպատրուն՝* առանց նսեմացնելու մեր *ինքնությունը:* Մեր ինքնությունը հաստատված է Քրիստոսում և հիմնված է Նրա գործերի վրա, ոչ թե մեր ներկա կամ անցյալ գործերի: Նեղություններն օգնում են մեզ ավելի նմանվել Քրիստոսին, այսինքն՝ ավելի անսասան դառնալ: Քրիստոսը՝ այն առասպելական ժայռն է, որն ավելի բարձր է, քան ես: Նա մեր առանցքն է, այն ժայռը, որի վրա մենք հանգիստ ենք գտնում ամեն գիշեր, և որի վրա կանգնում ենք, երբ արթնանում

ենք ամեն առավոտ: Միայն Հիսուսն է մեր ապահովությունը և կենտրոնը:

Պատրաստել հողը

Անցնենք ծովից դեպի ցամաք: Ես ապրում եմ գեղեցիկ, երբեմն՝ կանաչ, բայց հաճախ՝ չոր բնություն ունեցող Կոլորադոյում. այնպես որ, ես հեշտորեն կարող եմ համեմատել իմ կյանքը հողի հետ: Մեր հողը պինդ է՝ խիստ բնության պատճառով: Թեև իմ տան բակի հողը պինդ է, ես ուզում եմ, որ իմ սիրտը փափուկ լինի: Երբ ես *խիստ* վշտացած եմ լինում վիրավորանքի պատճառով, անկախ այն բանից՝ այդ վիրավորանքն անհնշան է, թե՞ ծանրանում է ինձ վրա, ես մշտապես զգում եմ, որ իմ սրտի հողում ինչ-որ օտար բան կա: Գտնելով կոշտացած հողեր՝ ես տեսնում եմ դրանցում կործանարար որդեր, որոնք փորձում են կրկին հողի տակ մտնել: Ես տեսնում եմ դրանց գործունեության հետքերը հողի տակ: Ես հասկանում եմ, որ մինչ անտեղյակ էի, դրանք կրծում էին իմ ամուսնության արմատները և թուլացնում էին իմ ընկերական հարաբերությունների ծաղիկների աճը: Երբ դա տեղի է ունենում (իսկ դա տեղի է ունենում շատ ավելի հաճախ, քան ես կուզեի), իմ զրույցն իմ Հոր հետ կարող է մոտավորապես այսպիսին լինել.

> «Ո՛չ, սարսափելի՜ է: Ինչպե՞ս սա տեղի ունեցավ: Երկնայի՜ն Հայր, Դու տեսնո՞ւմ ես դա: Դու լսեցի՞ր այն, ինչ ես նոր ասացի, կամ նույնիսկ՝ մտածեցի»:
>
> Նա պատասխանում է. «Լի՜զա, դա հայտնություն էր քե՛զ համար, բայց ոչ՝ Ինձ համար: Այդ որդերն արդեն երկար ժամանակ է՝ քո հողի մեջ են: Հարցը հետևյալն է. դու ուզո՞ւմ ես պահել դրանք քո հողի մեջ՝ վտանգելով քո ապագա հունձքը»:

Ավելի ուշադիր նայելով՝ ես սկսում եմ նկատել սերմեր, որոնք դեռ պետք է ծլեն, ինչը ժամանակ է պահանջելու: Դրանք Աստծո խորը խոստումներն են, որոնք դեռ չեն կատարվել իմ կյանքում և ընտանիքում: Ես սկսում եմ մտածել՝ արդյո՞ք այդ սերմերը երբևէ կաճեն: Իմ Հայրը համբերությամբ բացատրում է.

«Այս տեսակի որդերն արագ են բազմանում: Դու միշտ ինքդ ես ընտրում: Դու կարող ես արդարացումներից բաղկացած հող շաղ տալ դրանց վրա՝ ևս մեկ անգամ ծածկելով դրանց գործունեությունը, բայց դրանք հողի տակ կմնան: Եթե ուզում ես ազատվել այդ որդերից, դու պետք է ուրանաս դրանք խոսքով և գործով, և թույլ տաս Ինձ՝ հեռացնել»:

Տեսնելով դրանց իրական բնույթը՝ ես մերժում եմ և խոստովանում եմ նախանձի, կասկածների և մարդու վախի գարշելի որդերի առկայությունը:

«Շա՛տ լավ, և քանի դեռ մենք զբաղվում ենք քո հողով, դու տեսնո՞ւմ ես այս մոլախոտերը: Արի՛ արմատախիլ անենք դրանք: Ավելի հեշտ կլինի անել դա, քանի դեռ հողը շատ չի կոշտացել: Եվ արի՛ ցանենք Աստծո Խոսքի սերմերը դրանց փոխարեն»:

Մի րոպե... այժմ պայքարն իրական է դառնում: Անտեսանելի կոշտ հողերը՝ այլ բան է, բայց տեսանելի կանաչ մոլախոտերի ցանկացած հետքը հեռացնելը այն ժամանակ, երբ ես դեռ սպասում եմ Աստծո խոստումներին, բոլորովին այլ բան է: Ես կանգ եմ առնում և հիմարաբար մտածում եմ, որ դեռ որոշ ժամանակով կարելի է թողնել այդ մոլախոտերից մի քանիսը: Իսկ միգուցե ես սպասեմ՝ մինչև նոր ծիլերը դո՞ւրս գան հողի տակից: Առանց այդ մոլախոտերի՝ ես ամայի հողակտորի կնմանվեմ: Ես հակառակվում եմ.

«Բայց Տե՛ր, այդ դեպքում, իմ հողը մերկ և անպտուղ կթվա»:
«Լի՛զա, դու ուզում ես պտղաբե՞ր *թվալ*, թե՞ պտղաբեր *լինել»:*

Եվ այս հարցն ուղղված է մեր սերնդին: Արդյո՞ք մենք ավելի կարևոր ենք թվում, քան իրականում ենք: Եթե մենք բավարարվում ենք ընդամենը պտղաբեր թվալով, դա կարող է խոչընդոտ դառնալ մեր ապագա պտղաբերության համար: Այն, ինչ ցանված է ծածուկում, մեկ օր ի հայտ է գալու: Ես խորը հոգոց եմ հանում:

«Լավ, արմատախի՛լ արա դրանք»:
«Արդեն արեցի»:

Եվ ահա ես՝ մերկացած հողով, բայց առանց ամոթի, քանի որ գիտեմ, որ Նրա խոստումներն անխոչընդոտ կաճեն ինձանում: Փորձությունները և նեղությունները մաքրում են հողը և հեռացնում այն, ինչը խոչընդոտում է ապագա աճին: Դրանց բախվելու նպատակն է՝ մաքրել և պատրաստել մեզ ապագայի համար: «Նեղություններ» բառը կարելի է հեշտորեն փոխարինել այլ բառերով՝ *դժվարություններ*, *ցավ և տառապանք*, *լումներ*, *գնահատումներ*, *փորձեր*, *քննություններ* կամ պարզապես *ստուգումներ:*

Մեր ուժեղ և թույլ կողմերն ի հայտ են գալիս այդ նեղությունների պատճառած անհարմարավետության մեջ: Միասնաբար և առանձին-առանձին՝ դրանք ազդում են մեզ վրա. նեղությունները փխրեցնում են մեր անձի չոր և անպտուղ մասերը՝ պատրաստելով մեզ նոր բաների և մեր կյանքի հաջորդ փուլին: Առանց այս հողային աշխատանքի՝ մենք չենք կարողանա կլանել Աստծո Խոսքի ջրի մեծ մասը: Մեր սրտերը կլինեն երաշտից կոշտացած հողի պես, որը չի կարող ջուր ընդունել: Եթե այդ չոր հողը չփխրեցվի, անձրևները կգան և կանցնեն, իսկ մեզ մոտ երաշտ կլինի՝ առատության ժամանակ:

Նեղությունները նույնպես սովորեցնում են մեզ, թե ով է Աստված:

Կար ժամանակ, երբ ես կվիճեի ձեզ հետ նեղությունների իրական նպատակի վերաբերյալ: Ես կասեի, որ եթե դուք ապրում եք ըստ Աստծո Խոսքի, ձեզ հետ ոչ մի բան չի պատահի: Ես երիտասարդ էի, անմիտ էի և ներշնչված էի այնպիսի գաղափարներով, որոնք չէին դիմանա ժամանակի փորձությանը: Ես մտածում էի, որ այդ ուսմունքը խորն էր, այնինչ, իրականում այն ընդամենը մակերեսային կյանք էր առաջարկում ինձ:

Այն ամենը, ինչ մեզ պետք է կյանքի և աստվածապաշտության համար, ճշմարտապես գտնվում է Աստծո Խոսքում, բայց հենց նեղություններն են ծնկի բերում մեզ, որպեսզի այդ ճշմարտությունը ներգործի մեր կյանքում: Այդ վիճակում մենք այլևս չենք ընթերցում Աստծո Խոսքը՝ որպես առաջարկ մեր կյանքը լավագույնս ապրելու մասին, այլ՝ որպես կյանքի խոսքեր:

Պեղի՛ր իմ կյանքը

Իմ կյանքում մի կարճ և շփոթությամբ լի շրջան է եղել, որի պատճառը հիմնականում այն էր, որ ես գերադասում էի դիմակ կրել և անտեսել իմ խնդիրները: Ես երիտասարդ էի, նոր էի փրկվել և նոր էի ամուսնացել, և իմ սրտի հողը դեռ պետք է շուռ տրվեր: Դրա մակերեսին դեռ ընդամենը մի քանի խազ էր երևում: Ես հիշում եմ, թե ինչպես ամեն ինչ փոխվեց: Ես խորը աղոթքի և երկրպագության մեջ էի: Անմտորեն մտածում էի, որ եթե նստած էի եկեղեցու առաջին շարքում և նորաթուխ հովվի կին էի, իմ կյանքում պետք է ընդամենը մի քանի բան փոխվեր: Լիովին վստահ լինելով՝ ես խնդրեցի Աստծուն *պեղել* իմ կյանքը: Դեռ մեկ օր չէր անցել, իսկ ես արդեն զղջում էի իմ խոսքերի համար:

> *«Սիրելի՛ երկնային Հայր, Ես ասացի՝ պեղե՛լ: Կարո՞ղ եմ եր վերցնել իմ խոսքերը: Դա պարզապես կրակոտ պահ էր, և ես անհաջող բառեր ընտրեցի: Ես նկատի ունեի, որ բարեկարգես և գեղեցկացնես իմ կյանքը»:*

Նա թույլ չտվեց ինձ հրաժարվել իմ խոսքերից: *Պեղումը* այն բառն էր, որը ես ընտրել էի Հոգու առաջնորդությամբ: Ինչպես և քրիստոնյաների մեծ մասը, ես ապրում էի խորը ցանկություններով և մակերեսային աղոթքներով: Մինչ երկրպագության այս «վտանգավոր» պահը, ես դատարկություն էի զգում իմ աղոթքներից հետո: Այն խոսքերը, որոնք ես շշնջում էի, ոչ մի առաջընթաց չէին բերում իմ կյանքում, որովհետև ես դեռ աղոթում էի՝ ելնելով պարտավորությունից, ոչ թե նվիրումից: Ես աղոթում էի այնպես, ինչպես որ լսել էի այլ մարդկանցից: Այո՛, ինձ ասել էին, որ աղոթքը նշանակում է՝ պարզապես զրուցել Աստծո հետ, բայց ես անընդհատ պատկերացնում էի ինձ գահի սրահում՝ շրջապատված հրեշտակներով, որոնց համար իմ խոսքերն անհեթեթ և ծիծաղելի էին:

Այս մտածելակերպի պատճառով ես չգիտեի, թե ինչպես շարադրել իմ աղոթքները, որպեսզի փոխանցեի իմ ներսում մոլեգնող հուսահատությունը: Ես նույնպես չգիտեի, թե ինչպես վարվել իմ խորը և հուսահատ հոգևոր քաղցի հետ, քանի որ փափագում

էի ավելին: Այժմ գիտեմ, որ Աստված օգտագործում է նեղությունները, որպեսզի ավելի խորացնի իմ աղոթքները: Նախքան այն պահը, երբ ես, թեև վախենալով, թույլ տվեցի Աստծուն պեղել իմ կյանքը, ես չգիտեի, թե ինչպես թույլ տամ Նրան ավելի խորը աշխատել ինձ հետ: Ես անմիջապես կապում էի ցանկացած դժվարություն և նեղություն: Փոխարենը հարձակվեի իմ նեղությունների վրա, ես կապված էի մնում իմ հին սովորություններին և սահմանափակումներին: Եթե նեղությունները չէին հեռանում, ես էի փախչում: Եթե փախչելը չէր ազատում ինձ, ես թաքնվում էի՝ հուսալով, որ դրանք պարզապես կհեռանային:

Իմ կյանքի դժվարությունները վախեցրել և բարկացրել էին ինձ: Ես խստորեն էի վերաբերվում մարդկանց, և է՛լ ավելի խստորեն էի վերաբերվում ինքս ինձ: Սիրելի քո՛յր, եթե դուք այսպես եք վարվում, լսե՛ք. այս կյանքը շատ ավելի կբարդանա ձեզ համար, եթե դուք խստորեն վերաբերվեք ինքներդ ձեզ: Մի քանի տասնամյակի ընթացքում ես հասկացա, որ Սփերջենը ճիշտ էր: Ժամանակի ընթացքում կոփվելուց հետո՝ ես հասկանում եմ, որ Աստվածաշունչն ասում է մեզ, թե *ում ենք մենք պատկանում*, և որ մեր արձագանքը նեղություններին՝ միանշանակ կերպով ցույց է տալիս, թե *որքանով ենք մենք հասուն:* Նեղություններն ի զորու են փոխել մեզ՝ դարձնելով այնպիսին, *ինչպիսին մենք ձգտում ենք դառնալ:* Այնուամենայնիվ, մեր հոգևոր կյանքում մենք հավատացել ենք այն ստին, որ կարող ենք հերոսներ լինել առանց՝ նույնիսկ մեկ պայքարի մասնակցելու:

Խորը ջրհորներ

Ինձ դուր է գալիս, երբ ինչ-որ մարդու, ում ես պետք է հանդիպեմ, խորը ջրհոր են անվանում: Դա նշանակում է, որ այդ մարդու կյանքում կա շատ ավելին, քան արտաքուստ երևում է: Խորը ջրհորներն առեղծվածային են. նրանք պատմելու շատ բան ունեն, իսկ ես սիրում եմ պատմություններ լսել: Այդպիսի մարդիկ անցել են շատ բաներով, որոնք կարող էին պղտորել կամ կեղ-

տոտել այլ ջրհորներ, բայց նրանց ջրհորներն անարատ են մնացել: Խորը ջրհորներն աղբյուրներ են դառնում, քանի որ նրանք թարմություն են բերում ուրիշներին: Խորը ջրհորներն արտացոլելու ավելի մեծ կարողություն ունեն: Ջրուցելով խորը ջրհորի հետ՝ դուք ավելի շատ բան կիմանաք ձեր մասին, քան՝ նրա:

Ես ճանաչում եմ մի քանի կանանց, ովքեր խորը ջրհորներ են: Ես միշտ ցանկանում եմ ավելի լավ ճանաչել նրանց: Երբ նրանց հետ եմ, սկզբում անվճռականություն եմ զգում, քանի որ դեռ այնքա՜ն հարցեր ունեմ: Ես գերադասում եմ լսել, քան խոսել, երբ խորը ջրհորի հետ եմ: Լսելով՝ միշտ կարելի է հասկանալ շատ ավելին, քան ասվում է: Ես ուզում եմ խորը ջրհոր լինել, բայց իմ կյանքում կան պահեր և բնագավառներ, երբ ես ավելի շատ ջրափոսի եմ նման:

Երբեմն խորը ջրհորին ճանաչելու համար ես պետք է աշխատեմ իմ սրտի հետ: Նրանք այնքան էլ հետաքրքրված չեն այն գրքերով, որոնք ես գրել եմ, և այն համաժողովներով, որոնցում ես քարոզել եմ: Նրանցից շատերն արել են այդ ամենը: Նրանք ավելի հեռու են գնում: Նրանք չեն ուզում, որ ես բացեմ իմ սիրտը, այլ ուզում են իմանալ, թե ինչով եմ լցնում այն: Նրանք հարցեր են տալիս իմ ամուսնու, երեխաների, թոռների, ինչպես նաև՝ իմ սրտի մասին: Նրանք գիտեն, թե ինչպես մեղմորեն թափանցել մարդու սիրտը: Եվ մինչ հասկանում եմ, թե ինչ տեղի ունեցավ, ես խախտում եմ իմ բոլոր անձնական սահմանները և պատմում եմ նրանց ամեն ինչ (թեև դա բոլորովին դուր չի գալիս իմ ամուսնուն):

Ես չեմ բացում իմ սիրտը սպառնալիքի ներքո. ես անում եմ դա՝ տեսնելով դիմացինի բարությունը:

Այդ խորը ջրհորների հետ հանդիպելուց հետո ես որոշ բաներ եմ հասկացել: Խորը ջրհոր դառնալու համար անհրաժեշտ է ողջամիտ կերպով ներգրավված լինել կյանքի մեջ: Խորությունն անկարելի է գնել. դրան պետք է ձգտել: Այն գալիս է, երբ մենք բավականաչափ խիզախություն ունենք՝ անկեղծ լինելու համար: Այդ իմաստով, խորությունն ավելի շատ նման է մկանի, որը զարգանում է մշտապես գործածելով:

Երազանքների ջրիորներ

Վերջերս մի քասթինգային գործակալ դիմեց Ջոնին և ինձ: Մի խոշոր ժամանցային ընկերություն նոր հեռուստանախագիծ էր պատրաստում. այն անդրադառնալու էր մի շարք խորը հարցերի, որոնց այսօր բախվել է աշխարհը՝ ավելի հոգևոր տեսանկյունից: Առաջին անգամ չէր, որ առաջարկում էին մեզ նման հաղորդումներ վարել: Ստանալով առաջարկներ մի քանի գործակալներից, ովքեր ուզում էին ռեալիթի-շոուներ սկսել, ես հասկացա, որ չէի ցանկանում ներկայացման մասնակից դառնալ: Ասացի իմ աշխատակազմին, որ չէի կարծում, որ դա պետք էր մեզ: Բայց վերջին քասթինգային գործակալը հավաստիացրեց իմ աշխատակազմին, որ այդ հաղորդման մեջ ամեն ինչ այլ կերպ էր լինելու: Պրոդյուսերներն ուզում էին հիշեցնել հեռուստադիտողին այն ժամանակը, երբ մարդիկ գնում էին իրենց տեղական եկեղեցիները՝ պատասխաններ ստանալու համար: Մենք դժկամորեն համաձայնեցինք ավելին լսել նրանց գաղափարի մասին:

Ջոնը և ես տարբեր քաղաքներում էինք, բայց մենք համաձայնեցինք խմբային զանգի: Նրանք մի շարք հարցեր տվեցին, որոնց մենք անմիջական և անկեղծ պատասխաններ տվեցինք: Ես չէի սպասում, որ մենք ևս մեկ զանգ կստանայինք նրանցից, բայց նրանք զանգեցին: Ասացին, որ իրենց դուր եկավ մեր եռանդը, և որ ցանկանում են անցնել հարցազրույցի հաջորդ փուլին: Նրանք առաջարկեցին մեկ ժամանոց հեռախոսազանգ ձայնագրել «Սկայպով»: Եվ մի շարք հարցեր ուղարկեցին մեզ, որոնց մենք պետք է պատասխանեինք հարցազրույցի ժամանակ: Առաջին հարցը մոտավորապես այսպիսին էր.

> «Իմ տասնվեցամյա աղջիկը սեռական կյանքով է ապրում ավելի բարձր տարիքի և սեռական փորձառություն ունեցող երիտասարդ զուգընկերոջ հետ: Այդ տղան իր կյանքի առաջին տղամարդն է: Որպես մայր՝ արդյո՞ք ես պետք է բժշկական ստուգման ուղարկեմ նրան՝ սեռավարակների առկայության համար, թե՞ պարզապես հակաբեղմնավորիչներ առաջարկեմ: Ի՞նչ խորհուրդ կտաք»:

Ինձ համար այդ հարցն անմտություն էր: Խոսքն անչափահաս աղջկա մասին էր, ով ապրում էր իր ծնողների տանը: Ես վստահ էի իմ պատասխանի մեջ:

Ես բացատրեցի, որ Աստվածաշունչը պատվիրում է փախչել պոռնկությունից, ոչ թե պայմաններ ստեղծել դրա համար: Առաջարկեցի, որ ամբողջ ընտանիքը նստի սեղանի շուրջ և բացատրի այդ աղջկան, թե ինչու այդ երիտասարդի հետ այլևս չպետք է հանդիպի:

Մինչ կհասցնեի ավելի զարգացնել միտքս, այդ գործակալն ընդհատեց ինձ: Նա նշեց, որ ա) այդ աղջիկը և նրա զուգընկերը չէին պատրաստվում դադարեցնել իրենց հարաբերությունները, բ) նրանք չէին ուզում, որ մենք խոսքեր մեջբերեինք Աստվածաշնչից: Նրանք պարզապես ուզում էին հոգևոր խորհրդատուներ ունենալ: Նա շարունակեց՝ ասելով, որ բոլոր հարցերն ուղարկել էին իրենց ընկերության անդամները, և այդ հարցն ուղարկել էր հենց ինքը: Այն աղջիկը, ով սեռական կապ ուներ, իր քույրն էր, և իր մայրը ցանկանում էր իմանալ, թե ինչպես վարվի: Այդ պահին մենք հասկացանք, որ մեր հարցազրույցն այլևս չի կարող շարունակվել:

Այդ ընկերությունը գիտեր, որ մենք Աստվածաշնչի ուսուցիչներ էինք, բայց նրանք չէին ուզում լսել մեզնից, թե ինչ է ասում Աստծո Խոսքը: Նրանք ուզում էին, որ մենք լինեինք խորը և հոգևոր, բայց՝ ոչ սուրբգրային: Մի՞թե նման բան հնարավոր է: Մի՞թե գոյություն ունի որևէ ճշմարիտ իմաստություն՝ առանց Աստծո խորհրդի: Ես մտածեցի, որ եթե մեջբերեի «Նյու Էյջ» շարժման հոգևոր առաջնորդներից մեկի խոսքերը, միգուցե ընդունեին դա: Նրանք ուզում էին, որ մենք տայինք խորը թվացող մակերեսային պատասխաններ, ինչը ես երազանքների ջրհոր եմ անվանում:

Նրանք ուզում էին խուսափել կոնֆլիկտից: Նրանք չէին ուզում, որ մենք վիրավորեինք որևէ մեկին՝ ցույց տալով սխալներ մարդկանց արարքների մեջ: Նրանք ուզում էին, որ մենք օրհնեինք մեղանչողներին և ասեինք, որ նրանց գործած չարիքը բարի է: Նրանք այսպես էին մտածում. «Միևնույն է՝ այդ մար-

դիկ չեն փոխվելու. պարզապես ասեք այն, ինչ պետք է ասեք, որպեսզի արդարացնեք նրանց արարքը: Փոխզիջման գնացեք, բայց այնպես ձևակերպեք ձեր խոսքը, որ այն շատ մոտ լինի ճշմարտությանը»: Նրանք նույնպես չէին ուզում, որ մենք բացահայտ խոսեինք քրիստոնեական հավատքի մասին, այլ խրախուսում էին մեզ չհիշատակել այն: Ըստ նրանց՝ դա նշանակում էր, որ մենք կարող էինք խոսել Աստծո մասին, բայց չպետք է հիշատակեինք Հիսուսին և Աստվածաշունչը:

Այլ կերպ ասած՝ համոզված եմ, որ նրանց դուր կգար, եթե ես մոտավորապես այսպիսի խորհուրդ տայի. «Այո՛, վարվեք սիրող մոր պես և անմիջապես ստուգեք ձեր դստերը սեռավարակների առկայության համար: Բացի այդ՝ հակաբեղմնավորիչներ տվեք նրան, որպեսզի երկար ժամանակ պաշտպանեք նրան հղիությունից: Իսկ հաջորդ անգամ, երբ նրա զուգընկերն ավարտի իր գործը, դուք կարող եք ասել նրան, թե որքան եք գնահատում ձեր դստերը: Ասեք նրան, որ դուք հարգանքով եք վերաբերվում այն փաստին, որ նա ավելի մեծ տարիքի է, քան ձեր դուստրը, և սեռականորեն ավելի փորձառու է: Հարցրեք նրան, թե արդյո՞ք նա այնքան սիրալիր կգտնվի, որ ընդունի ձեր ընտանիքից մի տուփ պահպանակ՝ որպես նվեր: Այդ կերպով դուք կանեք այն ամենը, ինչ կարող եք՝ վստահ լինելու համար, որ նա ոչ մի սեռավարակ չի փոխանցի ձեր դստերը»:

Դուք տեսնո՞ւմ եք, թե որքան անհեթեթ է այս խորհուրդը: Բայց ես հասկացա, որ այդ հաղորդման պրոդյուսերները չէին ուզում լսել Աստվածաշնչի ճշմարտությունը. նրանց երազանքների ջրհոր էր պետք: Նրանք ասում էին Ջոնին և ինձ. «Մենք մի քանի սենթ կնետենք ձեզ, և դրա փոխարեն դուք կտաք մարդկանց այն, ինչ նրանք ուզում են: Օրհնե՛ք նրանց մեղքը և այնպես արեք, որ նրանք լավ զգան իրենց»:

Վախենում եմ, որ չափազանց շատ քրիստոնյաներ բավարարվել են երազանքների ջրհորով և չեն ուզում լսել, որ իրենք պետք է խորը ջրհոր փորեն: Չափազանց շատ կանայք ունեն խորը ձգտումներ, բայց՝ մակերեսային կյանք: Նրանք գիտեն, որ

այս աշխարհի խորհուրդները, որոնց նրանք հետևում են, ընդամենը իրենց իսկ ձայների դատարկ արձագանքն են, բայց նրանք մտածում են, որ բացի դրանից այլևս ոչինչ գոյություն չունի... այնպես որ, նրանք բավարարվում են դատարկ երազանքների ջրհորով: Նրանք այսպես են մտածում իրենց կյանքի մասին.

«Երանի՜ ես չասեի դա»:

«Երանի՜ ես չանեի այդ բանը»:

«Երանի՜ ես չամուսնանայի նրա հետ»:

«Երանի՜ ես կրթություն ստանայի»:

«Երանի՜ ես ավելի շատ ընկերներ ունենայի»:

«Երանի՜ ես այն կնոջ նման լինեի»:

«Երանի՜ ես չգնեի այս բանը»:

«Երանի՜ ես կարողանայի գնել այն իրը»:

«Երանի՜ ես ավելի շատ աղոթեի»:

«Երանի՜ ես ավելի շատ Աստվածաշունչ կարդայի»:

«Երանի՜ ես ավելի կարգապահ լինեի»:

«Երանի՜ ես ավելի համբերատար լինեի»:

Եթե միայն երազելը բավական լիներ, բոլորս փայլուն, գեղեցիկ, ուժեղ և համարձակ կլինեինք: Ուոլթ Դիսնեյն ասել է. «Երազը՝ այն ցանկությունն է, որը ծնվում է ձեր սրտում, երբ այն խորը քնած է»: Ես հավատում եմ, որ դա ճիշտ է. երազը կամ երազանքը իրականանում են միայն՝ եթե արթնանալիս դուք ինչ-որ բան եք անում: Ցանկությունը *երազանք* է ծնում, իսկ մենք սկիզբ ենք դնում *գործողությանը:* Բավական չէ երազել, որ ամեն ինչ լավ լինի. դուք պետք է լավ վարվեք: Ահա թե որտեղ է ձևավորվում խորությունը:

Խաբեության վտանգները

«Ոչ ոք իր անձը չխաբի. եթե ձեզնից մեկը կարծում է, թե իմաստուն է այս աշխարհում, թող նա հիմար լինի, որ իմաստուն լինի, որովհետև այս աշխարհի իմաստությունը հիմարություն է Աստծո առջև: Քանի որ գրված է, թե «Իմաստուններին բռնում է իրենց խորագի-

տության մեջ»: Եվ դարձյալ, թե. «Տերը ճանաչում է իմաստունների մտածմունքները, որ ունայն են»» (Ա Կորնթ. 3.18-20):

Այստեղ գրված է՝ «ոչ ոք իր անձը չխաբի»: Ես գիտեմ, որ կանայք կարող են խաբել իրենք իրենց նույնքան հեշտորեն, որքան տղամարդիկ: Այնուամենայնիվ, ինչո՞ւ թե՛ տղամարդիկ, և թե՛ կանայք պետք է ուզեն քող քաշել իրենց աչքերի վրա և մոլորության մեջ ընկնել: Պատասխանն այն է, որ ոչ ոք չի ուզում խաբված լինել: Ինչպես իմ ամուսինը միշտ ասում է. *«Խաբեությունը միայն մեկ խնդիր ունի. այն խաբում է մարդուն»:*

Խաբեությունը ցույց է տալիս իրավիճակները, մարդկանց, հանգամանքները և մտադրությունները ոչ ճիշտ լույսի ներքո: Խաբեությունը կարող է Աստծուն հնազանդվելը ներկայացնել որպես օրինապաշտական ստրկություն: Խաբեության պատճառով ձեր անձի թշնամին կարող է ընկեր թվալ: Խաբեությունը կարող է այնքան հեռու գնալ, որ ներկայացնի *չարը՝ բարի*, և *բարին՝ չար:* Խաբեությունը գործում է հետևյալ կերպով. այն պղտորում է ձեր սրտի ջրերը, քանի դեռ ամեն ինչ այնպիսի խառնաշփոթի է վերածվում, որ դուք արդեն չգիտեք, թե ինչին հավատաք: Աստված գիտեր, որ մենք հայտնվելու էինք նման վիճակում, և այդ պատճառով տվեց մեզ անփոփոխ չափանիշ, որը չի տատանվի ժամանակի ընթացքում և չի փոփոխվի մարդկային մշակույթի և հասարակական կարծիքի ազդեցությունից: Մեր չափանիշը՝ Աստծո Խոսքն է, և աստվածապաշտ մարդիկ հետևում են դրան:

Մենք ուզում ենք այս աշխարհի՞ իմաստությունը, թե՞ անժամանակյա իմաստությունը:

Մենք պետք է որոշենք՝ ուզում ենք այս աշխարհի՞ իմաստությունը, թե՞ անժամանակյա իմաստությունը: Երբ ստեղծվածները երևակայում են, որ իրենց Արարչից ավելի իմաստուն են, նրանք ընկղմվում են ինքնախաբեության մեջ: Միայն Աստծո Խոսքն է ի զորու պարզորեն հայտնել մեզ ամեն ինչ՝ այն բանից հետո, երբ հանգամանքները

պղտորել են մեր սրտի ջրերը: Առանց Աստծո Խոսքի խորհրդի՝ դուք սխալմամբ հիմարությունը կանվանեք իմաստություն:

Երբ սա տեղի է ունենում, դուք կարող եք սխալ համոզմունքներ ձեռք բերել, կամ բացահայտ և ազնիվ համարել այն, ինչը քողարկված ու խորամանկ է: Հիշե՛ք, որ օձի իմաստությունը քողարկված ու խորամանկ է: Քողարկված գաղափարները համոզում են իրենց հարողներին՝ շեղելով նրանց ուշադրությունը դեպի որոշակի նպատակներ, այնինչ ամբողջ այդ ընթացքում դրանք բոլորովին այլ նպատակ են հետապնդում: Օձը ծպտվեց որպես համախոհ, ով գաղտնի տեղեկություն ուներ Ադամի և Եվայի համար: Ձևացնելով, թե ինքն անկեղծ ընկեր է, ով հոգում է նրանց մասին, նա ակնարկեց, որ երբ նրանք լուսավորվեն՝ ճանաչելով բարին ու չարը, ավելի կնմանվեն Աստծուն: Նա խոստացավ, որ նրանք կբարձրանան այդ մակարդակին՝ առանց հնազանդվելու Աստծո իմաստությանը: Ադամը և Եվան չէին ուզում խաբվել. նրանք ուզում էին ստանալ այն, ինչ օձը խոստացավ իրենց: Նրանք հավատացին, որ Աստված ստել էր իրենց, փոխարենը մերժեին օձի ասածը՝ այն սուտ համարելով: Օձը խոստացավ, որ նրանք ավելի աստվածանման կդառնան, այնինչ իրականում նրանք ավելի անաստված դարձան: Աստծո Խոսքը զգուշացնում է մեզ.

> «Նույնիսկ եթե բոլորը ստախոսներ են, Աստված ճշմարիտ է» (Հռոմ. 3.4, NLT):

Խաբեությունից դուրս գալու ճանապարհը ապաշխարությունն է, երբ մենք հիմարություն ենք անվանում մեր իմաստությունը և խոնարհվում ենք Նրա առջև, Ում պատկանում է հավիտենական իմաստությունը: Ապաշխարությունը տեղի է ունենում, երբ շրջվում ենք ստից դեպի ճշմարտությունը:

Այսօր սատանայի քողարկված խոստումները տարածված են երկրով մեկ: Շատ վաղուց օձի առաջարկներն ավելի բարի, մեղմ և գրկաբաց էին թվում, քան Աստծո պատվերը: Ի վերջո, ո՞րն է ավելի դուրեկան. «Եթե ուտեք, կմահանա՞ք», թե՞ «Եթե ուտեք, իմաստութ-

յուն կստանաք»: Օձն օգտագործում է մեր մարդկային հպարտությունը և հիմարությունը մեր դեմ: Ո՞վ չի ուզում հավատալ, որ ինքն ավելի իմաստուն է, քան իրականում կա: Այնպես որ, նա շողոքորթում է մեզ: Ճշմարտությունն այն է, որ առանց Քրիստոսի չկա ճշմարիտ իմաստություն: Առանց Նրա մենք միայն ժամանակավոր, երկրային և սահմանափակ իմաստություն ունենք:

> «Եվ Հոգին հայտնի ասում է, թե հետին ժամանակներում ոմանք հավատքից կհեռանան և մտիկ կտան մոլորեցնող ոգիների և դևերի վարդապետությունների» (Ա Տիմոթ. 4.1):

Մոլորեցնող ոգիները մշտապես կասեն ձեզ, որ դուք կարող եք լուսավորվել առանց Աստծո Խոսքի, որ մենք ապրում ենք նոր ժամանակաշրջանում, և Աստված այլևս նկատի չունի այն, ինչ մի ժամանակ ասել էր: Այս ոգիները կրկնում են օձի խոսքերը. «Մի՛ լսեք Աստծուն. ինքնե՛րդ եղեք ձեր աստվածը»: Շատ-շատերը չեն հասկանում սա, քանի որ մտածում են, որ խաբեությունը միայն վերաբերում է բացահայտ կախարդությանը և սատանային երկրպագելուն: Այնուամենայնիվ, շատ հաճախ մոլորեցնող ոգիները շեղում են մարդկանց դեպի որոշակի նպատակներ, այնինչ նրանք բոլորովին այլ նպատակ են հետապնդում: Եթե դուք քրիստոնյա եք, նրանք չեն կարող խլել ձեր անձը, բայց կանեն՝ ինչ կարող են, որ զրկեն ձեզ իշխանությունից և պղտորեն ձեր ջրհորը: Մեր օրերում բազմաթիվ անաստված բաներ սովորական են դարձել: Աստծո Խոսքը խստորեն զգուշացնում է մեզ.

> «Եվ պիղծ ու պառավական առասպելներից ե՛տ կաց, բայց *վարժեցրո՛ւ քո անձն աստվածապաշտության*, որովհետև մարմնի վարժությունը քիչ բանի համար է օգտակար, բայց *աստվածապաշտությունն ամեն բանի համար օգտակար է*՝ ունենալով *այժմյան* և *գալու կյանքի* խոստումը» (Ա Տիմոթ. 4.7,8):

Մի՛ սխալվեք՝ մտածելով, որ այս առասպելներն անլուրջ և անվնաս են միայն՝ որովհետև մարդիկ պիղծ ու պառավական են անվանում դրանք: Այդ առասպելներն այդպիսին չեն: Դրանք հեքիաթներ կամ առակներ չեն, որոնք հորինել են՝ ճշմարտութ-

յունը սովորեցնելու համար: Դրանք դևերի վարդապետություններ են, որոնք ուղարկված են մեզ մոտ՝ սպանելու, գողանալու և կործանելու համար:

Գոյություն չունի ճշմարիտ իմաստություն՝ Աստծո խորհրդից դուրս:

Հիսուսը երբեք կանգ չի առնում՝ ասելով *այն, ինչ մենք ուզում ենք լսել.* Նա ավելի խորն է գնում՝ ասելով *այն, ինչ մենք պետք է լսենք:*

Մեր ջրհորից ջուր վերցնելը

Մեզնից ամեն մեկի ներսում իսկական ջրհոր կա: Այն մեր անձն է, որից մենք ջուր ենք վերցնում: Երեմիան հոր է անվանում այն.

> «Որովհետև Իմ ժողովուրդը կրկնապատիկ չարիք գործեց. Ինձ՝ կենաց ջրի աղբյուրիս, թողեցին, որ իրենց համար հորեր փորեն՝ ծակծակոտ հորեր, որոնք չեն կարող ջուրը պահել» (Երեմիա 2.13):

Մեր անձ-ջրհորները կարող են տարբեր լինել՝ շատ ծանծաղից մինչև շատ խորը: Ջրի մակարդակը դրանցում կարող է բարձրանալ կամ իջնել՝ ըստ մեր «տարողության»: Կարևոր չէ, թե որքան խորն է ջրհորը... եթե այն ճաքեր ունի, ջուր չի պահի: Ժամանակի ընթացքում ջրհորը կարելի է խորացնել, ամրացնել և նորոգել: Մեր անձն անոթ է՝ նման իսկական ջրհորի. դրանում մենք պահում ենք մեր խորին փափագները, վախերը և ցանկությունները:

Երբեմն իմ անձի ջրհորի ջուրը լճացած է թվում: Այլ դեպքերում ես իսկապես զգում եմ ջրի հոսքը, բայց դրանում միշտ ջուր կա՝ անկախ այն բանից, ջրհորը դատա՞րկ է, կիսով չափ լի՞ք է, թե՞ արտահոսում է: Հին ժամանակներում թշնամիները լցնում էին ջրհորները հողով, քանի որ հասկանում էին, որ ջուրը կյանքի աղբյուր է: Մեր կյանքի կարծրացած բնագավառները կարող են անել նույնը մեր ջրհորի հետ:

Երբ թվում է, թե մեր ջրհորը ճնշված է, մենք կարող ենք բացել այն՝ թույլ տալով, որ մեր անձի խորը տրտմությունները և փափագները ձայն ստանան: Երբեմն, երբ ես զգում եմ, որ իմ

ջրհորը խավարել և պղտորվել է, նույնիսկ երբ թշնամանք եմ զգում իմ ներսում, ընդամենը անհրաժեշտ է մեկ երգ, որպեսզի բացեմ այն և թարմացնեմ իմ անձը: Ծիծաղը, ընտանիքի և աստվածապաշտ ընկերների հետ ժամանակ անցկացնելը լցնում են իմ ջրհորը: Աստվածաշունչ կարդալը, իմ օրագրում գրառումներ անելը և աղոթքը թարմացնում են ինձ՝ շոգ եղանակին սառը աղբյուրից կուշտ ջուր խմելու պես:

Անցյալ ունեցող կանայք

Բոլորս էլ անցյալ ունենք: Պարզապես մեզնից մի քանիսի անցյալն ավելի «ճչացող» է, քան մյուսներինը: Ոմանց անցյալը լավն է եղել, մյուսներինը՝ սարսափելի: Այնքան էլ կարևոր չէ՝ ձեր անցյալը դաժա՞ն էր, թե՞ բարի էր ձեր հանդեպ: Գոյություն ունի ավելի մեծ վտանգ՝ երբ մենք փորձում ենք ապրել այն բանով, ինչն արդեն չկա: Մենք չենք ստեղծվել, որ ապրենք փառքի կամ ամոթի ստվերում: Մենք ստեղծվել ենք, որ ապրենք ներկայի լույսի մեջ և նայենք ապագայի ավելացող պայծառությանը: Այսպիսին է արդարների ճանապարհը:

Ես հասկացել եմ, որ մարդկային բնությունը հակված է ետ նայելու և քննարկելու անցյալը, մինչդեռ Աստված առաջ է նայում և հռչակում է մեր ապագան: Մարդկանց պատմությունները լսելը վատ չէ, բայց առաջ շարժվելու համար շատ ավելի կարևոր է, որ իմանանք նրանց երազանքները:

Ճանապարհորդելով և քարոզելով՝ ես հազարավոր կանանց կյանքում հույս հռչակելու արտոնություն եմ ունեցել: Երանի՜ տեսնեիք, թե ինչպես էին լուսավորվում կանանց դեմքերը, երբ ես համարձակ հռչակում էի.

> «Ձեր կյանքի հարձակումներն ավելի շատ կապված են այն բանի հետ, թե ինչպիսին դուք կարող եք լինել ապագայում, քան՝ այն բանի հետ, թե ինչպիսին եք եղել անցյալում»:

Հանկարծ նրանք հասկանում են, որ իրենց կյանքն ավարտված չէ: Նրանք հասկանում են, որ իրենց կյանքը նպատակ ունի,

և հենց այդ պատճառով էր թշնամին միտումնավոր և կանոնավոր հարձակումներ գործում իրենց վրա: Այդ պահին նրանք հասկանում են այն, ինչը ես ուզում եմ, որ իմանաք: *Ոչ մի դեպքում* կարևորը ձեր անցյալը չէ, այլ *միշտ*՝ ձեր ապագան: Այո՛, մեր որոշումները հետևանքներ ունեն. ես հասկանում եմ դա: Այնուամենայնիվ, անկախ այն բանից, թե ինչ եք դուք արել, Աստված արդեն գնացել է ձեր առջևից և ճանապարհ է պատրաստել այնտեղ, որտեղ թվում էր՝ ճանապարհ չկա:

Դուք ետ եք նայում ձեր կյանքին՝ մտածելով, որ ձեր արարքները փակել են միակ դուռը, որը դուք երբևէ կունենաք: Բայց գիտե՞ք, որ դա սուտ է: Այո՛, այդ դուռը փակ է, բայց եթե շրջվեք, դուք կգտնեք մեկ այլ դուռ, որը սպասում է ձեզ: Միգուցե այդ դռան տեսքն այլ է, միգուցե այն ավելի դժվար է բացել, բայց եթե դուք համագործակցեք Աստծո հետ, Նա միշտ կհասցնի ձեզ այնտեղ, որտեղ պետք է լինեք: Նա կտա ձեզ անհրաժեշտ գործիքներ՝ խորը և ամուր պատերով ջրհոր կառուցելու համար, որից դուք կարող եք ջուր հանել:

Խնդիրն այն է, որ մեզնից շատերը նստում են ճաքեր ունեցող և ծանծաղ երազանքների ջրհորի մոտ և լաց են լինում: Մենք ասում ենք. «Երանի՜ ես չանեի դա: Ես փչացրի ամեն ինչ»:

Դա անհնար է: Իմ հրաշալի՛ ընկեր, դուք չունեք այդպիսի կարողություն: Այն, որ դուք անցյալ ունեցող կին եք, դեռ չի նշանակում, որ չեք կարող ապագա ունենալ: Այն փաստը, որ դուք վատ անցյալ եք ունեցել, իրավունք չի տալիս մարդկանց վերահսկել ձեր ապագան: Ձեր ապագան վերահսկում է Աստված: Սբ. Օգոստինոսը լավ խորհուրդ է տալիս մեզ այն մասին, թե ինչպես սկսենք խորացնել մեր ջրհորը.

> «Ուզո՞ւմ ես վեր բարձրանալ, սկսի՛ր ներքև իջնելով: Դու նախագծում ես այնպիսի աշտարակ, որը կթափանցի ամպերի մե՞ջ: Նախ՝ դի՛ր խոնարհության հիմքը»:

Հիսուսը փափագում է հանդիպել մեզ մեր ամենացածր կետում ոչ թե մեկ ամգամ, այլ շատ անգամներ: Մենք հասկանում

ենք, որ պետք է հանդիպենք Նրան փրկության սկզբնական պահին, բայց մտածում ենք, որ դրանից հետո Նա թողնում է, որ ինքներս կառուցենք մեր կյանքը: Դրանից ավելի սխալ պատկերացում չի կարող լինել: Սկզբում մենք հանդիպում ենք Նրան՝ որպես փրկության Տիրոջ, իսկ հետո, շարունակաբար և խոնարհաբար Նրան, Ով վերականգնում է մեր անձը և նորոգում է մեր սրտի ճաքեր ունեցող հորերը:

Խորտակվել ծանծաղուտում

Երբ մասնակցում էի փրկարարների դասերի, իմացա, որ ամեն տարի խորտակվող մարդկանց մեծ մասը զրկվում է կյանքից անվտանգության գոտու սահմաններում: Երեք ամենաբարձր ռիսկային խմբերն են փոքր երեխաները (հինգ տարեկան և ցածր), անհոգ երիտասարդները (քսանից-քսանհինգ տարեկան տղաները) և տարեցները (ովքեր վաթսունն անց են): Հետաքրքիր է, որ խորտակվողների գրեթե կեսը մահանում է մինչև երկու մետր խորություն ունեցող ջրում: Նրանք խուճապի են մատնվում և չեն կարողանում ճիշտ օգտագործել այն, ինչ շրջապատում է իրենց: Հենց այս պատճառով, մարդկանց մեծ մասը իրականում խորտակվում է մեկ մետր կամ ավելի պակաս խորություն ունեցող ջրում: Եթե նրանք պահպանեին ինքնատիրապետումը, կիջեցնեին իրենց ոտքերը ջրի հատակին և պարզապես կկանգնեին՝ մինչև օգնություն ստանալը: Նրանք նաև կարող էին վեր ցատկել հատակից, կամ նույնիսկ՝ քայլել ջրի հատակով դեպի ավելի անվտանգ խորություն: Միշտ չէ, որ խորությունն է սպանում մարդուն, այլ՝ ծանծաղուտում խուճապի մատնվելը, երբ բախվում եք դեպքերի անսպասելի շրջադարձի: Անփույթ մարդիկ հարգանքով չեն մոտենում ջրին և անպարտելի են համարում իրենց:

Եկեք չլինենք այնպիսի կանանց սերունդ, ովքեր խորտակվում են ծանծաղուտում: Եկեք թո՛ւյլ տանք Սուրբ Հոգուն՝ խորը փորել:

Լավ կյանք

Երբ այս երկրային կյանքն ավարտվի, բոլորս հույս ունենք, որ կլսենք «Լավ, բարի և հավատարիմ ծառա» խոսքերը: «Լավ» բառը նկարագրում է, թե *ինչպես* ենք մենք անում այն, ինչի համար կանչված ենք: Ինչ վերաբերում է մարդկային կյանքին և սիրուն, գոյություն չունի «գերազանց» գնահատական: Կան միայն անկատար մարդիկ, ովքեր լավ են կատարում իրենց կոչումը: «Լավ» բառը պարգև է մեզնից ամեն մեկի համար: Այն նշանակում է՝ առողջ և ողջամիտ: Այն նկարագրում է մարդկանց, ովքեր ձախողվում և ընկնում են, բայց ամեն անգամ կրկին ոտքի են ելնում: Մենք միշտ պետք է ոտքի ելնենք՝ ամեն ընկնելուց հետո:

Ահա թե ինչպիսի դիրքորոշում մենք պետք է ունենանք, եթե ուզում ենք զարգացնել այնպիսի խորություն, որը կպահպանի մեզ: Լսե՛ք, թե ինչպես է «Ավյուն» թարգմանությունը վերծանում Առակաց 24.16-ը.

> «Որովհետև Աստծուն սիրողները կարող են նեղություն կրել
> Եվ սայթաքել յոթ անգամ,
> Բայց նրանք շարունակ կբարձրանան՝
> Նորից ու նորից» (ՏՊՏ):

Նեղությունը՝ կյանքի համալսարանն է: Ամեն դասարանի ուսման վճարը կարելի է չափել այն բանով, թե ինչ է պահանջվում ձեզնից՝ *ևս մեկ անգամ ոտքի կանգնելու համար:* Ոտքի կանգնելը, հայելու մեջ նայելը և խոստովանելը, որ դուք սխալ եք եղել, կարող է դժվար լինել և նույնիսկ՝ թանկ նստել ձեզ վրա: Բայց անօրենների համար սայթաքումը ճակատագրական է դառնում.

> «Բայց անարդարները
> Ցած են ընկնում միայն մեկ փորձանքի պատճառով
> Եվ այլևս չեն կարողանում բարձրանալ» (ՏՊՏ):

Ես հիշում եմ, որ հետևում էի երկու փայլուն և օժտված ծառայողների, որոնք սայթաքեցին և ընկան միևնույն հանգամանքներում, բայց բոլորովին տարբեր կերպով արձագանքեցին իրենց վերականգնման ընթացքին:

Հովիվներից մեկը հնազանդվեց այն ծրագրին, որը նրա եկեղեցական խորհուրդը և նրա վերականգնման համար ընտրված թիմն առաջարկեցին իրեն: Այդ ծրագիրը շատ բան էր պահանջում այդ առաջնորդից, նրա կնոջից և ընտանիքից: Նրանք թողեցին ամեն ինչ և տեղափոխվեցին այն քաղաքից, որտեղ շրջապատված էին ընկերներով և ապրում էին մինչև այդ պահը. նրանք թողեցին այն եկեղեցին, որը հիմնադրել էին: Միացան նոր եկեղեցու, որը պետք է օգներ նրանց բժշկություն ստանալ: Նրանք թողեցին այն ամենը, ինչ գիտեին, քանի որ համոզվեցին, որ այդ մոտեցումը լավագույնն էր բոլորի բժշկության համար:

Համոզված եմ՝ կային պահեր, երբ նրանք զգում էին, որ իրենցից չափից շատ էին խնդրում, կամ որ իրենց հանդեպ անարդար էին վարվում: Ես գիտեմ, որ նրանք խոցվել էին այն մարդկանց ծաղրանքից, որոնց ընկերներ էին համարում: Որտեղ կան մարդիկ, այնտեղ միշտ սխալվելու հավանականություն կա: Բայց նրանք մաքուր պահեցին իրենց սրտերը վիրավորանքից և որոշեցին ապրել իրենց կյանքի ամեն օրը՝ նայելով առաջ, ոչ թե՝ ետ:

Ջոնը ճաշում էր այդ առաջնորդի հետ, երբ նա անցնում էր իր վերականգնման ընթացքը. նա հանգստանում էր, ծառայում էր, սովորում էր և բժշկություն էր ստանում: Ժամանակն անցավ. այսօր նրանք շարունակում են առաջ գնալ: Նրանք առողջ զույգ են, նրանց ամուսնությունը լիարժեք է, և նրանց երեխաները ծաղկունք են ապրում: Նրանք սերտ կապեր ունեն մի խոշոր միսիոներական կազմակերպության հետ Ամերիկայում, ինչը թույլ է տալիս նրանց կիսվել իրենց կյանքի դասերով, օգնել այլ առաջնորդների բժշկություն ստանալ և թույլ չտալ, որ այլ առաջնորդներ սայթաքեն նույն կերպով, ինչպես իրենք: Մինչև այդ դեպքը, ես սիրում էի նրանց, բայց դրանից հետո իմ հարգանքը նրանց հանդեպ ավելացավ: Ես այնքան շնորհակալ եմ, որ նրանք ընկած չմնացին և կրկին ու կրկին ոտքի ելան: Թեև դժվար էր, բայց նրանք չհեռացան իրենց ընթացքից:

Մյուս առաջնորդը և նրա կինը բոլորովին այլ դիրքորոշում ունեցան: Ես հիշում եմ այն վաղ շրջանը, երբ Ջոնը շփվում էր

այդ առաջնորդի հետ հաղորդագրությունների միջոցով: Ջոնը խրախուսում էր նրան չհեռանալ իր ընթացքից՝ անկախ տեղի ունեցածից: Այդ մարդը համաձայնեց: Բայց երբ սկսվեցին դժվարությունները, նրանք չդիմացան և որոշեցին թողնել վերականգնման ընթացքը: Նրանց թվում էր, որ այն, ինչ իրենց առաջնորդները խնդրում էին իրենցից, անտրամաբանական էր, և որ իրենց հետ անարդարացի էին վարվում: Գուցե ինչ-որ չափով դա ճիշտ էր... միայն Հիսուսը գիտի:

Ողբերգությունն այն է, որ նրանց վիրավորանքը ետ տարավ նրանց դեպի այն ճահիճը, որով նրանք արդեն անցել էին: Նրանք մասնագետներ դարձան այն հարցում, թե որքան սխալ էին մարդիկ վարվել իրենց հանդեպ: Ցավոք, նրանք կորցրին այն ամենը, ինչ ձեռք էին բերել իրենց ծառայության ընթացքում:

Երկրորդ միջոցը, որով դուք կարող եք ընկնել և հեռանալ ձեր ընթացքից այն է, երբ որոշում եք դիտարկել ձեր սայթաքումը որպես ցմահ դատավճիռ, ոչ թե՝ կյանքի դաս: Այն, որ դուք ձախողվել եք, անհաջողակ չի դարձնում ձեզ: Քանի դեռ դուք ողջ եք, դուք կբախվեք անբարենպաստ իրավիճակների: Մի՛ մտածեք, որ դա չի վերաբերում որոշ մարդկանց: Պարզապես ոմանք ավելի պատվով են կրում դժբախտությունները, քան մյուսները: Ես շատ բան եմ տեսել այս կյանքում՝ հասկանալու համար, որ դրանից անկարելի է խուսափել: Մարդիկ ցավ կպատճառեն և կհիասթափեցնեն ձեզ՝ թե՛ գիտակցաբար, թե՛ անգիտակցաբար: Կյանքը կպատճառի ձեզ ցավ կամ, լավագույն դեպքում, անհարմարություն: Դժվարություններ լինում են բոլորի կյանքում՝ ինչ-որ ժամանակ և ինչ-որ չափով: Այնուամենայնիվ, կա մի հրաշալի լուր: Եղել են շատ բաներ, որոնք ժամանակին այնքա՜ն ցավոտ էին, որ ես մտածում էի, որ երբեք չեմ մոռանա: Բայցևայնպես, այսօր ես հազիվ եմ կարողանում հիշել դրանք: Ինչո՞ւ: Ես ոտքի ելա և շարունակեցի առաջ գնալ: Ճանապարհին ինձ սպասում էին նոր դժվարություններ: Իմ կամրջի տակով այնքա՜ն ջրեր են անցել, որ այն բաները, որոնք, իմ կարծիքով, անհաղթահարելի էին ինձ համար, երբ ես երեսունն անց էի, «մագիստրոսի աստիճան» շնորհեցին ինձ կյանքում հիմա, երբ հիսունն անց եմ:

Մեր սայթաքումներից յուրաքանչյուրը՝ սովորելու ևս մեկ հնարավորություն է: Մենք սկսում ենք ճանաչել կյանքի խոչընդոտները և վտանգները: Մենք ձիգ կապում ենք մեր կոշիկների քուղերը, մենք կարդում ենք Խոսքը, որպեսզի ճանապարհը մեր առջևում լուսավորվի: Ամեն անգամ, երբ ոտքի ենք ելնում, մեր կարողությունն ավելանում է: Մեր ջրիորներն ավելի են խորանում, և Սուրբ Հոգու կենդանի ջրերն ավելանում են մեզանում:

Հավատարիմ՝ մինչև վերջ

Շարունակենք խոսել ջրիորների մասին: Ջրիորը, ինչպես և աղբյուրը, թարմ ջուր է մատակարարում: Երբ մենք ստանում ենք մեր կյանքը և ուժերը կենդանի ջրի աղբյուրից, ինքներս ենք դառնում աղբյուր, որը թարմություն է բերում մարդկանց: Կենդանի ջուր ունեցող խորը ջրիորները գիտեն, որ իրենց աղբյուրն անսպառ է: Երբ այսպիսին դառնանք, մարդիկ, նայելով մեզ, չեն տեսնի շաղ տված պղնձե մանրադրամ ծանծաղ ջրի հատակին: Նրանք կտեսնեն Աստծո անսահման հավատարմությունը:

«Լավ, բարի և հավատարիմ ծառա» արտահայտությունը նաև խոսում է ավարտի մասին: Աստվածաշնչում կան բազմաթիվ պատմություններ և առակներ թե՛ լավ, թե՛ վատ ավարտի մասին: Գրված է Նոյի մասին, որի մեծ նավաշինական նախագիծը տարիներ տևեց: Գրված է Սամսոնի մասին, ով, չնայած իր մեծ սխալին, ավարտեց ընթացքը՝ տպավորիչ կերպով ցուցադրելով աստվածային զորությունը: Գրված է նաև Պետրոսի և Պողոսի մասին, որոնց կյանքում Քրիստոսին ուրանալը և հալածելը ճանապարհ բացեց զորավոր ծառայությունների համար: Ի տարբերություն նրանց, գրված է մի մարդու մասին, ով սկսեց կառուցել՝ առանց լավ հաշվելու իր ծախսերը: Նա լավ սկսեց, բայց ծաղրի արժանացավ՝ չավարտելու պատճառով (Ղուկ. 14.27-29): Եվ նույնպես, գրված է մի ծառայի մասին, ում մեկ տաղանդ վստահվեց, և նա որոշեց թաղել այն մինչև իր տիրոջ վերադարձը: Մետաղադրամները չեն աճում հողի մեջ. այնպես որ,

նրա մոտ մնաց այն, ինչով նա սկսել էր: Քանի որ նա ավարտեց այնքանով, որքանով սկսել էր, նա անօրեն համարվեց, և նրա տեղը որոշվեց այն մարդկանց հետ, ովքեր դրսում էին և ներս էին նայում (տե՛ս Մատթ. 25.14-30):

Բոլոր այս պատմությունները ցույց են տալիս, որ ամենից կարևորն այն չէ, թե ինչ արագությամբ ենք առաջ գնում, այլ՝ թե ինչպես ենք ավարտում մեր *ընթացքը:* Հաստատակամ, հավատարիմ և կայուն հնազանդությունը մշտապես գերադասելի է գործունեության և խանդավառության անփույթ և անկանոն պոռթկումներից: Եվ եթե մենք սայթաքենք ճանապարհին և նույնիսկ ընկնենք, բայց բարձրանանք և շարունակենք գնալ ճիշտ ուղղությամբ, Աստված տուն կհասցնի մեզ:

Ամենից կարևորն այն չէ, թե ինչ արագությամբ ենք առաջ գնում, այլ՝ թե ինչպես ենք ավարտում մեր ընթացքը:

Այս կյանքում մեր ընթացքը լավ անցնելու համար պահանջվում է փորել խորը և ամուր պատերով ջրհորներ, իսկ դրա համար մենք պետք է նվիրված լինենք, որ հավատարմորեն *ավարտենք* այն, ինչը սկսում ենք: Ամեն մեկը կարող է երազանքների ջրհոր փորել, բայց մենք ուզում ենք փորել խորը ջրհորներ՝ կյանքի հորեր, որոնց պատերն ամրացված են Աստծո Խոսքով և նորոգված են Հոգու թարմացնող աղբյուրներով: Հենց դրանում մենք կարող ենք գտնել Աստծո մեծ վարձատրությունը մեզ համար՝ կյանք և խոստում՝ առանց մրցակցության:

Հարցեր քննարկման համար

1. Ձեր կյանքի ո՞ր բնագավառն է Աստված «պեղում» հենց հիմա:
2. Ինչպե՞ս կնկարագրեիք այն կնոջը, ով խորը ջրհոր է:
3. Հնարավո՞ր է հոգևոր անձնավորություն լինել՝ առանց հետևելու Աստվածաշնչին:
4. Ի՞նչն է լցնում ձեր անձի ջրհորը: Ի՞նչն է դատարկում այն:
5. Ինչպե՞ս կարող եք ավելի լավ հոգ տանել ձեր ջրհորի մասին:

9

Դուստր՝ առանց մրցակիցների

> Բռնակալը մահանում է, և նրա իշխանությունն ավարտվում է. նահատակը մահանում է, և նրա իշխանությունը սկսվում է:
>
> Սյորեն Կիերկեգոր

Այն կինը, որի մասին ես կխոսեմ, Անարգեց աշխարհի ամենաազդեցիկ և այլասերված առաջնորդին:

Համարձակ և անզուգական կերպով ներկայացրեց Ավետարանը:

Ենթարկվեց ծեծերի և փորձվեց բոլոր հնարավոր ձևերով, բայց հավատարիմ մնաց Ավետարանին, իր ընկերներին և իր Տիրոջը:

Բանտարկվեց, բայց նրա ազդեցությունն անկարելի էր սահմանափակել:

Ամուրի էր, բայց երբեք միայնակ չէր:

Դասվում էր առաքյալների շարքում, և առաջին եկեղեցու պատմաբաններն ասում են, որ նրա ծառայության հրաշքները և նշանները գրեթե անգերազանցելի էին:

Միգուցե մտածեք, թե ինչո՞ւ դուք ոչինչ չգիտեք նրա մասին:

Ես հասկանում եմ ձեզ, քանի որ ինքս եմ միայն վերջերս ծանոթացել նրա հետ: Նա ընդամենը մեկն էր եկեղեցու բազմա-

թիվ մայրերից, որոնց անուններն անհայտացել են ժամանակի ավազների տակ: Կյանքիս ամբողջ ընթացքում ինձ ընդամենը պատառիկներ էին հասնում նրա սխրագործություններից: Ես ուզում էի ծանոթանալ նրա հետ: Ինձ չէին գոհացնում իմ ունեցած սակավ տվյալները. այնպես որ, ես ուսումնասիրում էի նյութեր եկեղեցու պատմությունից, որպեսզի գտնեի նրան. ես փնտրտուքի մեջ էի: Ջանգահարում էի աստվածաբանների, առցանց որոնումներ էի կատարում և գրքեր էի գնում: Երբ իմացա նրա անունը, կարողացա բավականաչափ նյութեր հավաքել՝ նրա հետ ծանոթանալու համար: Եվ երբ ավելին իմացա նրա մասին, ես մտածեցի, որ անշուշտ, դուք նույնպես պետք է ծանոթանաք նրա հետ:

Նրա անունը Փոտինա է (կամ՝ Փոտինի), ինչը հունարենում նշանակում է «լուսավորված»: Նա ընտրեց այդ անունը, երբ մկրտվեց՝ ընդունելով քրիստոնեական հավատքը: Ինչպես և ամեն մեկիս կյանքում, Հիսուսը հեղեղեց նրա կյանքը լույսի հայտնությամբ: Նա Քրիստոսի նվիրյալ հետևորդներից էր և այն հավատացյալների թվում էր, ովքեր հավաքված էին վերնատանը: Երբ Սուրբ Հոգին զորությամբ իջավ նրանց վրա, նա այդտեղ էր: Կրակի լեզուներից մեկը հանգչեց նրա վրա. նա լցվեց Սուրբ Հոգով և սկսեց խոսել այլ լեզուներով: Պենտեկոստեի օրը Փոտինան հանձնարարական ստացավ Ավետարանը մինչև երկրի ծայրերը քարոզելու մասին:

Մեր խիզախ քույրը հրաժարվեց այն ամենից, ինչը խորհրդանշում էր իր կյանքը և հարմարավետությունը, և ուղևորվեց հեռավոր Աֆրիկա: Նա մենակ չգնաց, իր հետ տարավ գրեթե ամբողջ ընտանիքը: Հանդիպումը Քրիստոսի հետ այնպիսի ազդեցիկ փոփոխություն բերեց նրա կյանքում, որ թե՛ նրա որդիները, թե՛ հինգ քույրերը նույնպես դարձի եկան: Փոտինան, նրա որդի Հովսեփը և նրա քույրերը ճանապարհվեցին մինչև աշխարհի ծայրերը՝ ինչպես Հիսուսը պատվիրեց Գործք 1.8-ում:

Աֆրիկայում նրանք հավատարմորեն գործեցին՝ տարածելով Քրիստոսի Ավետարանը Կարթագենում, և աներևակայե-

լի պտուղ ունեցան: Երբ նրանք իմացան, որ Ներոնը՝ խելագար կայսրը, ձերբակալում և հալածում է քրիստոնյաներին իր կայսրության մեջ, Փոտինան խնդրեց Աստծուն իմաստություն տալ իրեն: Հիսուսը հայտնվեց նրան երազի մեջ և կարգադրեց Հռոմ գնալ և ընդդիմանալ նրան: Այնպես որ, Ներոնից փախչելու փոխարեն՝ նրանք գնացին ուղիղ դեպի փոթորկի կենտրոնը: Փոտինան, նրա որդին և քույրերն անհապաղ Հռոմ գնացող նավ նստեցին՝ բազմաթիվ կարթագենցի քրիստոնյաների հետ:

Նրանց զգուշացրին, որ եթե իրենք որոշեին բացահայտ խոսել իրենց քրիստոնեական հավատքի մասին, նրանք վնաս էին կրելու, և հորդորեցին սահմանափակվել մասնավոր պաշտամունքով: Ահա մի հատված, որում նրա որդի Վիկտորը, ով հռոմեական սպա էր, զրուցում էր Սեբաստիան անունով մի պաշտոնյայի հետ:

> ««Վիկտո՛ր, ես գիտեմ, որ դու, քո մայրը և քո եղբայրը Քրիստոսի հետևորդներն եք: Որպես ընկեր՝ ես խորհուրդ եմ տալիս քեզ հնազանդվել կայսեր կամքին: Եթե հայտնես մեզ քրիստոնյաների մասին, նրանց ունեցվածքը կփոխանցվի քեզ: Ես կգրեմ քո մորը և եղբորը՝ խնդրելով նրանց հրապարակավ չքարոզել Քրիստոսի մասին: Թող նրանք ծածուկ պահեն իրենց հավատքը»: Վիկտորը պատասխանեց. «Ես ուզում եմ քրիստոնեությունը քարոզող լինել՝ ինչպես իմ մայրը և եղբայրը»: Սեբաստիանն ասաց. «Ո՜հ, Վիկտո՛ր, բոլորս գիտենք, թե ինչ պատուհասներ են սպասվում քեզ, քո մորը և եղբորը»»[1]:

Քանի՞սը բացահայտ կերպով կդավանեին իրենց հավատքը, եթե իմանային, որ իրենց կյանքում պատուհասներ են գալու այդ պատճառով: Ավելի ուշ նրա որդի Վիկտորը միացավ իր մորը, եղբորը և մորաքույրներին: Ահա ևս մեկ հատված նույն պատմական աղբյուրից, որը պատմում է, թե ինչպես Փոտինան առաջին անգամ հանդիպեց Ներոնին:

> «Փոտինիի (Փոտինայի) ժամանումը և գործունեությունը հետաքրքրություն առաջացրին մայրաքաղաքում: «Ո՞վ է այս կինը», - հարցնում էին նրանք: - «Նա եկել է այստեղ հետևորդների բազմության հետ և համարձակ քարոզում է Քրիստոսի մասին»: Ջինվորներին հրամայեցին տանել նրան կայսեր մոտ, բայց Փոտինին նրանցից առաջ

> անցավ: Փոտինին՝ իր որդի Հովսեփի և իր ընկերների հետ գնաց Ներոնի մոտ՝ մինչև որ իրեն հասցրին ձերբակալել: Երբ կայսրը տեսավ նրանց, հարցրեց գալու պատճառը: Փոտինին պատասխանեց. «Մենք եկել ենք՝ սովորեցնելու քեզ, որ հավատաս Քրիստոսին»: Հռոմի կայսրության կիսախելագար իշխանը չվախեցրեց նրան: Նա ուզում էր դարձի բերել այդ մարդուն»[2]:

Բնականաբար, Ներոնը չընդունեց նրա խոսքը: Նա պատվիրեց երկաթե ձողերով հարվածել նրանց ձեռքերին, ովքեր պնդում էին, որ Հիսուսի ձեռքերում էին: Պահապանները Փոտինային և նրա հետ եղողներին տարան պատժելու՝ նրանց հանդգնության համար: Հաջորդ երեք ժամվա ընթացքում նրանց ձեռքերին դաժանաբար հարվածում էին երկաթե ձողերով, բայց քրիստոնյաները ոչ մի ցավ չէին զգում և սաղմոսներ էին երգում, մինչ նրանց չարչարողներն ուժասպառ էին լինում: Քրիստոսի հետևորդներից ոչ մեկի ձեռքերին նույնիսկ հարվածի հետք չկար:

Երբ Ներոնն իմացավ, որ հարվածներն արդյունք չէին տվել, նա բանտարկեց նրանց և ծրագիր մշակեց, որ համոզեր Փոտինային և նրա քույրերին ուրանալ իրենց հավատքը: Այս անգամ նա որոշեց բարությամբ շահել նրանց: Նա հրամայեց, որ վեց գահ դրվի մեծ խնջույքի սրահում: Այդ վեց գահերի առջև նա հրամայեց ցուցադրել քույրերին ամեն ինչ Հռոմի հարստությունից: Նա ոչինչ չխնայեց, որպեսզի պատրաստեր մի հավաքածու, որը գրավիչ կլիներ կնոջ սրտի համար: Ոսկու և արծաթի հետ միասին՝ կանանցից ամեն մեկի առջև դրված էին թանկարժեք զարդեր և անկրկնելի գեղեցկություն ունեցող հանդերձներ: Այդ հարստությունները՝ հեշտասեր և գեղեցիկ կյանքի հետ մեկտեղ, կարող էր նրանցը լինել, եթե միայն նրանք ուրանային իրենց քրիստոնեական հավատքը և զոհաբերություն մատուցեին հռոմեական աստվածներին: Քույրերին համոզելու համար նա պատվիրեց իր դստերը՝ Դոմնինային, խոսել նրանց հետ իր փոխարեն:

Երբ Դոմնինան մուտք գործեց այդ սրահը, նա ջերմորեն ողջունեց Փոտինային, և իր ողջույնի ընթացքում հիշատակեց Քրիստոսին: Փոտինան կարծեց, թե նա հավատացյալ է, և

գրկախառնությունից հետո սկսեց կիսվել նրա հետ Քրիստոսի սիրով և սքանչելիքներով՝ ինչպես իր հավատակից քրոջ: Դոմնինան այն աստիճան տպավորվեց, որ Փոտինային ընդդիմանալու փոխարեն՝ դարձի եկավ և ընդունեց քրիստոնեությունը: Բայց նա մենակ չէր. նրա աղախինները նույնպես դարձի եկան՝ լսելով քույրերին, ովքեր համարձակ քարոզում էին Ավետարանը: Փոտինան կարգադրեց Դոմնինային և նրա աղախիններին դուրս հանել այդ սրահի ամբողջ հարստությունը և բաշխել այն աղքատներին, ում նրանք կգտնեին Հռոմի փողոցներում: Դոմնինան մկրտվեց և նոր անուն ստացավ:

Ներոնի զայրույթին չափ չկար: Նա հրամայեց այրել Փոտինային, նրա քույրերին և որդիներին: Նա մեծ հնոց կառուցեց, բայց երբ նրանք գցվեցին կրակի մեջ, այն չդիպչեց նրանց: Դրանից հետո Ներոնը հրամայեց թունավորել նրանց: Երբ թունավորողը եկավ, Փոտինան առաջինն էր, ով հոժարությամբ ընդունեց թույնը, բայց այն արդյունք չունեցավ ո՛չ նրա վրա, ո՛չ մյուս քրիստոնյաների: Այդ ժամանակ թունավորողը, որին Ներոնն ուղարկել էր, ընդունեց Քրիստոսին: Նրանք բանտարկված մնացին իրենց հավատքի համար: Հաջորդ երեք տարիների ընթացքում նրանք ծեծվեցին և ենթարկվեցին բոլոր տեսակի կտտանքների, որոնք խեղաթյուրված կայսրը կարող էր հորինել:

Բայց որքան Ներոնը հալածում էր նրանց, այնքան նրանց համբավն ավելանում էր: Նրանց հավատքի և զորության լուրը տարածվեց կայսրության ամբողջ մայրաքաղաքով, և նրանց բանտարկության ընթացքում այդ բանտը երկրպագության տուն դարձավ: Հռոմի քաղաքացիները պարբերաբար գալիս էին հավատացյալների բանտախցերի մոտ՝ աղոթքների և Ավետարանը լսելու համար: Երեք տարի շարունակ Քրիստոսի մասին ուղերձը տարածվեց Հռոմի բանտից, և շատերը հավատացին:

Ներոնը կանչեց իր նախկին ծառաներից մեկին, որին բանտարկել էր, և նա պատմեց այն ամենը, ինչ կատարվում էր բանտում: Ներոնը հրամայեց անմիջապես գլխատել բոլոր քրիստոնյաներին, որոնց նա բանտարկել էր: Միակ բացառությունը

Փոտինան էր: Նա հուսով էր, որ կկոտրի նրա վճռականությունը տրտմության և մեկուսացման միջոցով: Այնպես որ, նա հրամայեց հանել Փոտինային բանտից և իջեցնել մի խորը, խավար և չոր փոսի մեջ: Ըստ մի քանի աղբյուրների՝ դրանից առաջ նրան դաժանաբար մտրակեցին: Նա շաբաթներ շարունակ թողեց Փոտինային մի վայրում, որը նման էր բաց գերեզմանի: Նա լիովին մենակ էր: Փոտինայի կյանքի այդ խավար օրերում նա լաց էր լինում, բայց՝ ոչ իր սիրելիների կորստի համար: Նա գիտեր, որ նրանք ազատվել էին ամեն տեսակի երկրային բանտարկությունից և արդեն երկնային ընդունելության էին արժանացել: Նա տրտմում էր, որ չէր ստացել նահատակվելու արտոնություն իր որդիների և քույրերի հետ և զրկվել էր նահատակի պսակից: Բոլոր աղբյուրներից, որոնք ես ուսումնասիրել եմ, թվում է՝ այդ շրջանն ամենադժվարն էր նրա համար:

Բոլոր պատմական աղբյուրները նրա մասին, որոնք ես կարդացել եմ, հիշատակում են այս ժամանակաշրջանը փոսի մեջ: Մի պատմության մեջ գրված է, որ նա մահացավ այդ չոր փոսի խորքերում, բայց ոչ թե հուսահատությունից, այլ՝ համաձայն իր որոշման: Նա տեսավ իր Փրկչին երազում, ինչպես Ստեփանոսը, և հանձնեց նրան իր հոգին: Այլ աղբյուրներ ասում են, որ նրան դուրս բերեցին այդ փոսից շատ երկար ժամանակ անց, և մի երազից հետո, որտեղ Հիսուսը հայտնվեց նրան, նա հեռացավ կյանքից բանտում: Ամեն դեպքում, այդ կնոջ կյանքը՝ կենդանի ջրի խորը ջրհոր էր, որը սնուցեց և թարմություն բերեց անթիվ մարդկանց:

Մերօրյա նահատակները

Փոտինան չունեցավ համակրողներ և երկրպագուներ. նրա կյանքի պտուղը՝ նահատակներն էին: Այդ կինն այնպիսի բան ուներ, ինչը ես նույնպես ցանկանում եմ: Նա անսասան վճռականություն ուներ, որը կարող է պետք գալ մեզ գալիք օրերում: Երբ աշխարհը բարեհաճությամբ է վերաբերվում եկեղեցուն, եկեղեցի հաճախողների թիվն ավելանում է: Բայց նվիրված հավատացյալ-

ները ծնվում են նեղությունների ժամանակ: Հռչակավոր կաթոլիկ պատմաբան Քրիստոֆեր Հենրի Դոուսոնը գրում է.

> «Եկեղեցին աճում էր դահիճների մտրակների և կացինների շուքի ներքո, և ամեն մի քրիստոնյա ապրում էր մարմնական կտտանքների և մահվան սպառնալիքով: Նահատակությունը վաղ քրիստոնեության ամենացայտուն առանձնահատկությունն էր: Այնպես չէր, որ նահատակությունը միայն վախ էր ներշնչում. այն նույնպես իդեալ էր և հույս էր: Քանի որ նահատակը լիարժեք քրիստոնյա էր, նա հաղթող և հերոս էր նոր հասարակության մեջ. նա հաղթող և հերոս էր նոր հասարակության պայքարում՝ հնի հետ: Նույնիսկ այն քրիստոնյաները՝ նահանջողները, ովքեր չէին դիմացել նեղության պահին, նայում էին նահատակներին՝ որպես իրենց փրկիչների և պաշտպանների»[3]:

Մենք ապրում ենք մի ժամանակաշրջանում, որում աննախադեպ այլասերություն, անօրինություն և բռնություն կա: Ամեն անգամ, երբ ես մտածում եմ, որ ավելի վատ չի կարող լինել... դա տեղի է ունենում: Քրիստոնյաները դեռ նահատակվում են այսօր, և այս աշխարհն արձագանքում է դրան ոչ թե վրդովմունքով, այլ՝ անտարբերությամբ: Իմ սիրտը կոտրվում է, բայց դա չի զարմացնում ինձ: Վերջերս ամերիկյան հողի վրա մի խումբ քրիստոնյա ուսանողներ նահատակվեցին իրենց հավատքի համար: Զինված մարդասպանը կրակում էր Քրիստոսին դավանողների գլուխներին և չդավանողների ոտքերին: Մեր լրատվամիջոցները վերածեցին այդ արարքը հրազենի վերահսկման խնդրի, փոխարենը որակեին այն որպես հանցանք՝ կրոնական ատելության հողի վրա:

Եթե մենք ճիշտ ենք հասկանում Աստվածաշունչը, ոչ մի առաջնորդ այս աշխարհում չի կարող թեթևություն և փրկություն բերել: Բայց դա չի նշանակում, որ մենք պետք է լուռ մնանք, երբ բախվում ենք խավարին. Փոտինին նույնպես չէր լռում: Մենք պետք է լինենք Ա Հովհաննես 4.4-ի կենդանի մարմնավորումը.

> «Դուք Աստծուց եք, որդյակներ, և հաղթեցիք նրանց, որովհետև ավելի մեծ է Նա, որ ձեզանում է, քան թե նա, որ այս աշխարհի մեջ է»:

Այլ երկրներում քրիստոնյաները գլխատվում են, և այդ վայրագությունների տեսանյութերը տեղադրվում են՝ որպես համաշխարհային զգուշացում նրանց, ովքեր կհամարձակվեն իրենց անվանել *խաչի մարդիկ:* Տեսնելով այդ ձևակերպումը՝ ես մտածում եմ, որ միգուցե այդ ոճրագործները հիշում են, թե ով ենք մենք, իսկ մենք արդեն մոռացել ենք:

Վերջերս ռազմատենչ մուսուլմանները ներխուժել էին մի քրիստոնեական հավաքույթի, որը տեղի էր ունենում Քենիայի համալսարաններից մեկում, և սպանել էին առավոտյան աղոթքի հավաքվածներին: Այնուհետև նրանք դուրս էին բերել բոլոր ուսանողներին իրենց հանրակացարանային սենյակներից և պահելով հրազենը՝ հարցրել էին նրանց հավատքի մասին: Կրկին՝ ովքեր իրենց քրիստոնյա անվանելու խիզախություն էին ունեցել, սպանվել էին: Այդ հարձակումն իրականացնող կազմակերպությունը պարծեցել էր իր սոցիալական ցանցերի էջերում, որ դա ընդամենը սկիզբն էր, և շարունակել էր՝ հավաստիացնելով *խաչի մարդկանց*, որ լինելու էր ավելին[4]:

Ժամանակն է, որ պատրաստ լինենք չարչարվելու Քրիստոսի համար: Ավելի լավ է պատրաստենք մեր սրտերը պատասխան տալու համար և պատրաստ լինենք չարչարվելու, քան թե հանկարծակիի գանք և ուրանանք Նրան: Մենք պետք է ունենանք միևնույն միտքը, որ ունեին աշակերտները Գործք 5.41,42-ում.

> «Իսկ նրանք *ուրախանալով* գնացին ատյանի երեսից, *որովհետև արժանի եղան Նրա անվան համար անարգվելու*: Եվ ամբողջ օրը չէին դադարում տաճարում և տներում սովորեցնել և Հիսուս Քրիստոսի մասին ավետարանել»:

Երբևէ հանդիպե՞լ եք այնպիսի մարդու, ում ծեծել են Քրիստոսին հավատալու համար: Դուք երբևէ խոսե՞լ եք ինչ-որ մեկի հետ, ով ցնծացել է, որ արժանի է եղել անարգվելու *այդ անվան* համար: Ես հանդիպել եմ այդպիսի մարդկանց: Այդ սրբերի կյանքը բնութագրվում է սրբությամբ՝ ոչ թե այն պատճառով, որ նրանց ծեծել են, այլ քանի որ նրանք հանդիպում են ունեցել

Հիսուսի հետ՝ որպես Նրա չարչարանքների մասնակից: Նրանք պսակված են այնպիսի շնորհքով, որը ես դեռ պետք է ճանաչեմ: Մարդիկ, որոնց ես հանդիպել եմ, աշխատում են Աստծո համար այնպիսի դաշտերում, որտեղ քրիստոնյա լինելը վտանգավոր է կյանքի համար: Նրանց կյանքը վտանգված է գրեթե ամեն օր: Խոսքը նաև իմ թանկ եղբայրների ու քույրերի մասին է, ովքեր թարգմանում են մեր գրքերը: Ճշմարտությունն այն է, որ այն, ինչ ես գրում եմ ապահովության մեջ, նրանք թարգմանում են վտանգի մեջ: Շատ հաճախ ես նույնիսկ չեմ համարում, որ արժանի եմ ծառայել նրանց հետ կողք կողքի: Նրանց կյանքերն ինձ հիշեցնում են Պողոսի խոսքերն Ա Կորնթացիների նամակում.

> «Եվ մենք ինչո՞ւ ամեն ժամանակ վտանգի մեջ ենք: Երդվում եմ ձեզ վրա ունեցած պարծանքովս, որ մեր Տեր Հիսուս Քրիստոսում ունեմ, թե՝ ես ամեն օր մեռնում եմ» (Ա Կորնթ. 15.30,31):

Արևմուտքի տկարությունը

Կարո՞ղ եմ անկեղծ լինել: Ես դողում եմ՝ մտածելով Արևմուտքի եկեղեցու մասին: Ցավոք, մեր օրերում շատ հաճախ կարելի է հանդիպել այնպիսի հավատացյալների, ովքեր անարգել են Նրա անունը: Ժամանակ առ ժամանակ զզվանք եմ վերապրում իմ իսկ անտարբերության և եսասիրության պատճառով:

Վերջերս Ջոնը և ես ընթրիքի սեղանի շուրջ զրուցում էինք մի քանի հովիվների հետ: Նրանք պատմում էին, որ իրենց եկեղեցական համայնքներին՝ այն մարդկանց, ովքեր, իրենց ասելով, Տեր են դավանում Հիսուս Քրիստոսին, մշտապես զգուշացնում են սեռական անբարոյության ծուղակների դեմ: Ի պատասխան՝ նրանք ստանում են դատարկ հայացքներ և թույլ արդարացումներ: Համատեղ ապրող զույգերը բացատրում են. «Մենք որոշել ենք, որ ամուսնանալու ենք. ինչո՞ւ չենք կարող միասին ապրել և սեռական հարաբերություններ ունենալ հիմա»:

Մեկ այլ ծառայող իր տրտմությունը հայտնեց այն մասին, որ մի ակնառու քրիստոնյա ծառայող պատրաստվում էր ամուսնալուծ-

վել իր կնոջից, թեև նրա արարքը ոչ մի սուրբգրային հիմք չուներ: Նրա խոսքով՝ այդ մարդը հասկանում էր, որ եթե ամուսնալուծվեր, հավանաբար, մոտավորապես մեկ տարի չէր կարողանա քարոզել, բայց դրանից հետո նա կրկին կվերադառնար: Ցավոք, այդ մարդը ճիշտ էր: Մարդկանցից վախենալն այլևս ետ չի պահում մեզ մեղքից. միայն Տիրոջ երկյուղը կարող է հեռացնել մեզ չարից:

Մի եկեղեցում հավաքույթ անցկացնելու ժամանակ հուզիչ պահ եղավ, երբ Սուրբ Հոգին հանձնարարեց հարյուրավոր կանանց՝ վերցնել իրենց խաչը և հետևել Հիսուսին: Դրանից հետո այդ եկեղեցու առաջնորդը ամբիոնի մոտ բարձրացավ և ասաց կանանց, որ նրանք որևէ ճնշում չզգան. Աստված չի ուզում, որ նրանք ինչ-որ բան *անեն:* Միայն նրանց ներկա *լինելն* արդեն բավական է: Մի՞թե:

Ես այնքա՜ն շնորհակալ եմ, որ Հիսուսը կանգ չառավ Աստծո Որդի *լինելով*, այլ հոժարությամբ զրկեց Իրեն Իր աստվածային բնությունից և արտոնություններից, որպեսզի *կատարեր* Աստծո ծառայի գործը մեր փոխարեն: Կարող եմ ասել, որ եկեղեցին այնքա՜ն խորն է ընկղմված և խճճված աշխարհի մեջ, որ դա վախեցնում է ինձ:

Անցյալ ունեցող կինը

Այնուամենայնիվ, Փոտինայի կյանքն այլ սկիզբ ուներ: Կար ժամանակ, երբ ինքն էր խորապես ընկղմված մեղքով լի կյանքի մեջ, և նրան ընդամենը խայտառակված վտարանդի էին համարում: Նա անցյալ ունեցող կին էր, ով ենթակա էր իր ժամանակվա օրենքներին և չուներ ոչ մի հույս ապագայի համար:

Աստվածաշունչը որոշ տեղեկություններ է հայտնում մեզ այդ կնոջ անցյալի մասին: Երբ մենք հանդիպում ենք նրան առաջին անգամ, նա անանուն, ամուսնալուծված և իր տնից հեռացված կին էր: Նա խնդիրներ ուներ շա՜տ բնագավառներում, այնպես որ ոչ ոք չէր կարող պատկերացնել, որ նա ծառայող կդառնար: Հասկանալով սա՝ առաջին անգամ նա Ավետարանի թեմային անդրադար-

ձավ հարցերի և ակնարկների ձևով: Միգուցե, ինչպես և մեր ընկերուհին, դուք զգացել եք մարդկանց դատաստանը ձեզ վրա այն աստիճան, որ ձեր խոսքերը հարցեր և ակնարկներ են մնացել:

Ներե՛ք նրանց:

Մարդիկ, ովքեր ձեզ կապում են ձեր անցյալի հետ... դեռ պետք է հայտնություն ստանան Աստծո ողորմության և վերստին ծնունդի զորության մասին:

Միգուցե հենց դուք եք վիճարկում ինքներդ ձեզ: Իմ անցյալը շատ հարցեր էր բարձրացրել ինձ համար: Այնուամենայնիվ, իմ կյանքի ամենախավար և ամենակեղտոտ բնագավառները փրկագնվելով՝ դարձան իմ ամենախորը ջրհորները: Թեև ճիշտ է, որ նորեկներին չպետք է արագորեն ծառայողական դիրք վստահել, սակայն անհրաժեշտ է խրախուսել ամեն քրիստոնյայի, որ վկայի Աստծո փրկարար զորության մասին: Եվ դրա հետ մեկտեղ, ոչ մի դեպքում չի թույլատրվում չարաշահել Հիսուսի թանկ շնորհքը, կամ օգտագործել այն որպես արդարացում՝ կրկին մեղանչելու համար (տե՛ս Հռոմ. 6.1,2): Փոխարենը՝ մենք պետք է թույլ տանք, որ Նրա շնորհքը փոխի մեր կյանքը, ավելացնի մեր արդարությունը և մեզ նոր անուն տա:

Մինչև «Լուսավորված» անունը ընտրելը, Փոտինան հայտնի էր միայն իր ազգությամբ: Մենք հանդիպել ենք նրան, երբ նա առանձին խոսում էր Հիսուսի հետ: Մեր ընկերուհին՝ սամարացի կինն է: Որքա՜ն զարմանալի է, որ այն կինը, ով նախկինում *հինգ* ամուսին էր ունեցել, մեկ օր գործելու էր իր *հինգ* քույրերի հետ: Սա ինձ դուր է գալիս, որովհետև հինգ թիվը Աստվածաշնչում խորհրդանշում է շնորհքը: Եվ այս կինն առատությամբ ստացավ Աստծո շնորհքը:

Ես միշտ սիրել եմ նրան: Տարիներ շարունակ ես մեծ կարողություն ունեցող կին եմ համարել նրան: Նա խորը ջրհոր էր, ով ապրում էր մակերեսային կյանքով: Նրա կրած դժվարությունները և որոշումների հետևանքները խորը, խավար և *չոր* փոս էին փորել նրա ներսում: Նրա անձի թշնամին որոշել էր, որ նրա ներսը մշտապես կոտրված էր լինելու, որ այդ փոսը մեկուսացնելու էր նրան, և այնտեղ թաղվելու էին նրա երազանքները:

Երբ կարդում եմ Հիսուսի և այս կնոջ զրույցը Հովհաննեսի 4-րդ գլխում, միշտ պատկերացնում եմ ինձ այդ պատմության մեջ: Կարծում եմ՝ աշակերտները մտածում էին, որ Հիսուսն ապահով կլիներ, եթե մենակ մնար ջրհորի մոտ: Դեռ ժամանակը չէր, որ գառնարածները բերեին իրենց հոտերը՝ խմեցնելու համար, իսկ ավելի վաղ այդ տարածքի կանայք արդեն ջուր էին վերցրել իրենց ընտանիքների համար: Ինձ դուր է գալիս, թե ինչպես է «Ավյուն» թարգմանությունը շարադրում նրանց զրույցի սկիզբը.

> «Հոգնած իր երկար ճանապարհից՝ Նա նստեց Հակոբի ջրհորի եզրին: Նա ուղարկեց Իր աշակերտներին գյուղ՝ սնունդ գնելու համար, որովհետև արդեն կեսօր էր: Շուտով մի սամարացի կին եկավ՝ ջուր հանելու համար: Հիսուսն ասաց նրան. «Ինձ ջո՛ւր տուր, որ խմեմ»» (Հովհ. 4.6-8, ՏՊՏ):

Հիսուսը հոգնած էր թե՛ երկար քայլելուց, թե՛ փարիսեցիներից: Ես տեսնում եմ Նրան՝ նստած Հակոբի հինավուրց ջրհորի եզրին: Մերձավոր Արևելքի աննահանջ արևն այրում էր Նրան, բայց Նա զգում էր զով օդը, որը բարձրանում էր ջրհորից: Հիսուսը նայում էր այդ խորը ջրհորի մեջ և մտորում դրա պատմության շուրջ՝ վերհիշելով այդ օրվա իրադարձությունները: Նրանց ավետարանչական հավաքույթները Հուդայում կտրուկ ընդհատվեցին, և նրանք երկար ու փոշոտ ճանապարհ անցան: Նա վերջ տվեց մկրտելուն, երբ իմացավ, որ կրոնական առաջնորդները ներկայացնում էին դա որպես մրցակցություն՝ Իր և Հովհաննեսի աշակերտների միջև (Հովհ. 1 գլուխ):

Ինչո՞ւ նրանք չէին հասկանում, թե ինչ էր իրականում կատարվում: Հիսուսը և Հովհաննեսը համագործակցում էին: Այո՛, բազմություններ էին գալիս: Մարդիկ հուսահատորեն քաղցած էին տարիներ տևող չորության պատճառով: Այժմ մարգարեական ծառայությունը և փրկության խոստումը պատրաստում էին մարդկանց: Նրանց կյանքերը վերականգնվում էին ապաշխարության և մկրտության հոսող ջրերով:

Այդ ամենն այնքա՜ն սուրբ և նվիրական էր, իսկ կրոնական առաջնորդները փորձում էին այնպես ներկայացնել տեղի ունե-

ցածը, ասես դա կրկես լիներ: Ահա թե ինչու Նա հեռացավ Հորդանանի ջրերից՝ գալով այդ անջրդի վայրը:

Նա մի պահ փակեց աչքերը փոշուց և կիզիչ արևից: Նա հանգստանալու էր այդ հինավուրց ջրհորի մոտ՝ սպասելով Իր աշակերտների վերադարձին: Նա խորը հոգոց հանեց: Հանկարծ Նրա սրտում սպասման զգացում արթնացավ, և զգաց Սուրբ Հոգու շշնջոցը. *«Ես նպատակ ունեմ այս անջուր սամարական դաշտում»:* Հիսուսը լսեց մեկ բառ՝ *հունձք:* Նա բացեց աչքերը և տեսավ Սամարիայի միայնակ դստերը, ով գալիս էր ջուր վերցնելու:

Նա մի մեծ անոթ էր կրում՝ նման այն անոթներին, որոնցով կանայք ջուր էին վերցնում արևածագին: Նրա անոթը դատարկ էր, ինչպես և նրա սիրտը: Այդ դուստրն այնքան խորը անկում էր ապրել, որ խուսափում էր նույնիսկ կանանց ընկերակցությունից: Աստվածաբանները համարում են, որ նա ջրհորի մոտ էր գնում օրվա ամենաշոգ ժամին, երբ մարդկանց հանդիպելը գրեթե անհավանական էր:

Նա հետևում էր այդ կնոջը: Նա նկատեց, որ տեսնելով Իրեն՝ այդ կինն արագորեն հեռացրեց իր հայացքը: Հիսուսի հագուստից երևում էր, որ Նա հրեա էր, իսկ հրեաները չէին շփվում սամարացիների հետ. նրանք անարգում էին նրանց: Այդ կինն առանց այդ էլ շատ խնդիրներ ուներ և նոր խնդիրներ չէր ուզում:

Նա զգուշանալով մոտեցավ ջրհորի հակառակ կողմը. իջեցրեց իր անոթը՝ պատրաստվելով ջուր հանել: Հիսուսը ձայն տվեց նրան: Հանկարծակիի եկած՝ կինը բարձրացրեց գլուխը և դադարեց ջուր հանելը: Նրա ձայնի մեջ ինչ-որ բան կար, ինչը բևեռեց կնոջ ուշադրությունը: Նրա ջուր խնդրելն ավելի նման էր հրավերի, քան պահանջի: Նա անվստահ հակառակվեց.

> «Ինչո՞ւ հրեա մարդը պետք է ջուր խնդրի սամարացի կնոջից: Հրեաները նույնիսկ չեն խմում սամարացու օգտագործած բաժակից» (Հովհ. 4.9, ՏՊՏ):

Պատկերացրեք, թե որքան խորն էր այդ նախապաշարմունքը, որ նույն ջրի բաժակն օգտագործելը ձեզ անմաքուր կդարձ-

ներ: Նա ոչ միայն սամարացի էր, այլև կին էր: Բայց Հիսուսը չէր վախենում խմել նրա բաժակից: Նա պատրաստվում էր խմել այդ կնոջը հասանելի բարկության բաժակը՝ նրա փոխարեն: Բացի այդ՝ Հիսուսը չէր ուզում օգտագործել նրան՝ ինչպես այլ տղամարդիկ, որոնց այդ կինը ճանաչում էր: Նա ուզում էր հայտնել Իրեն: Միգուցե Նա ուզում էր սփոփանք ստանալ այդ զրույցից: Միգուցե Նա հոգնել էր բոլոր ստերից, որոնք ամբարտավան կրոնական առաջնորդները խոսում էին Իր մասին: Միգուցե, ինչպես և մեզնից շատերը, Նա նույնպես մխիթարվում էր՝ բացելով Իր սիրտն ինչ-որ անծանոթի:

> «Հիսուսը պատասխանեց. «Եթե միայն *իմանայիր, թե ով եմ Ես, և այն պարգևը, որն Աստված ուզում է տալ* քեզ, դու՛ կխնդրեիր Ինձնից, որ խմեիր, և Ես *կենդանի ջուր* կտայի քեզ»» (խոսք 10, ՏՊՏ):

Կինը ցնցվեց: Ո՞վ էր այդ Մարդը, որ խոսում էր Աստծո պարգևի մասին: Նա շրջանցեց ջրհորը՝ մոտենալով Հիսուսին, որ տեսներ, թե ի՞նչ կար Նրա մոտ՝ նման համարձակ պնդում անելու համար: Միգուցե Նրա կուժը ոտքերի մո՞տ էր դրված: Նա չգտավ ոչինչ, ինչը կհաստատեր այդ Մարդու պնդումը: Արդյո՞ք Նա դատարկ խոստում տվեց՝ ինչպես բոլոր տղամարդիկ, որոնց ինքը ճանաչել էր: Հետաքրքրությունից դրդված՝ կինը վիճարկեց, թե արդյո՞ք Նա կարող էր հանել այդ կենդանի ջուրը:

> «Բայց տե՛ր, դու նույնիսկ դույլ չունես, իսկ այս ջրհորը *շատ խորն* է: Որտեղի՞ց ես գտնելու այդ «*կենդանի ջուրը»*» (խոսք 11, ՏՊՏ):

Նա մտածում էր, որ այդպիսի թարմություն բերող ջուրը պետք է դուրս բերվեր ջրհորի խորքից: Մի՞թե այդ հրեան հայհոյում էր Հակոբի ջրհորը: Այդ ջրհորը հարուստ պատմություն ուներ և ավելի խորն էր, քան այդ տարածքի ջրհորների մեծ մասը: Կինը շարունակեց.

> «Դու իսկապե՞ս մտածում ես, որ ավելի մեծ ես, քան մեր նախահայր Հակոբը, ով փորեց այս ջրհորը, և ինքը խմեց դրանից, ինչպես նաև՝ իր երեխաները և անասունները» (խոսք 12, ՏՊՏ):

Հետաքրքիր է, որ այն ջրհորը, որի մասին նրանք խոսում էին, Հակոբինն էր: *Հակոբ* անունը նշանակում է. «Նա, ով հեռացնում է իր տեղից, խաբում է կամ բռնում է կրունկը»: Երբ Աստված մարգարեացավ, որ կնոջ սերնդի և օձի սերնդի միջև թշնամություն է լինելու, Նա ասաց, որ օձը խայթելու է կնոջ սերնդի կրունկը: Հետագայում Աստված փոխեց Հակոբի անունը *Իսրայելի*, որը նշանակում է «Աստծո իշխան»: Որքա՜ն հատկանշական է, որ այդ կինը, որը բազում անգամներ խաբվել էր՝ հավատալով, որ տղամարդիկ կլրացնեին իր ներսի քաղցը, Հակոբի ջրհորի մոտ զրուցում էր Խաղաղության Իշխանի հետ: Թեև նա սխալվում էր, բայց Հիսուսը հաստատ գիտեր, թե ինչ էր տեղի ունենում:

Ի վերջո, այդ զրույցը նրա հուսահատ քաղցի մասին էր, ոչ թե այդ ջրհորի: Հիսուսն արեց այն, ինչ Նրա մոտ ամենից լավ է ստացվում. Նա անտեսեց այդ կնոջ հարցերը և խոսեց նրա ամենախորը ձգտումների մասին:

> «Ամեն այդ ջրից խմողը դարձյալ կծարավի, բայց ով որ խմի այն ջրից, որ Ես կտամ նրան, հավիտյան չի ծարավի: Այլ՝ այն ջուրը, որը Ես կտամ նրան, ջրի աղբյուր կլինի նրանում, որ հավիտենական կյանքի համար կբխի» (Հովհ. 13-14 գլուխներ):

«Ամեն... խմողը» ասելով՝ Հիսուսը նկատի ունի նրանց, ովքեր փափագում են ավելին, քան այս աշխարհը կարող է տալ: Դրանով նա միացնում է և՛ հրեաներին, և՛ սամարացիներին, ինչպես նաև նրանց, ովքեր խմել էին այդ ջրհորից անցյալում և ներկայում: Ամեն մի ջրհոր այս աշխարհում միայն ավելի է բացահայտում մեր հուսահատ մարդկային ծարավը: Հովհաննես 4.13-ը՝ «Ավյուն» թարգմանությամբ, այսպիսին է.

> «Եթե խմես Հակոբի ջրհորից, *դու նորից ու նորից ծարավելու ես»:*

Ամեն մի ջրհոր այս աշխարհում միայն ավելի է բացահայտում մեր հուսահատ մարդկային ծարավը:

Հին ջրհորները կրկին ու կրկին ծարավ կթողնեն մեզ: Միայն Աստված կարող է լիո-

վին հագեցնել մեր ծարավը: Հին ջրհորներն ի վերջո ձախողելու են մեզ, քանի որ դրանց աղբյուրները ենթարկվում են երկրային օրենքներին: Ցանկացած պահին թշնամին կարող է գաղտագողի սողոսկել որևէ ջրհորի մոտ և թունավորել այն կամ լցնել հողով. բացի այդ՝ երկարատև երաշտը կարող է չորացնել ջրհորը:

Օրենքը, հին ջրհորի օրինակի պես, կարող է հեշտորեն թունավորվել մարդկային դրույթներով կամ թաղվել մարդկային ծեսերի և կանոնների հողի տակ: Սամարացիներն ընդունում էին միայն Օրենքը՝ առաջին հինգ գրքերը, և երկրպագում էին իրենց սարի վրա: Նրանք ապրում էին միայն օրենքի շուքի ներքո, այնինչ հրեաներն ապացուցեցին, որ նույնիսկ ամբողջական օրենքը չի կարող տալ այն կյանքը, որին մենք ձգտում ենք: Օրենքների և նախահայրերի հին ջրհորները տրվել էին մեզ, որպեսզի ցույց տային, որ մենք հուսահատորեն ունենք Սուրբ Հոգու կենդանի ջրի կարիքը: Օրենքը պահանջում է ունենալ երկրպագության վայր: Օրենքն անհասանելի է դարձնում Աստծուն մեզ համար: Աստծուն երկրպագելը ծիսակարգ է, ոչ թե՝ կյանքի աղբյուր: Օրենքի ներքո գոյություն ունի այցելություն, ոչ թե՝ բնակություն: Օրենքի ներքո Նրան կարելի է հեռվից տեսնել, բայց ոչ՝ հպվել: Օրենքը պահպանում էր Սինա սարի կանոնները, ըստ որոնց մենք կարող ենք տեսնել Աստծուն, բայց ոչ՝ հայտնվել Նրա գրկում:

Երբ մեր սրբարանը (որտեղ մենք երկրպագում ենք) մեր շուրջն է, ոչ թե մեր ներսում, մեզ կողմնակի անձ դառնալու վտանգ է սպառնում: Սամարացի կնոջ և Հիսուսի հանդիպումն օրենքի բազմաթիվ չափանիշներ խախտեց: Այդ կինը խախտել էր օրենքը և ինչ-որ տղամարդու հետ էր ապրում: Նույնիսկ մեր օրերի ավելի ազատամիտ եկեղեցում նա «մեղքի մեջ ապրող» կհամարվեր: Այնուամենայնիվ, Հիսուսը տեսավ ավելին, քան նրա երևացող կյանքը, որը պատված էր ամոթով, և դիմեց ուղիղ նրա կոտրված սրտին:

Օրենքը միշտ ձեզնից պահանջում է ավելին, քան ինքը կարող է տալ: Կենդանի ջուրն անկարելի է պահել ինչ-որ տեղում կամ

նույնիսկ՝ կշռել, քանի որ այն հեղուկ լույս է: Մեռած ջուրն այդ-պիսին չէ: Եթե ուզեք Հակոբի ջրհորից ավելին, քան մեկ անգամ ջուր խմելը, ձեզ անոթ է պետք: Դուք տուն կտանեք ընդամենը այնքան ջուր, որքան կկարողանաք կրել: Եթե դուք ջուր վերցնեք ճաշ եփելու, լվացքի, լողանալու և խմելու համար՝ չորս հոգուց բաղկացած ընտանիքի չափով, միայն ջրի քաշը կանցնի տասը կիլոգրամից: Ես նույնիսկ չեմ հաշվում ձեր անոթի քաշը և տուն տանող ճանապարհի հեռավորությունը, որը պետք է անցնեք:

Եվ դուք ստիպված կլինեք նորից, նորից ու նորից անցնել նույն ճանապարհը: Հիսուսը խոսում էր մշտական և անհագ ծարավի մասին: Ծնվելով և ապրելով չոր և անջրդի Մերձավոր Արևելքում՝ այդ կինը ծարավ էր զգացել իր ամբողջ կյանքում: Գոյություն չունի այնքան խորը ջրհոր և այնքան սառը ջուր, որը կարող էր հագեցնել նրա ներսում եղող սիրո, հավանության և ընկերակցության ծարավը: Նրա անձը հուսահատորեն ջրազրկված էր: Նա նորից ու նորից խաբվում էր այն բանով, ինչը, նրա կարծիքով, կլրացներ իր ձգտումները և թարմություն կբերեր: Նա ձգտում էր ճիշտ բաների, բայց, ինչպես և մեզնից շատերը, նա փնտրում էր ճիշտ բաները սխալ տեղերում:

Սխալ չէ, որ դուք ուզում եք սիրված լինել:
Սխալ չէ, որ դուք ուզում եք կառուցել ձեր կյանքը մտերիմ մարդու հետ:
Սխալ չէ, որ դուք ուզում եք արժանապատիվ կյանք վարել:
Սխալ չէ, որ դուք ուզում եք նպատակաուղղված լինել:
Սխալ չէ, որ դուք ուզում եք ընկերներ ունենալ:
Սխալ չէ, որ դուք ուզում եք երկրպագել Աստծուն ձեր կյանքով:

Հիսուսը չնսեմացրեց նրա ձգտումները, և Նա չի ծաղրի ձերը: Նա ցույց տվեց, որ սամարացի կնոջ ծարավը հիմնավորված էր, քանի որ խոստացավ հագեցնել այն: Նա առաջարկեց նրան անվերջ կյանք՝ փակուղիներով կյանքի փոխարեն: Իր անձի խորությունից և հուսահատությունից դրդված՝ այդ կինն ավելի մոտեցավ՝ խնդրելով.

«Տե՛ր, տո՛ւր ինձ այն ջուրը, որ չծարավեմ և չգամ այստեղ՝ ջուր հանելու» (Հովհաննես 4.15):

Ես հույս եմ լսում նրա վշտահար խնդրանքի մեջ: Ես ճանաչում եմ Նրա փափագը՝ ասես այն իմը լինի: «Հիսո՛ւս, խնդրո՛ւմ եմ, մի՛ ստիպիր ինձ վերադառնալ այս վայրը, որը շարունակ հիշեցնում է իմ ձախողումների մասին»: Ինչպես և նա, ես ճիշտ չվարվեցի իմ երիտասարդության տարիներին: Նա գիտեր, որ չէր կարող վաստակել դա, և որ արժանի չէր դրան. նա կարող էր ստանալ իր խնդրանքը՝ միայն որպես պարգև: Նա նման էր թմրամոլի, ով արդեն վաճառելու ոչինչ չունի. նրա ծարավը ստրկացրել էր նրան:

Մինչև այդ կենդանի ջուրը նրան տալը, Հիսուսը պետք է տեսներ՝ արդյո՞ք նա պատրաստ էր դատարկել այն, ինչ իր ներսում էր: Նա իսկապե՞ս պատրաստ էր լիովին թողնել իր անցյալը: Նա հիշատակեց այն թերի և լճացած ջրհորը, այսինքն՝ տղամարդկանց, որտեղից ջուր էր վերցնում արդեն շատ երկար ժամանակ:

> «Հիսուսը նրան ասաց. «Գնա՛, կանչի՛ր քո մարդուն և ե՛կ այստեղ»» (խոսք 16):

Մի՛ մտածեք, որ ասելով դա՝ Հիսուսը նկատի ուներ ընտանեկան հիերարխիան, որի միջոցով Նա կարող էր խոսել այդ կնոջ հետ: Նույնպես, անպայման չէ, որ դրանով Նա մատնացույց էր անում նրա մեղքը: Փոխարենը՝ Նա հարցրեց ամուսնու մասին, որպեսզի ցույց տար նրա ցավը: Մեր խիզախ քույրը խոսեց ճշմարտությունը՝ գիտակցելով, որ այդ ճշմարտությունը կարող էր լրջորեն որակազրկել և անարժան դարձնել իրեն՝ Ռաբբունու կենդանի ջուրը ստանալու համար:

> «Ես մարդ չունեմ» (խոսք 17):

Միգուցե նա ծանրություն էր զգում՝ խոստովանելով դա. հինգ ձախողված ամուսնություն: Նա չխոսեց իր մեղքի զգացման մասին և չառաջարկեց ոչ մի արդարացում իր համար: Նա ասաց անսքող և անհրապույր ճշմարտությունը. «Ես ամուսին չունեմ»:

> «Հիսուսը նրան ասաց. «Լա՛վ ասացիր, թե «մարդ չունեմ»: Որովհետև դու հինգ մարդ ես ունեցել, և նրան, որ հիմա ունես, քո մարդը չէ: Դա ճշմարիտ ասացիր»» (խոսք 17,18):

Հիսուսը կարող է գործել ճշմարտախոս մարդկանց և համարձակ խոստովանությունների հետ: Այդ կինը պատմեց իր ներկան, իսկ Հիսուսն ավելացրեց նրա անցյալի մանրամասները: Հինգ տղամարդ կնության էին առել նրան, իսկ հետո հրաժարվել էին նրանից: Երբեմն ես մտածում եմ, թե ինչո՞ւ են այդ կնոջը այդքան հաճախ մեղավոր անվանում: Իմ տատերից մեկը չորս անգամ ամուսնացել է երեք տարբեր տղամարդկանց հետ, սակայն նա զոհ չէր. նա արել էր դա իր որոշմամբ և իր անառակությունից դրդված: Բայց միգուցե այդ կնոջ կյանքում ամեն ինչ այլ կերպ էր: Մենք չենք կարող համոզված լինել, որ հենց նա էր սխալը: Նա ապրում էր օրենքի ներքո, ինչը նշանակում էր, որ ցանկացած տղամարդ կարող էր որոշել, որ ամուսնությունն իր կնոջ հետ՝ սխալմունք էր, և կարող էր հեշտությամբ ազատվել նրանից՝ իր հիասթափությունը հաստատող վկայական գրելով: Օրենքի ներքո նա չէր կարող իր ցանկությամբ ամուսիններ փոխել: Նա պետք է ներկայացներ իր ամուսնալուծության վկայականը, որպեսզի կրկին ամուսնանար: Պատկերացնո՞ւմ եք... հինգ անգամ ոչինչ չստացվեց: Նա այնքա՜ն կոտրված էր, որ պատրաստ էր կիսել անկողինը ինչ-որ տղամարդու հետ՝ առանց կրելու նրա անունը: Նրա կյանքը կործանվել էր մարդկանց անհագ ցանկությունների պատճառով: Նրա հոգին կոտրված էր, բայց նա դեռ հույս ուներ: Հովհաննես 4.19-ում գրված է.

«Կինը նրան ասաց. «Տե՛ր, տեսնում եմ, որ դու մարգարե ես»»:

Մինչև վերջերս ես չէի հասկանում այս խոսքերի լրջությունը: Նա քայլ արեց՝ ետևում թողնելով այն ամենը, ինչ ծանոթ էր իրեն, որովհետև սամարացիները հավատում էին, որ միայն Մովսեսն էր մարգարե: Համաձայն Մատթեոս 10.41-ի, Հիսուսին որպես մարգարե ընդունելով՝ նա մարգարեի վարձատրություն էր ստանալու. «Ով որ մարգարեի է ընդունում՝ մարգարեի անունով, նա մարգարեի վարձք կառնի»:

Ո՞րն է մարգարեի վարձատրությունը: Ես համոզված եմ, որ այս պարգևը կարող է արտահայտվել տարբեր ձևերով, բայց չկա

ավելի արժեքավոր բան, քան կենդանի ճշմարտության հայտնությունը և գիտակցումը: Մարգարեները նույնպես կոչվում են «տեսնողներ»: Ուր էլ Հիսուսը գնար, Նա բացում էր մարդկանց սրտի աչքերը: Երբ այդ կինը որոշեց ընդունել Հիսուսին՝ որպես մարգարե, նա նայեց իր ապագային և հարցրեց Հիսուսին, թե որտեղ ինքը պետք է երկրպագեր: Կարող եմ միայն պատկերացնել, որ նա հոգնած էր իր հին կյանքից և այդ կյանքի հին ձևերից: Նրա մտքով չէր էլ անցնում, որ իր կյանքում նոր փուլ էր սկսվում, որում երկրպագությունը նրա համար նշանակելու էր Անձ, ոչ թե՝ վայր:

> «Հիսուսը նրան ասաց. «Կի՛ն, հավատա՛ Ինձ, որ ժամանակ կգա, որ այն ժամանակ ո՛չ այս սարում կերկրպագեք Հորը, և ո՛չ էլ Երուսաղեմում»» (խոսք 21):

«Ավյուն» թարգմանության մեջ արամեերենը մի փոքր ավելի է բացում այս խոսքը.

> «Հավատա՛ ինձ, թանկագի՛ն կին՝ եկել է ժամանակը, երբ դու չես երկրպագի Հորը ինչ-որ սարի վրա, և ո՛չ էլ Երուսաղեմում, այլ՝ քո սրտում»:

Նա պատվեց Հիսուսին որպես մարգարեի (իսկ Նա իրականում մարգարե էր), և ի պատասխան՝ Հիսուսը ցույց տվեց, թե իրականում ինչպիսին էր այդ կինը. նա *թանկագին* էր: Այս բառը նշանակում է. «սիրելի, նվիրական, արժանի, թանկ, անգին, գնահատված և արժեքավոր»: Հետաքրքիր է՝ ճիրբ էին նրան վերջին անգամ անվանել այդ բառերից որևէ մեկով: Հիսուսը վերականգնում էր նրա կոտրված սիրտը և խոցված հոգին՝ խոսելով նրա ապագայի և կոչման մասին:

Հենց հիմա ես լսում եմ, որ Հիսուսը հրավիրում է Իր դուստրերից ամեն մեկին. «Հավատա՛ Ինձ, Իմ գնահատված, նվիրական և սիրելի դո՛ւստր, քո ժամանակը եկել է...»: Հիմա՛ է ժամանակը, որ հավատաք: Մի պահ կա՛նգ առեք. ի՞նչ է Նա շշնջացել ձեզ:

Մեր Աստված ավելի մոտ չէ ձեզ սարի վրա, քաղաքում, կամ նույնիսկ՝ եկեղեցում: Ոչ մի մարդ չի կարող հեռացնել ձեզ Նրա

ներկայությունից: Փա՜ռք Աստծուն, ոչ մի սխալ չի կարող բաժանել ձեզ Նրանից, Ով բնակվում է ձեզանում: Հիսուսը սպասում է ձեր երկրպագությանը ձեր սրտի ջրհորի մոտ: Սուրբ գիրքը հիշեցնում է մեզ, որ մեր Աստված այնքան մոտ է մեզ, որքան մեր շշնջոցը:

> «Բայց Գիրքն ի՞նչ է ասում. «Մոտիկ է քեզ խոսքը՝ քո բերանում ու քո սրտում է»» (Հռոմ. 10.8):

Հիսուսը կիսվեց այս հեղափոխական սկզբունքով մի կնոջ հետ, ով կյանքի ամենավատ վիճակում էր: Ո՞վ էր մինչ այդ լսել, որ Աստված չի սահմանափակվում ոչ մի վայրով: Մի՞թե նա լսել էր, որ Աստված ուզում էր հանդիպել իրեն այնտեղ, որտեղ ինքը գտնվում էր: Պատկերացրեք, թե որքա՜ն հրաշալի էր այդ լուրն այդ կնոջ համար: Նա վտարանդի էր իր ժողովրդի մեջ և օտարական՝ հրեաների համար, բայց Աստված տեղ էր պատրաստել Իր համար նրա սրտի սրբարանում: Ինչպես որ կինը անկեղծացավ և հայտնեց, թե ով էր ինքը, այնպես էլ Աստծո Որդին էր պատրաստվում հայտնել նրան Իր անձը: Այդ կնոջ որոշումները դուրս էին մղել նրան դեպի կյանքի վերջին տեղերը, բայց Հիսուսը ներս հրավիրեց նրան: Նա շարունակեց՝ բացատրելով.

> «Դուք երկրպագում եք նրան, որ դուք չգիտեք: Մենք երկրպագում ենք Նրան, որ գիտենք, որովհետև փրկությունը հրեաներից է: *Բայց ժամանակ կգա, և հիմա է, որ ճշմարիտ երկրպագողները հոգով և ճշմարտությամբ կերկրպագեն Հորը, որովհետև Հայրն էլ այսպես է ուզում Իր երկրպագողներից:* Աստված Հոգի է, և Նրան երկրպագողները պետք է հոգով և ճշմարտությամբ երկրպագեն» (Հովհ. 4.22-24):

Հիսուսը խորտակեց այդ կնոջ ավանդույթները ճշմարտությամբ: Եթե այն, ինչ այս Ռաբբին ասում է, ճիշտ է, նշանակում է՝ *նա* հենց այն տեսակի երկրպագողներից է, որոնց Նրա Հայրը փնտրում է՝ այնպիսին, ով ուզում է երկրպագել և՛ հոգով, և՛ ճշմարտությամբ:

Մենք չենք նկատում, թե ինչ զավեշտալի իրավիճակում են հնչում Հիսուսի խոսքերը, քանի որ ընդունում ենք այն, ինչ Հի-

սուսը բացատրում էր այս կնոջը՝ որպես հասկացված ճշմարտություն: Այնուամենայնիվ, այդ ժամանակ նման հասկացությունները ծայրահեղական էին: Ավելի քան հավանական է, որ նա երբեք չէր լսել Աստծո մասին՝ որպես Հոր: Հովհաննես 4.22,23-ը «Ավյուն» թարգմանությամբ այսպես է հնչում.

> «Այս պահից Հորը երկրպագելու համար կարևոր է ոչ թե *ճիշտ վայրը*, այլ՝ *ճիշտ սիրտը:* Որովհետև Աստված Հոգի է, և Նա *փափագում է անկեղծ երկրպագուներ ունենալ, ովքեր երկրպագում և պաշտում են Իրեն Հոգու տիրույթում և ճշմարտությամբ»* (TPT):

Նա կարող էր հաղորդակցվել Աստծո հետ, Ում նա ձգտում էր: Համոզված եմ, որ այդ պահին նրա ներսում պայքար կար. փառավոր հույսը բախվել էր այն բանի հետ, ինչը ծանոթ էր իրեն որպես ճնշող կրոն: Նա չգիտեր՝ ինչին հավատալ. նրա սիրտը դողում էր հույսից, շփոթությունից և զարմանքից, բայց նա ասաց այն, ինչ գիտեր.

> «Կինն ասաց Նրան. «Գիտեմ, որ Մեսիան պիտի գա (որ Քրիստոս է կոչվում), երբ որ Նա գա, ամեն բան կպատմի մեզ»» (խոսք 25):

Հարց է ծագում՝ միգուցե նրա մանկական հավատքն անդիմադրելի՞ էր Հիսուսի համար: Նա այլևս չկարողացավ պահել այդ կնոջից ճշմարտության բարի լուրը: Ես պատկերացնում եմ, որ Հիսուսը նայում էր նրա աչքերի մեջ, երբ շշնջաց.

> «Ես եմ, որ քեզ հետ խոսում եմ» (խոսք 26):

Նա արեց ճիշտ այն, ինչ այդ կինը սպասում էր Մեսիայից... Նա պատմեց նրան ամեն ինչ: Երբեմն մեր Աստված խոսում է ամեն ինչի մասին, նույնիսկ՝ առանց ամեն ինչ ասելու: Հանդա՛րտ եղիր, ո՛վ իմ սիրտ: Մեր Օծյալ Քրիստոսը հաճախ պատասխանում է երկրպագության մասին մեր հարցերին՝ ասելով մեզ ճշմարտությունը մեր մասին: Նա մի ակնթարթում բացահայտում է անմիտ ավանդույթները և կտրում-հեռացնում է մարդկային գաղափարներն Իր ճշմարտության սրով: Ո՞վ չէր

գցի իր ջրի անոթը և չէր վազի՝ նման բան լսելուց հետո: Մեր Հիսուսն այդպիսին է: Նա չի ամաչեցնում ամոթահար մարդկանց: Նա ասում է նրանց Իր գաղտնիքները և կիսվում է այն ազնվագույն ճշմարտություններով, որոնք փարիսեցիները (իսկ երբեմն՝ նույնիսկ Իր աշակերտները) հրաժարվում էին լսել:

Ժամանակն ավարտվեց: Աշակերտները վերադարձան և մտահոգվեցին՝ տեսնելով, որ Հիսուսը խոսում էր այնպիսի կնոջ հետ, ով արժանի էր միայն իրենց անարգանքին: Բայց նրանց վերաբերմունքն արդեն կարևոր չէր նրա համար: Եթե Աստված ընդունել է ձեզ... մի՞թե մարդկանցից մերժվելը կարևոր է ձեզ համար: Հետաքրքիր է նշել, որ աշակերտներից ոչ մեկը չհրավիրեց սամարացիներին՝ Հիսուսին տեսնելու: Խնդիր չկար, որովհետև Հիսուսն արդեն ուղարկել էր Իր ավետաբերին, և նա Իր մտքում էր ամբողջ այդ ընթացքում:

> «Կինն էլ իր կուժը թողեց և գնաց քաղաք, մարդկանց ասաց. «Եկե՛ք, տեսե՛ք մի մարդու, որ ինձ ասաց այն, ինչ որ գործել եմ: Արդյոք նա՞ է Քրիստոսը»: Եվ դուրս ելան քաղաքից և Նրա մոտ էին գալիս» (խոսք 28-30):

Ավելի ուշադրությամբ ուսումնասիրելով այս հատվածը՝ կտեսնենք, որ նա զգուշորեն էր ընտրել իր բառերը: Նա չանվանեց Հիսուսին մարգարե, և ո՛չ էլ նշեց, որ հրեա է՝ իմանալով, որ այս երկու բառերի պատճառով իր համաքաղաքացիները կմերժեին Նրան: Նա օգտագործեց իր վկայությունը, որպեսզի ճանապարհ բացեր նրանց համար: Ինձ դուր է գալիս, որ մեր ընկերուհին հրավիրեց մարդկանց *գալու* և *տեսնելու*, ոչ թե առաջարկեց նրանց գալ և լսել: «Տեսնել» բառը կրում է նաև «հավատալ» իմաստը, իսկ երբ ձեր աչքերը բաց են, դուք ուզում եք, որ մյուսները նույնպես տեսնեն:

Ինձ դուր է գալիս, որ Հիսուսը որոշեց հայտնել նման պատվական, արժեքավոր և սուրբ ճշմարտությունը մի կնոջ, ով մարդկանց կարծիքով՝ կործանված, հասարակ և անմաքուր էր: Հայտնելով Աստծո առեղծվածներն այնպիսի մարդու, ում մյուս-

ներն ամենացածրն էին համարում՝ Նա լայն բացեց դուռը բոլորիս համար: Ահա թե ինչու եմ անդրադարձել այս կնոջ պատմությանը իմ գրքերից մի քանիսում: Ես միշտ դիտարկել եմ այս զրույցը տարբեր տեսանկյուններից, բայց երբեք անտարբերությամբ չեմ վերաբերվել դրան:

Տարիներ շարունակ ինձ դուր է եկել այս մտերիմ զրույցը, որի շնորհիվ ամոթահար վտարանդին պատկանելիություն և արժանապատվություն ստացավ: Որոշ ժամանակ ինձ նույնիսկ դուր էր գալիս, որ նա անանուն էր. այդ կերպով ես հեշտորեն կարող էի ավելացնել իմ անունը նրա պատմության մեջ: Դա տևեց այնքան, մինչև որ իմացա, որ նա Փոտինան է՝ լուսավորվածը: Այդ օրը նա սկսեց ավետարանել Սամարիայում, բայց ինչպես դուք արդեն գիտեք, նրա ազդեցությունը տարածվեց շատ ավելի հեռու դրա սահմաններից:

Նրա պատմությունը պետք է խրախուսի մեզնից յուրաքանչյուրին, ով խորը ջրհոր լինելով՝ ունի մակերեսային կյանք: Ուրիշ ինչը կարող է բացատրել այն փաստը, որ անառակ կինը խոսեց մարգարեի հետ երկրպագության մասին: Նրա ջրհորը ոչ միայն խորն էր, այլև չոր էր: Նա հինգ ամուսին և երկու որդի էր ունեցել, բայց միևնույն է՝ նրա ներսի փափագը չէր հագեցել. այդ մեծ ներուժ ունեցող կինը լիովին սպառել էր իրեն:

Հանկարծ ամեն ինչ փոխվեց: Նա հասկացավ, թե ինչ պարգև էր առաջարկվում իրեն: Հիսուսը հրավեր ուղղեց նրան, և նա խիզախորեն կենդանի ջուր խնդրեց: Այս փառահեղ Մեսիան լիովին ճանաչում և անվերապահորեն սիրում էր այդ կնոջը: Նրա հրավերով այդ դուստրը, ով չուներ մրցակիցներ, խմեց Նրա կենդանի ջրից՝ մինչև հագենալը, և դարձավ Փոտինան՝ ավետերանիչ և առաքյալ, ով անսասան վճռականությամբ գնաց վտանգին ընդառաջ:

Անցյալ ունեցող կի՛ն, դուք կգնա՞ք այս կնոջ հետքերով:

Հարցեր քննարկման համար

1. Դուք փափագո՞ւմ եք, որ Աստծո զորությունն էլ ավելի դրսևորվի ձեր կյանքում:
2. Ինչպե՞ս Փոտինայի պատմությունն ազդեց ձեզ վրա:
3. Մի՞թե ձեզ դուր չի գալիս, որ Փոտինան է ջրհորի մոտի կինը: Ի՞նչ նշանակություն ունի նրա պատմությունը մեզ համար:
4. Արդյո՞ք ձեր կյանքում կան բնագավառներ, որոնցում դուք մակերեսային կյանք ունեցող խորը ջրհոր եք:

10

Կյանք՝ առանց մրցակցության

> Դուք երբեք շատ տարեց չեք՝ նոր նպատակ կամ երազանք ունենալու համար:
>
> Կ. Ս. Լյուիս

Ես ուզում եմ պատմել ձեզ ևս մեկ հին պատմություն խիզախության և նվիրման մասին: Այն Թեկլա անունով մի գեղեցիկ երիտասարդ կույսի մասին է[1]: Նա պատահմամբ լսեց Ավետարանը, երբ Պողոսը քարոզում էր իր հարևան տներից մեկում: Նա նստած էր սեղմված պատուհանին և լսում էր Պողոսին, ով կոչ էր անում երիտասարդ տղաներին և աղջիկներին՝ երկրպագել Քրիստոսին սրբությամբ և առաքինությամբ: Թեկլան նշանված էր, բայց լսելով Պողոսի խոսքերը՝ որոշեց հրաժարվել իր ամուսնությունից և մինչև կյանքի ավարտը ապրել Աստծո փառքի համար: Պողոսը ոչինչ չգիտեր այն ազդեցության մասին, որն ինքը թողել էր Թեկլայի վրա, բայց այդ աղջկա որոշումը դուր չեկավ նրա մորը և նշանածին. նրանք օգտագործեցին իրենց ազդեցությունը, որպեսզի հրահրեին բարկացած ամբոխներին Պողոսի դեմ: Քաղաքացիական խռովության պատճառով Պողոսը հայտնվեց Իկոնիոնի կառավարիչներից մեկի առջև, ով անմիջապես հրամայեց բանտարկել նրան:

Տրտմած Թեկլան օգտագործեց իր զարդերը՝ բանտապահներին կաշառելու համար, որպեսզի տեսներ Պողոսին և լսեր Հի-

սուսի Ավետարանը անմիջապես նրանից: Երբ նրա ընտանիքը գտավ կորած դստերը Պողոսի բանտախցում, ստիպեցին, որ երկուսին էլ կառավարչի մոտ տանեն: Պողոսին մտրակեցին և վտարեցին քաղաքից: Թեկլայի մայրն ուրացավ նրան, և աղջկան մահվան դատապարտեցին: Նրան պետք է այրեին փայտերի կույտի վրա՝ ի ցույց բոլոր այն աղջիկներին, ովքեր կարող էին մտածել նման անմիտ ապստամբության մասին:

Մինչ Թեկլային մահապատժի էին տանում, Պողոսը այլ քրիստոնյաների հետ հավաքվեց քաղաքից դուրս՝ կատակոմբներում, և բոլորը ջանասիրաբար աղոթեցին: Թեկլային կապել էին փայտերի կույտին, բայց երբ կրակը վառեցին, նա չայրվեց: Հանկարծ անսովոր փոթորիկ սկսվեց. հորդացող անձրևը հանգցրեց նրա ոտքերի տակ այրվող կրակը, և Թեկլան ազատվեց մահից: Վախենալով, որ դա նշան էր հունական աստվածներից՝ իշխանություններն ազատեցին նրան և վտարեցին քաղաքից: Թեկլան, որին բոլորն ուրացել էին, հանդիպեց այլ վտարված քրիստոնյաների, ովքեր որոշել էին Անտիոք ուղևորվել Պողոսի հետ:

Քաղաք գալուն պես Ալեքսանդր անունով ազդեցիկ և մեծ իշխանություն ունեցող մի մարդ հրապուրվեց Թեկլայի գեղեցկությամբ և փորձեց գնել նրան Պողոսից: Երբ Պողոսը հրաժարվեց, նա որոշեց ուժով խլել նրան: Թեկլան կատաղի ընդդիմացավ. նա հրամայեց Ալեքսանդրին՝ չդիպչել Տիրոջ աղախնուն, և դիմադրելիս նրա գլխից գցեց դափնու տերևներից պատրաստված պսակը՝ նրան հրապարակավ անարգելով:

Բարկացած Ալեքսանդրը քարշ տվեց նրան Անտիոքի կառավարչի մոտ: Դատավարության ընթացքում Թեկլան խոստովանեց, որ պատռել էր Ալեքսանդրի հանդերձները՝ փորձելով փախչել նրանից: Կրկին, նա մահվան դատապարտվեց: Նրա մահապատիժը որոշվեց հաջորդ օրը. այս անգամ նա պետք է պատառոտվեր և հոշոտվեր վայրի գազաններից:

Անտիոքի կանայք խիստ վրդովվեցին: Նրանք հասկանում էին, որ դատաստանը Թեկլայի դեմ անարդար էր: Մի ազնվական հռոմեուհի առաջ եկավ և Թեկլային իր տանը պահելու թույլտվություն խնդրեց՝ նրան բանտ ուղարկելու փոխարեն, որպեսզի պաշտ-

պաներ նրա կուսությունը: Այդ երեկոյի ընթացքում տարեց կինը և երիտասարդ Թեկլան մտերիմ ընկերուհիներ դարձան:

Հաջորդ առավոտյան այդ ազնվական հռոմեուհին դառնորեն լաց էր լինում, երբ Թեկլային շղթայված դնում էին մի վանդակի մեջ, որի կողքին կատաղած էգ առյուծի վանդակն էր: Ամբոխը գոչում էր, երբ Թեկլայի հագուստները հեռացրին և ուժով տարան ասպարեզ, որը վխտում էր առյուծներով և արջերով: Առաջին գազանը, որը հասավ նրան, հենց այդ էգ առյուծն էր: Նա վազելով մոտեցավ Թեկլային, բայց, փոխարենը հարձակվեր, շրջվեց և պաշտպանական դիրք ընդունեց Թեկլայի ոտքերի մոտ:

Մի արջ առաջ նետվեց, բայց մինչև Թեկլային հասնելը, էգ առյուծը սպանեց նրան: Հաջորդը հարձակվեց մի արու առյուծ, բայց կրկին էգ առյուծը կռվեց՝ Թեկլային պաշտպանելու համար: Այդ պայքարն ավարտվեց երկու առյուծների մահով. նրանց մարմինները՝ փաթաթված իրար, ընկան Թեկլայի ոտքերի մոտ: Խաղի կազմակերպիչները մտրակում էին և խթում էին մնացած գազաններին դեպի իրենց զոհը, բայց բոլոր գազանները հրաժարվում էին հարձակվել: Ամբոխը հանդարտվեց. Տիրոջ երկյուղը լռեցրեց աղմկոտ ամֆիթատրոնը: Թեկլան բարձրացրեց իր ձայնը և համարձակ աղոթեց:

Կառավարիչը ոտքի կանգնեց և կանգնեցրեց խաղերը: Նա պահանջեց այդ աղջկանից ասել, թե ով է ինքը, և որն է իր զորության աղբյուրը: Նա պատասխանեց. «Ես կենդանի Աստծո աղախինն եմ... ես հավատացել եմ այն Որդուն, Ում Նա հավանեց: Որովհետև միայն Նա է փրկության ճանապարհը և անմահ կյանքի հաստատությունը... ով չհավատա Նրան, չի՛ ապրի...»:

Կառավարիչը հրամայեց, որ նրան հանդերձներ բերեն, և պատվիրեց ազատ արձակել: Այդ օրը հարյուրավոր, եթե ոչ՝ հազարավոր մարդիկ ընդունեցին Քրիստոսին: Ըստ առաջին եկեղեցու տարեգրության՝ Անտիոքի կանայք միաձայն փառք էին տալիս Աստծուն՝ մինչև որ քաղաքը ցնցվեց նրանց ձայնից:

Թեկլան ապրեց երկար, լիարժեք կյանքով, և քարոզեց Ավետարանը մինչև կյանքի ավարտը: Նա մահացավ, երբ ինսուլն անց էր:

Ապրել հանդուգն համարձակությամբ

Ինչն այդպիսի զորություն տվեց Թեկլային: Նա մերկ էր, բայց չէր ամաչում, քանի որ ստանալով հայտնություն Հիսուսի մասին՝ հասկացել էր, թե ով էր ինքը: Նույնիսկ նորադարձ լինելով՝ նա Ավետարանի անհաղթահարելի դեսպան դարձավ: Բարձրաձայն աղոթելով՝ նա ցույց տվեց իր քաջությունը մահվան առջև: Մի խիզախ դուստր, ում միգուցե թույլ չտային քարոզել շատ ամբիոններից, երբ նա պատշաճ կերպով հագնված էր, դարձի բերեց բազմաթիվ մարդկանց, երբ մերկ էր և շրջապատված գազաններով՝ դաժանությամբ լի կոլիզեյում: Երբ նման պատմություններ եմ կարդում, կարծում եմ՝ Եվան ժպտում է (և համոզված եմ, որ Սառան՝ նույնպես): Քանի որ այն պայքարը, որը Եվան տանուլ տվեց գողտրիկ և ապահով պարտեզում, շատ անգամ պսակվեց հաղթությամբ վերածնված դուստրերի կողմից՝ բացահայտ թշնամանքով լի ասպարեզներում:

Բազմությունը հավաքվել էր՝ մահապատիժ դիտելու, բայց փոխարենը՝ ականատես եղավ, թե ինչպես իրավիճակն արմատապես փոխվեց: Թող որ մենք շարունակենք այս ժառանգությունը: Ամեն օր հռչակելով, որ մեր փրկությունը և հիմքը միայն Քրիստոսում է՝ մենք ավելի ենք լցվում Նրանով և մոտեցնում ենք Նրա վերադարձը:

Այսօր գիտելիքն Աստվածաշնչի մասին շատ ավելին է, քան ցանկացած այլ ժամանակ՝ մարդկության պատմության մեջ: Այնուամենայնիվ, ո՞ւր է հասցրել մեզ այդ գիտելիքը: Մենք ունենք տեղեկության առատություն, բայց վերափոխման ակնհայտ պակաս: Վախենում եմ, որ բազմաթիվ կերպերով և բազմաթիվ ոլորտներում գիտելիքը և տաղանդը փոխարինել են Աստծո Խոսքին և Սուրբ Հոգու առաջնորդությանը:

Ես ուզում եմ ավելին: Իմ հոգում զգում եմ Հոգու անզուգական թափում և անզուգական հունձք:

Այս կոտրված աշխարհն ունի Աստծո զորության կարիքը: Միգուցե ժամանակն է կրկնել առաջին եկեղեցու աղոթքները.

«Եվ հիմա, Տե՛ր, լսի՛ր նրանց սպառնալիքները՝ մեզ վնաս հասցնելու մասին, և զորացրո՛ւ մեզ՝ Քո ծառաներին, որ ազատորեն և համարձակ խոսենք Աստծո Խոսքը: Պարզի՛ր Քո զորության ձեռքը մեր միջոցով, որ բժշկես և շարժվես նշաններով և հրաշքներով՝ Քո սուրբ Որդի Հիսուսի անունով» (Գործք 4.29,30, ՏՊՏ):

Եվ ի՞նչ ազդեցություն ունեցավ այս աղոթքը:

«Այդ պահին երկիրը ցնցվեց նրանց տակ, և այն շենքը, որտեղ նրանք գտնվում էին, դղրդաց: Նրանցից ամեն մեկը լցվեց Սուրբ Հոգով, և նրանք հռչակեցին Աստծո Խոսքը անխոչընդոտ համարձակությամբ» (Գործք 4.31, ՏՊՏ):

Ժամանակն է, որ Աստծո Խոսքը հռչակվի անխոչընդոտ, հանդուգն համարձակությամբ: Շատ առումներով, այն մարտահրավերները, որոնց բախվեց Թեկլան, այնքան էլ չեն տարբերվում մեր մարտահրավերներից: Երբ նա որոշեց անսպասելի մի ճանապարհ ընտրել և նվիրել իր կյանքը, մեծ վրդովմունք բարձրացավ: Նրա ընտանիքի անդամները փորձեցին ետ պահել նրան, իսկ կառավարությունը փորձեց օրինագծեր կազմել նրա հավատքի մասին: Տղամարդիկ փորձեցին ուժով վերցնել նրան և ճնշել այն, ինչն ապստամբություն էին համարում: Այնուամենայնիվ, ամբողջ այդ ընթացքում միայն նա էր ճշմարտապես ազատ: Թե՛ նրա կյանքը, թե՛ մահը անկարող էին փոխել այն, ինչ նա գիտեր իր մասին... Նա Ամենակարող Աստծո աղախինն էր:

Կյանք՝ առանց մրցակցության

Մենք ապրում ենք այնպիսի ժամանակաշրջանում, երբ ամեն ինչ մեր շուրջը մոլեգնում է: Եթե դուք գիտեք, թե ով եք և Ում եք պատկանում, կանգուն կմնաք: Մենք ընտրել ենք կյանք՝ առանց մրցակցության, իսկ այդպիսի կյանք կարող է կառուցել միայն Սուրբ Հոգին:

«Քանի որ Հոգու կյանքը՝ այն կյանքն է, որը ընտրել ենք, եկեք համոզված լինենք, որ մենք *պարզապես չենք հարում դրան՝ որպես*

գաղափարի, որը մեր մտքում է, կամ՝ զգացմունքի, որը մեր սրտում է, այլ *գործադրում ենք այն ամենը, ինչ բխում է դրանից, մեր կյանքի ամեն բնագավառում:* Դա նշանակում է, որ *մենք չենք համեմատի մեզ մեկս մյուսի հետ*, ասես թե մեզնից մեկն ավելի լավն է, իսկ մյուսը՝ ավելի վատը: Մենք կարող ենք շատ ավելի հետաքրքիր կերպով ապրել մեր կյանքը: *Մեզնից ամեն մեկը յուրօրինակ է»* (Գաղատ. 5.25,26, Ուղերձ):

Այսպիսով, մենք ավարտում ենք նրանով, ինչով սկսեցինք: Երբ սկսեք արտահայտել ձեր յուրօրինակ ինքնությունը, դուք կապրեք համահունչ Աստծո Հոգու հետ: Դուք ստեղծված չեք համեմատվելու համար... դուք ստեղծված եք Աստծո Որդու համար: Ձեր երկնային Հայրը ձեր ամբողջ կյանքը գրել է Իր գրքում ձեր աշխարհ գալուց շատ առաջ: Նա գրել է ձեր կյանքի մասին կենդանի տառերով: Ուրիշ ոչ ոք չի կարող ապրել ձեր կյանքը: Ժամանակն է, որ ձեր կյանքի էջերը կենդանություն ստանան: Եթե ապրեք այլ մարդկանց համար գրվածով, այն ամենը, ինչ Հոգին գրել է ձեր մասին, անկատար կմնա: Մեզնից յուրաքանչյուրը եզակի ընթացք և կոչում ունի: Սուրբ Հոգու առաջնորդությունն անփոխարինելի է, եթե ուզում եք ունենալ կյանք՝ առանց մրցակցության: Հոգով առաջնորդվող կյանքը ընդամենը հասկացություն կամ ռոմանտիկ հույս չէ. դա հոգևոր կարգապահության դրսևորում է: Դա ձեր անձնական երկրպագությունն է՝ գործողության մեջ: Դա կյանք է, որն առանձնանում է նվիրմամբ, ոչ թե ցրվածությամբ: Ամեն հնազանդ քայլի հետ՝ թե՛ անձնական, թե՛ հասարակական կյանքում, Աստված ավելի կհստակեցնի Իր նպատակը, և դուք ավելի պարզ կլսեք Նրա ձայնը:

ԴՈՒՔ ՍՏԵՂԾՎԱԾ ՉԵՔ ՀԱՄԵՄԱՏՎԵԼՈՒ ՀԱՄԱՐ... ԴՈՒՔ ՍՏԵՂԾՎԱԾ ԵՔ ԱՍՏԾՈ ՈՐԴՈՒ ՀԱՄԱՐ:

Ձեր կյանքը՝ ամբողջ ներուժով, Աստծուց տրված ավանդ է: Որքա՜ն ամոթալի կլինի, եթե այն ամենը, ինչ ձեզանում է, նման լինի անհամար գանձերի և տաղանդների՝ թաղված այլ մարդկանց կարծիքների և սպասումների հողի տակ: Դուք չեք եկել

այս աշխարհ՝ դիտորդ լինելու համար: Դուք կարող եք շատ ավելի կարևոր և հետաքրքիր կերպով տնօրինել ձեր կյանքը: Ժամանակն է, որ իմանաք այս մասին:

Ձեր ապագան հիմա է:

Այսօրվա օրը մերն է. վաղվա օրը խոստացված չէ ոչ մեկին, բայց դուք գիտեք, որ այս պահը ձերն է: Եվ շնորհիվ ձեր որոշումների՝ դուք կարող եք լիարժեք կյանք ունենալ:

Ձեր ներսում ապշեցուցիչ ընթացքի խոստում կա: Ձեր կյանքի գիրքը կարող է փակ մնալ, կամ դուք կշարունակեք թերթել դրա էջերը: Լսե՛ք Պողոսի ուղերձը գաղատացիներին.

> «Ձա՛նք արեք, որ պարզեք, թե ով եք դուք, և թե ինչ գործ է տրվել ձեզ, իսկ հետո ուղղե՛ք դրան ձեր բոլոր ջանքերը: Մի՛ տպավորվեք ինքներդ ձեզնով: Մի՛ համեմատեք ձեզ ուրիշների հետ: Ձեզնից ամեն մեկը պետք է պատասխանատվություն ստանձնի իր կյանքը ստեղծարար կերպով ապրելու և լավագույնս գործածելու համար» (Գաղատ. 4.4-6, MSG):

Այնքա՜ն դժվար կլինի իմանալ, թե ով եք դուք, եթե մշտապես ձգտեք իմանալ, թե ով դուք չեք, և թե ովքեր են ուրիշները: Եթե ուզում եք քայլել և չթուլանալ, պետք է իմանաք, թե ով եք դուք այս ընթացքի մեջ, որը մենք կյանք ենք անվանում:

> «Ուրեմ՛ն, զգուշորեն նայեք, թե ինչպես եք գնում՝ ոչ թե ինչպես անմիտներ, բայց ինչպես իմաստուններ, լավագույնս օգտագործելով ժամանակը, որովհետև օրերը չար են» (Եփես. 5.15,16, ESV):

Եթե դուք ճիշտ կերպով չօգտագործեք ձեր ժամանակը, ձեր օրերն արագ կանցնեն, իսկ դուք կսպառվեք մարդկանց պահանջների և շեղող հանգամանքների պատճառով: Երբ մի կողմ դնեք այս գիրքը, գրիչ ու թուղթ վերցրեք: Առանձնացրե՛ք այն գործերը, որոնք ժամանակի իմաստուն ներդրում եք համարում այն ամենից, ինչը պարզապես վատնում է ձեր ժամանակը: Ես ուզում եմ, որ թեթևացնեք ձեր առօրյան, որպեսզի կրկին կարողանաք երազել:

Սովորե՛ք կապակցել ձեր նպատակները ձեր երազանքների հետ: Այսպիսով, մրցակիցներ չունեցող դո՛ւստր, ինչի՞ մասին

եք դուք երազում: Միգուցե պատասխանեք ինձ՝ ասելով, որ ձեր կյանքը ձանձրալի և միապաղաղ է: Ես չհարցրի, թե ինչ վիճակում եք դուք հիմա, այլ՝ թե ինչի համար է ձեր սիրտը վառվում: Եթե կորցրել եք ձեր կրակը, վերադարձեք Աստծո ներկայության մեջ, մինչև որ կրկին գտնեք այն: Մաքրեք ձեր միտքը և սիրտը: Գնացեք զբոսանքի, երկրպագության երաժշտություն լսեք և կրկին կապ հաստատեք ձեր անձի ջրհորի հետ:

Դուք չափազանց տարեց չեք, չափազանց աղքատ չեք, չափազանց հարուստ չեք, չափազանց կրթված չեք և չափազանց անկիրթ չեք նպատակներ դնելու և երազներ երազելու համար: Դուք նույնպես չափազանց երիտասարդ չեք դրա համար:

Երբեմն, նայելով այսօրվա քրիստոնյա կանանց, ես հաճելիորեն զարմանում եմ՝ տեսնելով, թե քանի՜սն են հրաշալի կերպով կառուցում իրենց կյանքը և ծառայությունը: Կան այնքա՜ն գեղեցիկ, խիզախ և աստվածապաշտ կանայք հոգևոր պատերազմի առաջնագծում, որ սիրտս լցվում է հույսով: Ես հարցնում եմ ինձ՝ միգուցե դադարե՞մ վեր մագլցել և զիջե՞մ ճանապարհը: Վերջերս, մտորելով սրա շուրջ, լսեցի Սուրբ Հոգու ձայնը, Ով շտկեց ինձ. *«Այն, որ նրանք բարձրանում են, չի նշանակում, որ դու պետք է եր գնաս: Դու պետք է շարունակես առաջ գնալ: Ես ոչ մի դեպքում չեմ նախատեսել, որ նրանք մի կողմ հրեն քեզ. թույլ տուր նրանց է՛լ ավելի բարձրացնել քեզ»:*

Իմ վերելքը կարող է այլ տեսք ունենալ այսօր, քան անցյալում, բայց ես երբեք չեմ լսել, որ Աստված պատվիրի ինձ ներքև նայել կամ իջեցնել գլուխս: Նա պատվիրում է բարձր պահել գլուխս: Երբ Նրա դուստրերը միաբան հավաքվում են, ես տեսնում եմ Նրա փառքը:

Այնպես որ, սիրելի՛ քույր, կասեմ ձեզ, թե որն է իմ նպատակը. իմ նպատակը՝ դուք եք: Ես աղոթում եմ, որ մշտապես գործեմ, որ Քրիստոս Օծյալը ձևավորվի ձեզանում: Ես ուզում եմ, որ դուք լինեք Նրանում՝ լավ սպառազինված և ճիշտ դիրքում, որպեսզի գտնեք այն, ինչ Նա ամենասկզբից վստահել է ձեզ: Ես փափագում եմ օգնել ձեզ ամենակարևոր որոնման մեջ, որը Նրան ճանաչելն է: Գրելով այս գիրքը՝ հասկացա, որ անդրադարձել եմ շատ

ծավալուն մի թեմայի, քանի որ այսօր շատերն են մրցում մեր սիրո համար: Պողոսն ապրում էր այլ ժամանակաշրջանում, բայց այն եկեղեցին, որը նա սիրում էր, նմանատիպ դժվարություններ ուներ:

> «Որովհետև ձեզ համար նախանձավոր եմ Աստծո նախանձով, որովհետև ձեզ մի մարդու նշանեցի, որ մի սուրբ կույս կանգնեցնեմ Քրիստոսի առջև: Բայց վախենում եմ՝ միգուցե ինչպես օձն իր խորամանկությամբ խաբեց Եվային, այնպես էլ ձեր միտքն ապականվի այն միամտությունից, որ Քրիստոսում է: Որովհետև եթե մեկը գա և ուրիշ Հիսուս քարոզի, որ մենք չքարոզեցինք, կամ ուրիշ հոգի առնեք, որ չառաք, կամ ուրիշ Ավետարան, որ չընդունեցիք, լավ կհամբերեիք» (Բ Կորնթ. 11.2-4):

Կամ, ինչպես այս հատվածը թարգմանված է «Ուղերձ» Աստվածաշնչում.

> «Ես այսքան վշտանում եմ այն պատճառով, որ անչափ հոգում եմ ձեր մասին. Աստծո նախանձավորությունը վառվում է ինձանում: Ես խոստացել եմ ձեր ձեռքը Քրիստոսին՝ ամուսնության համար, ներկայացրել եմ ձեզ որպես անարատ կույս՝ իր ամուսնուն: Իսկ հիմա ես վախենում եմ, որ ճիշտ ինչպես օձը գայթակղեցրեց Եվային իր փաղաքշական խոսքերով, ձեզ հեռացնում են Քրիստոսի հանդեպ ձեր սիրո պարզ մաքրությունից: Թվում է՝ եթե ինչ-որ մեկը հայտնվում է և քարոզում այլ Հիսուսի մասին, քան որ մենք ենք քարոզել, այլ հոգի և այլ ուղերձ, դուք շատ լավ հանդուրժում եք նրան» (Ուղերձ):

Լսե՛ք ինձ՝ ինչպես մոր... ո՛չ, ինչպես տատիկի. դուք ստեղծված չեք, որ փոխզիջման գնաք՝ համեմատելով ձեզ այլ մարդկանց հետ: Ձեր Արարիչը ներհյուսել է Իր եզակիությունը ձեր ԴՆԹ-ի մեջ: Դուք կարող եք արտահայտել Նրա սերը և փառքը այն կերպով, որը հատուկ է միայն ձեզ, և ձեր գործերի պտուղներն ու վարձատրությունը հավիտյան ձեզ հետ կմնան:

Հավիտենական պսակներ

Ես սկսեցի այս գիրքը՝ խոսելով այն մասին, թե ով եք դուք, և ով է Աստված, և փորձում եմ ավարտել այն՝ ցույց տալով, թե ինչ է Նա շնորհել մեզ: Ի լրումն այն ամենամեծ և պատվական խոս-

տումների, որոնք տրված են մեզ, որ դրանցով հաղորդակից լինենք աստվածային բնությանը՝ մենք նույնպես զարդարված ենք իշխանությամբ:

Ես սիրում եմ թանկարժեք զարդեր, բայց ոչ՝ ցանկացած զարդ: Ինձ դուր են գալիս զարդեր, որոնք պատմություն ունեն: Իմ ամուսնական մատանիները խորհրդանշում են մեր ամուսնության ընթացքը: Ես ունեմ մատանիներ, որոնք ինձ նվիրել են իմ որդիներից ամեն մեկի ծննդյան օրվա առթիվ: Ես ունեմ թուր-վզնոց, աղեղ-ձեռնաշղթա և այլ զարդեր, որոնք ցույց են տալիս, թե ինչ է նշանակում կռվել կնոջ պես: Ես ունեմ այլ զարդեր, որոնք նվերներ են ընկերներից կամ կապ ունեն կյանքիս կարևոր փուլերի և իրադարձությունների հետ: Ըստ ինձ նվիրած զարդերի նշանակության և հնության՝ ես որոշում եմ՝ արդյոք դրանք զարդարա՞նք են, թե՞ աքսեսուար:

Ինձ դուր է գալիս Հաննա Հերնարդի «Եղնիկի ոտքերը՝ բարձր տեղերում» պատմվածքը: Ես ծանոթացա դրա հետ, երբ մոտավորապես քսանհինգ տարեկան էի, և դրանից հետո այն մնաց ինձ հետ: Ես կարդում էի այն իմ երեխաներին, երբ նրանք փոքր էին, և կարդում եմ ինքս ինձ, երբ կարիք է լինում: Այս այլաբանության մեջ մի երիտասարդ աղջիկ, ով լցված է վախերով, ճանապարհորդում է իր տնից դեպի բարձունքները, որտեղ կատարյալ սերը հեռացնում է վախը: Ամեն տեղ հերոսուհին, ում անունը Շատ Վախեցած է, զոհասեղան է կառուցում և մի քար է վերցնում հիշատակի համար, որը նա կրում է իր հետ իր պարկի մեջ: Ինչ-որ պահի նա այնքա՛ն է հուսալքվում, և խոստումն այնքա՛ն հեռու է թվում, որ նրա մոտ գայթակղություն է առաջանում՝ դեն նետել իր հուշաքարերը, քանի որ դրանք միայն հիշեցնում են իր հուսալքության մասին: Կրկին մտածելով՝ նա պահում է դրանք, ինչը շատ լավ է, քանի որ հետագայում դրանք վերածվում են թանկարժեք քարերի և դրվում նրա թագի վրա:

Ըստ աստվածաբանների՝ Աստվածաշնչում գրված է հինգ տեսակի պսակների (կամ՝ թագերի) մասին[2]: Առաջինը Արդարության պսակն է, որը մենք ստանում ենք, երբ փոխում ենք մեր մեղքը և ամոթը Քրիստոսի արդարության հետ, և Նա պսակում

է մեզ Իր փրկությամբ: Հաջորդը Ցնծության կամ Պարծանքի պսակն է. այն պահված է նրանց համար, ովքեր երկրպագում ու փառաբանում են Աստծուն՝ անկախ իրենց հանգամանքներից: Երրորդը Փառքի պսակն է՝ նրանց համար, ովքեր փափագում են Նրա փառավոր վերադարձին: Վերջին մի քանի էջերում ուզում եմ խոսել մյուս երկու պսակների մասին:

Անապականելի պսակ

Անապականելի պսակի մասին գրված է Ա Կորնթացիների 9.24-27-ում.

> «Զգիտե՞ք, թե ասպարեզի մեջ վազողները ամենքն են վազում, բայց մեկն է հաղթանակն առնում: Դուք այնպես վազեք, որ հասնեք: Եվ նա, ով որ մրցում է, ամեն բանից ժուժկալ է լինում: Հիմա նրանք մրցում են, որ մի ապականելի պսակ առնեն, իսկ մենք՝ անապականելի: Ուրեմն ես այնպես եմ վազում՝ ոչ թե ինչպես անստույգ. այնպես եմ մրցում՝ ոչ թե ինչպես օդին զարկելով: Այլ իմ մարմինը ճնշում եմ և նվաճում, որ միգուցե ուրիշներին քարոզելով՝ ինքս անպիտան գտնվեմ»:

Այս պսակը ստանում են վազելով, և այն, թե ինչպես ենք մենք մարզվում, որոշում է, թե ինչպես ենք վազելու: Մարզվելը հաճելի չէ, բայց որակազրկվելը և վազքուղու վրա պարտվելը՝ նույնպես: Շատ առումներով, Սուրբ Հոգին՝ մեր Մարզիչն է:

> «Մի՛ տրտմեցրեք Աստծուն: Մի՛ կոտրեք Նրա սիրտը: Նրա Սուրբ Հոգին, Ով բնակվում է ձեզանում, ձեր կյանքի ամենանվիրական մասն է. Նա դարձնում է ձեզ հարմար Իրեն: Թեթևաբար մի՛ վերաբերվեք նման պարգևին» (Եփես. 4.30, Ուղերձ):

Ամեն ինչ օրինավոր է, բայց ամեն ինչ չէ, որ նպաստում է աստվածապաշտությանը և մեր ընթացքը բարեհաջող կերպով անցնելուն: Աստված գիտի, թե ինչ կպահանջվի դրա համար: Նա գիտի, թե երբ մենք պետք է արագացնենք կամ դանդաղեցնենք մեր ընթացքը: Նա գիտի, թե ում հետ մենք պետք է մարզվենք, և ումից պետք է հեռու մնանք: Մենք ենք օգուտ ստանալու,

եթե հետևենք Նրա հրահանգներին: Մենք չենք մրցում կորչող բաների համար. մենք գնում ենք դեպի հավիտենությունը:

> «Ձեզ համար գանձեր մի՛ դիզեք երկրի վրա, ուր որ ցեցը և ժանգն ապականում են, և ուր որ գողերը պատը ծակում են և գողանում: Բայց ձեզ համար գանձեր դիզեք Երկնքում, ուր ո՛չ ցեց, և ո՛չ ժանգ չեն ապականում, և ուր գողերը պատը չեն ծակում և չեն գողանում: Որովհետև, որտեղ որ ձեր գանձն է, այնտեղ կլինի և ձեր սիրտը» (Մատթ. 6.19-21):

Եթե ձեր սիրտը Երկնքում է, դուք կգտնեք այնտեղ տանող ճանապարհը: Ինչպես արդեն ասացինք, այս գանձը պահվում է ձեր սրտում, և դրա պահապանը սերն է: Մենք ապրում ենք մի աշխարհում, որը հոլի է խոսքերով, գաղափարներով, գրքերով, մտքերով, հասարակական կապերով, գեղեցկությամբ, ստեղծարարությամբ և իմաստությամբ: Դրանում շատ հրաշալի բաներ կան: Այնուամենայնիվ, այս աշխարհն ունի շատ վտանգավոր ձգողություն, որը փորձում է ծանրացնել ձեզ, որպեսզի չկարողանաք անցնել ձեր ընթացքը: Աստծո Խոսքը զգուշացնում է մեզ.

> «Մի՛ սիրեք աշխարհը, և ո՛չ էլ այն, որ աշխարհի մեջ է: Եթե մեկն աշխարհը սիրի, Հոր սերը նրանում չէ, որովհետև այն, ինչ աշխարհում է՝ մարմնի ցանկությունը, աչքերի ցանկությունը և այս կյանքի ամբարտավանությունը, Հորից չէ, այլ՝ աշխարհից է: Եվ աշխարհն անցնում է, և նրա ցանկությունն էլ, բայց Աստծո կամքն անողը մնում է հավիտյան» (Ա Հովհ. 2.15-17):

Խոսքն այն բաների մասին է, որոնք գերում և սահմանափակում են մեզ, քանի որ կապակցված են այս աշխարհի ուղիներին:

Այս աշխարհի ձգտումները կարելի է բաժանել երեք կարգի.

1. Մարմնի ցանկությունները, կամ՝ երբ ուզում եք, որ ամեն ինչ ձեր ուզածով լինի:
2. Աչքերի ցանկությունները, կամ՝ երբ ուզում եք այն ամենը, ինչ տեսնում եք:
3. Այս կյանքի ամբարտավանությունը, կամ՝ երբ ուզում եք կարևոր թվալ:

Յուրաքանչյուրս կյանքի տարբեր փուլերում պայքարելու է այս երեք թշնամիներից առնվազն մեկի հետ (եթե ոչ՝ միաժամանակ երեքի): Այս երեքից ամեն մեկը կարող է արտահայտվել անթիվ ձևերով ձեր կյանքի տարբեր փուլերում: Երբ մենք նոր էինք ամուսնացել և դեռ երեխաներ չունեինք, ես շատ եսասեր էի: Կարծում եմ՝ արդարացի կլիներ ասել, որ ես ուզում էի, որ ամեն ինչ իմ ձևով լիներ: Ուզում էի ունենալ այն ամենը, ինչ տեսնում էի: Փա՛ռք Աստծուն, մենք այնքան գումար չունեինք, որ ապահովեինք իմ վատ վարքը, բայց միևնույն է՝ ես տեսնում և ցանկանում էի շատ բաներ: Դրանից հետո հինգ տարում ես երեք երեխա ունեցա, և իմ միակ ցանկությունը հանգիստ քնելն էր: Ինչ վերաբերում է կարևոր թվալու ցանկությանը, որքան ավելի եմ մեծանում, այնքան ավելի գոհ եմ, որ կարևոր եմ իմ ընտանիքի և ընկերների համար, ինչպես նաև՝ մի քանի դուստրերի համար, որոնք հայտնվել են իմ կյանքում:

Այս մոլեգնող ցանկությունները կապակցված են այս աշխարհին, որին վիճակված է փշրվել հավիտենության ծանրության ներքո: Ամեն ինչ՝ սոցիալական ցանցերից մինչև երաժշտությունը, գովազդները և ժամանցային ինդուստրիան է՛լ ավելի են ուժգնացնում այս ցանկությունները: Մարդկության պատմության մեջ երբեք չի եղել այնպիսի ժամանակ, երբ հնարավոր լիներ սերտորեն թափանցել այն մարդկանց կյանքերը, որոնց հետ մենք չունենք ոչ մի շփում: Եթե մարդիկ դժվարանում են կապ հաստատել նրանց հետ, ում տեսնում են (իրենց ընկերների և ընտանիքի անդամների), զարմանալի չէ, որ նրանց համար դժվար կլինի կապ հաստատել Աստծո հետ, ում չեն տեսնում:

«Բայց Աստծո կամքն անողը մնում է հավիտյան» (Ա Հովհաննես 2.17):

Որպեսզի կապված չլինենք այս աշխարհին, մենք պետք է թողնենք մեր կյանքը և հարենք Աստծո կյանքին: Նրանում մենք բժշկություն ենք գտնում այս վտանգավոր կապվածություններից:

«Դու պետք է սիրես Տեր Աստծուն քո ամբողջ սրտով, քո ամբողջ ձգտմամբ, քո ամբողջ եռանդով և քո ամեն մտքով: Եվ դու պետք

> է սիրես քո մերձավորին այնպես, ինչպես սիրում ես ինքդ քեզ» (Ղուկաս 10.27, ՏՊՏ):

Երբ Աստծո սերն առատորեն բնակվում է ձեզանում, այս աշխարհի ձգողությունը թուլանում է: Երբ ես մտորում եմ Աստծո Խոսքի շուրջ և թույլ եմ տալիս Նրան սիրել ինձ, ես ավելի հեշտորեն եմ վերահսկում ինձ: Երբ ավելի հեշտորեն եմ վերահսկում ինձ, ես ավելի սիրով եմ վերաբերվում մարդկանց: Երբ կենտրոնացած եմ Աստծո վրա և սիրում եմ մարդկանց, քիչ հավանական է, որ ես կձգտեմ դատարկ բաների, որովհետև իմ հարաբերությունները լրացնում են այն բացը, որը կա իմ ներսում:

> «Շնացողնե՛ր, չգիտե՞ք որ աշխարհի սերը թշնամություն է Աստծո դեմ: Արդ, ով որ կարողանա աշխարհի բարեկամ լինել, իր անձն Աստծո թշնամի կանի» (Հակոբ. 4.4):

Երբեմն ինձ հարց եմ տալիս՝ արդյո՞ք մենք լրջորեն ենք վերաբերվում Սուրբ գրքին, թե՞ համարում ենք, որ այն այլևս չի վերաբերում մեր շնորհքի դիսպենսացիային: Դժվար է պատկերացնել, որ ինչ-որ մեկը կարող է գիտակցաբար իր Արարչին ընդդիմանալու որոշում կայացնել: Պողոսը գործ ուներ շնացող մարդկանց հետ, ովքեր ուզում էին ապրել և՛ օրենքի, և՛ շնորհքի ներքո, իսկ Հակոբոսը խոսում է այն մարդկանց հետ, ովքեր հավիտենական ուխտ ունեն, բայց, Ղովտի կնոջ պես, պայքարում են այս աշխարհին կապված լինելու հետ:

Ուշադրություն դարձրեք, որ այս շեղումը սկսվում է ընդամենը այս աշխարհի հետ ընկերանալու որոշումից: Ինչի՞ մասին է Հակոբոսը խոսում այս խոսքում: Աշխարհում ընկերներ ունենալը կամ աշխարհիկ ընկերներ ունենալը նույնը չէ, ինչ այս աշխարհի հետ ընկերանալը: Մենք պետք է ընկեր լինենք այս աշխարհի *համար*, ոչ թե ընկերություն անենք այս աշխարհի *հետ:* Առաջին ձևակերպումը ցույց է տալիս, թե ինչպես մենք պետք է հարաբերվենք այս աշխարհի բնակիչների հետ, իսկ երկրորդը՝ ընկերությունը դրա համակարգի հետ: Դուք երբեք իշխանություն չեք ունենա այն բանի վրա, ինչը վերահսկում է ձեզ: Մենք կանչված

ենք, որ գթասիրտ լինենք այս աշխարհի հանդեպ, ոչ թե համակրենք այն: Սա նշանակում է, որ.

Մենք հագցնում ենք այս աշխարհի մերկերին, ոչ թե մերկանում ենք այս աշխարհի հետ:

Մենք կերակրում ենք այս աշխարհի քաղցածներին, ոչ թե քաղց ենք զգում այս աշխարհի հանդեպ:

Մենք բժշկության միջնորդներ ենք և կանչված ենք նստելու այս տառապյալ աշխարհի անկողնու եզրին, ոչ թե՝ անկողին մտնելու այս աշխարհի հետ:

Նույնիսկ առանձին մարդկանց հետ շփվելիս մենք պետք է վարվենք որպես դեսպաններ, որոնք ներկայացնում են այլ թագավորություն, որում մեր Թագավորի հրամանները պատվով են ընդունվում: Սա նշանակում է, որ կգա մի օր, երբ մեր և այս աշխարհի մարդկանց հարաբերությունների մեջ խնդիրներ կառաջանան:

Այս պսակը ստանալու համար մենք պետք է թողնենք այն մրցակցությունը, որն առաջանում է վախի պատճառով, և ընդունենք Աստծո կանչը, որն է՝ սիրել Նրան, մարդկանց և ինքներս մեզ:

Կյանքի պսակը

Եվ վերջին պսակը՝ Կյանքի պսակն է: Այս պսակը լիովին կարելի է անվանել նաև Նահատակների պսակ: Եբրայեցիների «Հավատքի սրահում» թվարկված հերոսներից շատերը ստացան այս պսակը: Նրանց միացան Ստեփանոսը, Պետրոսը և Քրիստոսի հետևորդներից շատերը, որոնց անունները երբեք չենք իմանա՝ մինչև հավիտենություն մուտք չգործենք: Կան մարդիկ, ովքեր *տալիս են ամեն ինչ:* Այս պսակը գնվում է առանց մրցակցության կյանք ապրելու գնով:

> «Հավատարիմ եղիր մինչև մահ, և կյանքի պսակը կտամ քեզ: Ով որ ականջ ունի, թո՛ղ լսի՝ ինչ որ Հոգին ասում է եկեղեցիներին. ով որ հաղթում է, երկրորդ մահից չի՛ վնասվի» (Հայտն. 2.10,11):

Ինձ դուր է գալիս, թե ինչպես է «Ուղերձ» Աստվածաշունչը վերծանում խոսք 10-ը. «Ես Կյանքի Թագ ունեմ՝ հենց քո չափով և պատրաստ՝ քեզ համար» (Ուղերձ):

Մենք ապրում ենք այնպիսի ժամանակաշրջանում, երբ ավելի ու ավելի շատ սրտեր են թուլանալու վախից: Բռնությունը, հիվանդությունները, սովերը և պատերազմները մահվան նկատմամբ՝ վախ են ծնում: Չարախոսությունները, մեղադրանքները և հալածանքը մարդու հանդեպ վախ են ծնում: Այնքա՜ն ակնհայտ է, որ սատանան ուզում է համակել մեզ վախով, որպեսզի անգործության մատնի կամ դրդի հակազդեցության: Ինչպես Ներոնը, սատանան ուզում է շփոթեցնել մեզ դաժանությամբ ու սարսափով՝ մի կողմից, և գայթակղեցնել հարստությամբ ու կրքով՝ մյուս կողմից: Ամենից առավել մեր թշնամին կուզեր, որ մենք մնայինք երազանքների ջրհորների մոտ՝ նյարդայնանալով և մետաղադրամներ գցելով: Բայց մենք պետք է խորություն ունենանք՝ այս պսակը ստանալու համար:

Մենք պետք է խորություն ունենանք՝ այս պսակը ստանալու համար:

Վերջերս երեք սարսափելի պատմություն լսեցի մեկ օրում: Դրանցից երկուսը հասան ինձ իմ հոգևոր դուստրերից մեկի ուղարկած հղումներով: Այդ կինն իր ընտանիքի հետ ղեկավարում է մի կազմակերպություն, որը պայքարում է սեռական թրաֆիքինգի դեմ Իսրայելում: Անցնելով առաջին հղմամբ՝ ես կարդացի ողբերգական պատմություն 150 երիտասարդ աղջիկների և կանանց ինքնասպանության մասին, ովքեր գերվել էին ԴԱԻՇ-ի կողմից և պահվում էին որպես ստրուկներ՝ սեռական նպատակով օգտագործման համար: Ասես թե այդ սարսափելի կորուստը բավական չէր, նրանց գերողներն է՛լ ավելի ստորացրին նրանց՝ նրանց մարմինները տալով շներին: Չհավատալով աչքերիս՝ ես մի քանի անգամ կարդացի այդ պատմությունը: Հնարավո՞ր է, որ իրականում այդ աստիճան չարիք գոյություն ունենա: Նույնիսկ տպելով այս տողերը՝ ես մտովի տեսնում եմ շների, որոնք կատաղությամբ պատառոտում են այդ աղջիկների մարմինները: Սարսափից կծկվելով այդ մտավոր պատկերից՝ հիշում եմ Հայտնություն 12.17-ի խոսքերը.

«Եվ վիշապը բարկացավ այն կնոջ վրա և գնաց պատերազմ անելու նրա մյուս զավակների հետ, որ Աստծո պատվիրանները պահում են և Հիսուսի վկայությունն ունեն»:

Նման արարքը չափազանց դաժան է մարդ արարածների համար. դա վիշապի զայրույթն է:

Այս բարկությունն ուղղված է «Կնոջը» և «նրա զավակներին, որոնք պահում են Աստծո պատվերները և ամուր բռնում են Հիսուսի վկայությունը» (Հայտնություն 12.17, Ուղերձ): Վերջին տասնամյակի ընթացքում ես տեսել եմ, թե ինչպես է այս խավար պատկերն ի հայտ եկել ավելի մեծ չարությամբ՝ հասնելով աներևակայելի չափերի:

Հաջորդ հղումը, որը ես բացեցի, այն մասին էր, որ Ղուրանից հատվածներ անգիր սովորող տղամարդկանց ստրուկներ էին նվիրում՝ սեռական նպատակով օգտագործման համար: Այդտեղ նույնպես գրված էր անհավատներին բռնաբարելու մասին, որը երկրպագություն էր համարվում: Ցավոք, վախենում եմ, որ մինչև այն պահը, երբ այս գիրքը տպագրվի, տեղի կունենան շատ ավելի սարսափելի վայրագություններ, որոնք մոռացության կմատնեն այս պատմությունները:

Ես ստացա երրորդ պատմությունը մեր աշխատանքային էլեկտրոնային հասցեներից մեկով: Մենք մի բանալի մարդ ունենք, ով համակարգում է անվճար նյութերի տարածումը այն երկրներում, որոնցում հալածանքի կամ աղքատության պատճառով մարդիկ չեն կարողանում քրիստոնեական նյութեր ձեռք բերել: Մեր խիզախ ընկերներից մեկը Մերձավոր Արևելքում՝ Սիրիայում, սպանվել է քրիստոնյաների դեմ ուղղված հրետակոծության ժամանակ: Այդ մարդու մահվան մանրամասները նկարագրելիս մեր աշխատակիցը գրում էր. «Ոմանք կանչված են, որ շատ բան զոհեն. մյուսները զոհում են ամեն ինչ»:

Ես ցնցված էի: Դրանից հետո պետք է մի հանդիպման գնայի և ճանապարհին փորձում էի մտովի մի նամակ գրել այդ մարդու այրիացած կնոջը: Զգում էի, որ ինչ էլ ասեի, վիրավորական կլիներ նրա ամուսնու և նրա հանգամանքների հանդեպ: «Ցավում եմ»-ը մակերեսային կթվար. «շնորհակալություն»-ը սխալ կլիներ: Ես գրե-

լու էի նրան իմ ապահով ընտանիքից, որը երբեք նահատակի մահ չի վերապրել: Ես կարող եմ ամեն րոպե փառաբանություն լսել և ունեմ ավելի շատ գրքեր ու Աստվածաշնչեր, քան երբևէ կարող եմ կարդալ: Իմ մթերանոցում շատ սնունդ կա, իսկ իմ պահարաններում՝ զգեստներ: Երեկոյան, երբ ժամանակ անցկացնեմ թոռներիս հետ, նրանք ծիծաղելու և խաղալու են՝ անտեղյակ այն բանից, որ մեր եղբայրների և քույրերի կյանքում նման ցավ կա:

Ես ամաչում էի: Հանկարծ ինձ թվաց, թե իմ կյանքը մեկուսացված, դատարկ խեցի է, և այն ամենը, ինչ գիտեի, նույնքան վաղանցիկ է, որքան թոռներիս փչած օճառե պղպջակները: Ես ուզում էի զանգահարել ինչ-որ մեկին՝ ավելի տարեց և ավելի իմաստուն մի կնոջ, ով պարզապես կհասկանար այն, թե ինչ էի ես զգում, նույնիսկ եթե չկարողանար պատասխանել իմ մեջ մոլեգնող հարցերին:

Մտքումս այնքա՜ն «ինչուներ» կային: Ինչո՞ւ ես այսքան շատ բաներ ունեմ, իսկ այլ երկրներում կան կանայք, որոնք այնքա՜ն հուսահատ են, որ պատրաստ են խլել իրենց կյանքը, քան ապրել ևս մեկ օր: Որտե՞ղ է արդարությունը: Ես փորձում էի հաղթահարել այն հուսահատությունը, որը զգում էի կյանքի անհավասարության պատճառով: Հանկարծ հասկացա, որ ես համեմատում էի: Ես ճշտորեն էի ընկալում հակադրությունը մեր միջև, բայց համեմատելն անիմաստ էր: Այդ հարցը պատասխան չուներ: Միակ պատասխանը՝ օձն է, որը վիշապ է դարձել: Վիշապների ազդեցության ներքո տղամարդիկ և կանայք սարսափելի կերպով են վարվում միմյանց հետ: Ես հասկացա, որ ընտրություն ունեմ: Կարող եմ շարունակել հարցեր տալ՝ բարկությամբ լցված, կամ թույլ տալ, որ իմ կյանքի հարցական նշանները վերածվեն բացականչական նշանների: Ես սրբեցի արցունքներս և որոշեցի, որ նրանց պատմությունները կօգնեն ինձ՝ փոխել կյանքիս շեշտադրումները:

Հալածանքի մասին պատմությունները նոր չեն. դրանք եղել են բոլոր ժամանակաշրջաններում: Ես արդեն հիսունհինգ տարեկան եմ, և ժամանակն է, որ դադարեմ պայքարել այն հարցերի հետ, որոնց պատասխանն այդպես էլ չեմ կարող իմանալ, քանի դեռ մուտք չեմ գործել հավիտենություն: Տարիքն ինքնին

չի կարող իմաստավորել այն, ինչն անիմաստ է: Մեր ընթացքն արագ է անցնում, և այսօրվա իրադարձություններն էլ ավելի հրապուրիչ են դարձնում հավիտենությունը: Եվ նույնպես պատճառ են հանդիսանում, որ արդյունավետ լինենք, քանի դեռ կարող ենք: Այս պատմության իմաստը կբացահայտվի միայն հավիտենության մեջ, բայց այստեղ և հիմա մենք կարող ենք աղոթել և իմանալ, որ մեր աղոթքը լսվում է, եթե մեր սրտերն ազատ են մրցակցությունից, նախանձից և համեմատություններից:

> «Բոլորդ կանչված եք, որ գնաք միևնույն ճանապարհով և միևնույն ուղղությամբ, ու միասին մնաք և՛ արտաքուստ, և՛ ներքուստ: Դուք ունեք մեկ Տեր, մեկ հավատք, մեկ մկրտություն, մեկ Աստված և բոլորի Հայրը, Ով տիրում է բոլորին, գործում է բոլորի միջոցով և ներկա է բոլորի մեջ: Այն, ինչ դուք կաք, մտածում և անում եք, ներթափանցված է Միասնությամբ: Բայց դա չի նշանակում, որ բոլորդ պետք է միևնույն տեսքն ունենաք և միևնույն կերպով վարվեք: Մեզնից ամեն մեկը ստացել է իր պարգևը Քրիստոսի առատությունից» (Եփես. 4.4-7, Ուղերձ):

Ապրե՛ք ձեր կյանքը

Մեզ այնքա՜ն բան է տրված: Մեր եզակի տեսակետը կյանքի մասին՝ պարգև է: Այն, ինչ մենք տեսել և վերապրել ենք՝ պարգև է: Մենք կարող ենք ընտրել: Մենք կարող ենք թույլ տալ, որ այդ ամենը կանգնեցնի մեզ, և այլևս ոչինչ չանենք: Մենք կարող ենք հասարակի պես վերաբերվել կյանքին և թույլ տալ, որ այն անգործության մատնի մեզ, կամ էլ կարող ենք մշտապես զարմանքով լցված լինել՝ մտածելով ամեն վայրկյան կատարվող սքանչելիքների և զորության մասին, ու առաջ շարժվել:

Վերջին տասնամյակի ընթացքում ես գրել եմ կին և աղջիկ առյուծների մասին՝ թրերով և խաչերով, կնոջ պես կռվելու մասին և այն համբույրների մասին, որոնք սնուցելու փոխարեն՝ դրդում են կանանց լաց լինել: Հիմա ես գրում եմ՝ հուսալով, որ այն ամենը, ինչ սպասման մեջ է ձեր ներսում, իրականություն կդառնա: Քանի որ՝

Դուք, դ՛ուստր, կանչված եք անզուգական կյանքի համար:
Դուք սիրված եք անզուգական Հոր կողմից:
Դուք ապրում եք անզուգական ժամանակաշրջանում:
Դուք ծնվել եք անզուգական երկրում:
Դուք ծառայում եք անզուգական Աստծո:
Դուք գնված եք անզուգական զոհով:
Ձեզ վստահված է Նրա անզուգական անունը:
Դուք զորացված եք անզուգական Հոգով:
Դուք տիրապետում եք անզուգական լեզվի:
Դուք անզուգական մարմնի անդամ եք:
Ձեզ անզուգական առաջադրանք է տրված:
Դուք սպառազինված եք անզուգական զենքերով:
Դուք ներգրավված եք անզուգական պատերազմում:
Դուք կանչված եք անզուգական աղոթքների:
Մեր առջև անզուգական հնարավորություններ կան, քանի որ
Մենք որոշված ենք՝ անզուգական հունձք հավաքելու:
Մենք նախասահմանված ենք անզուգական հավիտենության համար...
Ուրեմն, ապրե՛նք անզուգական գեղեցկությամբ, զորությամբ, առաքինությամբ և ազդեցությամբ... այնպիսի կյանքով, որում մի քանիսը շատ բան են զոհում, իսկ մյուսները զոհում են ամեն ինչ:

Կանգնե՛ք Աստծո առջև՝ լցված հույսով, հավատարի՛մ եղեք ծառայության մեջ և սիրե՛ք այն, ինչ անում եք: Որովհետև դ՛ուք, ի՛մ ընկեր և քույր, ունեք կյանք՝ առանց մրցակցության: Իսկ այժմ, գնացե՛ք այն խիզախությամբ, որը ծնվում է սիրուց, և ապրե՛ք հանդուգն համարձակությամբ:

Հարցեր քննարկման համար

1. Ի՞նչ զգացիք Թեկլայի պատմությունից:
2. Բացատրե՛ք տարբերությունը՝ աշխարհի համար ընկեր լինելու և այս աշխարհի հետ ընկերություն անելու միջև:
3. Ի՞նչ բնագավառներ կան ձեր կյանքում, որոնցում դուք պետք է փոխեք ձեր շեշտադրումները:
4. Ո՞րն է լինելու ձեր հաջորդ քայլը դեպի անզուգական կյանք, որտեղ չկա մրցակցություն:

Նշումներ

Գլուխ 3. Խոստում՝ առանց մրցակցության

1. Թեև «սելա» բառի իրական իմաստն անհայտ է, շատերը մտածում են, որ այն ծիսական նշանագիր է: Անգլերեն «Ընդլայնված Աստվածաշունչը» թարգմանում է «սելա» բառը որպես «կանգ առ և մտածիր այդ մասին»:

Գլուխ 5. Երբ ձեզ մրցակից են համարում

1. Ա. Լ. Դակվորթ, Ս. Պետերսոն, Մ. Դ. Մեթյուս և Դ. Ռ. Քելլի. «Հաստատակամություն. հարատևություն և ձգտում երկարատև նպատակների», «*Անհատականության և սոցիալական հոգեբանության ամսագիր*», հմ. 92/6, 2007թ., էջ 1087:
2. Մալկոլմ Գլեդվել «*Դավիթը և Գողիաթը. վտարանդիներ, անհաջողակներ և հսկաների հետ կռվելու արվեստը*» (Նյու Յորք. «Little, Brown and Co.», 2013թ.):

Գլուխ 6. Սեռ՝ առանց մրցակցության

1. Մարկ Դրիսկոլ, «*Եկեղեցական առաջնորդների մասին*» (Ուիտոն, Իլլինոյս. «Crossway», 2008թ.):
2. Նույնը:

3. Կրիս Վալլոտոն, «Պատրաստված՝ թագավորելու համար» (Գրենդ Ռեփիդս. «Chosen», 2013թ.), գլուխ 7
4. Գիլբերտ Բիլեզիկյան. *«Սեռային դերերից այն կողմ. ինչ է ասում Աստվածաշունչը կնոջ դերի մասին եկեղեցում և ընտանիքում»,* 3-րդ հրատ. (Գրանդ Ռեփիդս. «Baker», 2006թ.):

Գլուխ 7. Վախի և սիրո պատերազմը

1. Կ. Ս. Լյուիս. *«Չորս սերեր»* (Նյու Յորք. «Harcourt Brace Jovanovich», 1960թ.):
2. Քենթ Մ. Քեյթ, «Պարադոքսալ պատվիրաններ» (Մակավաո, Հավայի. «Inner Ocean», 2001թ.):

Գլուխ 9. Դուստր՝ առանց մրցակիցների

1. http: //oca.org/saints/lives/2015/05/10/39-sunday-of-thesamaritan-woman:
2. http: //www.pravoslavie.ru/english/print79178.htm:
3. Քրիստոֆեր Հենրի Դոուսոն, *«Կրոնը և համաշխարհային պատմությունը. ընտրանի Քրիստոֆեր Դոուսոնի աշխատություններից»* (Գարդեն Սիթի, Նյու Ջերսի. «Image Books», 1975թ.):
4. Այս պարբերության մեջ նշված փաստերը հետևյալ աղբյուրներից են. ա) Ռոբին Դիքսոն, «Քենիայի համալսարանում. քրիստոնյա ուսանողների նախազգուշացված սպանդը», «*Լոս Անջելես Թայմս*», ապրիլի 5, 2015թ., բ) «Ձինված մարդիկ սպանում են 147 ուսանողի Քենիայի համալսարանում», *«Չիկագո Տրիբյուն»*, ապրիլի 3, 2015թ., գ) «Առնվազն 147 մարդ սպանվել է Քենիայի համալսարանում իսլամական ահաբեկչական հարձակման ժամանակ, որի թիրախը քրիստոնյաներն էին», *KTLA.com*, ապրիլի 2, 2015թ.:

Գլուխ 10. Անզուգական կյանք

1. Թեկլայի կյանքի մասին ավելին իմանալու համար այցելեք հետևյալ աղբյուրները.
ա) http: //www.pbs.org/wgbh/pages/frontline/shows/religion/maps/primary/thecla.html, (պատմություն պարականոն Գործք առաքելոցից),

բ) http: //www.antiochian.org/life_of_thekla,

գ) http: //dce.oca.org/assets/templates/bulletin.cfm?mode=html&id=101,

դ) http: //www.newadvent.org/cathen/14564a.htm:

2. Հենրի Կլարենս Թեյսեն, «Համակարգված աստվածաբանություն. դասախոսություններ», (Գրենդ Ռեփիդս, «Eerdmans», 1979թ.), էջ 389:

Լիզա Բիվերը պահանջված միջազգային քարոզիչ է, հանրաճանաչ գրքերի հեղինակ և «Ավետաբեր» հեռուստահաղորդման հաղորդավարներից: «Ավետաբեր»-ը հեռարձակվում է ավելի քան երկու հարյուր երկրներում: «Երբ արթնանում են կին առյուծները», «Թրեր կրող կանայք» և «Պայքարի՛ր կնոջ նման» գրքերի հեղինակ Լիզան հաճախակի հյուր է «Կյանքն այսօր» հեռուստահաղորդմանը, ինչպես նաև հյուր-քարոզիչ է եղել «Հավատքի կանայք» համաժողովներին, Ջոյս Մայերի համաժողովներին և «Հիլսոնգ» եկեղեցում: Նա և ամուսինը՝ Ջոնը, ունեն չորս որդի և ապրում են Կոլորադոյում:

Իմացե՛ք ավելին LisaBevere.com կայքում:

ԹՐԵՐ ԿՐՈՂ ԿԱՆԱՅՔ

ԻՆՉՊԵՍ ՀԵՐՈՍԱԲԱՐ ԿՐԵՔ ՁԵՐ ԽԱՉԸ

Այսօր, ավելի քան երբևէ, ժամանակն է, որ կանայք զինված լինեն: Ամբողջ աշխարհում կանայք նախապաշարմունքների, թրաֆիքինգի, բռնության և նույնիսկ սեռասպանության թիրախներ են: Լիզա Բիվերը գրում է, որ այս հարձակումներն ավելի շատ ցույց են տալիս, թե ինչպիսին կարող են դառնալ կանայք ապագայում, քան՝ թե ինչպիսին են նրանք եղել անցյալում: «Թրեր կրող կանայք» գրքում նա բացատրում է, թե ինչպես է թշնամին ձգտում ապազինել կանանց կյանքի բոլոր ոլորտներում: Ժամանակն է, որ կանայք հերոսուհիներ դառնան, քանի որ Աստված այդպիսին է ստեղծել նրանց: Ժամանակն է զբաղեցնել ձեր դիրքը՝ լինել խիզախ, խորաթափանց, ներող և իմաստուն:

Դուք կարող եք դիտել և ներբեռնել
Ջոն և Լիզա Բիվերների այլ նյութեր հետևյալ կայքում.

www. CloudLibrary.org

Դուք կարող եք դիտել և ներբեռնել լրացուցիչ նյութեր բազմաթիվ լեզուներով
YouTube.com, Youku.com և նյութեր տարածող այլ կայքերում:

«Կյանք՝ առանց մրցակցության» գիրքը յուրահատուկ դիրքորոշում ունի ընդդեմ այն անդադար պատերազմի, որը մոլեգնում է Քրիստոսում ունեցած մեր ինքնության դեմ»:

— ՋՈՅՍ ՄԱՅԵՐ
Աստվածաշնչի ուսուցիչ և հանրաճանաչ հեղինակ

Մենք դիտարկում ենք մարդկանց որպես մրցակիցների և սահմանափակում ենք մեր կյանքը՝ շարունակ համեմատվելով և մրցակցելով նրանց հետ: Նման վերաբերմունքը խորը հիմքեր ունի: Մենք թշնամի ունենք, ով հարձակում է գործում մեր մտքի, կամքի և զգացմունքների վրա: Նրա նպատակն է՝ թշնամացնել մեզ թե՛ ինքներս մեզ, թե՛ մեկս մյուսի հետ: Մենք ասես փակ շրջանում ենք, որը մեկուսացնում է մարդկանցից, կասկածի է ենթարկում մեր ինքնությունը և սահմանափակում է մեր արդյունավետությունը:

«Կյանք՝ առանց մրցակցության» գրքում հանրաճանաչ հեղինակ Լիզա Բիվերը ցույց է տալիս, թե ինչպես է հայտնությունն Աստծո սիրո մասին՝ քանդում այս սահմանափակումները: Դուք կսովորեք՝ այլևս չդիտարկել մարդկանց որպես մրցակիցների, և սերտ հարաբերություններ կկառուցեք ձեր փափագելի Ստեղծողի հետ, ինչի շնորհիվ կբացահայտեք ինքներդ ձեզ և մտերմորեն կճանաչեք Նրան: Լիզայի առողջ աստվածաշնչյան ուսմունքը՝ հագեցած մեր օրերի վերաբերյալ մարգարեական խորաթափանցությամբ և համեմված հումորով ու ավյունով, կոչ է անում ձեզ.

- Օգտագործել մրցակցությունը, որպեսզի այն ձեր մեջ արթնացնի լավագույնը:
- Այլևս չթաքնվել այն խոսակցություններից, որոնց պետք է մասնակցեք:
- Պատասխանել փաստարկներին այն մասին, որ կանայք հարմար չեն որոշ գործերի համար, որ նրանք կարող են հեշտորեն խաբվել և դյուրահավատ են:
- Պատռել սեռերի միջև մրցակցության դիմակը և համագործակցել այն տղամարդկանց հետ, որոնք կան ձեր կյանքում:

Ժամանակն է, որ քայլ անեք դեպի կյանք՝ առանց մրցակցության:

Լիզա Բիվերի անկեղծ, ջերմեռանդ և զվարթ մոտեցումը միահյուսում է խորը աստվածաշնչյան ճշմարտությունները գործնական քայլերի հետ: Նրա գրքերը, որոնց թվում են «Պայքարի՛ր կնոջ նման», «Երբ արթնանում են կին առյուծները» և «Թրեր կրող կանայք», ընթերցվում են միլիոնավոր մարդկանց կողմից ամբողջ աշխարհում: Լիզան և ամուսինը՝ Ջոնը, հանրաճանաչ հեղինակներ են և «Մեսինջեր Ինտերնեյշնլ» ծառայության հիմնադիրները:

Իմացե՛ք ավելին **CloudLibrary.org** կայքում:

MESSENGER INTERNATIONAL
MessengerInternational.org

Այս գիրքը նվեր է հեղինակի կողմից և վաճառքի ենթակա չէ:

Ծանանեցեք ավելին: Տեսարկեք ստորագրությունը:
CLOUD LIBRARY